



NATIONAL ACADEMY OF SCIENCES OF REPUBLIC OF ARMENIA  
INSTITUTE OF LANGUAGE AFTER H. ACHARYAN

**JAHUKYAN READINGS**

Proceedings of International Online Symposium on Armenian  
Linguistics  
Dedicated to 100 Anniversary of Academician Gevorg Jahukyan  
(Yerevan, December 17-18, 2020)

symposium

\*\*\*

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК  
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ  
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМЕНИ Р. АЧАРЯНА

**ДЖАУКЯНОВСКИЕ ЧТЕНИЯ**

Материалы международного онлайн симпозиума по  
армянскому языкознанию,  
посвященного 100-летию академика Геворга Джаукяна  
(Ереван, 17-18 декабря, 2020 г.)

Yerevan 2020  
Երևան 2020

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

## ՋԱՀՈՒԿՅԱՆ ԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Ակադեմիկոս Գևորգ Ջահուկյանի ծննդյան 100-  
ամյակին նվիրված հայերենագիտական  
միջազգային առցանց գիտաժողովի նյութեր  
(Երևան, 2020թ., դեկտեմբերի 17-18)

ԵՐԵՎԱՆ  
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
2020

ՀՏԴ 81:06

ԳՄԴ 81

Ջ 229

Հրատարակության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ:

Գիտաժողովի նյութերը տպագրվում են ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ:

Խմբագրական խորհուրդ՝

Վ.Լ. Կատվայան (նախագահ)	Ա.Ե. Սարգսյան
Գ.Կ. Խաչատրյան	Ա.Ա. Աբրահամյան
Վ.Գ. Համբարձումյան	Ն.Գ. Հովհաննիսյան
Լ.Շ. Հովհաննիսյան	Գ.Մ. Մխիթարյան
Լ.Ս. Հովսեփյան	Ն.Ս. Սիմոնյան

Ջ 229 Ջահուկյանական ընթերցումներ: Ակադեմիկոս Գևորգ Ջահուկյանի ծննդյան 100-ամյակին նվիրված հայերենագիտական միջազգային գիտաժողովի նյութեր (Երևան, 2020 թ., դեկտեմբերի 17-18). – Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2020.- 198 էջ:

ՀՏԴ 81:06

ԳՄԴ 81

ISBN 978-5-8080-1439-8

© ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, 2020

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2020

## ԱՌԱՋԱԲԱՆ

### ԳԵՎՈՐԳ ՋԱՀՈՒԿՅԱՆ – 100

Լրացավ գիտության վաստակավոր գործիչ, ՀԽՍՀ պետական մրցանակի դափնեկիր, ակադեմիկոս Գևորգ Ջահուկյանի ծննդյան 100-ամյակը: Նա 20-րդ դարի երկրորդ կեսի ամենանշանավոր հայ լեզվաբանն է, որի գիտական ժառանգությունը մեծապես արժևորված ու գնահատված է նաև արտերկրում: Նրա գիտական հետաքրքրությունների ոլորտն աչքի է ընկնում արտակարգ լայնությամբ ու խորությամբ, հետազոտությունների թեմատիկան՝ բազմազանությամբ ու արդիականությամբ, վերլուծությունները՝ անհերքելի ապացույցներով, ու կուռ տրամաբանությամբ: Հայագիտության գրեթե բոլոր ճյուղերում, ընդհանուր լեզվաբանության և լեզուների համեմատական քննության բնագավառներում նա ունեցել է հիմնարար աշխատություններ, որոնք ոչ միայն հայ լեզվաբանական մտքի զարգացման նոր մեկնակետ են դարձել, այլ նաև գիտական փաստարկված հարուստ նյութ են մատուցել օտար հայերենագետներին ու լեզվաբաններին:

Լեզվաբանական գիտության բազմազան ոլորտների վերաբերող նրա աշխատանքները աչքի են ընկնում լեզվական փաստերի լիակատար ընդգրկմամբ, ուրույն մեկնաբանություններով, դասակարգումներով, նկարագրության ու վերլուծության նոր մեթոդների մշակմամբ ու կիրառությամբ, տվյալ բնագավառներում լեզվաբանական գիտության հեռանկարների ուրվագծմամբ: Նոր խոսք ասելով հանդերձ՝ նա միշտ հենվել է անցյալի ժառանգության վրա, արժևորել և գնահատել այն: Լեզվի մասին գիտության նոր հորիզոններ բացող գիտնականը իր յուրաքանչյուր աշխատությունում, որպես կանոն, նախ ներկայացնում է լեզվաբանության

տվյալ բնագավառի զարգացման համառոտ, բայց ամբողջական պատկերը, ապա առաջադրում խնդիրները, քննարկում դրանց լուծման ուղիներն ու եղանակները և նոր միայն անցնում խնդրառարկայի վերաբերյալ իր վերլուծություններին ու տեսակետների շարադրմանը:

Գևորգ Ջահուկյանը գիտական հանրությանը նախ ներկայանում է իբրև գիտության պատմաբան: Նրա առաջին մենագրությունը նվիրված է եղել հին և միջնադարյան Հայաստանում քերականական և ուղղագրական աշխատություններին (Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, 1954): Գրքում հեղինակը ներկայացրել է հայ լեզվաբանական մտքի քննական պատմությունը՝ սկզբնավորման շրջանից մինչև հայերենագիտական տպագիր աշխատությունների ի հայտ գալը: Ամբողջական պատկերից գատ՝ աշխատության մեջ կատարվում են նաև արժևորումներ, գնահատումներ, առաջադրվում են նոր պատկերացումներ: Հեղինակը ըստ անհրաժեշտության արձարծում է նաև բանասիրական, փիլիսոփայական, պատմամշակութային մի շարք խնդիրներ: Հայ քերականական մտքի պատմությունը ամբողջացվում է «Հայ լեզվաբանական միտքը և աշխարհաբարի հարցերը 18-19 դդ.» մենագրությամբ, որն ընդգրկում է տպագիր շրջանը, և որի մեջ ներկայացվում է լատինատիպ ու ինքնատիպ քերականությունների հանգամանակից քննությունը: Միաժամանակ, լեզվաբանը դիտարկում է հայ քերականների և բառարանագիրների դերը աշխարհաբարի ուսումնասիրության, կանոնակարգման գործում, նորովի է մեկնաբանում գրապայքարի ընթացքը, ներկայացնում է ժամանակակից գրական հայերենի նոր շրջանաբաժանում և այլն: Եզակի է Գ. Ջահուկյանի «Լեզվաբանության պատմություն» աշխատությունը՝ իր ընդգրկման ամբողջականությամբ ու խոր գիտականությամբ: Այստեղ ևս հեղինակը

հանդես է գալիս իբրև գիտության հմուտ պատմաբան: Բացառիկ այս աշխատության մեջ նա վերլուծական եղանակով ներկայացնում է լեզվաբանական գիտության անցած ուղին՝ սկզբից մինչև 20-րդ դար: Գ. Ջահուկյանը խորաթափանցորեն համակարգում, վերլուծում և գնահատում է լեզվաբանական ուսմունքներն ու ուղղությունները, դրանք կապակցում փիլիսոփայության զարգացման տարբեր փուլերի հետ: Աշխատանքն աչքի է ընկնում նյութի բաշխման միասնական գիտական սկզբունքներով, տարածական ու ժամանակագրական ամբողջական ընդգրկումով և խորությամբ: Ընդհանուր առմամբ՝ աշխատանքի համար բնութագրական են լեզվաբանության ավելի քան երկուհազարամյա պատմության հիմնական խնդիրների հանգամանալի քննությունը, խորը վերլուծությունը, տեսական դիտարկումներն ու եզրահանգումները, որոնցով էլ այն ձեռք է բերում հանրագիտարանային բնույթ:

Հսկայական է Գ. Ջահուկյանի ներդրումը հայերենի համեմատական քերականության և հայոց լեզվի պատմության ասպարեզներում: «Ակնարկներ հայոց լեզվի նախագրային շրջանի պատմության» (1967, ռուսերեն), «Հայոց լեզվի համեմատական քերականություն» (1982, ռուսերեն), «Հայոց լեզվի պատմություն: Նախագրային շրջան» (1987) և մի շարք այլ աշխատություններում ու տասնյակ հոդվածներում Գ. Ջահուկյանն իրեն հատուկ գիտական խորաթափանցությամբ քննել և լուծել է հայոց լեզվի պատմության ու համեմատական ուսումնասիրության, հայերենի պատմության շրջանաբաժանման ու ընդհանրապես հնդեվրոպաբանությանն առնչվող բազմաթիվ կարևոր հիմնահարցեր: Լեզվաբանի «Հայոց լեզվի պատմություն. նախագրային շրջան» աշխատությամբ հիմք է դրվում հայոց լեզվի պատմության՝ նոր ժամանակների լեզվաբանական մակարդակով գիտական ուսումնասիրությանը: Իր քննությունը սկսելով հայերենի նախագրային հնագույն վիճակներից՝

Գ. Ջահուկյանը բացահայտում է հայերենի առնչությունները հրե-  
դեվրոպական բարբառների հետ ըստ հնչյունական, բառապաշա-  
րային ու քերականական համակարգերի: Նկատի ունենալով իր  
նախորդների արտահայտած տեսակետներն ու բերած փաստարկ-  
ները՝ լեզվական փաստերի և աղբյուրների համակողմանի քննույթ-  
յամբ Գ. Ջահուկյանը վիճակագրական տվյալներով ճշգրտում է  
հայերենի և հնդեվրոպական մյուս լեզուների մերձավորության  
աստիճանը, որոշում հայերենի դիրքը հնդեվրոպական բարբառ-  
ների շարքում: Իր դիտարկումները նա կատարում է հնդեվրո-  
պական լեզվի, հնդեվրոպացիների կյանքի, մշակութային ընդհա-  
նուր պատկերի համատեքստում: Հայ իրականության մեջ առաջին  
անգամ փորձ է արվում շրջանաբաժանման ենթարկել հայերենի  
նախագրային փուլի պատմությունը՝ առանձնացնելով նախահայ-  
կական, վաղնջական և հնագույն շրջաններ: Լեզվաբանը հանգա-  
մանորեն դիտարկել է լեզվի զարգացման վաղնջական շրջանը, երբ  
հայերենը կազմավորվում էր իբրև ինքնուրույն լեզու: Նա անդ-  
րադառնում է նաև այդ շրջանի հայերենի խոսվածքային տարբե-  
րություններին: Այնուհետև Գ.Ջահուկյանը հիմնավոր փաստար-  
կումներով ներկայացնում է հնագույն հայերենի լեզվական պատ-  
կերը, հմուտ վերլուծություններով հիմքեր ստեղծում գրաբարյան  
շատ իրողությունների նորովի մեկնաբանման համար: Անդրա-  
դարձ է կատարվում նաև վիպասանական հայերենի լեզվական  
առանձնահատկություններին, հին հայերենի բարբառային տարբե-  
րակների կառուցվածքային ու բառապաշարային յուրահատկու-  
թյուններին: Մեծ կարևորություն են ներկայացնում նաև բնիկ հա-  
յերեն բառերի կազմում կատարված ջահուկյանական ճշգրտումնե-  
րը և լրացումները: Ընդհանրապես, լեզվաբանը կատարել է բազում  
նոր ստուգաբանություններ, լեզվական նոր փաստերի հիման վրա  
ուսումնասիրել հայերենի անհայտ ծագման բառապաշարը: Մինչև



կյանքի վերջ Գ. Ջահուկյանը աշխատում էր ստուգաբանական բառարանի կազմության ուղղությամբ, որը, ցավոք, չհասցրեց վերջնական տեսքի բերել:

Հայ լեզվաբանության համար մեծ կարևորություն ունի հայոց լեզվի պատմության՝ նրա առաջարկած շրջանաբաժանումը, որով հստակորեն տարբերակվում են հայերենի նախագրային և գրային փուլերը, հին, միջին և նոր շրջանների առանձնահատկությունները: Նշանավոր է «Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը» (1959) աշխատությունը, որտեղ նա սահմանել է բառերի՝ հոլովման տարբեր տիպերին պատկանելության օրենքներ, ինչը նախորդները ժամանակին համարում էին անլուծելի խնդիր: Հեղինակը ներկայացրել է նաև հնդեվրոպական հոլովման համակարգից գրաբարի հոլովական համակարգին անցման ուղին՝ հիմք ունենալով ընդհանուր օրինաչափությունները, որոնք հատուկ են գրաբարին ու ցեղակից լեզուներին:

Լեզվաբանին մեծապես հետաքրքրել են հայերենի նախագրային շրջանին առնչվող հարցերը, որոնք քննել է հին ու հնագույն շատ լեզուների հետ փոխհարաբերությունների մեջ: Նա հեղինակ է հնդեվրոպական ու այլ ընտանիքների պատկանող լեզուների հետ հայերենի առնչություններին նվիրված շատ աշխատանքների: Առաջիններից մեկը լինելով՝ նա քննել է հնդեվրոպական, խուռաուրարտական և կովկասյան լեզուների փոխհարաբերությունները, բացահայտել հնդեվրոպական-խուռաուրարտական զուգաբանություններ, որոնք վկայում են այդ լեզուների միջև եղած հեռավոր ցեղակցության մասին: Կարևոր է, որ լեզվաբանը տարբեր մեթոդների կիրառումով կարողացել է սահմանազատել հեռավոր ազգակցություն փաստող իրողությունները նրանցից, որոնք արդյունք են լեզուների շփման և փոխազդեցությունների: Նա առաջինն է, որ դիտարկել է հայերենից ուրարտերենին, խեթալուվա-

կան և այլ հնագույն լեզուներին անցած փոխառությունները: Այսպես կոչված ուրարտերենի և հայերենի առնչությունների շուրջ մեծ լեզվաբանի գիտական պրպտումները հանգեցրել են կարևորագույն եզրակացությունների: «Ուրարտական արձանագրությունների ներածական բանաձևերի հնարավոր հայկական բնույթի մասին» հոդվածում Գ. Ջահուկյանը նկատում է, որ ներածական այդ բանաձևերի բառապաշարն ու քերականական կառուցվածքը հնարավոր է մեկնել հայերենով, այսինքն՝ կարելի է այդ բանաձևերը համարել հայոց լեզվի առաջին գրավոր տեքստերը: Լեզվաբանը եզրակացնում է, որ ուրարտական կոչված արձանագրությունների ներածական բանաձևերի վերլուծության հիման վրա ապացուցված կարելի է համարել այդ բանաձևերի հայկական բնույթը. դրանց բառապաշարը հիմնականում հայկական է, քերականական առանձնահատկությունները հնարավոր է բացատրել նախագրաբարյան շրջանի քերականական առանձնահատկություններով: Մյուս կողմից՝ այդ բանաձևերը հնարավորություն են տալիս կատարելու հայերենի նախագրաբարյան շրջանի բառային վերականգնումներ, պարզելու հետագա փոխառությունների բուն հայկական համարժեքները՝ հնդեվրոպական նախաձևերի և ուրարտական կոչված արձանագրությունների ձևերի համեմատությունների հիման վրա: Դիտարկելով հայերենի և Առաջավոր Ասիայի ու հին բալկանյան լեզուների առնչությունները՝ Գ.Ջահուկյանը հատուկ ուշադրություն է դարձրել նաև Հայասայի լեզվին, այն դիտել իբրև հայերենի նախնական մի վիճակ:

Գ. Ջահուկյանը զբաղվել է նաև հնդեվրոպաբանության այնպիսի խնդիրների հետազոտությամբ, ինչպիսիք են նախալեզվի վերականգնման խնդիրը, նրա բարբառային մասնատվածության հարցը, հեռավոր ցեղակցության տվյալները, նոստրատիկ լեզվաբանության խնդիրները: Նա կիմերերենի փաստերի հետազոտու-

թյամբ ժխտել է այն տեսակետը, թե կիմերները հայերի նախնիներն են: Կիպրոսում գտնված վանկագիր արձանագրությունների (մ.թ.ա. 8-2-րդ դարեր) վերծանությամբ առաջ է քաշել արձանագրությունների լեզվի՝ այսպես կոչված էտեոկիպրերենի խուռաուրարտական ընտանիքին պատկանելու վարկածը:

Արժեքավոր են Գ. Ջահուկյանի հետազոտությունները բարբառագիտության ասպարեզում: Նա այս ոլորտի տեսական մի շարք խնդիրներում որոշակի հստակություն է մտցնում «Հայ բարբառագիտությունը և հայերենի բարբառների ծագման հարցը» հոդվածում: Լեզվաբանի համար հայերենի բարբառների ծագման հարցը սերտորեն կապված է հայոց լեզվի ծագման ու ձևավորման հարցի հետ: Գ. Ջահուկյանը պնդում է, որ հայագիտության զարգացման ժամանակակից էտապում այլևս անվիճելի է 5-րդ դարում հայերենի բարբառների գոյության հարցը և բարբառներում այնպիսի արխայիկ գծերի առկայության հարցը, որոնք գրաբարի հուշարձաններում պահպանված գծերից ավելի հին են: Ընդհանրապես, լեզվաբանը գտնում է, որ բարբառները զարգացող, փոփոխվող իրողություններ են, հայերենի ոչ մի բարբառ որևէ շրջանում իր բոլոր գծերով լիովին կազմավորված հանդես չի եկել և չէր էլ կարող հանդես գալ: Հայ բարբառների հնչյունական, քերականական և բառապաշարային հատկանիշները, ըստ Գ. Ջահուկյանի, ձևավորվել են հայերենի պատմության ողջ ժամանակաշրջանում: Նա ճիշտ չի համարում այն տեսակետը, համաձայն որի՝ ժամանակակից բարբառները ծագել են գրաբարից և նրա հետագա աղավաղումներն են. գրաբար ասելով պետք է հասկանալ հին գրական հայերենը, իսկ գրական լեզուն չի կարող սկիզբ տալ բարբառների: Գ. Ջահուկյանը իրավացիորեն նկատում է, որ ցանկացած բարբառ կարող է պահպանած լինել գրաբարից ավելի արխայիկ գծեր, բայց ընդհանուր առմամբ գրաբարը արդի բոլոր

բարբառներից էլ հին է: Մյուս կողմից՝ բարբառները միանգամից չեն կազմավորվել. նրանց տարբեր բաղադրիչները գալիս են տարբեր հնությունից: Հայ բարբառագիտության բնագավառում շրջադարձային եղավ Գ. Ջահուկյանի «Հայ բարբառագիտության ներածություն» (1972) աշխատությունը, որը, հանրագումարելով այդ ասպարեզի նախորդ նվաճումները, սկզբունքորեն նոր ուղի է բացում հայ բարբառների դասակարգման և բարբառագիտական ուսումնասիրությունների հետագա ծավալման համար, այն մեր իրականության մեջ բարբառագիտության զարգացման նոր փուլ է սկզբնավորում ինչպես քննարկվող հարցերի լայն շրջանակով, այնպես էլ հետազոտության նոր մեթոդների կիրառությամբ: Հեղինակի քննության առարկան են դարձել բարբառագիտական այնպիսի հարցեր, ինչպիսիք են բարբառների դասակարգման, գրական լեզուների ու բարբառների փոխհարաբերության, նրանց «մաքրության» աստիճանի, ժամանակագրական տարբեր կտրրվածքներում բարբառային իրադրության բնորոշման, բարբառների բաժանման ժամանակագրության, բարբառային հնագույն տարբերությունների, արդի բարբառների հնաբանությունների և այլ հարցեր: Նշված խնդիրների լուսաբանման համար հեղինակը կիրառում է տարբեր մեթոդներ (պատմահամեմատական, լեզվաժամանակագրական, վիճակագրական)՝ միմյանց հետ համադրելով դրանց արդյունքները: Այդպիսով Գ. Ջահուկյանը ստեղծում է բարբառագիտական մի նոր գիտակարգ՝ վիճակագրական բարբառագիտություն, և համապատասխան մեթոդ: Հաշվի առնելով բարբառային միավորների վերաբերյալ առկա տվյալները, բարբառների ուսումնասիրվածության աստիճանը, գիտական ավանդույթը՝ հեղինակը բարբառների դասակարգման համար գործածում է 100 առավել էական հատկանիշներ, որի շնորհիվ ավելի ճշգրիտ են դառնում հայերենի բարբառների տարանջատումն ու դասդաս-

աումը: Հայերենի պատմական բարբառագիտության մեջ Գ. Ջահուկյանը կարևոր ներդրում ունի հին հայերենի բարբառների դասակարգման իր փորձով: 5-րդ դարում հայերենի բարբառային տարբերակվածության խնդիրները քննելիս նա առաջ է քաշում առանձին հատկանիշների՝ ըստ բարբառախոս վայրերի տեղայնացման մեթոդը և որոշում հին հայերենի շրջանում հնարավոր բարբառներն ու դրանց փոխհարաբերությունների հավանական պատկերը: Լեզվաբանը անդրադարձել է նաև հայոց լեզվի զարգացման տարբեր շրջաններում բարբառների և գրական լեզուների փոխհարաբերությունների խնդրին, ներկայացրել բարբառային հնագույն տարբերությունների հետքեր գրաբարում, հնչունաքերականական ու բառային հնաբանություններ արդի բարբառներում և այլն:

Գ. Ջահուկյանի գիտական գործունեության մեջ հատուկ տեղ է գրավում արդի հայերենի ուսումնասիրությունը: «Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը» (1969), «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ» (1974), «Ժամանակակից հայերենի իմաստաբանություն և բառակազմություն» (1989) և այլ աշխատանքներում Գ. Ջահուկյանն առաջ է քաշել և կիրառել լեզվաբանական նկարագրության նոր՝ լեզվի բովանդակության և արտահայտության պլանների հարաբերակցված քննության սկզբունքը: «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ» աշխատությամբ Գ. Ջահուկյանը ներկայացնում է լեզվի համաժամանակյա ուսումնասիրության մի համապարփակ ուսմունք, ընդ որում՝ հայ լեզվաբանության մեջ առաջին անգամ ուսումնասիրվում են փոխկադապարման հարցերը: Լեզվաբանը նորագույն լեզվաբանության հայեցակետով քննում է արտահայտության ուսմունքի, քերականության և քերականական փոխակերպման ու

փոխանցման բոլոր կարևորագույն հարցերը, ստեղծում ժամանակակից հայերենի ամբողջական տեսությունը:

Գ. Ջահուկյանը անդրադարձել է տեսական լեզվաբանության մի շարք հարցերի՝ դիտարկելով դրանք նոր տեսանկյունով: Նորովի է անդրադարձել լեզվի և խոսքի փոխհարաբերություններին, յուրովի է մեկնաբանել լեզվական միավորների տարբերակիչ հատկանիշներին, քերականական կարգերին, լեզվի կառուցվածքային մակարդակներին, լեզվական ու լեզվաբանական կադապարներին, լեզվաբանական հետազոտության մեթոդներին, անդրլեզվաբանությանը և այլ ոլորտների առնչվող բազում հարցեր: «Общее и армянское языкознание» (1978) աշխատությունում հեղինակի ուշադրության կենտրոնում են այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ լեզվաբանության տեղը գիտությունների համակարգում, նրա ուսումնասիրության սահմաններն ու առանձնահատկությունները, կառուցվածքը, մեթոդները և այլն: Հեղինակը հատկապես անդրադառնում է ընդհանրական լեզվաբանական կադապարի սկզբունքների և կառուցվածքի հանգամանալի բնութագրման, լեզվաբանական տիպաբանության, հնչույթի և քերականական կարգերի բնորոշման և այլ խնդիրների:

Տեսական հարցերի հետագա քննարկումները ամփոփվում են Գ. Ջահուկյանի «Համընդհանուր լեզվաբանական տեսություն» աշխատության մեջ, որն իրենից ներկայացնում է համընդհանուր լեզվաբանական կադապարի ամբողջական նկարագրություն: Նման կադապարի առաջադրումը միտված է լեզուների տիպաբանության, իմացաբանական ու լեզվաբանական կարգերի քննության, լեզվական ու արտալեզվական օբյեկտների անհակասական ու լիակատար նկարագրության եղանակների ու միջոցների ձևավորմանը: Նշենք, որ հայ նշանավոր լեզվաբանի շատ գաղափար-

ներ, առաջարկներ ու լուծումներ ընդունված են լեզվաբանության մեջ, ունեն հետևորդներ և շարունակողներ:

Գ. Ջահուկյանը հեղինակել է նաև ուսուցողական, գիտահանրամատչելի բնույթի աշխատանքներ՝ նպատակ ունենալով մատչելի եղանակով գիտելիքներ ու տեղեկություններ փոխանցել սովորողներին ու բոլոր հետաքրքրվողներին: Նա երկար տարիներ զբաղվել է գիտամանկավարժական գործունեությամբ՝ լինելով սիրված ու սպասված դասախոս ու գիտական ղեկավար: Երևանի պետական համալսարանում Գ. Ջահուկյանը վարել է ժամանակակից հայոց լեզվի, գրաբարի, հայոց լեզվի համեմատական քերականության, ընդհանուր լեզվաբանության, լեզվաբանության պատմության, գերմանական լեզուների պատմության և այլ դասընթացներ: Նրա ղեկավարությամբ բազմաթիվ երիտասարդներ կատարել են գիտության մեջ իրենց առաջին հաստատուն քայլերը: Հայ իրականության մեջ Գ. Ջահուկյանը հայտնի է իբրև գիտության ու կրթության հմուտ կազմակերպիչ: Նա ղեկավարել է ԵՊՀ օտար լեզուների, ռոմանագերմանական բանասիրության ամբիոնները: 1962 թ. մինչև իր մահը (2005թ.) նա ղեկավարել է Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը՝ մեծապես նպաստելով ակադեմիական գիտության զարգացմանը, գիտական ուսումնասիրությունների թեմատիկայի ընդլայնմանն ու արդիականացմանը, լեզվաբանական նորագույն ուղղությունների ու տեսությունների՝ հայ իրականության մեջ ներդրմանը, գիտական արդյունքների որակի բարձրացմանը, արտերկրի գիտական կենտրոնների, գիտնականների հետ համագործակցության ծավալմանն ու ծրագրերի իրականացմանը:

ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտաշխատողները այսօր էլ մեծ երկյուղածությամբ են տալիս մեծ լեզվաբանի անունը, սիրով ու երախտագիտությամբ հիշում նրա բարի խոսքն ու խորհուրդները, խորամիտ կարծիքներն ու դիտարկումները:

Վիկտոր Կատվալյան

ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրեն



**Հովհաննիսյան Լավրենտի** (Հայաստան,  
ԳԱԱ լեզվի ինստիտուտ)

**ՀԱՅԵՐԵՆԻ ԻՐԱՆԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ**

**Գ. ՋԱՀՈՒԿՅԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Հայ-իրանական լեզվական աղերսները հազարամյակների պատմություն ունեն: Առաջին գրավոր վկայությունները հայերենում արձանագրված են արդեն V դ. հայ մատենագրության մեջ:

Իրանական ծագում ունեցող բառերի առաջին քննություն-մեկնություններն էլ կատարվել են V դ. մատենագիրների կողմից:

Եզնիկ Կողբացին բացատրում է *Ջրուան* հատուկ անվան բառիմաստը՝ «բախտ կամ փառք»: Ազաթանգեղոսը *Բագայառիճ* տեղանունը համարում է պարթևերեն բառ, իսկ *Բագուան*-ի առաջին բաղադրիչը՝ իրավացիորեն *բագ* «աստված»-ը և *Բագուան*-ը թարգմանում է *դիցուան*:

Մովսես Խորենացին փաստորեն ստուգաբանում է *Շապուհ*, *Պերոզ*, *Վարազ/Վարաժ* անձնանունները:

Անկախ ստուգաբանության հավաստիությունից Խորենացին ճիշտ է թարգմանում *Կամսար* և *Մարմետ* հատուկ անունների բաղադրիչները<sup>1</sup>:

Հայերենի իրանական բառաշերտի գիտական քննություն կատարվել է համեմատական լեզվաբանության կազմավորման (19-րդ դ. սկիզբ) և զարգացման ամբողջ գործընթացում:

---

<sup>1</sup> Մանրամասն տե՛ս Լ. Հովհաննիսյան, *Բառերի մեկնությունները հինգերորդ դարի հայ մատենագրության մեջ*, Ե., 2016:

Իրանական փոխառությունների ուսումնասիրության սկզբնական շրջանում մեծ դեր են խաղացել եվրոպական համեմատաբան-հայագետները:

Նպատակահարմար չհամարելով անդրադառնալ ու գնահատել բոլոր գիտնականների ներդրումը՝ նշենք հատկապես Հ. Հյուբշմանին: Նա գիտականորեն հիմնավորեց հայերենի իրանական լեզու չլինելը՝ միաժամանակ ներկայացնելով փոխառությունների ավելի մեծ ցանկ:

*Հայերենի իրանական փոխառություններ* հասկացությունը շրջանառության մեջ մտավ դարձյալ Հյուբշմանի կողմից\*:

Հայերենի իրանական փոխառությունների, լեզվա-քերականական աղերսների հարցը տարբեր տեսանկյուններից, տարբեր մոտեցումներով ու սկզբունքներով շարունակում է մնալ հետազոտողների ուշադրության կենտրոնում:

Այդ բնագավառի բազմակողմանի, համակարգային քննություն կատարել են մեծագույն գիտնականներ Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը:

Գ. Ջահուկյանը իրանական փոխառություններին հիմնավորապես անդրադարձել է «Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան» գրքում (Ե., 1987, այսուհետև՝ ՀԼՊ):

---

\* Համեմատական լեզվաբանության կազմավորումից էլ առաջ հայ ուսումնասիրողները անդրադարձել են իրանական բառաշերտին: Լուրջ աշխատանք է Հակոբ Տյուգյանի հրատարակած Գևորգ Պալատացու բառարանը (Կոստանդնուպոլիս, 1826):

Գ. Ջահուկյանը նկատում է, որ երբեք չի կարելի Պետերմանին համարել հայերենում և իրանական լեզուներում ընդհանուր բառերի մասին խոսող առաջին հեղինակի: Այդ չի կարելի ասել այն պատճառով, որովհետև Պետերմանին քաջ ծանոթ էր Գևորգ Դպիրի աշխատանքը («ԳԱԱ տեղեկագիր», 1957, էջ 61):

Գրքում առաջադրված և քննված են հետևյալ հարցերը.

ա) իրանական լեզուները և բարբառները

բ) հայերենի կրած իրանական ազդեցության շրջանները

գ) կիմերերենի հարցը և հայերենը

դ) հայերենը և սկյութերենը

ե) հայերենը և մեդերենը (մարերենը)

զ) հայերենը և հին պարսկերենը

է) հայերենը և միջին իրանական լեզուները

ե) հայերենի իրանական փոխառությունները (ՀԼՊ, էջ 488-508):

Հարցադրումներն արդեն վկայում են, որ գործ ունենք համապարփակ քննության հետ:

Նշված աշխատության մեջ Գ. Ջահուկյանը անդրադառնում է նաև իրանական ծագում ունեցող բառերի հնչյունական առանձնահատկություններին, իրանական ձայնավորների և բաղաձայների հայկականների հետ ունեցած փոխհարաբերություններին, որ ներկայացված է աղյուսակի տեսքով (էջ 551-557):

Այս, ինչպես նաև իրանական փոխառությունների ձևաբանական, բառակազմական առանձնահատկությունների բացահայտումը (էջ 567-570) մեծապես նպաստում է փոխառությունների հիմնավորմանը:

Գ. Ջահուկյանը քննության է առել նաև բառեր, որոնք կարող են լինել փոխառություն կամ բնիկ հայերեն: «Այդպիսի երկակի գնահատման հնարավորության դեպքում հարցը հոգուտ բառի իրանական ծագման լուծելիս հաշվի են առնվում համապատասխան հնդկական ձևերը, իրանական բառակազմական կաղապարները, իրանական բաղադրությունների և համանիշների առկայու-

թյունը կամ բացակայությունը, իմաստային և բառակազմական առանձնահատկությունները, գործածությունը և այլն» (էջ 550-551):

Այս հատկանիշների հաշվառման դեպքում էլ, ինչպես իրավացիորեն նկատում է գիտնականը «մնում են դեպքեր, երբ հարցի լուծումը դժվարանում է» (էջ 551): Այդ կարգի բառերից են *բահ, գաւառ, դայեակ, թել, սար-ք, սաստել, սխալ, սկունդ, սրունք, քէն...*

Գիտնականը իրանական փոխառություններին անդրադարձել է նաև այլ աշխատություններում, պարբերականներում տպագրված հոդվածներում՝ ճշտելով կամ լրացնելով իր իսկ ստուգաբանական դիտարկումները:

Ուշադրության արժանի է հատկապես «Հայ-իրանական լեզվական զուգադիպումներ» հոդվածը<sup>2</sup>: Քննված են հետևյալ բառերը. *գարշապար\**, *թշուառ*, *խուս\**, *կարշն\**, *հաւան/հաւաստ*, *հրաշակերտ\**, *նաւակուտիք*, *շուք\** «փառք»:

Հայերենի իրանական փոխառությունները հիմնականում միջին իրանական լեզուներից են՝ պարթևերենից և միջին պարսկերենից: Պարթևերենի հիմնական իրողությունները գիտությանը հայտնի դարձան շատ ավելի ուշ: Այդ է պատճառը, որ Հ. Աճառյանը իրանական փոխառությունների շարքում պարթևական սկզբնաղբյուրը չի նշում. «Իրանյանից փոխառյալ բառերի ընդհանուր գումարն է 1405. այսքանից 960-ը փոխառյալ են պահլա-

---

<sup>2</sup> Տե՛ս «Պատմաբանասիրական հանդես», 1995 թ., № 2 (այսուհետև՝ ՊԲՀ):

\* Աստղանիշով բառերը չկան ՀԼՊ-ում, մյուսների համար առաջարկվում է ստուգաբանական լրացուցիչ փաստարկներ:

Ստուգաբանությունները զետեղված են հեղինակի «Հայերեն ստուգաբանական բառարան»-ում՝ (այսուհետև՝ ՋՀՄԲ), Ե., 2010 թ.:

վերենից, 445-ը փոխառյալ են ԺԱ դարից հետո՝ նոր պարսկերենից»<sup>3</sup>:

Հիմնականում նշվում էր *պահլավերեն* հղումը, որն արդի իրանագիտության տեսանկյունից մերժելի է:

*Պահլավերեն* ստուգաբանորեն նշանակում է *պարթևերեն*: Միջին պարսկերենը կրողները իրենց լեզուն անվանում էին pārsig կամ pārsik, ավելի ուշ՝ X-XI դդ. pārsī, արաբերենի ազդեցությամբ fārsī և հասկացվում էր նոր պարսկերենը, իսկ արդեն մեռած (չգործածվող) և միայն գրավոր հուշարձաններում պահպանված *միջին պարսկերենի* հետ չխառնելու համար վերջինս անվանվեց pahlavi<sup>4</sup>:

Գ. Ջահուկյանի աշխատություններում, ըստ հնարավորինս տարբերակված են պարթևերենից և միջին պարսկերենից անցած փոխառությունները, առանձին դեպքերում գիտնականը նշում է այլ լեզուների՝ հատկապես սողդերենի զուգահեռները:

Անշուշտ, միշտ չէ, որ միջին իրանական բառաշերտում հըստակորեն կարելի է առանձնացնել պարթևերեն և միջին պարսկերեն բառերը: Իրանագիտության նոր տվյալների հաշվառումով մենք միջին իրանական լեզուներից փոխառված բառերից 117-ը համարել ենք պարթևերեն, 87-ը միջին պարսկերեն<sup>5</sup>:

Նշենք սակայն, որ այս տարբերակման հարցում կան որոշ դժվարություններ, որովհետև՝

ա) փոխառությունների զգալի մասը չի ենթարկվում տարբերակման հայտնի հատկանիշներին

բ) որոշ բառեր պարթևերենում և միջին պարսկերենում նույնական են

<sup>3</sup> Հ. Աճառյան, *Հայոց լեզվի պատմություն*, I մաս, Ե., 1940, էջ 323:

<sup>4</sup> Основы иранского языкознания. среднеперсидские языки, Москва, 1981, стр. 7.

<sup>5</sup> Լ. Հովհաննիսյան, *Հայերենի իրանական փոխառությունները*, Ե., 1990, էջ 74-77:

զ) այդ լեզուները միմյանցից փոխառել են զգալի թվով բառեր:

\*

\* \*

Փոխառությունների գործառական և բառապաշարային առանձնահատկությունները պարզելու գործում կարևոր են համարում բառերի դասակարգումը ըստ խոսքի մասերի և փոխառու լեզվում դրանց վկայության ժամանակաշրջանի (գոնե ըստ դարերի) բացահայտումը: Գրաբարյան շրջանում վկայված փոխառությունների շարքում զգալի թիվ են կազմում V դարից վկայումները (մեր հաշվումներով 836 բառ): Մեծ մասը գոյականներ են, մյուսները հատկանշանիշ բառեր՝ ածականներ, մակբայներ: VII դ. գրավոր աղբյուրներում վկայված մոտ ութ տասնյակ բառերի շարքում գոյականներ չեն միայն *անազարս*, *համավար* բառերը:

Գ. Ջահուկյանը, ներկայացնելով իրանական փոխառությունների ցանկը, գրում է. «...իրանական փոխառությունների թիվը հասնում է 712-ի, համապատասխան վերջածանցային և վերջածանցակերպ ձևերի հետ միասին առնված՝ 837-ի ...սակայն իրականում այդ թիվը ավելի մեծ է ... հնարավոր է իրանական ծագման մեծաքանակ բառեր, որոնց բուն աղբյուրների վերաբերյալ առայժմ հայտնի իրանական տվյալներում վկայություններ չեն պահպանվել» (ՀԼՊ, էջ 549):

Ընդունելի համարելով գիտնականի այս դիտարկումը՝ կարծում ենք՝ պատմահամեմատական լեզվաբանության նոր տվյալներով կարող են և հաստատվել իրանական փոխառություններ համարվող որոշ բառերի բնիկ հայերեն լինելը:

Բոլոր դեպքերում գրաբարի փոխառյալ բառաշերտում գերակշռողը իրանական լեզուներից փոխառված բառերն են, պայմանավորված՝ արտալեզվական և լեզվական գործոններով:

Գ. Ջահուկյանը քննել է հայերենի իրանական փոխառություններին վերաբերող տարաբնույթ հարցեր, կատարել նոր ստուգաբանություններ, հնարավորինս պարզել փոխառության բուն աղբյուրը:

Ակնհայտ դժվարությունների հետ է կապված ժամանակագրության հարցի պարզաբանումը. «V դ. ավանդված հայ. բառերը ժամանակագրական առումով միատարր չեն: Մրանց մեջ կան ինչպես այդ դարից առաջ կատարված հին և միջին իրանական փոխառություններ, այնպես էլ հենց այդ դարում կատարված միջին իրանական փոխառություններ: Այդ փոխառությունների տարբերակման համար հարկավոր է նկատի ունենալ և արտաքին՝ իրանական, և՛ ներքին՝ հայկական փաստերը: Առաջին դեպքում՝ բնական է կարծել, որ հին և միջին իրանական փոխառությունները կարելի է տարբերակել առաջին հերթին հայերեն բառերի՝ հին, թե միջին իրանական ձևերին մերձավոր լինելու աստիճանով: Սակայն այս չափանիշն էլ բացարձակ արդյունք չի տալիս, եթե նկատի ունենանք համաբանական (անալոգիական) համահարթման և ժողովրդական ստուգաբանության ու վերիմաստավորման հնարավորությունը» (ՀԼՊ, էջ 552):

Համեմատական լեզվաբանության, իրանագիտության նորագույն տվյալների, իրանական լեզուների և հայերենի պատմական զարգացման առանձնահատկությունների, արտալեզվական գործոնների, նաև իր իսկ կողմից առաջադրված սկզբունքների հաշվառումով գիտնականը առաջին անգամ առանձնացրել և հիմնավորել է վաղնջական և հնագույն շրջաններում կատարված փոխառությունները:

\*  
\*   \*  
\*

**Դիտարկում.** Գրաբարը ունեցել է 36 հնչյուն՝ այբուբենում, բնականաբար 36 տառ: Տ-ն գրաբարում չկար, օտար փոխառությունների *Ֆ*-ն արտահայտվում էր *փ*-ով. հունարենից՝ *փիլիսոփոս, փիլոն, փղոմոս...*, իրանական լեզուներից՝ *փառ-ք, փարթամ, փարսախ, փարուագ...*

Իրանական *fr-* հնչյունափոխումը գրաբարում տառադարձվում էր հր-ով՝ *հրաման, հրէշ, հրէշտակ*:

Կարծում ենք՝ փոխառության ժամանակաշրջանում հայերենում եղել է *Ֆ*-ին մոտ արտաբերություն: Այդ մասին մի նուրբ ակնարկ կա Եղիշեի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» գրքում: Հովսեփ Եպիսկոպոսը պարսից զորավար Միհրնէրսեհին ուղղված պատասխան նամակում գրում է. «Ձդես չար ասացեր դու, գոն և դեւք բարի, զոր դուք և մեք հրէշտակս անուանեմք»<sup>6</sup>: *Հրէշտակ*-ը պարթևերենում *frēštak* է:

*Նաւթ*-ը նույնպես իրանական լեզուներից կատարված փոխառություն է, պրթ. \**naft* ըստ Հ. Մուրադյանի *ւ>Ֆ* փոփոխությունը պիտի որ կատարված լինի VII-VIII դարերից առաջ<sup>7</sup>:

Ի դեպ, *Ֆ* և *հ* լծորդ հնչյուններ լինելը հաստատվում է արդի որոշ բարբառների տվյալներով՝ *հող-ֆող, ֆըղ, հոտ-ֆօտ*:

---

<sup>6</sup> Եղիշեի *Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին*, Ե., 1957, էջ 31:

<sup>7</sup> Հ. Մուրադյան, *Հայոց լեզվի պատմական քերականություն*, Ե., 1982, էջ 179:



Hovhannisyan Lavrenti -The Analysis of the Iranian Loan-Words in Armenian in the Works by G. Jahukyan. - G. Jahukyan has discussed various problems concerning the loan-words, he has proposed new etymologies and specified the original sources of these borrowings.

Jahukyan is the first scientist who has identified the words borrowed in pre-literature period.

Оганесян Лаврентий - Исследование иранских заимствований в армянском языке.- Г. Джаукян исследовал разносторонние вопросы иранских заимствований армянского языка, этимологизировал новые слова, уточнил источники заимствований.

Джаукян первый ученый дифференцировавший заимствование дописьменного периода.

Սարգսյան Արտեմ (Հայաստան,  
ԳԱԱ լեզվի ինստիտուտ)

**ՀԱՅ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ Գ. ՋԱՀՈՒԿՅԱՆԻ  
ԲԱԶՄԱՀԱՏԿԱՆԻՇ ՄԵԹՈՂԸ:  
Գ. ՋԱՀՈՒԿՅԱՆԸ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ  
ԼԵԶՎԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ**

Ակադեմիկոս Գևորգ Ջահուկյանը հայ լեզվաբանության կարկառուն դեմքերից է: Նրա աշխատությունները բնութագրվում են ոչ միայն ճշգրիտ մեթոդների կիրառմամբ, այլև հայերենագիտության նոր բնագավառների բացահայտմամբ: Գ. Ջահուկյանը հայ բարբառների բազմահատկանիշ դասակարգման մեթոդի հիմնադիրն է:

Հայ բարբառների դասակարգման մինչջահուկյանական փուլը գերազանցապես բնութագրվում է որպես *միհատկանիշ* (օրինակ՝ ըստ ներկայի կազմության դասակարգվող բարբառային ճյուղերի կամ խմբերի առանձնացման՝ *ուս*, *կը* և այլն), կամ լավագույն դեպքում հատկանիշների մի որոշակի փնջի (ձայնեղության, խլության, շնչեղության, շնչեղ-ձայնեղության և այլն) տվյալների հիման վրա կատարված խմբավորումների շրջան:

Հայերենագիտության մեջ առաջին անգամ ակադ. Գ. Ջահուկյանն է ոչ միայն հստակորեն առաջ քաշել հայերենի բարբառների նկատմամբ լեզվաբանական աշխարհագրության սկզբունքներ կիրառելու պահանջը, այլև հիմնավորապես մշակվել և ներկայացվել է մի ինքնատիպ մեթոդ, որը հաջողությամբ կիրառելի է ինչպես լեզվաբանական աշխարհագրության, այնպես էլ հնդեվ-

րոպաբանության բնագավառում<sup>1</sup>: Այսպիսով, կարելի է ասել, որ Գ. Ջահուկյանը ոչ միայն հայերենագիտության մեջ կիրառել է ընդհանուր լեզվաբանության մեջ մշակված նորագույն մեթոդները, այլև հենց ինքն է արմատապես մշակել հնդեվրոպաբանության ճշգրիտ մեթոդներ և հենց ինքն էլ առաջին անգամ կիրառել դրանք:

Ձեռնարկելով հայերենի բարբառների բազմահատկանիշ դասակարգման աշխատանքի իրականացման խիստ արդիական գործը՝ Գևորգ Ջահուկյանը նախապես նպատակադրվել է հայերենի բարբառների նկատմամբ կիրառել լեզվաբանական աշխարհագրության որդեգրած մեթոդների սկզբունքները, սակայն հընթացս իր հետազոտության վաստակաշատ ակադեմիկոսը հանգում է այն ճշգրիտ եզրակացության, որ «լեզվաբանական աշխարհագրության սկզբունքների նույնական կիրառումը հայերենի նկատմամբ նախկապված է որոշակի դժվարությունների հետ, որովհետև բնակչության պարբերական տեղաշարժերը խախտել են բարբառային հատկանիշների տեղաբաշխման բնական սահմանները, և երկրորդ՝ չեն տալիս բարբառային միավորների փոխհարաբերությունը որոշելու հստակ և ճշգրիտ չափանիշները»<sup>2</sup>:

Ըստ այդմ, հաշվի առնելով ինչպես ուսումնասիրության առարկայի՝ հայ բարբառների կրած պատմական տեղաշարժերը և դրա հետևանքով առաջացած բարբառային, խոսվածքային փոխհարաբերությունների բարդ ու խճճված պատկերը՝ Գ. Ջահուկյանը անհրաժեշտ է գտել ստեղծել բարբառագիտական մի նոր առարկա, որը նա պայմանականորեն անվանել է *վիճակագրական բարբառագիտություն*:

---

<sup>1</sup> Տե՛ս **Ա.Մարգարյան**, *Լեզվաբանական տիպաբանություն*, ՀՄՀ, հ. 12, Ե., 1976:

<sup>2</sup> **Գ. Ջահուկյան**, *Հայ բարբառագիտության ներածություն*, Ե., 1972, էջ 13:

1969 թվականին տեղի ունեցած բարբառագիտական գիտա-  
ծողովում Գ. Ջահուկյանն այն անվանել է *բարբառային վիճակագրություն*:

Հաշվի առնելով այն իրողությունը, որ, ի վերջո, *բարբառային վիճակագրություն* անվանված մեթոդը ոչ միայն չափազանց մերձակից է լեզվաբանական աշխարհագրությանը, այլև, ըստ էության, այն լեզվաբանական աշխարհագրության մեջ առաջ քաշված մեթոդներից մեկն է, և կարելի է կոչել *վիճակագրական լեզվաշխարհագրություն* (статистическая лингвогеография):

Ինչպես լեզվաբանական աշխարհագրությունը, այնպես էլ Գ. Ջահուկյանի մշակած գիտաճյուղը նպատակ ունի պարզել հայ բարբառների փոխհարաբերության հստակ պատկերը, նախքան այդ կատարելով բարբառային միավորներին բնորոշ հատկանիշների ճշգրիտ դասակարգում:

Այս մեթոդի կիրառման ընթացքում գործ ենք ունենում ոչ թե քարտեզների, դրանց վրա մատնանշված զուգաբանական միավորների հետ, այլ վիճակագրական աղյուսակների և այլն: Ըստ ակադ. Գ. Ջահուկյանի «Եթե բարբառագիտական քարտեզը ներկայացնում է բարբառների տարածման բնական պատկերի մոդելը, ապա բարբառավիճակագրական աղյուսակը քարտեզի մոդելն է, այսինքն՝ մոդելի մոդելը: Այլ կերպ ասած «աղյուսակի իդեալը քարտեզն է, քարտեզինը՝ օբյեկտը»<sup>3</sup>:

«Լեզվաբանական աշխարհագրություն» մեր աշխատության մեջ քննության գործնական մասում ներկայացվել են ինչպես լեզվաբանական աշխարհագրության քարտեզագրման սկզբունքներն ու մեթոդները, այնպես էլ ջահուկյանական վիճակագրական բարբառագիտության արդյունքների հաշվառմամբ կազմված քարտեզները: Այսպիսով, ըստ էության, Գ. Ջահուկյանի մեթոդը համա-

---

<sup>3</sup> Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 14:

լրվում է գուտ բարբառագիտական և լեզվաբանական աշխարհագրության վերաբերյալ մեթոդներով: Դա կարող է մեծապես նպաստել շատ ավելի խայտաբղետ խոսվածքային իրադրություն ներկայացնող հայ բարբառների դասակարգման ժամանակ ծառացող բարդ խնդիրների հաջող լուծմանը:

Բարբառագիտական արդի հետազոտություններում այս կամ այն չափով ներկայացվում են լեզվաբանական աշխարհագրության հիմնական սկզբունքները, այն էական չափորոշիչները, որոնցով բարբառը առանձնացվում է ենթաբարբառից, վերջինը՝ խոսվածքից և այլն:

Ժամանակին Գ. Ջահուկյանը նկատել է, որ բարբառային նյութի տակավին ոչ բավարար ուսումնասիրության պատճառով, մյուս կողմից չափորոշիչների ոչ հստակ մշակվածությամբ պայմանավորված, դուռ են բացում կամայական դասակարգումների, որի արդյունքում «ամեն մի բարբառագետ իր ուսումնասիրած միավորը որակում է ըստ իր հայեցողության»<sup>4</sup>:

Ներկայումս իսպառ վերացման ճանապարհին գտնվող հայ բարբառներից շատերի նմանօրինակ դիտարկումը՝ բարբառագիտական և լեզվաբանական աշխարհագրության ատլասներ կազմելու սկզբունքներով, հնարավորություն կտա ոչ միայն հայերեն բարբառային նյութի խիստ անհրաժեշտ հավելում կատարելու ընդհանուր լեզվաբանական նյութին, այլև հարավկովկասյան տարածքում կրացահայտվի հայերեն բարբառների բաշխվածության պատմական և ժամանակակից իրավիճակները և այլն:

Հայտնի է, որ ինչպես ներլեզվական, այնպես էլ արտալեզվական ցանկացած գործընթաց սերտորեն առնչվում է սոցիալական (տեղահանություններ, գաղթ և այլն), ֆիզիկաաշխարհագրական (բնական աղետներ, երկրաշարժներ և այլն) և այլ կարգի

---

<sup>4</sup> Տե՛ս **Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 5:

գործընթացների հետ: Դրանք, անտարակույս, կապ ունեն *ժամանակային* գործոնի հետ: Ուստի լեզվաբանական ցանկացած հայեցակարգ (ներառյալ լեզվաբանական աշխարհագրությունը) ունի իր *համաժամանակյա* և *տարածամանակյա* հետազոտության հայեցակետերը: Ինչպես շատ լեզուների, այնպես էլ հատկապես հայ բարբառների համապատկերը իր տարածական կտրվածքով մի բարդ միասնություն է և դրսևորում է խիստ բազմազանություն: Յուրաքանչյուր տարածքային կետում այն ունի իրեն հատուկ համակարգը:

Անտարակույս հավասարապես ուշադրություն դարձնելով բարբառների ինչպես պատմական, տարածամանակյա դիտարկման հարցերին, դիտարկում ենք նաև ժամանակակից, համաժամանակյա վիճակը: Այդպիսով՝ ավելի ցայտուն են դառնում պատմական հանգամանքների բերումով իրականացված տեղահանությունների, բռնագաղթների թողած լեզվական ազդեցությունների արդյունքները: Անշուշտ, Գ. Ջահուկյանի մշակած հայ բարբառների դասակարգման բազմահատկանիշ մեթոդը չէր կարող միանգամից լուծել դարերի ընթացքում հայոց լեզվի կուտակած բարբառագիտական բոլոր բարդ ու խրթին խնդիրները (վաստակաշատ գիտնականը այդպիսի նպատակ բնավ չէր էլ հետապնդել): Պարզապես մեթոդյա հայերենագետները, հիմք ունենալով Գ. Ջահուկյանի մշակած ճշգրիտ մեթոդները, պետք է (չասելու համար՝ անհրաժեշտ է) իրենց նորագույն ուսումնասիրություններում, հենվելով կուտակված հսկայական նյութի վրա, քայլ պահեն 21-րդ դարի գիտական առաջընթացում:

Sargsyan Artem – Multiattribute method of the Armenian dialects by academician Jahukyan, the founder of statistic linguageography. – Scientific methods of the academician Jahukyan are characterized not only by application of modern exact sciences, but also by discovery of completely new fields in Armenology. Jahukyan is the founder of the Armenian dialects (statistic linguageography). Prior to his new approach, the period was characterized by monoattributed one, however for the first time Jahukyan applied new exact statistic methods. His new innovative method is focused on the data from both diachronic and synchronic state of the Armenian language. He used the great variety of materials and conclusions which are considered to be undisputable. The scientific works and activities of Jahukyan is the exceptional example of his commitment to the modern Armenology.

Саргсян Артем – Многопризнаковый метод акад. Г. Джаукяна классификации армянских диалектов. Г.Джаукян – основоположник статистической лингвогеографии. – Научные труды акад. Г. Джаукяна характеризуется не только применением современных точных методов, но также открытием новых отраслей в арменоведении. Г. Джаукян – основоположник многопризнаковой классификации армянских диалектов (статистической лингвогеографии). До джаукяновский период классификации армянских диалектов характеризуется однопризнаковым подходом. Г.Джаукян впервые в арменистике применил новые точные статистические методы. Метод Г.Джаукяна основывается на данных как диахронического, так и синхронического состояния армянского языка. В работах Г. Джаукяна автором использован огромный материал и выводы в его работах неоспоримы. Научная деятельность акад. Г. Джаукяна яркий пример служения арменоведению для современных арменистов.

**ՀՈՄԱՆԻՇ ՏԵՐՄԻՆՆԵՐԸ Գ. ՋԱՀՈՒԿՅԱՆԻ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Հայ լեզվաբանության նորագույն շրջանի կարկառուն ներկայացուցիչներից է Գևորգ Բեզլարի Ջահուկյանը: Անվանի լեզվաբանի գիտական ժառանգությունը բավական ընդգրկուն է և բազմատարր: Լինելով մեծ նորարար և գիտության նվիրյալ՝ նա լեզվական և լեզվաբանական ցանկացած երևույթ ուսումնասիրելիս իր ուրույն՝ ջահուկյանական ուղին է գծել: Գ.Ջահուկյանի գիտական ժառանգության անքակտելի մասն է կազմում տերմինակերտումը: Մեր ուսումնասիրությունների շրջանակում տարբեր առիթներով անդրադարձել ենք Գ. Ջահուկյանի նորաստեղծ տերմիններին, սակայն ուսումնասիրության արժանի դեռ շատ հարցեր կան: Մույն հոդվածում անդրադառնում ենք հեղինակի ընդհանուր լեզվաբանական աշխատություններում տեղ գտած հոմանիշ տերմիններին:

Տերմինների հոմանիշությունը լեզվաբանական ուսումնասիրությունների եթե ոչ առանցքային, ապա կարևոր խնդիրներից է: Այն մշտապես եղել է տարբեր հետազոտողների ուսումնասիրությունների և տեսակետների բախման առարկա: Այսպես, օրինակ՝ նկատի ունենալով տերմինի առանձնահատկությունները՝ *Ղ. Լոնտեն* կարծում է, որ որևէ մի տերմինահամակարգում տերմինները չեն կարող հոմանիշային գույզ կազմել: Բացի այդ՝ նա համոզված է, որ տերմինների հոմանիշությունը ոչ միայն անցանկալի երևույթ է,



այլն բնորոշ չէ տերմիններին առհասարակ<sup>1</sup>: Ժամանակի ընթացքում այս տեսակետը հաղթահարվեց. տերմինների հոմանիշությունը աստիճանաբար սկսեց դիտարկվել որպես հոմանիշության մի տարատեսակ<sup>2</sup>: Ինչպես ցանկացած բառ, այդպես էլ տերմինները կարող են կազմել հոմանիշային զույգեր: Ավելին՝ գիտության զարգացմանը զուգահեռ զարգացում է ապրում նաև տերմինների հոմանիշությունը: Թերևս հիմնական պատճառները լեզվական ներթափանցումներն ու փոխառություններն են:

Տերմինների հոմանիշությունը, ի տարբերություն բառային հոմանիշության, մի կարևոր առանձնահատկություն ունի: Հոմանիշ տերմինները գերազանցապես բացարձակ հոմանիշներ են, համընկնում են նույնիսկ ոճական և իմաստային-գործառական նրբերանգներով<sup>3</sup>:

Լեզվաբանության պատմության մեջ նոր տերմիններ սովորաբար ի հայտ են գալիս որոշակի բնագավառում ունեցած նոր ձեռքբերումների, նոր ուղղությունների և հայեցակարգերի ձևավորման, ինչպես նաև նախկին տեսությունների և ուղղությունների քննադատության շնորհիվ: Գ. Ջահուկյանի աշխատություններում լեզվաբանական նորաստեղծ տերմինների առկայությունը անշուշտ պայմանավորված է հեղինակի նոր ըմբռնումներով ու հայեցակետով, նոր մեթոդների կիրառմամբ, ինչպես նաև նոր տե-

---

<sup>1</sup> Տե՛ս Դ. Лотте, *Основы построения научно-технической терминологии*, М., 1961, էջ 15:

<sup>2</sup> Տե՛ս Ա. Григорян, Ե.Стрельчук, *Синонимия в терминологии методики преподавания языков*, Вестник Нижегородского университета им. Н.И. Лобачевского, 2017, № 6, էջ 161–165; Ի. Ворона, *К вопросу терминологической синонимии*, Филологические науки. Вопросы теории и практики, 2013. № 3 (21): в 2-х ч. Ч. II, էջ 50-54:

<sup>3</sup> Տե՛ս Ե.Таранова, Ж. Бубырева, А. Таранов, *Проблема синонимии в специальной терминологии*, Вестник ТГПУ (TSPU Bulletin), 2016, №2 (167), էջ 55-60:

սուբյուն առաջ քաշելու հանգամանքով<sup>4</sup>: Այդ տերմինները կարելի է բնորոշել որպես տվյալ տեսության հասկացությունների համակարգի միավորներ: Այլ կերպ՝ Գ. Ջահուկյանի տերմինաբանությունը ընդհանուր առմամբ, կարծում ենք, կարելի է համարել *համընդհանուր լեզվաբանական տեսության տերմինաբանություն*: Նորաստեղծ տերմինները և նրանց հոմանիշային գույգերը հիմնականում վերացական և ընդհանուր տեսական բնույթ ունեն:

Ներկայացնենք Գ. Ջահուկյանի նորաստեղծ հոմանիշ տերմինների քննությունը՝ ըստ հետևյալ սկզբունքների՝ *ըստ առաջացման պատճառի, ըստ բաղադրիչների քանակի, ըստ անդամների քանակի, ըստ իմաստային-գործառական առնչակցության*:

Հոմանիշ տերմինները Գ. Ջահուկյանի աշխատություններում *ըստ առաջացման պատճառի* քննելիս նկատել ենք, որ հոմանիշային գույգի կամ հոմանիշային շարքի առաջացմանը նպաստել է գերազանցապես հեղինակի՝ օտար տերմինները հայերեն համարժեքներով փոխարինելու միտումը: Տարբեր աշխատություններում Գ. Ջահուկյանն առաջարկել է օտար տերմինների հայերեն համարժեքներ, երբեմն նույնիսկ միևնույն տերմինի երկու հայերեն համարժեք՝ կազմելով հոմանիշային հետաքրքրիչ շարքեր: Այդ հոմանիշ տերմիններից շատերը բավական հաջող են և լիարժեք ու հավասարապես կիրառվում են ոչ միայն Գ. Ջահուկյանի աշխատություններում, այլև՝ ժամանակակից լեզվաբանական գրականության մեջ: Հետաքրքրական է, որ միևնույն աշխատության մեջ կարելի է նկատել հոմանիշ տերմինների հավասար կիրառություն: Հիշատակելի են հետևյալ հոմանիշ տերմինները՝ *ատրիբուտիվ և գոյորոշող, սուբստանցիոնալ և հարաբերակցական, մոնիզմ և միասնություն, ինտեգրալություն և ամբողջականություն, ռեմա և վե-*

---

<sup>4</sup> Մ. Մարգարյան, Գ. Ջահուկյանի ընդհանուր լեզվաբանական հայացքները, Ե., 2017, էջ 219:

*բարերյալ, ենթահիմք և թեմա, շարակարգ և սինտագմա, նյութականություն և սուբստանցիոնալություն, համահնչյուն և պանֆոնա, հանրահնչյուն և սոցիոֆոնա, համահենքած և կոնտեքստ* և այլն:

Թեև Գ. Ջահուկյանի աշխատություններում լեզվաբանական նորաստեղծ տերմինների առկայությունը գերազանցապես պայմանավորված է հեղինակի նոր տեսությամբ, բայց հոմանիշության տեսակետից այս հանգամանքն այնքան էլ գործուն չէ: Նշենք, սակայն, որ հանդիպում են նաև այնպիսի օրինակներ (և՛ հայերեն, և՛ ռուսերեն), երբ հոմանիշային գույզի կամ շարքի բոլոր անդամները նորաստեղծ են: Օրինակ՝ *բառույթային և բառահիմքային, հնչատակտ և հնչաշարույթ, рефлексивный терм և возвратный терм, нейтральный терм և абсолютный терм, գոյորոշող կարգ կամ ատրիբուտիվ կարգ, առգոյորոշող կարգ կամ առատրիբուտիվ կարգ* և այլն:

Հոմանիշ տերմինների առաջացման պատճառներից է նաև այն հանգամանքը, երբ հին տերմինի բովանդակության պլանը հակասում կամ ոչ լիարժեք է արտահայտում է նոր ըմբռնումը: Նմանատիպ դեպքերում Գ. Ջահուկյանը սկսում է կիրառել նոր տերմին: Այսպես, օրինակ՝ համոզված լինելով, որ համադասական շաղկապները հակադրվում են ստորադասական շաղկապներին ճիշտ այնպես, ինչպես կապերին՝ Գ. Ջահուկյանն առաջարկում է *համադասական* շաղկապները կոչել *համակապ*, իսկ *ստորադասականները՝ ստորակապ* տերմիններով՝ ստեղծելով հոմանիշ տերմիններ:

*Ըստ բաղադրիչների քանակի՝* հանդիպում են միաբաղադրիչ, երկբաղադրիչ և եռաբաղադրիչ նորակազմություններ: Հաճախական կիրառություն ունեն միաբաղադրիչ և երկբաղադրիչ հոմանիշ տերմինները, ինչպես, օրինակ՝ *շարույթ և սինտագմա, ձևակ և մորֆ, ատրիբուտիվ կարգ և գոյորոշող կարգ, ընդհանրա-*

կան կադապար և համընդհանուր կադապար, ընդհանրական լեզվաբանական տեսություն և համընդհանուր լեզվաբանական տեսություն և այլն: Հանդիպում են դեպքեր, երբ երկբադադրիչ տերմինի հոմանիշը միաբադադրիչ է, օրինակ՝ *համադասական շաղկապ և համակապ, ստորադասական շաղկապ և ստորակապ, հենքի միջուկ և բնահենք, պատասխանական բառեր և իմացարկություն, վերաբերական և վերաբերողական բառեր* և այլն:

Տերմինաստեղծումն առհասարակ բարդ և պատասխանատու աշխատանք է: Անհրաժեշտ է մի շարք հանգամանքներ հաշվի առնել, որպեսզի տերմինը հաջող և կենսունակ լինի: Գ. Ջահուկյանն իր նորարարի հմտությունները ցուցաբերել է նաև այս ապարեզում՝ կերտելով ոչ միայն հոմանիշային շարքի մեկ, այլև երկու և ավելի նորաստեղծ անդամներ: ***Ըստ հոմանիշային շարքի անդամների քանակի՝*** Գ. Ջահուկյանի նորաստեղծ տերմինները կազմում են երկու և երեք անդամ ունեցող շարքեր: Օրինակ՝ *բառույթային և բառահիմքային, հինույթային և պարբերային, արմատահիմք և սկզբնահիմք, հնչատակտ և հնչաշարույթ, հինույթ և պարբերություն կամ պարբերույթ, նշանայնություն և հոգևոր (духовность) կամ նշանային-հոգևոր (знаково-духовность), նշույթակիր և նշանակիր կամ նշակիր* և այլն: Գերակշռում են երկանդամ շարքերը: Նկատվում են դեպքեր, երբ նույն հասկացությունը կամ իմաստը տարբեր աշխատություններում տարբեր տերմիններով է արտահայտվում: Օր.՝ որպես *ինդուկցիա* տերմինի հայերեն համարժեք «Շարահյուսական ուսումնասիրություններ» աշխատության մեջ կիրառում է *ներածում* տերմինը, իսկ մյուս աշխատություններում՝ *մակածում*:

Հստակ չեն նաև *նշույթակիր, նշանակիր և նշակիր (նշույթ - маркер), հնչաշարույթ և հնչատակտ, հինույթ և պարբերություն, տեքստագիտություն և հենքագիտություն* և այլ հոմանիշ տերմին-

ների կիրառման սահմանները, և տարբեր աշխատություններում այդ հոմանիշ տերմինները հավասարապես կիրառվում են:

Ինչպես գիտենք, հոմանիշային շարքի անդամները կարող են իմաստային-գործառական տարբեր հարաբերություններ ունենալ: *Ըստ իմաստային-գործառական առնչակցության*<sup>5</sup> մեր ուսումնասիրության առարկա հոմանիշ տերմինները գերազանցապես բացարձակ հոմանիշներ են, որը, ինչպես նշել ենք վերևում, հոմանիշ տերմինների առանձնահատկություններից է: Հետաքրքրական է, սակայն, որ հանդիպել են նաև սահմանափակ թվով մասնակի հոմանիշներ: Այսպես, օրինակ՝ *բառույթ և բառահիմք, արմատահիմք և սկզբնահիմք* և այլն: *Բառույթ* ասելով՝ Գ. Ջահուկյանը նկատի ունի *բառակազմորեն ձևավորված (պարզ կամ բաղադրյալ) լիիմաստ բառը (գոյականը, ածականը, թվականը, մակբայը, դերանունը, բայը)*: Այն կարող է համընկնել *բառահիմքի* հետ, բայց առնված անկախ բառաձևից: Այսինքն՝ հոմանիշային այս գույգի դեպքում հոմանիշությունն իրացվում է մեկ իմաստով: Նմանապես առանձնացվում է նաև *արմատահիմք և սկզբնահիմք* հոմանիշային գույգը:

Գ. Ջահուկյանի լեզվաբանական ըմբռնումներին բնորոշ է աստիճանական զարգացումը<sup>5</sup>, անմասն չէ նաև տերմինակերտման ջահուկյանական սկզբունքը: Այսպես, նորաստեղծ տերմիններից մի քանիսը ի սկզբանե հանդես են գալիս որպես *համանուններ*, այնուհետև աստիճանաբար վերածվում են հոմանիշների: Հանդիպում է նաև հակառակը: Օր.՝ *Բառախոսմք* լեզվաբանական գրականության մեջ սովորաբար նշանակում է *բառերի խումբ, բառակապակցություն*, Գ. Ջահուկյանը այս տերմինը կիրառում է

---

<sup>5</sup> Տե՛ս **Մ. Մարգարյան**, *Ընդհանուր լեզվաբանական որոշ հարցերի աստիճանական զարգացումը* Գ. Ջահուկյանի աշխատություններում, Երիտասարդ լեզվաբանների հանրապետական հինգերորդ գիտաժողովի զեկուցումներ, Ե., 2015, էջ 59-71:

հետևյալ նոր իմաստով՝ *խոսքիմասային մեկ արժեք ունեցող բառերի խումբ*: Բառ- մասնիկ տերմինը հայտնի էր հետևյալ իմաստով՝ *մասնիկ, ոչ ինքնուրույն քերականական ձևույթ*, որը բառային ձևույթի հետ կազմում է շեշտային միավոր կամ բառ: Գ. Ջահուկյանը այս տերմինը սկսում է կիրառել ինքնուրույն քերականական մասնիկ իմաստով: *Կարգ* կամ կատեգորիա հասկացությունը շատ ոլորտների է բնորոշ, հաճախ կիրառվում է *դաս* տերմինի փոխարեն: Գ. Ջահուկյանն այս տերմինները կիրառում է ն՝ որպես հոմանիշներ այդ ընդհանուր իմաստով, ն՝ որպես համանուն հետևյալ բնորոշմամբ՝ հասկացական դաս, որ ունի բովանդակության և արտահայտության պլան՝ իր փոխհարաբերության առանձնահատկություններով, և որը բաղկացած է երկու հակադիր միավորներից՝ եզրերից (терм): Այն ՀԼԿ-ի առավել ընդհանուր հասկացությունների ամբողջությունն է: *Եզր* տերմինը ևս կիրառվում է որպես համանուն: Գ. Ջահուկյանի բնորոշմամբ՝ այն համընդհանուր լեզվաբանական կադապարի առավել սահմանափակ հասկացությունների ամբողջությունն է, որ կարգերի՝ առավել ընդհանուր հասկացությունների հետ հնարավորություն է տալիս տարբերակել օբյեկտներն իրարից և որոշել դրանց փոխհարաբերության տիպը:

Լեզվաբանական տերմինները պայմանական անվանումներ են, որոնք ստեղծվում են լեզվական որևէ իրողություն արտահայտելու համար: Գ. Ջահուկյանի ընդհանուր լեզվաբանական աշխատություններում առկա են ն՝ կենսունակ՝ համընդհանուր ընդունելի և կիրառելի, ն՝ ոչ կենսունակ՝ կամայական նորաստեղծ հոմանիշ տերմիններ: Թվում է՝ հարկ չկա նրանց առկայությունը համարել չարդարացված: Բոլորովին չցանկանալով նսեմացնել Գ. Ջահուկյանի մեծ դերն ու ներդրումը բազմաթիվ նոր տերմինների, ինչպես նաև հայերեն համարժեքների ստեղծման գործում, այ-

նուամենայնիվ, հեղինակի աշխատություններում ներկայացված որոշ նորաստեղծ հոմանիշ տերմինների առկայությունը համարում ենք չարդարացված: Մեր այս դիտարկումը պայմանավորված է ոչ միայն այդ տերմինների դժվարահնչությամբ, դրանց կիրառության սահմանների անհստակությամբ, այլև միևնույն լեզվական երևույթը տարբեր տերմիններով արտահայտելու ձգտումով (*հինույթ-պարբերություն, նշույթակիր-նշանակիր-նշակիր, հնչաշարույթ-հնչատակտ, տեքստագիտություն-հենքագիտություն* են): Բացի այդ՝ հեղինակի աշխատություններում տեղ են գտել նաև այնպիսի նորակազմություններ, որոնք հիմնականում պատահական բնույթ են կրում, և դժվար չէ նկատել, որ դրանց կիրառության ոլորտը հեղինակի աշխատությունների սահմանից այն կողմ չի անցնում: Նշենք, որ նմանատիպ տերմինների առկայությունը երբեմն խճողում է ընդհանուր շարադրանքը, և նման դեպքերում կարելի է անտեղի և ավելորդ համարել դրանց առկայությունը:

Ինչ վերաբերում է Գ. Ջահուկյանի տերմինակերտմանն առհասարակ, ապա նշենք, որ ժամանակակից ուսմունքների, ուղղությունների, մեթոդների տերմինաբանության մշակման առումով անգնահատելի է Գ. Ջահուկյանի դերը, քանի որ լեզվաբանական գանազան տերմիններ առաջարկել և կիրառության մեջ է դրել հենց նա: Իսկ օտար տերմինների նրա կերտած հայերեն համարժեքները՝ որպես հոմանիշ տերմիններ, հարստացնում են լեզվաբանական տերմինահամակարգերը, երբեմն դառնում ավելի կենսունակ և ձեռք բերում լայն կիրառություն:

Sargsyan Meri – Synonymous terms in the general linguistic works of G. Jahukyan. – G. Jahukyan is one of the outstanding representatives of the modern period of Armenian linguistics. The scientific heritage of the famous linguist is quite extensive and multifaceted. As a great innovator, devoted to science, he paved his own Jahukyan path, studying various linguistic phenomena. Terminology is an integral part of Jahukyan's scientific heritage. In this article, we refer to synonymous terms found in the general linguistic works of the author. We present a study of the newly created synonyms of Jahukyan according to the following principles: by reason of origin, by the number of components, by the number of members, by semantic and functional relations.

Саргсян Мери - Синонимичные термины в общелингвистических трудах Г. Джаукяна. – Г. Джаукян - один из выдающихся представителей современного периода армянского языкознания. Научное наследие известного лингвиста достаточно обширно и многогранно. Будучи великим новатором, преданным науке, он проложил свой собственный джаукяновский путь, изучая разные лингвистические явления. Терминология - неотъемлемая часть научного наследия Джаукяна. В этой статье мы ссылаемся на синонимичные термины, встречающиеся в общелингвистических трудах автора. Мы представляем исследование новосозданных синонимов Джаукяна по следующим принципам: по причине происхождения, по количеству компонентов, по количеству членов, по семантико-функциональным отношениям.



**Ամիրխանյան Անժելա** (Հայաստան,  
ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ)

**ԱՂՅԱՆ-ՄԱԼԱԹ ԶՈՒԳՈՐՂՈՒՄՆԵՐԸ ԵՎ  
ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

Յուրաքանչյուր ժողովրդի ուտեստի համակարգը ձևավորվում է բնակլիմայական պայմանների, տնտեսական զբաղմունքների, ինչպես նաև կրոնի և այլ գործոնների ազդեցությամբ: Դրանցով են պայմանավորված նաև ուտեստ-տոնածիսական մշակույթ և լեզվամտածողությունն առնչությունները:

Քրիստոնեությունը, որը մեծ ազդեցություն է թողել ուտեստի համակարգի ձևավորման վրա, տարին բաժանել է երկու փուլերի՝ ուտիսի և պասի: Ուտիսի ժամանակ ուտելիքի որևէ արգելք գոյություն չունի, մինչդեռ պասին միայն բուսական սնունդ է գործածվում:

Այս հանգամանքը ձևավորել է նաև պասին կամ ուտիսին բնորոշ որոշակի բառապաշար: Դիտարկենք աղցան բառը, որն ի սկզբանե առնչվել է պասին, սակայն ժամանակի ընթացքում, պայմանավորված հայոց տոնածիսական ավանդույթի և ուտեստի համակարգի առանձնահատկություններով, իմաստային առումով ընդլայնվել է:

Ինչպես գիտենք, քրիստոնեության սկզբնական շրջանում Մեծ պասը կոչվում էր նաև աղուհացք, քանի որ այդ ընթացքում

հացի վրա աղ էին անում և ուտում<sup>1</sup>: Աղուհացը մշտական պահեցողությամբ ապրող ճգնավորների հիմնական կերակուրն էր: Մակայն, աղուհացից բացի, նրանք նաև բուսական սնունդ, հիմնականում խոտաբույսեր էին ուտում: Այդ իսկ պատճառով բույսերով սնվողները կոչվում էին նաև բանջարակերներ կամ բանջարաձաշակներ: Նրանք ուտում էին «...բանջարիկ ինչ կամ հաց լոկ կամ ոսպն կամ այլ ինչ դեղահունդք, թե բեւեկն, թե ձիթապտուղ, կամ թուզ...»<sup>2</sup>, «ոմանք... ի կերակուրս մարդկայինս ոչ հպեցելոց, այլ խոտովք վայրենի շատացեալք...»<sup>3</sup>: Ստ. Օրբեյանը Թանահատի վանքի համար գրում է. «...Ոչ առին յանձն՝ ի կիրակէքն ի թան կամ ի պանիր կամ յիւղ խթիլ, այլ բանջարօք և ընդովք շատանային, վասն որոյ Թանահատայ կոչեցան...»<sup>4</sup> :

Խոտաբույսերը հայոց ուտեստի համակարգում գործածվում են հում կամ խաշած: Ամենապարզ եղանակը դրանց վրա աղ ցանելով ուտելն է, որն այնքան ընդունված է եղել, որ «աղուհաց» բառի նմանությամբ հանգեցրել է «աղցան» բառի առաջացմանը:

«Աղցան» բառը կազմված է «աղ» և «ցանել» բառերից: Նախնական իմաստով նշանակում է աղ ցանել և առնչվում է պասին, քանի որ այդ շրջանում բույսերը կարող էին ուտել միայն աղով: Այս երևույթը մեծ ազդեցություն թողեց հայոց ուտեստի համա-

---

<sup>1</sup> Նոր բարձրիք Հայկազեան լեզուի, հ. 1, Ե., 1979, էջ 45: **Թեոդիկ**, *Ամենուն տարեցոյց*, Ա տարի, Կ. Պոլիս, 1907, թիվ 845, էջ 56:

<sup>2</sup> **Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպոլսի եպիսկոպոսապետի մեկնութիւն թղթոցն Պաղոսի**, հ. I, Վենետիկ, Ս. Ղազար, 1862, էջ 815:

<sup>3</sup> **Գրիգոր Մագիստրոսի թղթերը**, Աղեքսանդրապոլ, 1910, էջ 137:

<sup>4</sup> **Ստեփաննոսի Մինեաց եպիսկոպոսի պատմութիւնն տանն Միսական**, Մոսկվա, 1861, էջ 117:

կարգի վրա, քանի որ աղ արած հում կամ եփած բույսը դարձավ առանձին ուտեստ և կոչվեց աղցան<sup>5</sup>:

«Աղցան» բառը մատենագրության մեջ չի հիշատակվում, Հ. Աճառյանը համարում է նոր բառ,<sup>6</sup> սակայն ազգագրական նյութերում այն, որպես առանձին ուտեստ, բազմաթիվ հիշատակություններ ունի<sup>7</sup>:

Աղցանները պասի հիմնական կերակուրներից են<sup>8</sup>: Այս երևույթը բացատրվում է նաև այն հանգամանքով, որ բավականին երկար ժամանակ այդ շրջանում արգելվում էր ձեթի և ընդեղենի գործածությունը, միայն հաց ու բանջար էին ուտում<sup>9</sup>:

Որպես աղցան հիմնականում կիրառվել են վայրի բույսերը, քանի որ մինչև 20-րդ դարի սկիզբը մշակովի բանջարեղենի տեսականին բավականին սահմանափակ էր: Դրանց մի մասը (ավելուկ, նվիկ, սպիտակ բանջար, շեպ, սիբեխ և այլն) նաև ձմռան համար

---

<sup>5</sup> Վ. Բոդյան, *Երկրագործական մշակույթը Հայաստանում*, Ե., 1972, էջ 5: Գ. Հակոբյան, *Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը*, Ե., 1974, էջ 68: Ս. Ավագյան (Մերինե), *Արձակ*, ՀԱԲ, հ. 8, Ե., 1978, էջ 45-47:

<sup>6</sup> Հ. Աճառեան, *Հայերեն արմատական բառարան*, հ. 1, Ե., 1926, էջ 116:

<sup>7</sup> Ա. Հարությունյան, *Տարոնի ազգագրական նյութեր*, ՀԱԻ ԱԲԱ, Գործ 69, էջ 46: Գ. Գեորգեան, *Չնքուշպատում. քննական պատմություն հայոց Չնքուշի (տեղագրական-պատմական-մշակութային-բանահյուսական-ազգագրական)*, հ. 1, Երուսաղեմ, 1970, էջ 365: Ա. Հովակիմյան, *Գարբիի ազգագրական նյութեր*, ՀԱԻ ԱԲԱ, թիվ 70, էջ 75: Ա. Դարբինյան, *Մոկսի ազգագրական և բանահյուսական նյութեր*, ՀԱԻ ԱԲԱ, 1960-62, Գործ 24, էջ 1: Յ. Սարգիսեան (Ալեուր), *Բալու (իր սովորոյթները, կրթական ու իմացական վիճակը եւ բարբառը)*, 1932, Գահիրե, էջ 182, 186, 188 189: Գ. Ստեփանյան, *Սևանի շրջանի Դրմաշեն գյուղի ազգագրական նյութեր*, ՀԱԻ ԱԲԱ, թիվ 25, էջ 75:

<sup>8</sup> Ս. Զեյնսկի, *Բոյսերի գործածութիւնը Երևանի նահանգում*, ԱՀ, Դ գիրք, թիվ 2, Թիֆլիս, 1898, էջ 184: Յ. Մալխասեան, *Հայ գեղջուկի այրմը*, ԱՀ, Զ գիրք, Թիֆլիս, 1900, էջ 204:

<sup>9</sup> Ս. Օրմանեան, *Ծիսական բառարան*, Անթիլիաս, 1979, էջ 57: Վ. Հացունի, *Ճաշեր եւ խնձորք հին Հայաստանի մէջ*, Վենետիկ-Ս. Ղազար, 1912, էջ 416-17:

չորացրել են և հատկապես պահել Մեծ պասի համար: Օրինակ, պասի առաջին օրը որոշ ազգագրական շրջաններում չորացրած գամպուրը խաշում և աղով ուտում էին իբրև աղցան<sup>10</sup>: Ըստ 1650 թ. Պոլսում գրված տոնացույցի ճաշացանկի, Ավագ շաբաթ օրը, երեկոյան, ձու ուտելուց առաջ, նախ նվիկ էին ուտում կամ էլ այլ բանջար<sup>11</sup>:

Եթե քրիստոնեության սկզբնական շրջանում ձեթի գործածության արգելքի պատճառով հում կամ խաշած բանջարներն ուտում էին միայն աղ անելով, ապա հետագայում դրանց ավելացնում էին քացախ, լիմոնի հյութ, ձեթ, սոխ, սխտոր, պղպեղ, ազոխջուր և այլն<sup>12</sup>, որոնք համարվեցին Մեծ պասի ընթացքում կիրառվող ուտեստի պարտադիր բաղադրիչներ:

Հարկ է նշել, որ չնայած բույսերն աղով ուտելու ավանդույթը սահմանված էր պասի կանոններով, սակայն այն կենցաղավարել է նաև ուտիսի<sup>13</sup>: Մեր օրերում ևս, հատկապես գարնանը, որը վայրի բույսեր հավաքելու շրջանն է, անկախ պաս կամ ուտիս լինելուց, մեծ տարածում ունի հում կամ խաշած բույսերը (վայրի կամ մշակովի) աղ անելով ուտելու ավանդույթը: Մինչև 1980-ականները դաշտ գնալիս մարդիկ իրենց հետ պարտադիր աղ էին ունենում,

---

<sup>10</sup> **Յ. Սարգիսեան**, նշվ. աշխ., էջ 188:

<sup>11</sup> **Վ. Հացունի**, նշվ. աշխ., էջ 435:

<sup>12</sup> **Ս. Ամատունի**, *Հայոց բան ու բան*, Վաղարշապատ, 1912, 159: **Ս. Զելինսկի**, նշվ. աշխ., էջ 184, 186: **Գ. Գեորգեան**, նշվ. աշխ., էջ 364: **Յ. Սալխասեան**, նշվ. աշխ., էջ 204:

<sup>13</sup> **Ս. Զելինսկի**, նշվ. աշխ., էջ 184: **Յ. Սարգիսեան**, նշվ. աշխ., էջ 189: **Ա. Բարսեղյան**, *Մոկաց ազգագրական նյութեր*, ՀԱԻ ԱԲԱ, 1961, գործ 8, էջ 148: **Ս. և Վ. Սանասարյաններ**, *Կարևո գավառի ազգագրական նյութեր*, ՀԱԻ ԱԲԱ, Գործ 121, մաս V, 1965, էջ 52, 110: **Գ. Գեորգեան**, նշվ. աշխ., էջ 365: **Ա. Ամիրխանյան**, *Դաշտային ազգագրական նյութեր* (այսուհետև՝ ԴԱՆ), Լոռու մարզ, 2009-2014, Տավուշի մարզ, 2015-2017:

որպեսզի այնտեղ հավաքած բույսերը (եղինջ, սինձ, դաղձ, վայրի սխտոր, սոխ և այլն) անմիջապես աղով շաղախելով ուտեն<sup>14</sup>:

Այսօր էլ աղցանները՝ աղ արած խաշած բույսերը, հայոց ուտեստի համակարգի կարևոր բաղադրիչներ են, դրանց մի մասը նույնիսկ չափազանց հարգի է, ինչպես օրինակ, խաշած սինդրիկը Լոռիում կամ բոխին Վայոց ձորում<sup>15</sup>:

**Աղցան և սալաթ.** Հայերենում սալաթ բառի փոխարեն գործածում ենք աղցան բառը: Սալաթ բառը եվրոպական լեզուներին է անցել իտալերենից և նշանակում է այսպես կոչված սալաթային (տերևային) բանջարեղենից աղով, քացախով, ձեթով և այլ համեմունքներով կերակուր:

Միջերկրական ծովի ավազանում հնագույն ժամանակներից կիրառվող և Հին Հունաստանում ու Հռոմում ամենից մեծ տարածում ունեցող բանջարաբույսը հազարն էր (լատուկ, կաթնուկ, մառուլ, աղցանախոտ, լատ. *Lactuca L.*)<sup>16</sup>: Այն կիրառվել է նաև հայոց մեջ, դրա գործածության և օգտակարության մասին հիշատակում է Եզնիկ Կողբացին. «Եւ զհազար՝ եթէ ի սօթ ժամանակի ուտիցէ ոք, քանզի զովացուցիչ է, զտապս ի փորոյն փարատէ. եւ եթէ ի հով ժամանակի ուտիցէ ոք, վնասէ. եւ եթէ զզուրն քամեալ անապակ ըմպիցէ ոք, սաստակի. եւ եթէ զսերմն աղացեալ՝ ջրով ըմպիցէ ոք, ի ցանկութենէ արկանէ»<sup>17</sup>: Հազարի վայրի և մշակովի տեսակները, որոնցից է նաև իշու մառուլը, հայոց մեջ կիրառվել են

<sup>14</sup> Ա. Ամիրխանյան, ԴԱՆ, Լոռի, 2010-13:

<sup>15</sup> Ա. Ամիրխանյան, ԴԱՆ, Լոռի, 2014-2015: ԴԱՆ, Վայոց ձոր, 2019:

<sup>16</sup> Ժ. Օրլովա, *Ամեն ինչ բանջարեղենի մասին*, Ե., 1984, էջ 227:

<sup>17</sup> Եզնիկայ Կողբացոյ Բանգրեւանոյայ եպիսկոպոսի Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826, էջ 66-67:

ինչպես ուտեստում, այնպես էլ բժշկության մեջ<sup>18</sup>: Ըստ Գր. Մագիստրոսի բույսը հազար է կոչվում, քանի որ «վասն բազմաթերթութեան առած է»<sup>19</sup>:

Սալաթը XVI-XVII դդ. Իտալիայից նախ տարածվեց Ֆրանսիայում, որն այդ ուտեստի համար դարձավ երկրորդ հայրենիք: Ֆրանսիական խոհանոցում առաջին սալաթները պատրաստում էին լատուկից, այդ իսկ պատճառով այս բույսն ստացավ սալաթ անվանումը և փոխանցվեց եվրոպական մյուս լեզուներին, ինչպես նաև հայերենին: Իսկ սալաթային բույսեր սկսեցին կոչել մշակովի և վայրի տերևային բանջարեղենը:

Սալաթները XVIII դ. Եվրոպայում, Ռուսաստանում բարձրաշխարհիկ հասարակության համար հարգի ուտեստներ էին<sup>20</sup>: «Սալաթային վարպետներ» էին համարվում ֆրանսիացիները, որոնցից հայտնի է մի սնանկացած ազնվականի պատմությունը, որը Լոնդոնում մեծ հարստություն է կուտակում սալաթ պատրաստելով<sup>21</sup>:

Հայոց մեջ համեմունքներով և տերևային բանջարեղենով պատրաստված աղցանները միանգամայն համընկնում էին եվրոպական հիշյալ սալաթների հետ: Ուստի արդեն XIX դ. նմանատիպ եվրոպական սալաթները հայերենում կոչվում էին աղցաններ<sup>22</sup>:

---

<sup>18</sup> **Ամիրտովլաթի Ամասիացույ Անգիտաց Անպէտ կամ բառարան բժշկական նիւթոց**, Վիեննա, 1926, էջ 173, 213:

<sup>19</sup> **Ղ. Ալիշան**, *Հայրուսակ կամ հայկական բուսաբանություն*, Վենետիկ-Ս. Ղազար, 1895, էջ 346:

<sup>20</sup> **В. Даль**, *Толковый словарь*, т. 4, М., 1935, с. 132. **В. Похлёбкин**, *Основы кулинарного искусства, Салаты*, <https://supercook.ru/pohlebkin-zk-12.html>, **Ժ. Օրլովա**, նշվ. աշխ., էջ 229:

<sup>21</sup> **Օրլովա**, նշվ. աշխ., էջ 229: **В. Похлёбкин**, նշվ. աշխ.:

<sup>22</sup> **Յ. Մելիք-Բախտամեանց**, *Տանտիկին և խոհանոց*, Թիֆլիս, 1889, էջ 135-137: **Ա. Պերպլերեան**, Աղցանը սեղանի վրա, *Հայ բոյժ*, թիվ 34, յուլիս, Փարիզ, 1937, էջ 178:

Ժամանակի ընթացքում աղցան բառի իմաստն ընդլայնվեց, այդպես կոչվեցին ոչ միայն քացախով, ձեթով ու տերևային բանջարներով, այլև ընդեղենով, մշակովի բանջարեղենով (բազուկ, լոբի, լոլիկ, վարունգ և այլն) և այլ համեմունքներով պատրաստված ուտեստները<sup>23</sup>:

Ուշագրավ է, որ բառիմաստի ընդլայնում տեղի ունեցավ նաև եվրոպական լեզուներում, որտեղ սկսեցին սալաթ անվանել նաև մրգերով, սնկերով, մսամթեքով, կաթնամթեքով և այլ բաղադրիչներով սառը ուտեստները: Քանի որ հայերենում «սալաթ» բառի փոխարեն արդեն ընդունված էր «աղցան» բառը, հիշյալ ուտեստները ևս կոչվեցին աղցաններ:

**Տապակած բույսերն իբրև աղցան.** Հայոց ուտեստի համակարգում մեծ տեղ է զբաղում նաև տապակած բանջարները, որոնք տապկոց<sup>24</sup>, բորանի<sup>25</sup> և այլ ավանումներից բացի, կոչվում են նաև աղցաններ<sup>26</sup>: Այս հանգամանքը ցույց է տալիս, որ ժամանակի ընթացքում, երբ պասիս թույլատրվեց նաև ձեթի կիրառությունը, և հնարավոր դարձավ բույսերին աղից բացի նաև ձեթ ավելացնել կամ էլ տապակել, դրանց համար «աղցան» բառը պահպանվեց: Ընդ որում, աղցան են կոչվում ոչ միայն ձեթով, այլև կովի արդար յուղով տապակած բանջարները:

---

<sup>23</sup> **Ս. Գաբրիելյան**, *Ակնայ գաւառաբարբառը եւ արդի հայերէն լեզուն*, Վիեննա, 1912, էջ 236: **Յ. Չոլաքեան**, *Քեսայ*, հ. Բ, Հալեպ, 1998, էջ 142-144:

<sup>24</sup> **Գ. Հալաջյան**, *Դերսիմի հայերի ազգագրությունը*, ՀԱԲ, հ. 5, Ե., 1973, էջ 67, 232, 240: **Գ. Տէր Վարդանեան**, *Երզնկա-Կամախ գաւառաբարբառը եւ ազգագրական յուշեր*, Երուսաղէմ, 1968, էջ 290: **Ս. Շ.**, Լեռուորներ (գաւառական կէանքէ), *Բիւր-սկն*, թիվ 43, 21 նոյեմբերի, Կ. Պոլիս, 1900, էջ 678:

<sup>25</sup> **Ս. Զելինսկի**, նշվ. աշխ., էջ 184:

<sup>26</sup> **Ե. Լալայեան**, *Գանձակի գաւառ*, ԱՀ, հինգերորդ տարի, Զ գիրք, Թիֆլիս, 1900, էջ 307: **Ե. Լալայեան**, *Բորչալուի գավառ*, ԱՀ, ութերորդ տարի, Գիրք X, Թիֆլիս, 1903, էջ 143: **Ա. Ամիրխանյան**, ԴԱՆ, Լոռի, 2013, Տավուշ, 2015, Վայոց ձոր, 2019:

Բացի տապակած բանջարներից, աղցան են կոչվում նաև որոշ կերակուրներ, որոնցից է բլդուրով և ապուխտով եփած մատիտեղը<sup>27</sup>:

**Աղցանը որպես վայրի ուտելի բույսերի ընդհանրական անվանում.** Հայերենում բոլոր վայրի ուտելի բույսերի համար մեծ մասամբ կիրառվում է ընդհանրական «բանջար» բառը: Սակայն որոշ պատմագագրական շրջաններում, ինչպես օրինակ Լոռիում և Տավուշում, բանջար ասելով նկատի ունեն միայն եղինջը:<sup>28</sup> Բանջար է կոչվում նաև մատիտեղը, որը եղինջի նման «վայրաբոյս բանջարներում մեջ ամենէն անելի ընդհանրացած ու տարածուածն է. աղքատը թէ հարուստը, քաղքենին թէ գեղջուկը հաւասարապէս կը սիրեն»<sup>29</sup>:

Բացի բանջարից, վայրի ուտելի բույսերի համար գոյություն ունի նաև աղցան ընդհանրական անվանումը<sup>30</sup>: «Աղցանները այն խոտերն են, որոնք գարնանը թարմ հասակում մարդիկ գործ են ածում թէ կերակրների մեջ եւ թէ առանց եփելու: Աղցանը համանուն է բանջար բառին», գրում է Հ. Աթանասյանցը<sup>31</sup>: Կ. Գաբիկյանը նույնպես նշում է, որ «այսպէս են կոչվում գարնանային բոլոր ուտելի բանջարները, որոնցից աղցան են պատրաստում»<sup>32</sup>: Նա

---

<sup>27</sup> **Կ. Գաբիկեան**, *Հայ բուսաշխարհ*, Երուսաղէմ, 1968, էջ 149:

<sup>28</sup> **Ա. Ամիրխանյան**, ԴԱՆ, Լոռի, 2010-2014, Տավուշ, 2015:

<sup>29</sup> **Կ. Գաբիկեան**, նույն տեղում:

<sup>30</sup> **Գ. Գալուստեան**, Բանջարեղէններուն արժէքը, *Հայ բոյժ*, 8-րդ տարի, թիվ 98, փետրուար, Փարիզ, 1948, էջ 37: **Ա. Հովակիմյան**, նշվ. աշխ., էջ 79: **Ն. Բյուզանդացի**, *Քննարատութիւն Հայբուսակի*, Վիեննա, 1925, էջ 185: **Յ. Սարգիսեան**, նշվ. աշխ., էջ 186, 188: **Գ. Հալաջյան**, նշվ. աշխ., էջ 62: **Ս. Ամատունի**, նշվ. աշխ., էջ 24: **Ա. Ամիրխանյան**, ԴԱՆ, Բյուրական, 2019:

<sup>31</sup> **Յ. Աթանասեանց**, Երեւանի նահանգի բուսականութիւնը. Աղցաններ, *Պսակ*, թիվ 34, նոյեմբերի 8, Ե., 1880, էջ 1:

<sup>32</sup> **Կ. Գաբիկեան**, նշվ. աշխ., էջ 13:



աղցան ասելով նկատի ունի երկու իմաստ՝ վայրի ուտելի բույս, ինչպես նաև խաշած և աղ արած բանջար (վայրի կամ մշակովի):

Որոշ վայրերում «աղցան» բառի իմաստն ավելի ընդլայնվելով՝ վերագրվել է և՛ մշակովի, և՛ վայրի բանջարեղենին<sup>33</sup>: Հայերենում գոյություն ունի նաև «աղցանավաճառ» բառը, որը նշանակում է աղցանացու բանջար վաճառող<sup>34</sup>:

**Աղցան անունով բույսեր.** Բացի վայրի ուտելի բույսերին՝ բանջարներին, տրվող աղցան հավաքական անունից, այդպես են կոչվում նաև որոշ բույսեր: Դրանցից են ճերմակ աղցանը<sup>35</sup>, սև աղցանը<sup>36</sup>, իրիցի աղցանը<sup>37</sup>, հավակատարը և սիբեխը:

Մեր դաշտային ազգագրական նյութերում հավակատարի (զիմել, զիմբել) համար գրանցել ենք նաև աղցան (ախցան, աղժան) անվանումը:<sup>38</sup> Ըստ այդ նյութերի, զիմելը միայն տապակում են, որը Տավուշում կոչվում է աղժան, իսկ Լոռիում՝ զիմելի աղցան<sup>39</sup>:

Աղցան է կոչվում նաև նոր դուրս եկած, մատղաշ սիբեխը<sup>40</sup>, որը խաշում են, աղ և քացախ ավելացնում, կամ էլ՝ տապակում: Ուշագրավ է, որ վեգետացիոն հաջորդ փուլում, երբ բույսը զոխ է տալիս և գործածվում թթու դնելու համար, մի շարք բարբառներում կոչվում է զոխ<sup>41</sup>:

---

<sup>33</sup> **Տ. Նավասարդեանց**, *Բառզիրք արարտեան բարբառի*, Տիփսիս, 1903, էջ 8:

<sup>34</sup> Նոր բառեր, Գ պրակ, Ե., 2017, էջ 9:

<sup>35</sup> **Կ. Գաբիկեան**, նշվ. աշխ., էջ 140:

<sup>36</sup> **Կ. Գաբիկեան**, նշվ. աշխ., էջ 213:

<sup>37</sup> **Հ. Աթանասեանց**, *Երեւանի նահանգի բուսականությունը*, Ե., 1881, էջ 77:

<sup>38</sup> **Ա. Ամիրխանյան**, ԴԱՆ, Տավուշ, 2014:

<sup>39</sup> **Ա. Ամիրխանյան**, ԴԱՆ, Լոռի, 2009-2014:

<sup>40</sup> **Ա. Ամիրխանյան**, ԴԱՆ, Մալիտակ, Լեռնանցք, Արևաշող, 2009:

<sup>41</sup> **Ա. Ամիրխանյան**, ԴԱՆ, Մարամեջ, Լեռնանցք, Արևաշող, 2009:

**Աղցան անել-ծեծել.** Աղցանի համար բույսերը ձեռքով ճմլել են, մանր կտրտել և այլն: Մինչ օրս հում եղինջը ուտում են նաև ափերի մեջ աղով շաղախելով<sup>42</sup>: Հատկապես խաշած բանջարները, որպեսզի լավ ջրքամվի, ձեռքով ճզմում են: Մալխասյանն այս առթիվ նշում է, որ «...բոյսը լաւ խաշում են, քամում ու ձեռքերով ճմլում, ջարդում (ինչպէս իրենք են ասում), յետոյ վրան առատ աղ են ցանում, քիչ էլ ձէթ, և ուտում»<sup>43</sup>: Արցախում աղցան է կոչվում եփած, ճմռած և աղ արած բանջարը<sup>44</sup>:

Ուշագրավ է, որ այս հանգամանքն «աղցան» բառին նոր իմաստ է տվել: Հայերենի մի շարք բարբառներում «աղցան անել» նշանակում է սաստիկ ծեծել<sup>45</sup> («Էսպէս միս ու աղցան անելով ընկան եղեններիցը»<sup>46</sup>, «Մին ասում են՝ տասը զարկում,/Աղցան անում, մեջտեղ ձգում/Իր շան կողքին երկար ու մեկ»<sup>47</sup>): Աղցան դառնալ նշանակում է ոչ միայն շատ ծեծվել, այլև հոգնածությունից սաստիկ ուժասպառ լինել<sup>48</sup>:

Այսպիսով աղցան բառի իմաստային դրսևորումները ցույց են տալիս, որ այդպես են կոչվում ուտեստի որոշ տեսակներ և մի շարք վայրի ուտելի բույսեր: Աղցան բառը գործածվում է նաև որպես բոլոր տեսակի վայրի ուտելի բույսերի ընդհանրական

---

<sup>42</sup> **Ա. Ամիրխանյան,** ԴԱՆ, Լոռի, 2010-2014, Տավուշ, 2015, Վայոց ձոր, 2019:

<sup>43</sup> **Յ. Մալխասեան,** նշվ. աշխ., էջ 204:

<sup>44</sup> **Ա. Յու. Սարգսյան,** *Ղարաբաղի բարբառի բառարան*, Ե., 2013, էջ 34:

<sup>45</sup> **Ա. Ամիրխանյան,** ԴԱՆ, Լոռի, Տավուշ, 2013-2016:

<sup>46</sup> **Խ. Աբովեան,** *Վերք Հայաստանի. Ողբ հայրենասիրի. պատմական վէպ*, Թիֆլիս, 1858, էջ 197:

<sup>47</sup> **Հ. Թումանյան,** *Երկերի լիակատար ժողովածու*, հ. 2, Քառյակներ, բալլադներ, թարգմանություններ, Ե., 1990, էջ 161:

<sup>48</sup> **Հ. Աճառեան,** Գաւառական բառարան, *Էմինեան ազգագրական ժողովածու*, հ. Թ, Թիֆլիս, 1913, էջ 83:

անվանում: Աղցան անել նշանակում է նաև ինչ-որ մեկին չափից դուրս ծեծել ու ջարդել:

Anzhela Amirkhanyan - “Aghtsan”- salad associations and semantic manifestations in Armenian- The word “Aghtsan” has been comprised of the words «աղ»/agh/ (meaning salt) and «ցանել» /tsanel/ (to sprinkle) and originally meant to sprinkle salt. Primarily the word referred to fasting, as during that period the greens were eaten with salting them. As a result, the raw or cooked salted greens became separate dish in the Armenian cuisine, called salad, to which different spices could also be added. The ingredients of “aghtsan” coincided with the dish called “salad” made in Europe in the 17th-18th centuries, hence in Armenian they were called “aghtsans”. Over time, the meaning of the word “aghtsan” has expanded. A number of dishes as well as some wild edible plants started to be called “aghtsan”. The word “aghtsan” has become the common name for all kinds of wild plants. “To make aghtsan” as a collocation also means being overly beaten and broken.

Анжела Амирханян - „Ахцан”- „салат” сочетания и семантические проявления в армянском языке - Армянское слово «ахцан» состоит из слов «աղ» /ax/(соль) и «ցանձի» /tsanel/ (посыпать) и в первоначальном смысле означало посыпать солью. Изначально, это слово относилось к постному периоду, поскольку во время поста люди питались зеленью посыпая их солью. В результате в армянской кухне посоленная сырая или вареная зелень стала отдельным блюдом - «ахцаном» (салатом), в которое также можно было добавлять специи. По составу «ахцан» совпадал с блюдами, которые назывались «салатами» в Европе XVII-XVIII вв., и поэтому на армянском они тоже назывались «ахцан». Со временем значение слова «ахцан» расширилось. «Ахцанами» назывались как некоторые виды блюд, так и ряд съедобных дикорастущих растений. Слово «ахцан» стало нарицательным для некоторых видов диких съедобных растений. Выражение «сделать ахцан» также означало быть избитым и сломанным.

**Գալստյան Աշոտ** (Հայաստան,  
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ)

**ՀՈՒՇԱԳՐԱԿԱՆ ԲՆԱԳՐԻ ԼԵԶՎԱՍՏԱԾԱԿԱՆ  
ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ**

*Հուշագրությունը* (ֆրանս. memoires), ըստ հեղինակի հայեցողության, անցյալի՝ հետաքրքրություն ներկայացնող դեպքերի ու դեմքերի մասին հիշողություն է, որն ունի ժանրային առանձնահատկություն:

Գեղարվեստական վավերագրության տեսակներից են հուշերը, օրագրերը և ուղեգրությունները, որոնք համարվում են գեղարվեստական գրականության մի առանձին և ուրույն ենթաբաժին: Նման երկերի լեզվին, հատկապես գրական ոճին բնորոշ են սեղմությունը, անմիջականությունը, մտերմիկ շարադրանքը, պարզությունը:

Գլխավորը, որին ձգտում է մեմուարիստը, հիշողությունների մեջ վերակենդանացող անցյալ իրականության, դեպքերի ու դեմքերի և նրանց ունեցած փոխհարաբերությունների ճշմարտացի վերարտադրությունն է, բայցևայնպես մեմուարներում իրական կյանքը, եղելություններն ու անձնավորությունները սովորաբար վերապատկերվում են գեղարվեստական հանդերձավորմամբ:

Գիտական գրականության մեջ առանձնացվում է մեմուարների երկու տեսակ: Առաջինն ընդգրկում է ինքնակենսագրական հուշեր, որոնց «սյուժեն» հեղինակի կյանքի, տեսածի և ապրածի ընթացքն է: Երկրորդը գրական դիմանկարն է, որտեղ ներկայացվում են դրվագներ նշանավոր մարդկանց կյանքից,

գնահատվում է նրանց կատարած գործունեությունը<sup>1</sup>:

Նշենք, որ հուշագրության որոշ բնագրեր հյուսվում են նաև երկու անձերի շուրջ: Օրինակ՝ Ա. Ահարոնյանի «Անդրանիկ և Խրիմյան Հայրիկ», Մ. Աղայանի «Ղազարոս Աղայանն ու Հովհ. Թումանյանը», Տ. Նազարյանի «Հայր Ղևոնդ Ալիշան և Խրիմյան Հայրիկ» և այլ հուշագրություններ: Այստեղ հուշագրի մտածողությունը պատվում է նույն առանցքի շուրջ: Էականը հեղինակի գոհունակությունն է, որը, սակայն, սուբյեկտիվ է: Հեղինակը հաշվի է նստում նրանց հետ, ում հետ շփվել է: Բայց այս դեպքում բնորոշները երկուսն են: Առանձնացնում է հայտնի դեմքերին և ռճավորում խոսքը: Հուշագիրը հերոսների մասին այնքան է պատկերավոր ու կենդանի արտահայտվում, որ նրանք ամբողջանում են իբրև «գեղարվեստական կերպարներ»:

Գեղարվեստական վավերագրությունը առանձին և ինքնուրույն ժանր է, որով ստեղծագործողներն ըստ էության երևան են բերում այնպիսի բնագրեր, որոնք ամբողջական առումով ոչ գեղարվեստական են. առավել շատ կառուցված են վավերականի (տեղի ունեցածի) և գեղարվեստի համադրությամբ:

Եթե գեղարվեստական ստեղծագործության մեջ հեղինակը դեպքերի ընթացքն ինքն է կառուցում նախապես ուրվագծված ձևով, ապա հուշագիրը եղած փաստերից է խոսք կառուցում: Գլխավորը, որին ձգտում է հեղինակը, անցյալի իրականության, դեպքերի և դեմքերի, նրանց ունեցած փոխհարաբերությունների ճշմարիտ և համարժեք արտացոլումն է:

Այսպես. Վ.Ալազանը հուշեր գրելիս առաջնորդվել է էական սկզբունքով՝ լինել անկեղծ և ճշմարիտ, բնավ «չգեղեցկացնել» հիշողությունների նյութ հանդիսացող անձանց, այլ գրել

---

<sup>1</sup> Է. Ջրբաշյան, *Գրականության տեսություն*, Ե., 1980, էջ 359:

ճշմարտությունը<sup>2</sup>:

Թեև վավերագրության հեղինակը գեղարվեստական իմաստով կերպար չի ստեղծում, բայց կերտում է դիմանկարներ, որոնք հանդես են գալիս իբրև տարբեր երևույթների, կարևոր իրողությունների անմիջական կրողներ: Բայց եթե գրող-գեղագետը ազատ է կերպարների ընտրության մեջ, այսինքն՝ նա կարող է անհրաժեշտության դեպքում իր ստեղծագործության մեջ ներառել բնորդներ՝ ստեղծելով իրականության առանձին պատկերներ, ապա գեղարվեստական վավերագրության հեղինակը ազատ չէ այդ ընտրության մեջ: Նա հնարավորություն ունի կերպարագծելու միայն իր հետ առնչություն ունեցած մարդկանց դիմանկարները:

Հարկ է շեշտել, որ գեղարվեստական վավերագրության հեղինակը վերջին հաշվով ենթակայական դիրք կարող է ունենալ: Այդ է վկայում Ս. Ջորյանի հետևյալ միտքը. «Հուշերի մեջ հնարավոր չէ բացարձակ օբյեկտիվություն, և սուբյեկտիվ մոտեցումը զգալի տեղ է բռնում անկասկած»<sup>3</sup>: Այս դեպքում հեղինակը բնորդին կերպարագծում է իր մտածողության ընկալումներով և պատկերացումներով:

Հուշագրողը երևույթներին նայում է անձնական կյանքի պատուհանից: Նա չի կարող բնագրում ընդգրկել իրադարձությունների և երևույթների բազմահանգույց շղթաներ: Այստեղ կարևոր է, թե հեղինակը իրականության ո՞ր կողմն է նկատում, ինչպե՞ս է մշակում եղած փաստերը և ինչպե՞ս է գնահատում արժեքների բազմակերպությունը:

Ժամանակակից լեզվաբանության ուղղությունների մեջ առաջնային նշանակություն ունի գեղարվեստական վավերագրու-

---

<sup>2</sup> Վ.Ալազան, *Հուշեր*, Ե., 1967, էջ 4:

<sup>3</sup> Ստ.Ջորյան, *Հուշերի գիրք*, Ե., 1991, էջ 7:

թյան բնագրերի հոգելեզվաբանական հիմքերի ուսումնասիրումը, որովհետև հետազոտության կիզակետում մարդ-անհատականության լեզվամտածական իրացումն է: Լեզվաբանական գրականության մեջ առաջադիր խնդրի որոշ տեսակների (հուշագրական և ինքնակենսագրական արձակ) երբեմն անվանում են լեզվաբանական անձնաբանություն («лингвистическая персониология»)<sup>4</sup>: Այստեղ հեղինակը հանդես է գալիս իբրև անհատական և սոցիալական գծերի համադրությամբ անհատականություն, որ լիովին կարող է երևալ սեփական նախաձեռնությամբ ստեղծված երկում, իսկ երկը պիտի ունենա անցյալի հիշողության հստակ ու ճշգրիտ հիմքեր:

Կարելի է ընդգծել, որ անցյալի իրադարձության կամ երևույթի լեզվական իմաստավորման համար անհրաժեշտ է «որոշակի հոգեկան ակտիվության նվազագույն շեմ, որից ներքև հնարավոր չէ ընկալումների, զգացումների և մտքերի լեզվական արտահայտություն»<sup>5</sup>: Այս դեպքում լեզվական դրսևորում են ստանում մարդու և՛ մտածական, և՛ հուզական աշխարհները:

Մասնագետները հաճախ ներկայացնում են հոգեվիճակներ, երբ հիշողության շարադրանքը դժվարությամբ է կառուցվում՝ հստակ չհիշվելու պատճառով: Հուշագիր Ս. Ալաջաջյանը գրում է, որ «մոռացության փոշին միշտ էլ կարող է երևալ յուշերի մեջ, յուշերի կողքին: Այդ փոշին նստում է ամեն մեկիս անցեալի որոշ հատուածի վրայ, ու ափսոսում էս, որ որոշ բաներ մոռացել էս»<sup>6</sup>: Նման մտքեր զետեղված են հենց հուշագրության

---

<sup>4</sup> **В. Нерознак**, *Лингвистическая персониология: к определению статуса Дисциплины* // Язык, Поэтика, Перевод, М., 1996, էջ 112-116:

<sup>5</sup> **Գ. Հովհաննիսյան**, *Հոգելեզվաբանություն*, Ե., 2011, էջ 44:

<sup>6</sup> **Ս. Ալաջաջեան**, *Վաթարնականք*, Լոս Անջելես, 2002, էջ 8:



բնագրերում. «Այդ օրերից անցել է ավելի քան 50 տարի, և *մոռացել էս, թե ինչ էր Օհաննեսի դերը այդ գործերի մեջ*» (ԹԺՀ, 8): «Լավ հիշում եմ, որ Գրողների տանն էր, բայց *միտս չէ, թե ո՛վ հարցրեց*» (ՌԶՀ, I, 63): «Այս բոլորը տպավորություններն են, որ հիշում եմ..., կոնկրետ փաստերը *մոռացել էս*» (ԴԴԵԺ, 535):

Գեղարվեստական վավերագրության բնագրերը կառուցելիս հեղինակները բնականաբար իրացնում են հիշողության տարբեր ծավալներ: Այս ժանրի լեզվակառուցման համար կարևորվում են ոչ միայն խոսքի ընկալման, այլև խոսքարտադրության մեխանիզմները, որոնցով էլ, անշուշտ, պայմանավորվում է լեզվական մտածողությունը: Հայտնի է, որ ընկալման գործընթացն առավելապես վերլուծության գործընթաց է, իսկ հաղորդմանը՝ իրադրության տարբեր դրվագների: Հաղորդման և ընկալման հակոսոյա գործընթացներում դիտարկվում են գեղարվեստական վավերագրության կառուցվածքային տարրերը և նրանց գործառության օրինաչափություններն ու առանձնահատկությունները: Ինչպես նշում է Գ. Ջահուկյանը, հասկացումն առաջին հերթին վերլուծություն է, իսկ հասկանալի դարձնելը՝ առաջին հերթին համադրում<sup>7</sup>: Այս գործընթացում էական նշանակություն է ձեռք բերում նաև ճանաչումը, որը կարող է հենվել վերհիշողության վրա, երբ որևէ առարկա տեսնելիս առաջ է գալիս ինչ-որ զգացում<sup>8</sup>: Մա լայն առումով հոգելեզվական ուրույն համակարգ է, որի բարձրագույն մակարդակը տվյալ դեպքում տեքստային-ժանրային պլանն է:

Գեղարվեստավավերագրական բնագրերում պարզորոշ երևում են իրողության վայրը (տարածքը), ժամանակը, անձը,

---

<sup>7</sup> Գ. Ջահուկյան, *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները*, Ե., 1974, էջ 20:

<sup>8</sup> Արիստոտել, *Պոետիկա*, Ե., 1955, էջ 182:

ասելիքի նյութը, որոնք սովորաբար զուգորդական սկզբունքով համադրվում են միմյանց: Մակայն հնարավոր է նաև, որ այդ տարրերից մեկն ինչ-ինչ պատճառով դուրս մնա ընդհանուր տեսադաշտից, քանի որ սովյալ պահին կարող է առաջնային չդիտարկվել և դուրս մղվել պահանջմունքների բավարարման ոլորտից: Այդ դեպքում հեղինակը հախտուն մոտեցում չի դրսևորում, անխտիր չի վերարտադրում այն ամենը, ինչ տեսել ու զգացել է իր կյանքի ընթացքում: Նա ընտրություն է կատարում՝ գլխավորը զատելով երկրորդականից, անկարևորը մի կողմ է թողնում՝ շարադրանքի նյութ դարձնելով իր կողմից կարևորվող էականն ու արժեքավորը: Ս. Ալաջաջյանը հուշագրության առաջաբանում գրում է. «Ես օրագիր եմ պահել, բայց օրագրից արտագրել եմ այն բոլորը միայն, որ օգնել են ազգային գիտակցութիւնս զօրացնելուն»<sup>9</sup>:

Հոգեբանները նշում են, որ մտապահումն անձի կողմից միշտ ընտրողական է<sup>10</sup>: Գեղարվեստական վավերագրության հեղինակի հիշողության մեջ առավելաբար պահպանվում են անհրաժեշտ տեղեկությունները, տպավորությունները, այլ ոչ թե այն ամենը, ինչ ներգործում է նրա զգայարանների վրա:

Գեղարվեստական-վավերագրական արձակում էական է, թե հիշողության գործընթացի ձևավորման ժամանակ ի՛նչ դեր է հատկացվում հեղինակ-մեմուարիստի ակտիվությանը: Հայտնի է, որ մարդու գործունեության տարբեր տեսակներում կարող են գերակշռել հոգեկան ակտիվության տարաբնույթ ձևեր, որոնք կարող են արտահայտվել անհատի համապատասխան գործողություններում, շարժումներում, զգացմունքներում, մտքերում, պատկերներում:

---

<sup>9</sup> Ս. Ալաջաջեան, *Վաթսունականք*, էջ 8:

<sup>10</sup> Ե. Պերպլերեան, *Հոգեբանութիւն*, Անթիլիաս, 1992, էջ 238:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գեղարվեստական վավերագրության հեղինակները, որոնք իրականությանը համապատասխան երկխոսության մեջ են մտնում, կարող են բաժանվել երկու խմբի՝ պայմանավորված մտածողության տարբեր եղանակներով՝

1) հեղինակներ, որոնք փորձում են ընթերցողին ինչ-որ բան համոզել, պատճառահետևանքային կապեր առանձնացնել, մըտնել փաստարկումների տիրույթ՝ որոշակի աշխարհայացք ձևավորելով, 2) հեղինակներ, որոնց խոսքի հուզազգացմունքային բաղադրիչն է ակտիվանում: Այստեղ նկատելի են բնութագրող բառերի (բնութագրիչների) առատություն և հերոսների խոսքային ակտիվություն: Հեղինակը երբեմն զգացական այդ վիճակները փոխանցում է նույնիսկ նկարագրությունների մեջ: Ի դեպ, ցայտուն կերպով մտաբերվում են հենց հուզականորեն հագեցած դեպքերը:

Ընդգծենք, որ գեղարվեստական վավերագրությունը՝ լայն առումով իբրև ազդեցության եղանակ, իրացվում է խոսքի ներգործության ընդհանուր կաղապարով, իբրև մի կողմից՝ ընկալում-ըմբռնում-ներգործում, մյուս կողմից՝ խոսք-մարդ-խոսք<sup>11</sup>:

Խոսքի ներգործության այդ կաղապարը, անշուշտ, ենթադրում է, որ վավերագրողը ներկայացնում է մտորումներ իր կյանքի տարբեր իրավիճակների, անձնական փորձի, սեփական ապրումների մասին: Այստեղ իրականությունը ներկայացվում է անձնական կյանքի օրինակով և ոչ թե կյանքի մեխանիկական ընկալմամբ:

Ժամանակակից մարդու համար անցյալը, ներկան և ապագան կապող գլխավոր օղակը սեփական էսն է: Հատկանշա-

---

<sup>11</sup> Գ.Հովհաննիսյան, *նշվ. աշխ.*, էջ 144:

կան է Ս. Կապուտիկյանի «Քարավանները դեռ քայլում են» երկից մեջբերումը. *«Թող ների ինձ ընթերցողը, եթե գրքում հաճախ հանդիպի անձնական դերանվան առաջին դեմքի հոլովումներին՝ ես, ինձ, ինձնից, ինձնով և այլն: Գիտեմ, որ ինչքան էլ ջանամ խուսափել դրանցից ու եղածի աննշան մասը նկարագրեմ, դարձյալ պատմելիքիս այս կամ այն կտորը կստանա ինքնագովության շեշտեր...»* (ՄԿՔԴՔ, 12):

Հայտնի է, որ հուշագրության ժանրի էական առանձնահատկությունն այն է, որ նրա հիմքում ընկած են հիշողության գործընթացի մեխանիզմներ: Դրանք մարդու հիշողության արտացոլումն են հուշագրության մեջ: Այս դեպքում հեղինակին՝ որպես հուշագրողի, հնարավորություն է տրվում պահպանել և ընտրողաբար գրառել մտային լողացող պատկեր-հիշողություններ, տարրոշել մասնավորը ընդհանուրից, որքան էլ որ «ես» անհատականությունը հեռու լինի դեպքերի նկարագրվող ժամանակից: Այստեղ ևս, ինչպես նշեցինք, գործում է ընտրության ու ընդհանրացման նույն օրինաչափությունը, ինչ արվեստի այլ ճյուղերում: Այս մեխանիզմների ճշգրիտ չափանիշները, լինելով հիշողության բնութագրիչներ, ընկած են հուշագրության կառուցման հիմքում:

Այս ամենից ենթադրելի է, որ հուշերի գրառումը կամ լեզվակառուցումն իրապես կապված է մտածական բարդ գործընթացների հետ: Նախևառաջ անհրաժեշտ է պահպանել վերարտադրվող իրադարձությունների բովանդակությունը, դրանց հաջորդայնությունը, պատճառահետևանքային աղերսները:

Տարբեր են նաև հիշողության տիպերը: Մարդու կյանքի պահանջմունքները, մասնագիտական գործունեության ձևերը պայմանավորում են հիշողության այս կամ այն տիպի ավել կամ պակաս չափով արտահայտված առանձնահատկություններ:

Հիշողության ակնառու-պատկերավոր տիպը ավելի հաճախ հանդիպում է նկարիչների հուշերում (Փ. Թերլեմեզյանի «Կյանքիս հուշերը» գիրքը, Ե., 2017), բառային-վերացական տիպը՝ տեսաբան գիտնականների մոտ (Վ. Հարությունյանի «Աշխարհի ճամփաներով» երկմաս հուշագրությունը, Ե., 2000) և այլն:

Ներկայացվող երևույթները մենք տեսնում, լսում և ընկալում ենք շնորհիվ այն բանի, որ մեր հասարակության լեզվական նորմերը ենթադրում են արտահայտության տվյալ ձևը: Կարելի է եզրակացնել, որ մենք գործ ունենք արտահայտության ուղղվածության կամ նշանակման հետ, այսինքն՝ ում է ուղղված մեմուարիստի ասելիքը: Գեղարվեստավերագրական նյութի արտահայտման համար հանդես են գալիս արտահայտելին (այն, ինչ արտահայտվում է) և արտահայտիչը (այն, ինչով արտահայտում են), այլ խոսքով՝ բովանդակության և արտահայտության պլանները:

Նշանակման դեպքում հանդես է գալիս երրորդ կողմը՝ արտահայտության ընկալողը (այն անձը, որին արտահայտությունն է ուղղված):

Լեզվաբանները բովանդակության և արտահայտության պլանները համարում են նյութական աշխարհի դրսևորումներ: Արտահայտության պլանը<sup>12</sup> նյութի արտահայտչական միջոցներն են՝ խոսքը և արտահայտչական շարժումները (շարժանք, դիմախաղ և այլն):

Մենք մեր զգայությունների հոսքը կադապարում (մոդելավորում) ենք լեզվական նորմերի և լեզվական կատեգորիաների միջոցով: Հոգելեզվաբանությունը, օրինակ, հաճախ է անդրա-

---

<sup>12</sup>Գ. Ջահուկյանը արտահայտության պլանի ուսմունքը կոչում է արտահայտաբանություն՝ երեք հիմնական դրսևորմամբ՝ ժեստաբանություն, հնչաբանություն և գրաբանություն (տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 43):

դառնում իրականության համակողմանի կառուցման հիմնային հոսքերին (Ջ. Բրուներ և ուրիշներ)<sup>13</sup>: Իրականության պատկերման յուրահատուկ ձև է շարադրույթը (нарратив)<sup>14</sup>: Այն գրելաոճ է, որով «պատմություն է պատմվում»: Շարադրույթը սովորաբար կառուցվում է առաջին կամ երրորդ դեմքով: Հայտնի է, որ հաճախ հնարավոր չէ սահմանազատել միտքը և նրա կոնկրետացումը՝ իբրև խոսք (տեքստ): Լեզուն ոչ միայն ծառայում է մտքի արտահայտմանը, ավելին՝ միտք է, այլև ձևավորում է այն շարադրույթի տեքստով: Վերջինս հատվածավորում է ժամանակը ոչ թե ըստ ժամերի, այլ ըստ կարևոր իրադարձությունների, դեպքերի և այլն:

Գեղարվեստական վավերագրության պատումն ըստ էության վերաբերում է որոշակի մարդկանց, նրանց միջև առկա փոխհարաբերություններին կամ որոշակի դեպքերին:

Շարադրույթի սկզբում նախագծվում է պատումի ընդհանուր շղթան, այնուհետև այն հարստացվում է տարբեր մանրամասներով: Ներժանրային հարացույցի շրջանակներում իրենց որոշակիությունն են ստանում անձերը և նրանցով պայմանավորված դեպքերը. արդյունքը լինում է այն, որ քննարկվող ժանրն իր խորքում ձեռք է բերում իրադրային գերակայություն:

Գեղարվեստավավերագրական պատումն ինքնին դեպքերի մի ամբողջական շղթա է: Այդ դեպքերը փոխկապակցված են և կարող են հաջորդել միմյանց: Այստեղ մեծ է հեղինակի՝ մի դեպքը մյուսից բխեցնելու մղումը, որտեղ երևում է անցյալի և ներկայի բաժանման կետը:

Այսպիսով, գեղարվեստական վավերագրությունը ձևի և բովանդակության անխզելի միասնություն է: Այդ ստեղծագոր-

---

<sup>13</sup> Дж. Брунер, *Культура образования*, М., 2006:

<sup>14</sup> *Շարադրույթ* եզրը առաջարկվում է մեր կողմից:

ծությունների ձևի բաղկացուցիչ մասերի մեջ առանձնահատուկ տեղ ունի հեղինակի լեզվամտածական պատյանը, որի օգնությամբ ստեղծվում են յուրօրինակ նկարագրություններ, ինքնատիպ պատկերներ:

Համառոտագրություններ

ԹԺՀ-Թումանյանը ժամանակակիցների հուշերում, Ե., 1969, ԴԴԵԺ-Դ. Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հ. 6, Ե., 1958, ՌԶՀ, I-Ռ. Զարյան, Հուշապատում, Գիրք I, Ե., 1975, ՍԿՔԴՔ- Ս.Կապուտիկյան, Քարավանները դեռ քայլում են, Երկերի ժողովածու 2 հատորով, հ. 2-րդ, Ե., 1973:

Galstyan Ashot-Linguistic Manifestations in the Texts of Memoirs. - Memoirs, according to the author, are a recollection of interesting events and faces of the past, which has a genre peculiarity. There are two types of memoirs: autobiographical memoirs and literary portraits. Some texts are organized around two characters. The author, as a memoirist, is given the opportunity to save and selectively record floating mental images-memories. For the construction of the genre language, not only the mechanisms of speech perception are important, but also the mechanisms of word production associated with complex thought processes. Fiction documentary is an inseparable unity of form and content. A special place among the constituents of the form of these works is occupied by the author's linguistic-thinking shell, with the help of which unique descriptions and original images are created.

Галстян Ашот-Лингвистические проявления в текстах мемуаров.- Мемуары, по мнению автора, представляют собой воспоминания об интересных событиях и лицах прошлого, имеющие жанровую особенность. Различают два типа мемуаров: автобиографические воспоминания и литературные портреты. Некоторые тексты сложены вокруг двух персонажей. Автору, как мемуаристу, дается возможность сохранять и выборочно записывать плавающие мысленные образы-воспоминания. Для построения языка жанра важны не только механизмы восприятия речи, но и механизмы словопроизводства, связанные со сложными мыслительными процессами. Художественная документалистика – это неразрывное единство формы и содержания. Особое место среди составляющих занимает авторская лингвистически-мыслительная оболочка, с помощью форм этих произведений создаются уникальные описания и оригинальные картины.



«ՑԱՏԿԵԼ, ՑԱՅՏԵԼ, ԺԱՅԹՔԵԼ» ԻՄԱՍՏՆԵՐՈՎ ՀԱՅԵՐԵՆ ՄԻ  
ՔԱՆԻ ԲԱՌԵՐԻ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հնդեվրոպական \*sk'ei-/\*sk'ai-/\*sk'ai- «բխել, ցատկել» արմատից և դրա՝ աճականներով ընդլայնված տարբերակներից ու ածանցյալներից սերված բառերը հայերենում մեծաթիվ չեն, բայց սակավաթիվ էլ չեն: Այդպիսի ծագում է վերագրվում **ցիր** «սփռված, ցրիվ» <\*sk'ē-r- (ՀԱԲ<sup>1</sup>, 4, 456-457, ՀՄԲ<sup>2</sup>, 743, ՄԵԼ<sup>3</sup>, 125), **ցատկել** (**ցարկել**) «ոստնել» <\*sk'ə-t-l- (ՀԱԲ, 4, 633, ՄԵԼ, 123-129), **ցայտ** (**ցաթ**, **ցեթ**) «ցալքուն, շիթ, կաթիլ» <\*sk'ə-t- (ՀԱԲ, 4, 449, ՀՄԲ, 741), **ցալքուն** (**ցելթուն**) «ցայտեր» <ցալիք- <\*sk'ələq-, \*sk'ələ-t- (ԱՊ<sup>4</sup>, 152), **ցիռ** «վայրի էջ» <\*sk'ē-r-s- (ՀՄԲ, 743), **խիրտ**- (**խրտնուլ**, **խրտուռիլակ**) «վախից վեր ցատկել՝ ծուլ լինել» <\*(s)khe-r-d- (ՀՄԲ, 332), **խրխշել** (**խրշել**, **խշել**, **խշշել**) «խրտնել» <\*(s)khē-r-sk- կրկնությամբ (ՀՄԲ, 355), **շեք** (**շենք**, **շքեռ**) «1. քայլ, լոք, 2. երկու ոտքերի միջև բացվածքը, 3. ցայլք» <\*skhe-k- (ՀՄԲ, 586, կասկածով), **շիթ** (**շիտ**) «1. ցայտ, 2. կաթիլ» <\*skhē-t(h) (ՀՄԲ, 587), **շիռ** «լի, առատ» (որից՝ **արբշիռ**, **շռայլ**) <\*skhē-r-s- (ՀՄԲ, 588), **շոշոկել** «ջանալ գեղեցիկ երևալու, պչրվել, նազկտալ» <\*շոկ- <\*skho-g- կրկնությամբ (ՀՄԲ, 592), **շրտնուլ** «1. խրտնել, վախենալ, 2. շվարել, շփոթվել» <\*skhē-r-d- (ՀՄԲ, 597), **ցռուկ** «1. դունչ, քիթ, 2. ծիլ, շիվ, տունկ» (որից՝ **ցռկիլ** (**ցիռկել**, **ցռկել**) «1. ցատկել, 2. ժայթքել, ցայտել, 3. ցցվել») <\*sk'ē-r-s- (ՀԼՊ

<sup>1</sup>Հ.Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, հհ. 1-4, Ե., 1971-1979:

<sup>2</sup>Գ.Զահուկյան, *Հայերեն ստուգաբանական բառարան*, Ե., 2010:

<sup>3</sup>Մ.Աղաբեկյան, *Հայերենի համեմատական ուսումնասիրության հարցեր*, Ե., 2017:

<sup>4</sup>Է.Աղայան, *Բառաքնական և ստուգաբանական հետազոտություններ*, Ե., 1974:

ՆԺ<sup>5</sup>, 148, Մել., 125), **ցոթ(կ)ել** «ցնկնել» <\*sk'ē-r-th- (ՀԼՊ ՆԺ, 148, Մել., 125), **ցրտկեցնել, ցրիցոցնել** «դուրս ցայտեցնել» <\*sk' rei-d- (ՀԼՊ ՆԺ, 148, Մել., 125), **ցրքել** «թափել, ցրցրել», **ցրքսել** «վրան ցայտել, ցողել» <\*sk'ē-r-kh- (ՀԼՊ ՆԺ, 148, Մել., 125), **ցայել** «ցողել, պարզաջրել» <\*sk'əi- (Մել., 127-128), **ցանել** «1. շաղ տալ, սփռել, 2. ցողել, ցայել» <\*sk'ə-n- (Մել., 125), **սանդուղ (սանդուղի)** «ելարան» <\*(s)k'a-n-d- (ՀՄԲ, 4, 173, ՀՄԲ, 667, կասկածով) բառերին:

Ինչպես տեսնում ենք, այս բառերը **g** [<\*sk'<sup>1</sup>], **ju** [<\*(s)kh], **z** [<\*skh], **u** [<\*(s)k'<sup>1</sup>] սկզբնահնչյուններով են: Բայց գիտենք, որ հ.-ե. բառասկզբի \*(s)k'(h)- հնչյունակապակցությունը իր բաղադրիչներին այլ համակցություններով տալիս է հայերենում նաև **p** [<\*(s)k], **ly** [<\*sk], **ð** [<\*(s)k'h], **ð** [<\*sk'h]<sup>6</sup>: Իմաստային տեսակետից դիտարկելու դեպքում պետք է նկատել, որ այս բառերի մի մասը արտահայտում է հ.-ե. նախաձևի առաջնային՝ «1. ոստնել, ցատկել, ցայտել, ժայթքել, 2. ցայտ, շիթ, կաթիլ» իմաստները, մյուս մասը իմաստային զարգացմամբ ստացել է «1. վախից ծուլ լինել, խրտնել, վախենալ, 2. շվարել, շփոթվել», «1. ցրվել, շաղ գալ, սփռվել, 2. թափել, ցողել, 3. լի, առատ, 4. ցնկնել», «1. քայլ, լոք, 2. ցայք, շեք, 3. էլարան», «1. դունչ, քիթ, 2. ոստ, շիվ», «նազկտալ, պչրվել» և այլ նշանակություններ: Հաշվի առնելով այս հանգամանքները՝ հարկ ենք համարում ձևային և իմաստային ավելի խոր վերլուծությունների հիման վրա վերոհիշյալ բառերի շարքին ավելացնելու նաև հետևյալ բառերը՝ նոր ստուգաբանությամբ:

<sup>5</sup>**Գ. Ջահուկյան**, *Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան*, Ե., 1987:

<sup>6</sup>**Օ** և **Ճ** սկզբնահնչյունների ծագման մասին տե՛ս **Հ. Չաքարյան**, *Օ սկզբնահնչյունով մի քանի բառերի ստուգաբանություն*// «Ջահուկյանական ընթերցումներ» (գիտական հոդվածների ժողովածու), Ե., «Գիտություն», 2019, էջ 35-45; **Հ. Չաքարյան**, *Ճ սկզբնահնչյունով մի քանի բառերի ստուգաբանություն*, // «Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն. Գիտական աշխատություններ», 1-2 (22), 2019, Գյումրի, էջ 228-238:

**Քայլ** «1. ոտքի մեկ շարժում՝ հոտնկայս ընթացքի ժամանակ, լոք, 2. երկու ոտքերի միջև բացվածքը» բառը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը չեն ստուգաբանել (ՀԱԲ, 4, 549, ՀՄԲ, 775), չնայած Գ. Ջահուկյանը այլ աղբյուրով համեմատել է **ցայլ** «շեք, աճուկ» բառի հետ (ՀՄԲ, 741): Համեմատությունը պատահական չէ: Այս բառերը մերձավոր են ոչ միայն ձևով, այլև իմաստով: «Քայլ > ցայլ» իմաստային զարգացման համար հմմտ. **շեք** «1. քայլ, 2. երկու ոտքերի միջև բացվածքը, 3. ցայլք, աճուկ» (տե՛ս վերը), **ցայլք** «աճուկ» - **ցելու(ցայլ-ի ածանցյալ)** «քայլել, լոքել, շեքել»: Իսկ եթե նկատի ունենանք, որ **շեք** բառը բխեցվում է հ.-ե. <\*skhe-k-՝ \*ske-k- «ցատկել, արագ շարժում» արմատից (ՀՄԲ, 586), ապա հնարավոր պետք է համարել, որ հ.-ե. նույն արմատի մեկ այլ տարբերակից են ծագել թե՛ **քայլ**[<\*(s)kəi-l-], թե՛ **ցայլ**[<\*sk'əi-l-] բառերը:

**Ցայլ(ք) (ցայռք)** «շեք, աճուկ, ագռմեջ» բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել (ՀԱԲ, 4, 449): Գ. Ջահուկյանը և Է. Աղայանը համարել են «բնիկ հնդեվրոպական՝ \*skəlii-՝ \*(s)kel- «ծռել, ծուռ» արմատից» (ՀՄԲ, 741, Աղ., 150-151): **Ցայլ-ի** ածանցյալ է համարվում ոչ միայն **ցելու**, այլև **ցալակ** «ցայլքի աղեթափություն» բառը (ՀԱԲ, նույն տեղում): Նկատի ունենալով **ցայլք** և **շեք** հոմանիշների թե՛ իմաստային, թե՛ հնչյունական զուգահեռությունը՝ ստիպված ենք մերժելու Գ. Ջահուկյանի և Է. Աղայանի ստուգաբանությունը՝ փոխարենն առաջարկելով, ինչպես նշեցինք, **ցայլ**[<\*sk'əi-l- «ցատկել, արագ շարժվել» վարկածը: Խնդիրն այն է, որ քայլը ցատկի, շարժման գործողություն է: Դրանից ածանցվում է «երկու ոտքերի միջև բացվածք» իմաստը, սրանից էլ՝ «ցայլք, ոտքերի միացման տեղը» իմաստը: Ինչ վերաբերում է **շեք** (**շեք**, **շենք**, **շքեռ**, **շեքռուկ**) բառին, ապա դրա՝ հ.-ե. \*skhek-՝ \*skek- «ցատկել, արագ շարժում» նախաձևից ծագումը Գ. Ջահուկյանը կասկածելի է համարել (ՀՄԲ, 586)՝ ավելի անհավանական կարծելով Հ. Աճառյանի վարկածը աստրա-

կան փոխառություն լինելու վերաբերյալ (ՀԱԲ, 3, 512): Մեր իմաստային վերլուծությունը հավելյալ փաստարկ է Գ. Ջահուկյանի ենթադրության օգտին<sup>7</sup>:

**Քիլ** (բրբռ. կեղ) «ուղուկ, թիզ, թզաչափ, մատնաքայլ» բառը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը չեն ստուգաբանել (ՀԱԲ, 4, 578, ՀՄԲ, 783): **Քայլ** բառի հետ ձևային նմանությունն ակնհայտ է: Իմաստին անցման համար հմմտ. **թիզ**<\*tig'h` \*steigh- «քայլել, ելնել» (ՀՄԲ, 266): Քիլը թիզի ավելի փոքր տարբերակն է: Քիլ ժեստը շատ նման է լոքին, իսկ քիլով չափելը՝ քայլերով չափելուն: Այս հիմնավորումներով առաջարկում ենք **քիլ**<\*(s)kē-՝ «ցատկել, արագ շարժում» ստուգաբանությունը:

**Քիթ (քենթ)** «1. ցռուկ, մռուք, 2. ցցված մաս, 3. ծայր» բառը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը չեն ստուգաբանել (ՀԱԲ, 4, 577-578, ՀՄԲ, 783): Նկատի ունենալով վերոհիշյալ **ցռուկ** «դունչ, քիթ» և **ցոկիլ** «ցատկել, ցցվել» բառերի հետ իմաստային զուգահեռությունը՝ առաջարկում ենք **քիթ**<\*(s)kē-՝ «ցատկել, ժայթքել» ստուգաբանությունը<sup>8</sup>:

**Կայթ** «ցատկոտոց, ցնծության պար» բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել (ՀԱԲ, 2, 505-506): Գ. Ջահուկյանը հավանական է համարել կապը **խայտալ** բառի հետ, որը նա բխեցրել է \*(s)kai-d/t- «լուսավոր, պայծառ» արմատից (ՀՄԲ, 380) (**կայթ** – **խայտալ** կապի մասին տե՛ս ստորև): Իմաստից ելնելով՝ առաջարկում ենք մեկ այլ վարկած՝ **կայթ**<\*(s)kəi-՝ «ցատկել, բխել, վազել»<sup>9</sup>: Իմաստային զար-

<sup>7</sup>Հմմտ. լատվ. suõlis, suola«քայլ», ն.բ.գերմ. schreiten «քայլել», լիտվ. skriëti «քայլել, շարժվել, շրջագայել» (Նիկ., \*sk'el- «ցատկել», \*(s)krey- «շարժել, ցնցել»), ինչպես նաև ռուս. шар «քայլ»:

<sup>8</sup>Հմմտ. հ.իսլ. skaga «ցցվել, ներկայանալ, աչքի ընկնել», skagi «հրվանդան» (Նիկ. \*skat- «ցատկել, ցայտել, ժայթքել»):

<sup>9</sup>Հմմտ. լիտվ. šõkti, šõku, šõkau«թռչկոտել, կայթել, կաքավել, պարել», ռուս. (բրբռ.) скок «ցատկ, կայթ, պար», հուն. σκάφο «ցատկում եմ, կայթում եմ, պարում եմ», kórdāk-s, -ākos«հինկատակերգությանպար», ռուս. (բրբռ.) корогод «շուրջպար»

գացման առումով հմնտ. ուս. плясать «1. պարել, 2. թռչկոտել, ցատկոտել, ծուլ-ծուլ լինել, 3. դողալ, ցնցվել», չեխ. plesat «1. պարել, 2. ուրախանալ, հրճվել, ցնծալ», հ.լիտվ. plėnšti «1. պարել, կայթել, 2. հրճվել, ցնծալ»<sup>10</sup>, լատ. saltō «1. պարել, կայթել, 2. ցատկել, ոստնել» <հ.-ե. \*sel- «ցատկել»<sup>11</sup>, պարել «1. կաքավել, կայթել, 2. թռչկոտել, 3. ցնցվել, տատանվել, 4. խայտալ, խլրտալ»<sup>12</sup>:

**Կայտ** «1. առույգություն, եռանդ, 2. ուրախություն, 3. ցատկընտուք» (որից՝ **կայտառ, կայտիռ, կայտռել**) բառը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը չեն ստուգաբանել(ՀԱԲ, 2, 509-510, ՀՄԲ, 380-381): **Կայթ** բառի հետ թե՛ ձևային, թե՛ իմաստային նմանությունը ենթադրել է տալիս ծագման նույնությունն՝ աճականի **t/d** հերթագայությանը՝ **կայտ**-<\*(s)kəi-d- «ցատկել, բխել, վազել»:

**Խայտալ** «1.ցատկոտել, թռչկոտել, կայտռել, ոստոստել, տրտինգ տալ, 2. ցնծալ, հրճվել, ուրախանալ, 3. խենեշանալ, խելքը թոցնել, 4. շփանալ, մեղկանալ» բառը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը ծագմամբ նույնացրել են **խայտ** «նշան, պուտ, բիծ, պիսակ» հ.-ե. <\*khaid- <\*(s)qaid-/\*(s)kāi-d/t- «լույս, պայծառ, փայլել, երևալ, տաք, այրել» արմատի հետ(ՀԱԲ, 2, 527, ՀՄԲ, 315): Իմաստային վերլուծությունը ցույց է տալիս, որ գործ ունենք **խայտ** «բիծ»և **խայտ** «ցատկ, ցնծություն» համանունության հետ, և **խայտալ** «թռչկոտել, ցնծալ» բայը երկրորդի ածանցյալն է ու կապ չունի առաջինի, հետևաբար և հ.-ե. \*(s)kāi- «լուսավոր, փայլուն» արմատի հետ: Երկրորդ **խայտ**-ի համար առաջարկում ենք հետևյալ ստու-

---

(Նիկ. \*skek- «վազել, ցատկել, բխել», \*(s)ker- «ցատկել, բխել, վազել», \*(s)kerəd- «կայթել, ցատկել»):

<sup>10</sup>Տե՛ս Викисловарь (<https://ru.wiktionary.org/wiki/плясать>)

<sup>11</sup>Տե՛ս Wiktionary (<https://en.wiktionary.org/wiki/saltō>)

<sup>12</sup>Տե՛ս Է. Աղայան, *Արդի հայերենի բացատրական բառարան*, Ե., 1976, էջ 1202:

գաբանությունը. **խայտ** «ցատկ, ցնծություն» <\*(s)khəi-d- «ցատկել, բխել, վազել»<sup>13</sup>:

**Խրախ** «1. ուրախ, զվարթ, կայտառ, 2. ուրախություն, խընջույք» բառը Հ.Աճառյանը համարել է **ուրախ** բառի **\*հուրախ** սաստկականի՝ առնմանությամբ և սղմամբ հնչյունափոխված տարբերակ (*ուրախ > հուրախ > խուրախ > խրախ*) (ՀԱԲ, 2, 429-430), սակայն **ուրախ** բառը չի ստուգաբանել (ՀԱԲ, 3, 614): Գ. Ջահուկյանը, հետևելով Բեյլիին, **խրախ** բառը համարել է փոխառություն իրանական ենթադրյալ *\*xrāx* ձևից, որն էլ հանգեցրել է հ.-ե. *\*(s)ker-* «ցատկել, ցատկոտել» արմատին (*\*xrāx < krāh < h.-ե. \*skr-es-՝ \*(s)ker-*) (ՀԱԲ, 353): Իսկ **ուրախ**-ը համարել է իրանական առանձին փոխառություն՝ չճշտված ինչ-որ ձևից (ՀԱԲ, 752-753): Նկատի ունենալով **խրախ** բառի իմաստային կապը վերոհիշյալ **խայտալ, կայտառ, կայթել** բառերի հետ և այն հանգամանքը, որ հենց դրանց հ.-ե. նախաձևի մի տարբերակից է Գ. Ջահուկյանը բխեցրել **խրախ** -ը (թեև իրանական միջնորդությամբ), առաջարկում ենք վերջինիս՝ հ.-ե. անմիջական ծագման վարկած: Ըստ այդմ՝ **խրախ**-ը պետք է դիտարկել ածանցավոր բառ՝ *\*խուր-ախ*<sup>14</sup>, որի **խուր** արմատի համար կարելի է վերականգնել հ.-ե. *\*(s)khō-r-* «ցատկել, բխել, վազել» նախաձևը (**-ախ** ածանցի համար՝ հմմտ. *շաղ-ախ, հաճ-ախ, խիզ-ախ, խաղ-ախ, քսոց-ախ*): Իսկ **ուրախ**-ը պետք է դիտարկել **խրախ**-ի ածանցյալ (այլ ոչ թե հակառակը, ինչպես արել է Հ. Աճառյանը)՝ *\*խուրախ > \*հուրախ > ուրախ* (տարնմանությամբ կամ պարզապես

<sup>13</sup>Հմմտ. նորվ. skart; skjerta-st «ուրախանալ, զվարճանալ, կատակել», մ.բ.գերմ. schärzen «խայտալ, զվարճանալ, թոչկոտել» (Նիկ. *\*(s)kerəd-* «կայթել, ցատկել»):

<sup>14</sup>Այսպես վարվել են նաև Տերվիշյանը, Պատրուբանին, Մեյեն, սակայն ցույց չեն տվել արմատի ծագումը (ՀԱԲ, 2, 429-430):

խ-հ անցմամբ<sup>15</sup> և հ նախաձայնի անկմամբ<sup>16</sup>)՝ ըստ Պեղերսենի (ՀԱԲ, 3, 614): **Խրախ**-ի ածանցյալ է նաև **խրախձանք** բառը: Մա ունի *խրախ-ճան-ք* կազմությունը, որտեղ **ճան**-ը ունի «-մոլ, -սեր» իմաստը (հմմտ. *գինեճան, ճոխաճան, տիրաճան, դավաճան, ճակաճան* են) (ՀՄԲ, 488)<sup>17</sup>:

**Տնծալ** «հրճվել, խայտալ» բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել (ՀԱԲ, 4, 459): Գ. Ջահուկյանը կասկածով կապել է **խինդ** (<\*kendh - «խնդալ») բառին՝ ենթադրելով դրա նախաձևի՝ շարժուն **s**-ով տարբերակ, որից կարող էր ծագել **ցնծալ** (<\*skendio-) բառը (ՀՄԲ, 743): Սակայն սա բավարար չափով համոզիչ չի թվում: Ուստի նկատի առնելով նախորդ բառերի հետ իմաստային կապը՝ առաջարկում ենք նաև ծագումնաբանական կապ **ցնծալ**<**ցունծ**<\*sk'ō-n-g' - <\*sk'ei- «ցատկել, վազել» ստուգաբանությամբ:

**Շքթել (ժքթել)** «1. ցայտեցնել, սրսկել, 2. բերանով ջուրը ներս քաշել» բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել (ՀԱԲ, 3, 546): Գ. Ջահուկյանը կասկածով համարել է բնաձայնական-պատկերավոր կազմություն և համեմատել է **ժայթքել** բառի հետ (ՀՄԲ, 597)<sup>18</sup>: Նկատի ունենալով այս բառի իմաստը, ինչպես նաև արտաքին

---

<sup>15</sup>**խ - հ** անցման համար հմմտ. *խախանդ - հահանդ, յոխորտ (յախուրդ) - յահուրդ, խրտնել (խարթնուլ) - հարթնուլ* (տե՛ս նաև **Գ. Ջահուկյան, Հայ բարբառագիտություն ներածություն**, Ե., 11972, էջ 47, կետ 18) են:

<sup>16</sup>**Հ**- նախաձայնի անկման համար հմմտ. *հահանդ - ահնդիլ* (ՀԱԲ, 3, 13, հահանդ), *հարթչիլ - արթչիլ* (ՀԱԲ, 3, 58, հարթ-2), *հետ - ետ* են:

<sup>17</sup>Կա նաև **խրախոյս** «քաջալերանք» բառը, որ կազմված է **-ույս** ածանցով (հմմտ. *խելակորույս, հեղույս*), որը գրաբարի պատճառական ածանցից առաջացած **-ույց/-ույզ** բառակազմական ածանցի տարբերակ է (*կառույց, հանգույց, հատույց* են), սակայն սրա **խրախ**-ը պարզապես համանուն է՝ «համարձակություն, քաջություն» իմաստով: Այստեղ առկա է դարձյալ համանուն **խր**-< \*խուր- <\*khōr- <\*(s)keu- «կտրել, ձեռքել» արմատը:

<sup>18</sup>Կա նաև այս բառի **շքթել** տարբերակը [**Ս. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան**, հհ. 1-4, Ե., 1944-1945 (այսուհետև՝ Մալխ.), հ. 3, էջ 515], որն իսկապես ձևով շատ մոտ է **ժայթքել** բառին:

նմանությունը վերոհիշյալ **ցրտել** «ցայտել, ցողել» բառին՝ առաջարկում ենք **շքթել** <\*skhē-k-t- «ցատկել, ժայթքել» ստուգաբանությունը: Մրա իմաստային մի զարգացումն է **շքթիլ (շկթիլ)** «լկտիանալ, լրբանալ» բառը, որ չեն ստուգաբանել Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը (ՀԱԲ, 3, 546-547, ՀՄԲ, 597):

**Ծուլ** «ցատկ, ոստյուն» (որից՝ **ծուլ լինել** «թռչկոտել, վերցատկել», **ծուլ անել** «վեր բարձրանալ», **ծուլի գցել** «վեր շարտել») (Մալխ., 2, 353) արմատը ստուգաբանական բառարաններում բացակայում է: Բայց Գ. Ջահուկյանը մի առիթով անդրադարձել է դրան՝ որպես անհայտ ծագման բառարմատի՝ առնչելով հ.-ե. \*sk'el- «ցատկել, ծուլ լինել» արմատին, նաև համեմատելով նոստրատիկ այլ լեզվաընտանիքների նույնիմաստ արմատների հետ<sup>19</sup>: Սա մեզ հիմք է տալիս առաջարկելու **ծուլ** <\*(s)k'hō-l- <\*sk'el- «ցատկել, ոստնել, ծուլ լինել» ստուգաբանությունը: Այս արմատի ածանցյալներ են՝ **ծլունգ** «1. հանկարծ վեր ցատկելով՝ թռչելով, 2. նստած տեղից ոստյուն», **ծլնգալ (ծլնգել)** «1. նստած տեղից հանկարծ վեր թռչել, ծլունգ լինել, 2. հարձակվել, 3. ընկնող կաթիլից ջրի ցայտելը» (Մալխ., 2, 341), ըստ Հ. Աճառյանի՝ գուցե նաև **ծլիլ** «վախենալ» (ՀԱԲ, 2, 461)<sup>20</sup>:

**Միր** «ցրիվ, ցրված, սփռված» (Մալխ., 2, 339) (որից՝ **ծրել** «1. ծավալել, տարածել, անց կացնել (հեղուկը), 2. տարածվել (յուղը՝ շորի մեջ, թանաքը՝ թղթի մեջ)» (Մալխ. 2, 357, ՀԼԲԲ, Բ, 426)) արմատը ստուգաբանական բառարաններում որպես գլխաբառ բացակայում է: Մինչդեռ առկա է դրա **ծիր** «հետագիծ, եզր, սահման» համանունը, որի բառահոդվածում Հ. Աճառյանը **ծիր** «ցրված, սր-

<sup>19</sup>Տե՛ս Գ. Ջահուկյան, *Հայերենի անհայտ ծագման բառարմատները*, // «Պատմաբանասիրական հանդես», 1990, հմ. 2, էջ 62-77:

<sup>20</sup>Հմնտ. լիտվ. šúoli-s«ցատկ, ցնցում», լատվ. suðlis, suola«քայլ», մ.բ.գերմ. schēl «թռչկոտուն, բռնկուն, խանդավառ, կատաղի» (Նիկ. \*sk'el- «ցատկել, ոստնել, ծուլ լինել»):



փռված» բառը նույնացրել է **ցիր** բառի հետ (ՀԱԲ, 2, 459): Նկատի ունենալով թե՛ ձևային, թե՛ իմաստային մերձավորությունը վերոհիշյալ **ցիր** «սփռված, ցրիվ» (< \*sk'ēr-` \*sk'er- «ցատկել, ցատկոտել») արմատին (որից՝ **ցրան** «ցալքուն, ցայտեր», **ցրել** «շաղ տալ, տարածել, սփռել»)՝ առաջարկում ենք **ծիր** <\*(s)k'ēr-` \*sker- «ցատկել, վազել» ստուգաբանությունը<sup>21</sup>:

**Ճայթել (ճաթել, ճեթել, ճայթռել)** «1. պայթել, 2. ճաքել, ճեղքվել, կոտրվել, 3. շաչել, 4. խորտակել, 5. կայթել, խաղալ, 6. ցնծալ, 7. ցատկոտել, թռչկոտել, 8. ճիգ թափել, 9. կերկոխ լինել» բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել (ՀԱԲ, 2, 181): Գ. Ջահուկյանը համարել է «թերևս պատկերավոր բնաձայնական կազմություն» (ՀԱԲ, 487): Մակայն այս բառի թե՛ իմաստները, թե՛ **ցայտել, կայթել, քայլել, խայտալ** բառերին արտաքին նմանությունը հիմք են տալիս առաջարկելու **ճայթ** <\*(s)k'həi-t- <\*ska-t- «ցատկել, ցայտել, ժայթքել» ստուգաբանությունը: Այս արմատից են **ճաթ** «1. ճաքած խեցեղեն, 2. ցնցոտի, քուրջ, ձորձ» (ՀԼԲԲ, Գ, 361), **ճաթրուկ** «հրացանի պատիճ», **ճաթլեխ** »բզկտված, ճմրթված», **ճաթո-ճաթո** «պատառ-պատառ» (Մալխ., 3, 190) և այլ բառեր<sup>22</sup>:

**Ժայթ** «թունավոր խայթված տեղի ուռուցք» բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել (ՀԱԲ, 2, 225): Գ. Ջահուկյանը դարձյալ համարել է պատկերավոր բնաձայնական-կազմություն: Նա նաև սրա՝ **թ** աճականով ածանցյալ է համարել **ժայթքել (ժայտքել)** «1. ուժգին դուրս մղել, արտավիժել, 2. թափով բխել, 3. փսխել, 4. պոռթկալ» բառը (ՀԱԲ, 280): Այս երկու բառերի կապը դիտարկել է նաև

<sup>21</sup>Հմմտ. թռի. Բ kārsk- «նետել, շարտել, շաղ տալ, ցրել, տարածել», հ.հնդկ. kiráti, kīryate, kīra-«ցրել, շաղտալ, նետել, որել, դուրսթափել», ն.բ.գերմ. sich scheren «հեռուցքվել» (Նիկ., \*sker- «ցատկել, վազել»):

<sup>22</sup>Հմմտ. հ.հուն. ἐσκατάμιζεν, լիտվ. skasti (skasta, skatō) «ցատկել», լատ. scateō, -ēre «ժայթքել», հ.լատ. scatebra «ջիթ, աղբյուր, սկունք», scatūrriäre «փսխել» (Նիկ., \*skat- «ցատկել, ցայտել, ժայթքել»):

Հ. Աճառյանը (ՀԱԲ, նույն տեղում): Կա նաև **ժուայթ(ք)ել** անստույգ բառը, որին վերագրվում է «1.ժայթքել, 2.փսխել, 3.շուայտել» իմաստը: Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանն այս բառը չեն ստուգաբանել (ՀԱԲ, 2, 233, ՀՄԲ, 282), թեև ակնհայտ է, որ դա **ժայթ(ք)ել** բառի տարբերակ է<sup>23</sup>: Նաև ակնհայտ է **ժայթ** արմատի թե՛ ձևային, թե՛ իմաստային մերձավորությունը **ճայթ** արմատին: Ուստի առաջարկում ենք սա ևս բխեցնել հ.-ե. նույն արմատից՝ **ժայթ** <\*sk<sup>w</sup>həi-t- <\*skat- «ցատկել, ցայտել, ժայթքել» անցմամբ: Այս բառի ստուգաբանությամբ փաստորեն առաջարկում ենք **\*sk<sup>w</sup>h** > **ժ** հնչյունական համապատասխանությունը՝ ի լրումն բառակզրի **\*sk-** հնչյունակապակցության հայերեն անդրադարձների շարքի<sup>24</sup>: Այս վարկածի օգտին են վկայում նաև **սայո** «լեռնագագաթ, սայր»-**ժայո**, **շուո-ժուո** «պտույտ», **շուար- ժուո** «շփոթված, շվարած», **շլատ-ժլատ**, **շքթել -ժքթել** «ցայտեցնել», **շիթ- ժայթքշուխուո -ժխար**, **շարժ- ժաժ**, **խոշոր- խոժոռ** և այլ բառազույգերում առկա **շ/ժ** հերթազայության դեպքերը<sup>25</sup>: Իմաստային անցման համար հմմտ. անգլ. spout «1.

<sup>23</sup>**ժուայթ**- արմատի մի ածանցյալ պետք է համարել **շուայտ (շուայթ)** «ցոփ, զելի, վավաշոտ, շատակեր, որկրամոլ» (ՀԱԲ, 3, 532, ՀՄԲ, 593) բառը, որ մինչ այժմ համարվել է անհայտ ծագման: Այս երկու բառերի հնարավոր կապի մասին ակնարկել է Գ. Ջահուկյանը (ՀՄԲ, 282) Իմաստային անցման համար հմմտ. **շքթել** «ցայտեցնել, սրսկել, ժայթքել» - **շքթիլ** «լկտիանալ», **խայտալ** «1. ցատկոտել, ցնծալ, 2. խենեշանալ, շփանալ, մեղկանալ» (տե՛ս վերը): **Շուայտ**-ի հոմանիշն է **ցուայտ** բառը, որ արտաքին նմանության ունի **ցայտ** բառին: Կարելի է ենթադրել իմաստային անցման «դուրսպրծուկ» միջանկյալ օղակը: Ինչ վերաբերում է **ա**-ից առաջ **ու**-ի (վ-ի) հավելմանը (*ժայթ* > *ժուայթ*, *ցայտ* > *ցուայտ*, *շուայտ*), ապա դա հիշեցնում է **ա**-ից հետո **ւ**-ի հավելմանը (*մատ*>*մատտ*, *յատ*>*յատտ*, *արած*> *արատտ*):

<sup>24</sup>Ոչ բառակզբում **ժ** հնչյունը բխեցվում է հ.-ե. **\*g<sup>w</sup>h**-ից. հմմտ. **իժ**<\*ēg<sup>w</sup>hi- (ՀՄԲ, 284): Այս **\*g<sup>w</sup>h**-ն բառակզբում շարժուն (սահող) **\*s** ստանալու դեպքում, ըստ Զիբսի օրենքի, պետք է պայթականի խլացմամբ վերածվի **\*sk<sup>w</sup>h**-ի, որը հայերենում նույնպես պիտի տա **ժ**:

<sup>25</sup>Հմմտ. լատ. scateo «ժայթքել, ցայտել», հ.լիտվ. skatau «ցատկել, խոյանալ, ոստնել» (ՀԱԲ, 4, 633), հ.լատ. scato «ժայթքել», scatebra «շիթ, աղբյուր, ակունք», scaturriare «փսխել» (Նիկ., \*skat-«ցատկել, ցայտել, ժայթքել»):

ծայթբել, ցայտել, 2. ծորալ, շիթ արձակել, 3. շաղակրատել, 4. ծորակ, քիթ (թեյամանի)»:

**Ջուարթ** «1. կենսուրախ, բերկրալի, 2. խնդումերես, 3. ժիր, աշխույժ, կայտառ, 4. զգաստ, արթուն, առույզ» բառը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը չեն ստուգաբանել (ՀԱԲ, 2, 107, ՀՄԲ, 242): Նկատի ունենալով իմաստային ընդհանրությունը վերոհիշյալ **կայթ**, **կայտ**, **խայտալ**, **խրախ** բառերի հետ և արտաքին նմանությունը **ծուայթ**- (նաև դրա հետ առնչվող **շուայտ**, **ցուայտ**) բառի հետ՝ առաջարկում ենք **զուարթ** <\*(s)k<sup>w</sup>huə-r-թ-<\*(s)ker- «ցատկել, բխել, վազել» ստուգաբանությունը<sup>26</sup>: Այս բառի ստուգաբանությամբ փաստորեն առաջարկում ենք **\*(s)k<sup>w</sup>h > q** հնչյունական համապատասխանությունը՝ ի լրումն բառասկզբի **\*sk-** հնչյունակապակցության հայերեն անդրադարձների շարքի:

**Ջուարձ** «1. ուրախ, ցնծալի, 2. ծիծաղաշարժ, 3. դալար, ուռճացած, հուռթի (բույս)» բառը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը համարել են **զուարթ**-ի տարբերակ՝ երկրորդ աճականի **թ/ձ** հերթագայությամբ (հմմտ. *յուռթի – ուռճանալ*, *քնթոնոց – կնձիռն*, *լուրթ – լուրջ*, *փրթանիլ – փրծանիլ* և այլն):

---

<sup>26</sup>Հմմտ. լատ. *scurra* «կատակաբան, սրախոս», նորվ. *skart*; *skjerta-st* «ուրախանալ, զվարճանալ, կատակել», մ.բ.գերմ. *schärzen* «երջանիկ խայտալ, ցատկոտել, ուրախանալ, զվարճանալ», *schërz* «1. կատակել, կատակ, 2. հաճույք, զվարճանք, խաղ», լիտվ. *kutru-* «շարժուն, աշխույժ, գործուն, ժիր» (Նիկ. *\*(s)ker-* «ցատկել, բխել, վազել», *\*(s)kerəd-* «ցատկել, կայթել», *\*(s)k<sup>w</sup>at-*, *\*(s)kAut-* «ցնցել»):

Zakaryan Hovhannes – Etymology of Several Armenian Words Meaning «to Jump, to Spring; to Splash out; to Erupt». – The article, dwelling upon phonetic, morphemic and semantic analyses, puts forward the following new etymologies: **քայլ** «step» <\*(s)kəi-l- <\*sk'ei- (\*sk'āi-, \*sk'əi-) «to jump, to splash out», **քիթ** «1. nose, snoot, 2. bulge, 3. tip» <\*(s)kē-t-, **խայտ-ալ** «1. frisk, 2. rejoice» <\*(s)khəi-d-, **ցնծ-ալ** «rejoice, frolic» <\* ցնւծ- <\*sk'ō-n-g-, **ծուլ** «jump, leap» <\*(s)k'hō-l-, **ճայթ-ել** «explode, break out» <\*sk'həi-t-, **ժայթք-ել** «to erupt» <\*sk<sup>w</sup>həi-t-, **զուարճ** «1, cheerful, joyful, 2, funny» <\*(s)k<sup>w</sup>huə-r-ǵ-etc.

Закарян Оганес – Этимология некоторых армянских слов, обозначающих «скакать; брызгать; извергать». – В статье на основе фонетического, словообразовательного и семантического анализов предлагаются следующие новые этимологии: **քայլ** «шаг» <\*(s)kəi-l- <\*sk'ei- (\*sk'āi-, \*sk'əi-) «прыгать; выплескиваться», **քիթ** «1. нос, морда, 2. выступ, 3. вершина, край» <\*(s)kē-t-, **խայտ-ալ** «1. подпрыгнуть, 2. ликовать» <\*(s)khəi-d-, **ցնծ-ալ** «ликовать, прыгать» <\*ցնւծ- <\*sk'ō-n-g'-, **ծուլ** «прыжок, скачок» <\*(s)k'hō-l-, **ճայթ-ել** «взрываться, разразиться» <\*sk'həi-t-, **ժայթք-ել** «извергать» <\*sk<sup>w</sup>həi-t-, **զուարճ** «1, весёлый, ликующий, 2, забавный» <\*(s)k<sup>w</sup>huə-r-ǵ-и т. д.

ԲԱՌԻՄԱՍՏԱՅԻՆ ՅՈՒՐՕՐԻՆԱԿ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ  
ՀԱՄՇԵՆԻ ԲԱՐԲԱՌՈՒՄ

Հայերենի բարբառներում շատ հաճախ բարբառային բառերը դրսևորվում են բառիմաստային յուրօրինակ զարգացումներով: Եվ ինչպես Գ.Զահուկյանն է փաստում, հնարավոր է, որ բարբառային բառերը որոշ դեպքերում պահպանած լինեն գրաբարյան բառիմաստից որոշակիորեն տարբեր՝ նրան զուգահեռ կամ նրանից հին բառիմաստ<sup>1</sup>, կամ էլ, ըստ Վ. Կատվալյանի, անգամ ունեցած իմաստներից ավելի հինը<sup>2</sup>:

Ինչպես հայտնի է, Համշենի բարբառն առանձնանում է յուրօրինակ աշխարհընկալմամբ ու լեզվամտածողությամբ՝ արտացոլվելով նաև բառիմաստային տարբեր զարգացումներով ու ճյուղավորումներով: Սույն հոդվածի շրջանակներում քննության ենք առել Համշենի բարբառի որոշ բառանունների առավել ուշագրավ բառիմաստային փոփոխությունները:

**1. Պէտ:** Իրանական ծագում ունեցող *պէտ* (\**upaíta*) բառանունը հին մատենագրության մեջ «հարկավորություն, կարիք» իմաստով է գործածվել: Այս արմատից են բաղադրված գրաբարյան մատենագրության մեջ *պէտ առնել* «հոգ տանիլ, ինամք ունենալ», *թէ պէտ իցէ* «եթե պետք է», *յոււպէտս* «գուր, իզուր», *թէպէտ* բառերն

---

<sup>1</sup> Գ. Զահուկյան, *Հայ բարբառագիտության ներածություն*, Ե., 1972, էջ 282:

<sup>2</sup> Վ. Կատվալյան, *Բայագետի բարբառը և նրա լեզվական առնչությունները շրջակա բարբառների հետ*, Ե., 2016, էջ 196:

ու բառակապակցությունները<sup>3</sup>: «Արտաքնոց» նշանակությամբ գործառող *պետքարան* բառանունը ևս հնարավոր է՝ կազմված լինի հնից եկող *էլք պիտոյից*՝ «արտաքնոց» իմաստով բառակապակցության համաբանությամբ:

Արդի հայերենում և բարբառների մեծ մասում ևս *պետ* բառանունը գրեթե նույն կիրառությունն ունի: Անգամ Ակնում առկա է *բիննալ* (որն է՝ պիտենալ) բայանունը՝ «պետք գալ» նշանակությամբ:

Ըստ Հ.Աճառյանի՝ *պետք* բառանունը Համշենի բարբառում ձեռք է բերել «լավ, գեղեցիկ (*բէտկ*)» իմաստները<sup>4</sup>: Հարկ է նշել սակայն, որ Հ.Աճառյանի կողմից փաստված հիշյալ բառի «գեղեցիկ» նշանակությունը վկայված չէ ո՛չ ՀԲԱ ծրագրով հավաքած նյութերում, ո՛չ Համշենի բարբառին վերաբերող այլ ուսումնասիրություններում և ո՛չ էլ մեր համշենահայ բարբառախոսների բանավոր հարցումներում: «Գեղեցիկ» հասկացությունը բարբառում արձանագրված է հիմնականում *քյսսում*, *սիրուն* բառանուններով (Ըն *քյսսում* բուլիզ ան): Իսկ «լավ» իմաստով բարբառում գործառում են *լավ*, *խաս* բառանունները: *Բէտկ* բառանունը «լավ» իմաստով գործածվում է միայն «ինչպե՞ս ես» հարցին ի պատասխան: («Պարէվ էգաձ էս, Խաճի՛գ, ի՞նչոս յէս: «*Բէտկ* իմ», «Ի՞նչոս իս, *բէ՞ղք* իս թէ: «*Բէղք* իմ, ինչ ընիմ իղի»<sup>5</sup>

Համշենի բարբառի խոսվածքներում առավել հաճախադեպ գործածվում է *պետք* բառանունից բառիմաստային յուրօրինակ ճյուղավորմամբ ձևավորված *բէտկընուշ* բայանունը՝ «առողջանալ,

<sup>3</sup> Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան* (այսուհետև՝ ՀԱԲ), հ. 4, Ե., 1979, էջ 79:

<sup>4</sup> Հ. Աճառյան, *Քննություն Համշենի բարբառի* (այսուհետև՝ ՔՀԲ), Ե., 1947, էջ 251:

<sup>5</sup> Հ. Աճառյան, ՔՀԲ, էջ 199, 195:

ապաքինվել» նշանակությամբ (Հիվօնդը *բէտկըծաւ*, տե'ս տետրեր հ. 39, 252, կետ 409):

*Պէտ* բառից սերված և ուշագրավ բառիմաստային մեկ այլ զարգացումով էլ *պէտ* բառանունը Համշենի բարբառում *բէդ ընուշ* հարադիր բայով է փաստված՝ այս անգամ արդեն «սպասել» նշանակությամբ: Օրինակ՝ «Յէս նլ գուզիմ էշտուշ, ամա չիմ գարի էշտալ: Օ՞րի ինչ ըղած ն յօր: Պօն ունիմ, Հայգանին *բէդ գընիմ* (Հայկանին եմ սպասում)<sup>6</sup> :

**2. Վնյուշ:** Համշենի բարբառը աշխարհընկալման յուրահատուկ ըմբռնումով զգալիորեն տարբերվում է հայերենի այլ բարբառներից. պատճառը թերևս մեկուսացած լինելն է: Բարբառը նաև, իր ինքնատիպ լեզվամտածողությամբ, առանձնահատուկ բառաշեղերտեր է երևան հանում: Այսպես՝ *վայ* ձայնարկությամբ բարբառը ձևավորել է *վնյուշ* բայանունը՝ «լաց լինել» նշանակությամբ: Ի դեպ, փաստենք նաև, որ Համշենի բարբառում չեն գործածվում *լացել*, *լաց լինել* բայանունները:

Ըստ Հ. Աճառյանի՝ *վայել* բառի նշանակությունն է «վայ-վայ ըսելով լալ, ողբալ»<sup>7</sup>: Այսօր, սակայն, հիշյալ բառանունը Համշենի խոսվածքներում բառիմաստային բնեռացումով գործածվում է պարզապես «լաց լինել» իմաստով (Դըղըն *վնյէր* գու՝ երեխան լաց էր լինում, Դըղըն *վնյն* գու, տե'ս տետրեր 252, 336, 39, 187): Ի դեպ, բարբառում առկա է նաև *վնյէծ*՝ լաց, *վնյըծող*՝ լացող, և *վնյէծընուշ*՝ լացեցնել պատճառական բայաձևը: Հետաքրքրական են նաև *կոտ* ածանցով ձևավորված *վնյգէդ* (վայկոտ՝ լացկան) և դրանից բա-

<sup>6</sup> Տե՛ս նույնը, էջ 197, 251:

<sup>7</sup> Հ. Աճառեան, *Հայերէն գաւառական բառարան* (այսուհետ՝ ՀԳԲ), Թիֆլիս, 1913, էջ 992:

դադրված *վայգեդուտին*<sup>8</sup> լացկանություն, բառանունները: Հարկ է նշել, որ *վայել* բայանունը գործածական է նաև Պոլիսում, Եվդոկիայում, սակայն «բամբասել, չարախոսել», վերջինում՝ նաև «նախանձել» նշանակությամբ<sup>9</sup>:

**3. Կոլուշ:** Բնիկ հնդեվրոպական \*uolo-՝ \*uel արմատից է ծագում հայերեն *գոլ* «տաքություն, գոլանալ, շոգի» բառանունը: Ինչպես գրական հայերենում, այնպես էլ բարբառներում այն հիմնականում «տաք, շոգի, տաք գոլորշի» նշանակություններով է գործառու: Իսկ ահա Համշենի բարբառում բառիմաստային ճյուղավորմամբ «*այրել, վառել*» իմաստով է գործածվում: Օրինակ՝ Իմ բարբառն ան լիլը մը ունիր. մեզ ձնրը պեյնին տըներ գու, միգնլ ձնրը լարեր, արեվըն *կոլեր* գու (տե՛ս տեսրեր հ. 252, 336):

Հետաքրքրական է, որ հիշյալ բարբառում *վառել*-ի *վառուշ* բարբառային տարբերակը գործառու է «վերքի կսկծալ», «աչքի մրմռալ» իմաստներով, որից էլ բառիմաստային ճյուղավորմամբ ձևավորվել է *վառեծուկ*<sup>10</sup>՝ «կծու» իմաստով բառանունը<sup>10</sup>: Օրինակ՝ Ընգաձ իմ, օտկըս լըղեծալ, յարըն *վառե* գու (Ընկա, ոտքս ճիվկեց, վերքը մրմռում է): Մըխըն աչվիս վառեծօն (Օուխից աչքերս մրմռում են): Բիբեռը շատ *վառեծուգ* ան (Տաքդեղը կծու է):

**4. Իժիր:** Ժիր բառանունը վկայված է դեռևս հին մատենագրության մեջ «աշխույժ, եռանդուն, փութկոտ» նշանակությամբ և համարվում է իրանական փոխառություն՝ պիլ. \*žir ձևից առաջացած: Ժիր-ը բարբառային հայերենում լայնորեն գործածվող բառանուն է՝ դրսևորված տարբեր իմաստային զարգացումներով: Այսպես՝ Ալաշկերտ, Կարին, Մուշ, Երևան, Պոլիս, Ջուղա, Սեբաս-

<sup>8</sup> Խ. Թահմազ, *Ջենիզի բարբառի բառարան*, Սոչի, 2014, էջ 184:

<sup>9</sup> Հ. Աճառյան, ՀԳԲ, էջ 992:

<sup>10</sup> Հ. Աճառյան, ՀԶԲ, էջ 254: Խ. Թահմազ, *Ջենիզի բարբառի բառարան*, էջ 184:



տիա՝ *ժիր*՝ «ժրաջան», Վան, Սալմաստ, Ախալցխա՝ ժիր՝ «ամողջ»: Բարբառներում հիշյալ բառանունը ստացել է նաև այլ նշանակություններ: Օրինակ՝ Մոկսում՝ «կենդանի, ողջ», Խարբերդում՝ «պինդ, կարծր», Խլաթում՝ «շուտ-շուտ, հաճախ», Խարբերդում՝ «գաղտնապահ» և այլն<sup>11</sup>:

Գրաբարյան *ժիր* արմատին ծագումնաբանորեն առնչակից է Խոտրջուրում և Համշենում արձանագրված *իժիր* բառանունը՝ «միշտ, հաճախ» իմաստով<sup>12</sup>: Կրոնափոխ համշենահայերի շրջանում հիշյալ բառանունը արձանագրված է *իժէէ*, *իժիյէ* հնչաձևերով՝ «ամեն անգամ, ամեն ժամանակ, միշտ, մշտապես» նշանակություններով<sup>13</sup>, Ասլանբեկում, Եվդոկիայում, Չենկիլերում, Պոլսում վկայված է «ամեն ի ժիր» արտահայտությունը՝ «միշտ, ամեն անգամ» իմաստով: Ուշագրավ է, որ դեռևս 12-րդ դարում Մխիթար Հերացու «Ջերմանց Մխիթարություն» աշխատության մեջ վկայված է *ի ժիր*-ի «Երակն ի ժիր իսողայ» արտահայտությունը՝ խնդրո առարկա կապակցության «արագ-արագ» իմաստով<sup>14</sup>: Այս ամենից կարող ենք եզրակացնել, որ Համշենի բարբառում առկա *իժիր* բառանունը *ի* նախդրով և *ժիր* արմատով բաղադրված բառանուն է:

**5. Պարասյ** բառը հին մատենագրության մեջ լայնորեն կիրառվել է «անգործություն, դատարկ մնալ», «յարմար ժամանակ», «անգործ, դատարկ, ունայն» նշանակություններով: Գ. Ջահուկյանը ենթադրում է, որ *պարասյ* բառը թերևս փոխառություն է իրանական աղբյուրից, բայց որի բուն աղբյուրը հաստատված չէ<sup>15</sup>: Հիշյալ արմատից հին հայերենում առաջացել են *պարասպել*՝ «յետ կենալ,

<sup>11</sup> Հ. Աճառյան, ՀԱԲ, հ. 2, Ե., 1973, էջ 230:

<sup>12</sup> Հ. Աճառյան, ՀԱԲ, հ. 2, էջ 231, *Քննություն Համշենի բարբառի*, էջ 230:

<sup>13</sup> Մ. Վարդանյան, *Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը*, Ե., 2009, էջ 291:

<sup>14</sup> Հ. Աճառյան, ՀԱԲ, հ. 2, էջ 231:

<sup>15</sup> Գ. Ջահուկյան, *Հայերեն ստուգաբանական բառարան*, Ե., 2010, էջ 630:

դատարկանալ ի գործոց», ինչպես նաև «զբաղիլ, պարապ ժամանակը նրանով անց կացնել» և *պարպել*՝ «մեջը լցնել» իմաստներով բայանունները:

Բարբառային հայերենում ևս բառանունը լայն գործառություն է ունեցել: Այսպես՝ Ագուլիս, Մարադա, Ջուղա, Վան, Սալմաստ՝ *պարապ*, Ալաշկերտ, Կարին, Մուշ՝ *պարաբ*, Գորիս, Ղարաբաղ՝ *հպա՛րապ*, Հաճըն՝ *բայօբ*, Սվեդիա՝ *բսրուբ* և այլն: Իսկ *պարապել* բայանունը Ագուլիսում դրսևորված է *պրա՛պիլ*՝ «զբաղիլ», Ջեյթուն *բայբիլ*՝ «մեռնիլ», *բայբըցընիլ* (որից էլ կրճատ՝ *բարբընիլ*) «սպառել, հատցնել, պարպել», *բայբընօլ*՝ «գործը վերջացնելով ազատվիլ»: Արևմտյան մի շարք բարբառներում և խոսվածքներում՝ Սուչավա՝ *բարբեի*, Խարբերդ՝ *բարբիլ*, Տիգրանակերտ՝ *բսրբիլ*, Ջեյթուն, Հաճըն՝ *բայբիլ*, ինչպես նաև Համշենում՝ *բարբուշ*՝ «դատարկել, մի ուրիշ ամանի մեջ լցնել» նշանակությամբ է կիրառվել<sup>16</sup>: Ինչպես նկատեցինք, Համշենի բարբառում *պարապել* բառանունը՝ *բարաբուշ* հնչատարբերակով, «մի աման մի ուրիշ ամանի մեջ դատարկել» իմաստն է ստացել: Օրինակ՝ Հիմի *բարաբուշի* սրբըն *չսի* (Հիմա դատարկելու ժամանակը չէ): Օմօնը *բարաբեժի* (Ամանը դատարկեցի): Հարկ է նշել, սակայն, որ բարբառում առկա է նաև *պարպել* բառանվան մեկ այլ տարբերակ՝ *բարբուշ*-ը, որը գործածվում է արդեն այլ՝ «վերջանալ, վերջացնել» նշանակությամբ: Օրինակ՝ Կուրադին՝ ծորին ճուրը *բարբի գու*: (Երաշտի ժամանակ ձորի ջուրը կտրվում, վերջանում է)<sup>17</sup>: Լաֆը *բարբիլ* չի: (Խոսակցությունը չի վերջանում):

**6. Ուրիշուշ:** Համշենահայերի առանձնահատուկ լեզվամտածողության ինքնատիպ օրինակ է *ուրիշուշ* (նաև *ուրուշուշ*)

<sup>16</sup> Հ. Աճառյան, ՀԱԲ, հ. 4, էջ 57:

<sup>17</sup> Հ. Աճառյան, ՔՀԲ, էջ 251: Խ.Թահմազ, *Ջենիգի բարբառի բառարան*, էջ 18:

բառանունը, որը *ուրիշ* անորոշ դերանունից բաղադրված բառանուն է և բարբառում գործածվում է «հատիկեղենի միջից քարերը ընտրել, ձկան փորը մաքրել, կովողներին իրարից անջատել» նշանակություններով<sup>18</sup>:

Գ.Ջահուկյանը ենթադրում է *որոշ, ուրուշ, որուշ* բառերի հնդեվրոպական ծագում՝ \*orokh-`\*ere-«խառխոտ, նսար, հեռու կանգնած, իրարից հեռանալ» արմատից<sup>19</sup>: Ըստ Հ.Աճառյանի՝ *ուրիշ* և *որոշ* անորոշ դերանունները ծագումնաբանորեն առնչակից են, և նրանց հինհայերենյան նշանակությունն է «զատուած, սահմանուած», որից էլ հին մատենագրության մեջ *որոշելը* «զատել, ջոկել, բաժանել, ընտրել» իմաստներով է գործառվել<sup>20</sup>:

Այս փաստերը համադրելով՝ կարելի է եզրակացնել, որ Համշենի բարբառում գործառող *ուրիշուշ* բառանունը ավելի շուտ պահպանել է իր գրաբարյան՝ զատել, իրարից անջատել, ջոկել իմաստները: Օրինակ՝ Գրովօղնուն իրարմն *ուրիշէծին*: Իդա գրովօղնին իրարմն *ուրուշէծէ կ*: Մանդարին *գուրուշէյ* (ջոկում էի):

**7. Եղյաւ:** Ինչպես գրաբարում, այնպես էլ արդի հայերենում *եղյաւը* «ձյունային բյուրեղացած ցողն է», որը ցուրտ և խոնավ եղանակներին նստում է բույսերի և առարկաների վրա: Ըստ Գ.Ջահուկյանի՝ *եղյաւ* բառը կա՛մ ուրարտական ծագում ունի, կա՛մ էլ հայերենին անցած պիտի լինի ուրարտերենի միջոցով<sup>21</sup>:

Համշենի բարբառի խոսվածքներում ևս արձանագրված է *եղյաւ* բառանունը, որը բարբառում բառիմաստային ճյուղավորմամբ ձեռք է բերել «սառույց» նշանակությունը:

<sup>18</sup> Հ.Աճառյան, ՔՀԲ, էջ 249: Խ.Թահմազ, *նշվ. աշխ.*, էջ 195:

<sup>19</sup> Գ. Ջահուկյան, *Հայերեն ստուգաբանական բառարան*, Ե., 2010, էջ 608:

<sup>20</sup> Հ.Աճառյան, ՀԱԲ, հ. 3, Ե., 1977, էջ 585-586:

<sup>21</sup> Գ. Ջահուկյան, *Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան*, Ե., 1987, էջ 440:

Չնայած Հ. Աճառյանի այն վկայակոչման, որ *էղիմը* սույն բարբառում միայն «սներից կախված սառույցի երկար պաղլորակը» (լուլա-ն) է<sup>22</sup>, սակայն ըստ մեր ձեռքի տակ եղած նյութերի՝ Համշենի բարբառի խոսվածքներում *եղյամը էղիմ* և *աղիմ* հնչաձևերով վկայված է նաև որպես «սառույց» հասկացության նշանակելի (*էղիմը* հալեձավ, *աղիմի* չարթուն (սառույցի ջարդոն), *էղիմի* փեռտ (սառույցի կտոր), Բաղեձա, *էղիմ* գրդոեձա: (Պաղեցի, սառույց կտրեցի)):

Նույնիսկ «Համշենահայ բանահյուսության» մեջ փաստված է *էղիմկըռուշ*՝ «սառել» իմաստով բառաձևը<sup>23</sup>: Մեր բարբառախոսներից գրանցել ենք նաև հետևյալ օրինակը՝ Ընկան ցույդ էր, օր օղվընիս *էղիմկըռեձոն* (Այնքան ցուրտ էր, որ ոտքերս սառեցին): Հարկ է նշել, սակայն, որ ըստ ՀԲԱ ծրագրով հավաքած նյութերի՝ Տրապիզոնի խոսվածքում «սառույց» հասկացությունը *պաղ* բառի *բաղկ* հնչաձևով է արձանագրված (տես տետր h.90):

**8. Եղինջ:** Բանջար՝ «կանաչեղեն, խոտեղեն, նաև ճակնդեղ, բազուկ» նշանակությամբ գրաբարյան բառանունը բարբառներում կիրառվում է որպես ընդհանուր կամ մասնավոր խոտաբույսի անուն: Օրինակ՝ Գորիսում *պանջար*-ը «եղինջ» բույսն է, իսկ Համշենում պօնջարը՝ «բաց թերթերով կաղամբը»<sup>24</sup>:

Հ. Աճառյանը «Հայոց լեզվի պատմության» մեջ բերում է չստուգաբանված բառերի մի խումբ, որոնց աղբյուրը գոնե մասամբ կարող է ուրարտերենը լինել: Եվ այս խմբում ներառված է նաև *էղիճ* բառանունը<sup>25</sup>:

---

<sup>22</sup> Հ.Աճառյան, ՔՀԲ, էջ 227:

<sup>23</sup> Հ.Գուրունյան, *Համշենահայ բանահյուսություն*, Ե., 1991, էջ 317:

<sup>24</sup> Հ.Աճառյան, ՀԱԲ, հ. 1, էջ 409, ՔՀԲ, էջ 222:

<sup>25</sup> Հ.Աճառյան, *Հայոց լեզվի պատմություն, մաս 1*, Ե., 1940, էջ 181:

Ըստ Գ.Ջահուկյանի, սակայն, բառի ծագումն անհայտ է<sup>26</sup>:

Համշենի բարբառում *եղինջ* բառը՝ *եղիջ* հնչաձևով, դրսևորված է իր նախնական՝ «մի տեսակ փշաբույս» իմաստով (Մէյս եղիջի ջաշ էպեծ): Առավել հետաքրքրական է, որ *եղինջը* Համշենի որոշ խոսվածքներում գործառում է նաև որպես բայարմատ՝ *եղիջուշ*: Օրինակ՝ *եղիջը եղջեծ* (տետր հ. 252), *եղիջը գեղջու* (տետր հ. 187): Մեր բարբառախոսներից գրանցել ենք նաև հետևյալ օրինակը՝ Գելդնու կիղիս տնն *եղջաձ* ւն (Մարմինս կարծես թե եղինջով ծեծած լինեն):

**9.Թաթալ:** Հին մատենագրության մեջ առանձին գործածական չէ. նրանից են սերում *թաթալել* «թաթախել, կեղտոտել, պլշկել, շաղախել», *թաթալումն*, *թաթալուշ*, *թաթալուն*, *մեղսաթաթալ*, *թալթալել*, *թոթովել* բառերը: Կարծիք կա, որ ամենահին և հարագատ ձևը *թաթալեալ*-ն է, որը գործածական է Հ.Ոսկերերանի «Մեկնութիւն Եսայեայ մարգարէի» (Վենետիկ 1880) երկում: *Թաթալ* արմատը բնիկ հայերեն բառ է՝ *թալ* արմատի կրկնությամբ առաջացած, որը ծագում է հ.-ե. \*tap ձևից. հմմտ. հալ torpiti «ընկղմել, թաթալել, մխրճել», նույն ծագումն ունեն նաև ռուսերեն топить «ընկղմել, խեղդել» утопить «խեղդուիլ, ընկղմիլ, մխրճուիլ» բառերը<sup>27</sup>: Հարկ է նշել, որ միջին հայերենում արդեն փաստված է *թաթալ* բառի անկախ գործածությունը *անձրև* նշանակությամբ (Գիշերս ես ի դուրս ելայ, մանր ու մեծ *թաթալն* ի վերայ)<sup>28</sup>:

Ուշագրավ է, որ բարբառային հայերենում ևս վկայված է *թաթալ* արմատը, որն առանձին գործածական է Ակնում, Խոտրջուրում, Կարինում, Սուչավայում: Բառանունը ինչպես հիշատակված

<sup>26</sup> Գ. Ջահուկյան, *Հայերեն ստուգաբանական բառարան*, Ե., 2010, էջ 214:

<sup>27</sup> Հ. Աճառյան, ՀԱԲ, հ. 2, էջ 138:

<sup>28</sup> Ռ. Ղազարյան, Հ.Ավետիսյան, ՄՀԲ, Ե., 2009, էջ 230: Ռ. Ղազարյան, *Միջին հայերենի բառապաշարը*, Ե., 2001, էջ 65:

բարբառներում, այնպես էլ Համշենի բարբառում (*թատալ* հնչա-  
ձևով) *անձրև* հասկացության նշանակելին է: Ի դեպ, ըստ Հ.Աճա-  
ռյանի՝ *թատալը* «հորդ անձրև»-ն է, իսկ «մեղմ անձրևը»՝ *վըրա-  
յեզը*<sup>29</sup>: Սույն բարբառում առկա է նաև հիշյալ արմատով բայանու-  
նը՝ *թատվուշ*, որը ոչ միայն «անձրևից թրջվել», այլև «հաց ու ջրի  
մեջ մնալով կակդել, անձրևից խխում դառնալ» իմաստներով է գոր-  
ծածվում<sup>30</sup>: Օրինակ՝ Վըրայեզ ւնրավ, *թատվեճա* (Անձրև եկավ,  
թրջվեցի), Հածը թատվաձ էր:

Այսպիսով՝ քննելով Համշենի բարբառի որոշ բառանուն-  
ներ՝ տեսնում ենք, որ այս բարբառի բառապաշարում, պայմանա-  
վորված համշենահայերի յուրահատուկ լեզվամտածողությամբ ու  
աշխարհընկալմամբ, դրսևորված են բառիմաստային յուրօրինակ  
ճյուղավորումներով ու զարգացումներով բառանուններ: Դրանցից  
առավել հետաքրքրական են *պէտ* բառի՝ «լավ, առողջ, սպասել»,  
*պարապ* բառի՝ «վերջացնել», *վայել* բայի՝ «լաց լինել», *գոլել*-ի՝  
«վառել», *ուրիշել*-ի՝ «զատել, իրարից անջատել», *եղյամ*-ի՝ «սա-  
ռույց», *պանջարի*՝ «բաց թերթերով կաղամբի», *թաթավել*-ի «հաց ու  
ջրի մեջ մնալով կակդել, անձրևից խխում դառնալ» բառիմաս-  
տային յուրօրինակ զարգացումները:

---

<sup>29</sup> Հ.Աճառյան, ս էջ 228, Խ. Թահմազ, նշվ. աշխ., էջ 73:

<sup>30</sup> Բ.Թողաքյան, *Նշխարներ Համշենի և Տրապիզոնի բանահյուսության*, Ե., 1986, էջ  
221: Ս. Վարդանյան, նշվ. աշխ., էջ 287, Խ. Թահմազ, նշվ. աշխ., էջ 73:

Hasmik Khachatryan- Peculiar Lexico-Semantic Developments in the Hamshen Dialect. -This article examines some words in the Hamshen dialect that have manifested peculiar semantic developments, such as the word *petq* (*bedq* - need, *bed ynush* - to wait) which is used in the dialect with the meaning “**good, healthy, to wait**”, the word *parapel* (*barbush*) which is used in the dialect with the meaning “**to finish**”, the verb *vayel* (*v<sup>o</sup>ynush*) which is used in the dialect with the meaning “**to cry**”, the word *golel* (*kolush*) which is used in the dialect with the meaning “**to burn**”, the word *urishel* (*urishush*) which is used in the dialect with the meaning “**to separate**”, the word *yeghyam* which is used in the dialect with the meaning “**ice**”, the word *banjar* which is used in the dialect with the meaning “**cabbage with open leaves**”, the word *tatav* which is used in the dialect with the meaning “**heavy rain**”.

Асмик Хачатрян- Уникальные смысловые процессы в амшенском диалекте. -В рамках данной статьи мы рассмотрели лексемы диалекта Амшена, которые претерпели уникальные семантические преобразования, такие, как слово *цѣтуп* (*бэдк* - нужда, необходимость, *рѣт рѣпнѣ* /*бед энущ*/ - ждать), которое в диалекте употребляется в значении «хорошо, здоровый, ждать»; слово *цшршцѣ* (*ршррнѣ* - *барбуш*) - в значении «*цѣтшгѣтѣ*» (закончить, завершить); глагол *цшѣ* (*цѣѣпнѣ*) - *ваюш*) - в значении «*цш рѣнѣ*», (плакать); слово *qnѣтѣ* (*цопнѣ*) - *колуш*) в значении «*цшнѣ*» - «сжигать», а также *пѣрѣтѣ* (*пѣрѣтѣпнѣ* - *уришуш*) в значении «отделять, дифференцировать», *ѣпшѣ* (*иней*) в значении «*цшпнѣ*» («саруѣц» - лед, *ршѣшрѣ* (*банджар*) в значении «*рш рѣрѣрѣпѣ цшѣшѣ*» - «кочан с раскрытыми листьями».

### ԽԱՌՈՐ ՏԻՊԻ ԽՈՍՎԱԾՔՆԵՐԸ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՈՒՄ

Կոտայքի մարզում զգալի քանակություն են կազմում խառը տիպի խոսվածքներ ունեցող բնակավայրերը: Դրանց թիվը, մեր դիտարկումներով, հասնում է գրեթե երկու տասնյակի<sup>1</sup>: Պայմանավորված բնակիչների ծագման յուրահատկություններով, գրական ու խոսակցական լեզուների, Արարատյան բարբառի ազդեցություններով՝ նման խոսվածքները գուցորդում են տարբեր բարբառների հատկանիշներ, և դժվար է անվերապահորեն դրանք վերագրել բարբառներից որևէ մեկին<sup>2</sup>: Նկատելի է, որ Կոտայքի մարզի խառը տիպի խոսվածքներում հիմնականում դրսևորվում են Արարատյան բարբառի և որևէ այլ բարբառի կամ բարբառների հատկանիշներ, ինչը բնական է, եթե նկատի ունենանք հիշյալ բնակավայրերի հիմնադրման հանգամանքները, բնակիչների նախնիների լեզվական յուրահատկությունները: Հիշյալ բոլոր խոսվածքներն էլ

---

<sup>1</sup> Աբովյանի տարածաշրջանում խառը տիպի խոսվածքներ ունեն Բալահովիտ, Գեղադիր, Գեղաշեն, Զառ, Զովաշեն, Էլար, Կաթնաղբյուր, Կամարիս, Կապուտան, Հացավան, Նոր Գյուղ, Ողջաբերդ, Սևաբերդ բնակավայրերը, Հրագդանի տարածաշրջանում՝ Բջնի գյուղը, Նախրիի տարածաշրջանում՝ Արգել, Գետամեջ, Թեղենիք, Սարալանջ, Քարաշամբ բնակավայրերը:

<sup>2</sup> Այս կարգի բարբառային միավորներ ժամանակին ներկայիս Արմավիրի մարզում դիտարկել է Ս.Բաղդասարյան-Թափալցյանը: Ներկայացնելով Զրաշեն գյուղի խոսվածքը՝ նա գրում է. «Բնակչությունը խոսում է մի խառնալեզվով, որի վրա զգացվում է գրական լեզվի ուժեղ ազդեցությունը» (տե՛ս Ս.Բաղդասարյան-Թափալցյան, Արարատյան բարբառի խոսվածքները Հոկտեմբերյանի շրջանում, Ե., 1973, էջ 12): Բարբառագետը նույն կարգի բնութագրումներ է տալիս մի շարք այլ գյուղերի և եզրակացնում. «Պատմական իրադրությունները այստեղ ևս դրել են իրենց կնիքը, հետևանքը եղել է այն, որ նույն գյուղում բնակվում են զանազան բարբառների, նույն բարբառի տարբեր խոսվածքների ներկայացուցիչներ, իսկ շատ գյուղերում էլ որևէ բարբառ, խոսվածք անադարտությամբ չի պահպանվել» (նշվ. աշխ., էջ 14):



ներկան և անցյալ անկատարը կազմում են *ում//ըմ* վերջավորութեամբ անկատար դերբայով (հաճախ՝ զուգահեռաբար նաև այլ եղանակով), սակայն այդ հատկանիշը զուգորդվում է Ում ճյուղին ոչ բնորոշ բազմաթիվ հատկանիշներով, և այդ հանգամանքը թույլ չի տալիս այդ խոսվածքները համարել Արարատյան բարբառի տարբերակային դրսևորումներ<sup>3</sup>: Բայց և Ում ճյուղի հիմնական բնութագրիչ հիշյալ հատկանիշի առկայությունը թույլ չի տալիս Մշո, Վանի կամ Խոյ-Մարաղայի բարբառների ցայտուն հատկանիշներ ունեցող խոսվածքները վերագրել այդ բարբառներին: Մյուս կողմից՝ դիտարկվող խոսվածքները, կարծում ենք, միջխոսվածք համարվել չեն կարող, որովհետև ներկայացնում են ոչ թե մի բարբառից մյուսին աստիճանական անցման բնական վիճակներ, այլ առաջացել են բարբառախոս տարբեր հանրությունների տեղաշարժերի, բարբառային միավորների կամայական խաչաձևումների ու նոր միջավայրի ազդեցությունների միջոցով<sup>4</sup>: Ուստի ճիշտ ենք համարում հիշյալ բարբառային միավորներն առանձնացնել իբրև խառը տիպի խոսվածքներ՝ այդպիսով ընդգծելով նաև նրանց առաջացման ու ձևավորման յուրահատկությունը:

---

<sup>3</sup> Ռ.Մարկոսյանը Արարատյան բարբառի շրջանակում է ներառում Բջնիի, Գեղաշենի, Զառի, Էլարի, Կաթնաղբյուրի և Բալահովտի խոսվածքները՝ նշելով դրանց մի մասի վրա Բայազետի բարբառի զգալի ազդեցությունը (տե՛ս Ռ.Մարկոսյան, Արարատյան բարբառ, էջ 38-52): Նման մոտեցումը հիմք է դառնում, որ Արարատյան բարբառին, թեկուզ և մասնակիորեն, հանիրավի վերագրվեն այլ բարբառների հատկանիշներ, ինչպես՝ հինհայերենյան *հ*-ի դիմաց *խ*-ի առկայությունը, ներգոյական հոլովի բացակայությունը և այլն (տե՛ս նշվ. աշխ., էջ 74-75, 107):

<sup>4</sup> Արձանագրելով, որ Կաթնաղբյուրի խոսվածքը մի շարք հատկանիշներով նման է Արարատյան, Բայազետի և Խոյի բարբառներին՝ ունենալով այդ բարբառները ներկայացնող հարևան գյուղեր, իսկ Բալահովտի խոսվածքն էլ ունի Արարատյան և Բայազետի բարբառների հատկանիշներ՝ Ռ.Մարկոսյանը այդ երկու խոսվածքները համարում է միջխոսվածք (տե՛ս նշվ. աշխ., էջ 51):

Ավելի հաճախ խոսվածքներում զուգորդվում են Արարատյան և Մշո բարբառների հատկանիշները (6 խոսվածքում Արարատյանի հետ առկա է միայն Մշո բարբառի շերտը, ևս ութ խոսվածքում զուգորդվում են նաև այլ բարբառային միավորների տարրեր): Որոշ դեպքերում Արարատյան բարբառի հատկանիշները (առանձին կամ այլ բարբառային միավորների հատկանիշների հետ) զուգորդվում են Վանի (4 խոսվածք), Խոյ-Մարաղայի (5 խոսվածք), Բայազետի (2 խոսվածք), Դիաղինի (1 խոսվածք) բարբառների, Թավրիզի խոսվածքի (2 խոսվածք) հատկանիշների հետ<sup>5</sup>:

Դիտարկվել են մի շարք հատկանիշներ, որոնք ընդհանուր կամ գրեթե ընդհանուր են խառը տիպի բոլոր խոսվածքների համար: Հնչյունական նման հատկանիշներից են. Էլարից բացի՝ բոլոր խոսվածքներում դրսևորվում է երկբարբառային *ե* հնչյուն<sup>6</sup>. Բալահովիտի, Էլարի և Սարալանջի խոսվածքներից բացի՝ մյուս խոսվածքներում գործածվում է երկբարբառային *ռ* հնչյուն (կայուն չէ Բջնիի խոսվածքում). բոլոր խոսվածքներում միավանկ բառերի սկզբում *ե*-ից և *ռ*-ից առաջ առկա է բաղաձայնական տարրի

---

<sup>5</sup> Արարատյան և Մշո բարբառների հատկանիշներ են դիտվում Արգելի, Գետամեջի, Էլարի, Թեղենիքի, Սարալանջի, Սևաբերդի խոսվածքներում, Արարատյան, Մշո և Խոյ-Մարաղայի բարբառների հատկանիշներ ունեն Բալահովիտի և Գեղաշենի խոսվածքները, Արարատյան, Մշո և Վանի բարբառների հատկանիշներ են զուգորդում Ջովաշենի և Քարաշամբի խոսվածքները, Արարատյան, Մշո և Բայազետի բարբառների հատկանիշներ՝ Կապուտանի խոսվածքը, Արարատյան, Մշո բարբառների և Թավրիզի խոսվածքի հատկանիշներ՝ Ջառի և Հացավանի խոսվածքները, Արարատյան, Մշո, Խոյ-Մարաղայի և Վանի բարբառների հատկանիշներ՝ Կաթնաղբյուրի խոսվածքը, Արարատյան և Վանի բարբառների հատկանիշներ ունեն Գեղաղիբի և Ողջաբերդի խոսվածքները, Արարատյան և Բայազետի բարբառների հատկանիշներ՝ Բջնիի խոսվածքը, Արարատյան և Խոյ-Մարաղայի բարբառների հատկանիշներ՝ Նոր Գյուղի խոսվածքը, Արարատյան, Խոյ-Մարաղայի և Դիաղինի բարբառների հատկանիշներ Կամարիսի խոսվածքը:

<sup>6</sup> Բալահովիտի, Սարալանջի և Բջնիի խոսվածքներում՝ որոշ տատանումներով:

հավելում<sup>7</sup>. քմայնացած *ա* ձայնավոր տարբեր հաճախությամբ հանդիպում է բոլոր խոսվածքներում, իսկ Գեղաղիրի խոսվածքում օրինաչափորեն դրսևորվում է նաև բառասկզբի խլացած բաղաձայններից հետո. ընդհանուր է բառավերջում ավելացող մասնիկից առաջ *ա>է* անցումը, լոկ Նոր Գյուղի խոսվածքում հաճախ նման անցում չի կատարվում. բոլոր խոսվածքներում շեշտը վերջնավանկային է, և բազմավանկ բառերի միջնավանկի ձայնավորի սդումը սովորական է. Նոր Գյուղից բացի՝ բառասկզբում շնչեղ ձայնեղ բաղաձայններ դրսևորվում են բոլոր խոսվածքներում<sup>8</sup>. Թեղենիքի և Սարալանջի խոսվածքներում ոչ բառասկզբի խուլերի դիմաց առկա են ձայնեղներ, մյուս խոսվածքներում այդ իրողությունն ունի մասնակի դրսևորումներ. ընդհանուր է բառասկզբում ձայնավորից առաջ *հ*-ի հավելումը՝ տարբեր ընդգրկումներով և այլն: Քերականական ընդհանուր հատկանիշներից են՝ բացառականի կազմությունն *ց*-ով, ներգոյականի իմաստի արտահայտությունն հայցականով կամ *մեջ* կապով և սեռականով<sup>9</sup>. որոշիչ *ը* և *ն* հոդերի առկայություն<sup>10</sup>. անձնական դերանունների տրական հոլովի ձևերում *ի* հավելվածի առկայություն. բայի ներկա ժամանակաձևի կազմությունն *ում//ըմ* վերջավորությամբ անկատար դերբա-

---

<sup>7</sup> Բացառություն է *որ* շաղկապի *օր* արտասանությունը Ջովաշենի, Թեղենիքի, Կապուտանի, Սարալանջի, Սևաբերդի, Քարաշամբի խոսվածքներում:

<sup>8</sup> Բալահովիտի, Ջովաշենի, Կաթնաղբյուրի խոսվածքներում շնչեղ ձայնեղներին գուգահեռ գործառում են նաև խլացած բաղաձայններ, Գեղաղիրի, Կամարիսի, Ողջաբերդի խոսվածքներում սովորական է բառասկզբում ձայնեղների դիմաց խուլերի գործածությունը, բայց հանդիպում են նաև շնչեղ ձայնեղներ, Գեղաշենի, Չառի խոսվածքներում շնչեղ ձայնեղները երբեմն խուլի տպավորություն են թողնում

<sup>9</sup> Միայն Էլարը ունի նաև ներգոյական հոլով:

<sup>10</sup> Գետամեջում և Քարաշամբում նկատելի է *ն* հոդի ավելի գործածական լինելը, Ջովաշենում, Թեղենիքում, Կամարիսում, Կապուտանում, Ողջաբերդում, Սևաբերդում, Քարաշամբում որոշիչ հոդը միշտ չէ, որ դրսևորվում է:

յով<sup>11</sup>. վաղակատար դերբայի *ը*-ով վերջավորություն. էական բայի ներկայի ձևերի եզակի երրորդ դեմքի *ա* ձև. անցյալ կատարյալի ներգործաձև և կրավորաձև վերջավորությունների առկայություն<sup>12</sup> և այլն: Խառը խոսվածքների բերված ընդհանուր հատկանիշների շրջանակում կարելի է ընդգծել հետևյալ իրողությունները.

1.Իրենց կենսունակությունը շարունակում են պահպանել խոր հնություն ունեցող և որոշակի տարածաշրջանների բարբառային խոսքի բնութագրիչներ հանդիսացող, ինչպես նաև ընդհանուր բնույթ ունեցող հատկանիշները<sup>13</sup>.

2.Խառը խոսվածքներին հատուկ են գրեթե ողջ բարբառային լեզուն կամ դրա մի զգալի հատվածն ընդգրկած զարգացումներ<sup>14</sup> .

3.Մի շարք հատկանիշներ ընդհանրացել են արևելահայ լեզվական միջավայրի ազդեցությամբ<sup>15</sup>:

---

<sup>11</sup> Կապուտանում և Կամարիսում զուգահեռաբար գործածական է *կը* մասնիկով ներկան, Գեղադիրում, Զովաշենում, Թեղենիքում, Սաբերդում և Քարաշամբում *կը* մասնիկով ներկան ավելի քիչ է հանդիպում, Նոր Գյուղում ներկան արտահայտվում է նաև *լ*-ով ավարտվող դերբայի մասնակցությամբ վերլուծական կառույցով:

<sup>12</sup> Բացառություն են Չառի և Հացավանի խոսվածքները:

<sup>13</sup> Այդպիսիք են՝ երկբարբառային *ե,ռ* հնչյունների առկայություն, վերջնավանկային շեշտ, շնչեղ ձայնեղ բաղաձայնների գործածություն, ցուցական դերանունների եռաշարք համակարգ, անցյալ կատարյալում Ե խոնարհման պարզ բայերի ներգործաձև և կրավորաձև վերջավորությունների տարբերակվածություն:

<sup>14</sup> Այդպիսիք են՝ միավանկ բառերի սկզբում *ն*-ից և *ե*-ից առաջ բաղաձայնական տարրի հավելում, փոխառյալ բառերում քմայնացած *ա*-ի դրսևորում այս կամ այն չափով, բառավերջում *ա>է* անցում՝ ավելացող մասնիկից առաջ, ոչ բառասկզբի ձայնեղների դիմաց շնչեղ խուլերի առկայություն, նույն այդ դիրքերում երբեմն խուլերի դիմաց ձայնեղների առկայություն, բառասկզբում ձայնավորից առաջ հազագի հավելում, բայական *չ* ածանցի դուրսմղում:

<sup>15</sup> Օրինակ, բոլոր խոսվածքները ըստ ձևաբանական դասակարգման ներկայացնում են Ում ճյուղը, ընդ որում՝ որոշ դեպքերում հանդիպում է ներկայի կազմություն՝ միայն *ոււմ/ըմ* մասնիկ ունեցող անկատար դերբայով (այդպիսիք են Արգելի, Գեղաշենի, Գետամեջի, Չառի, Էլարի, Կաթնաղբյուրի, Հացավանի, Ողջաբերդի, Սարլանջի, Բջնիի խոսվածքները), այլ դեպքերում՝ զուգահեռաբար

4. Հիմնականում արևմտյան բարբառներին վերաբերող հատկանիշների կենսունակ մի խումբ պահպանվել նոր միջավայրում<sup>16</sup>:

Խառը տիպի խոսվածքներին բնորոշ են նաև ընդհանուր տարածում չունեցող հատկանիշներ, որոնք թույլ են տալիս պատկերացում կազմել տվյալ բարբառային միավորի կազմում առկա ենթաշերտերի և դրանց փոխհարաբերությունների վերաբերյալ: Բացի այդ՝ հնարավոր է դառնում դիտարկել խառը տիպի խոսվածքներում բարբառային հատկանիշների կենսունակության խնդիրը:

Արարատյան և Մշո բարբառների հատկանիշները զուգորդող խոսվածքներում Մշո բարբառի՝ ընդհանուր տարածում չունեցող հատկանիշներ ավելի շատ արձանագրվել են Թեղենիքի, այնուհետև՝ Սևաբերդի, Մարալանջի և Արգելի խոսվածքներում: Մշո բարբառի հատկանիշները պակաս ցայտուն են Գետամեջի և Էլարի խոսվածքներում: Արարատյան, Մշո և այլ բարբառների հատկանիշներ զուգորդող խոսվածքների մեջ Մշո բարբառի հատկանիշներ ավելի շատ արձանագրվել են Քարաշամբի, Չովաշենի, ապա Կապուտանի և Գեղաշենի խոսվածքներում: Նման հատկանիշները ավելի քիչ են Բալահովիտի, Հացավանի, Չառի և Կաթնադբյուրի խոսվածքներում: Արարատյան և Վանի բարբառների հատկանիշները զուգորդող Գեղադիրի և Ողջաբերդի խոսվածքներում Վանի բարբառի՝ ընդհանուր տարածում չունեցող հատկանիշները

---

նաև Կը ճյուղին բնորոշ ձևով (այդպիսիք են Բալահովիտի, Գեղադիրի, Չովաշենի, Թեղենիքի, Կամարիսի, Կապուտանի, Սևաբերդի, Քարաշամբի խոսվածքները) կամ Լիս ճյուղին բնորոշ ձևով (Նոր Գյուղ). բոլոր խոսվածքներն ունեն *g*-ով բացառական, *h*-ի հետ նաև *p* որոշիչ հոդ, էական բայի եզակի երրորդ դեմքի *ա* ձև, պատճառական *ցըն* ածանց:

<sup>16</sup> Այդպիսի հատկանիշներից են՝ բազմավանկ բառերի միջնավանկի ձայնավորի սդումը, ներգոյականի իմաստի արտահայտությունը հայցականով կամ կապային կառույցով, անձնական դերանունների տրականում *h* հավելվածի առկայությունը, վաղակատարի կազմությունը *p*-ով վերջավորությամբ և այլն:

ավելի շատ են, քան Արարատյան, Վանի և այլ բարբառների հատկանիշներ զուգորդող Ջովաշենի, Կաթնաղբյուրի և Քարաշամբի խոսվածքներում: Արարատյան և Խոյ-Մարաղայի բարբառների հատկանիշները զուգորդող Նոր Գյուղի խոսվածքում Խոյ-Մարաղայի բարբառի՝ ընդհանուր տարածում չունեցող հատկանիշները ավելի շատ են, քան Արարատյան, Խոյ-Մարաղայի և այլ բարբառների հատկանիշներ զուգորդող խոսվածքներում, ընդ որում՝ վերջին խմբի Կամարիսի խոսվածքում էականորեն ավելի շատ են արձանագրվել Խոյ-Մարաղայի բարբառի հատկանիշներ, քան Բալահովիտի, Գեղաշենի և Կաթնաղբյուրի խոսվածքներում: Արարատյան, Բայազետի և Մշո բարբառների հատկանիշներ զուգորդող Կապուտանի խոսվածքում Բայազետի բարբառի՝ ընդհանուր տարածում չունեցող հատկանիշներ ավելի շատ են արձանագրվել, քան Արարատյան և Բայազետի բարբառների հատկանիշներ զուգորդող Բջնիի խոսվածքում: Արարատյան, Մշո բարբառների և Թավրիզի խոսվածքի հատկանիշներ ունեցող Ջառի և Հացավանի խոսվածքներում Թավրիզի խոսվածքի քիչ հատկանիշներ են արձանագրվել: Արարատյան, Խոյ-Մարաղայի և Դիաղիսի բարբառների հատկանիշներ ունեցող Կամարիսի խոսվածքում Դիաղիսի բարբառի հատկանիշները քիչ չեն: Ինչ վերաբերում է Արարատյան բարբառի՝ մասնակի դրսևորում ունեցող հատկանիշներին, ապա այդպիսիք դիտվել են քիչ թվով խոսվածքներում: Նման հատկանիշներ ավելի շատ ունեն Բալահովիտի և Էլարի խոսվածքները, մի քանի այլ խոսվածքներում (Կաթնաղբյուրի, Գեղաշենի, Ջառի, Նոր Գյուղի, Բջնիի, Հացավանի, Սարալանջի, Սևաբերդի, Կամարիսի, Գետամեջի) դիտվել են այդ կարգի մեկ-երկու հատկանիշներ:

Դիտարկվող խոսվածքներում ընդհանուր տարածում չունեցող մի շարք հատկանիշներ հատուկ են տարբեր բարբառների, հետևաբար այդ բարբառների խաչաձևման դեպքերում չեն կարող

վերագրվել մեկին կամ մյուսին: Այսպես, հարակատարի *աժ*-ով ձևերը Արարատյան և Վանի կամ Խոյ-Մարաղայի բարբառների հատկանիշներով խոսվածքներում անվերապահորեն չեն կարող վերագրվել բարբառներից մեկին, որովհետև երեքին էլ այդ հատկանիշը բնորոշ է, չնայած չի կարելի անտեսել, որ *աժ*-ով հարակատարը Արարատյան բարբառի միակ ձևն է, իսկ մյուս բարբառներում զուգահեռաբար գործածվում է նաև *ուկ*-ով ձևը: Տարբեր բարբառների՝ դիտարկվող խոսվածքներում ընդհանուր տարածում չունեցող հատկանիշների համամասնությունների հաշվառումով այդ խոսվածքները կարելի է բաժանել երկու խմբի.

1. խոսվածքներ, որոնցում ակնհայտ է բարբառային որևէ միավորի հատկանիշների գերակայությունը,

2. խոսվածքներ, որոնցում բարբառային որևէ միավորի հատկանիշներ զգալի գերակշռություն չունեն:

Առաջին խմբի մեջ են Մշո բարբառի հատկանիշների գերակայություն ունեցող Թեղենիքի, Սևաբերդի, Սարալանջի, Արգելի, Գետամեջի, Քարաշամբի, Ջովաշենի, Կապուտանի խոսվածքները, Վանի բարբառի հատկանիշների գերակշռություն ունեցող Գեղաղիրի և Ողջաբերդի խոսվածքները, Խոյ-Մարաղայի բարբառի հատկանիշների գերակշռություն ունեցող Նոր Գյուղի խոսվածքը, Արարատյան բարբառի հատկանիշների գերակշռություն ունեցող Բալահովիտի, Էլարի և Բջնիի խոսվածքները:

Երկրորդ խմբում են Խոյ-Մարաղայի և Դիաղինի բարբառների շերտեր զուգորդող Կամարիսի խոսվածքը, Վանի, Խոյ-Մարաղայի և Արարատյան բարբառների հատկանիշներ ներկայացնող Կաթնաղբյուրի խոսվածքը, Մշո և Խոյ-Մարաղայի բարբառների շերտեր ունեցող Գեղաշենի խոսվածքը, Արարատյան, Մշո բարբառների և Թավրիզի խոսվածքի հատկանիշներով բնութագրվող Հացավանի և Զառի խոսվածքները:

Խառը տիպի խոսվածքների՝ ընդհանուր ընդգրկում չունեցող հատկանիշները տարբեր են իրենց տարածվածությամբ: Ավելի մեծ տարածում ունեցող հատկանիշներից են՝ *ած*-ով հարակատար, բառասկզբի *դ*-ի դիմաց՝ *կ*, Ա վերջադրական հոլովման առկայություն, *ուկ*-ով հարակատար, բառասկզբի ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց՝ խուլեր, քմայնացած հետնալեզվային հպականների առկայություն, եզակի առաջին դեմքի *ւ* հավելված անցյալ ժամանակաձևերում, հինհայերենյան *հ*-ի դիմաց՝ *խ* բառի բոլոր դիրքերում և այլն: Ավելի քիչ դրսևորումներ ունեն այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են՝ Ա,Ե խոնարհումների հետ նաև Ի խոնարհման առկայություն, տրամաբանական շեշտի արտահայտման համար օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի լրացուցիչ կիրառություն, հոգնակի թվում Ու հոլովման առկայություն, *ղու* անձնական դերանվան տրականի կրճատ *քե* ձևի գործածություն, բառասկզբի *հ*-ի դիմաց՝ *ջ* և այլն:

Մասնակի դրսևորում ունեցող մի շարք հատկանիշների լայն ընդգրկումը կարելի է պայմանավորել նրանով, որ դրանք բնորոշ են խառը խոսվածքներ ձևավորած մեկից ավելի բարբառների: Այսպես, *ած*-ով հարակատարը բնորոշ է Արարատյան, Վանի, Խոյ-Մարաղայի բարբառներին, Թավրիզի խոսվածքին. բառասկզբի *դ*-ի դիմաց *կ* հանդիպում է Վանի, Մշո, Բայազետի բարբառներում. Ա վերջադրական հոլովման դրսևորումներ ունեն Մշո, Վանի, Խոյ-Մարաղայի, Դիադինի, Բայազետի բարբառները. *ուկ*-ով հարակատար ունեն Մշո, Բայազետի, Վանի, Խոյ-Մարաղայի բարբառները. քմայնացած հետնալեզվային հպականներ, բառասկզբի ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց խուլեր, անցյալ ժամանակաձևերում եզակի առաջին դեմքում հավելական *ւ* հնչյուն ունեն Վանի, Խոյ-Մարաղայի բարբառները: Այլ դեպքերում հատկանիշի տարածվածությունը կարող է պայմանավորված լինել



այն կրող բարբառային միավորի տարածվածությամբ: Օրինակ, խառը տիպի խոսվածքներում ամենաշատը առկա է Մշո բարբառի շերտը, հետևաբար տարածում ունեն հիմնականում այդ բարբառին բնորոշ հատկանիշները: Որոշ հատկանիշների տարածմանը անշուշտ նպաստել է նաև արևելահայ լեզվական միջավայրը:

Խառը տիպի խոսվածքներում բարբառային բազմաթիվ այլ հատկանիշներ պակաս կենսունակ են: Դեպքերի մեծ մասում գործ ունենք նոր միջավայրում մարող հատկանիշների հետ<sup>17</sup>: Այլ դեպքերում որևէ հատկանիշի սակավ դրսևորումը կարող է պայմանավորված լինել՝ ա) այն կրող բարբառային միավորի՝ տարածաշրջանում թույլ ներկայությամբ<sup>18</sup>, բ) հատկանիշի՝ լեզվական քիչ միավորներ ընդգրկմամբ<sup>19</sup> և այլն:

Ընդհանրապես նկատելի է, որ հատկանիշների պահպանման կամ մարման հարցում կարևոր դեր ունեն նաև լեզվական և հոգեբանական գործոնները: Օրինակ, արևելահայ միջավայրում արևմտյան բարբառների *կը* մասնիկով ներկան հեշտությամբ զիջում է դիրքերը *ոււ*-ով ներկային, որովհետև բազմագործառույթ ձև է. *ոււ*-ով ներկայի գործածությունը թեթևացնում է *կը*-ով ձևի գործառական ծանրաբեռնվածությունը: Կարծում ենք՝ դիտարկվող

---

<sup>17</sup> Նման հատկանիշներից են Բ խոնարհման առկայություն, տրամաբանական շեշտի արտահայտման նպատակով օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի լրացուցիչ կիրառություն, հոգնակի թվում Ու հոլովման առկայություն, *դու* անձնական դերանվան տրականի կրճատ *քե* ձևի գործածություն, հարցահարաբերական դերանվան *վոյ*, *վոն* և *վոր* ձևեր, *է*-ով բացառական, որոշիչ հոդի գործածություն նաև բացառական և գործիական հոլովներում, հետնալեզվային հպականների դիմաց՝ *ի* կամ *յ*, *էլ* շաղկապի դիմաց՝ *լէ*, և այլն:

<sup>18</sup> Օրինակ, Թավրիզի խոսվածքին հատուկ է խոնարհման պարզ բայերի՝ անցյալ կատարյալի *ա*-ով վերջավորություններ ունենալը, Մշո բարբառի առանձին խոսվածքներում ոչ բառասկզբի շնչեղ խուլերի դիմաց պարզ խուլերի առկայությունը և բառասկզբի *դ*-ի դիմաց *խ*-ի դրսևորումը:

<sup>19</sup> Օրինակ, բառասկզբում *հ*-ի դիմաց *ֆ*-ի և *խ*-ի դիմաց *հ*-ի առկայությունը, միջձայնավորական դիրքում *ս*-ի դիմաց *հ*-ի դրսևորումը:

խոսվածքներում բառակազմում *h>Ֆ*, *խ>h* հատկանիշների (թեկուզ և սակավաթիվ բառերում) տարածմանը խոչընդոտող հանգամանք է տարածաշրջանում գործածվող Վանի, Խոյ-Մարաղայի, Բայազետի բարբառների՝ *h*-ի դիմաց *խ*-ի գործածության հատկանիշը: Մյուս կողմից՝ խառը տիպի խոսվածքներում նահանջում են այն հատկանիշները, որոնք խոսողների և լսողների կողմից հստակ գիտակցվում են, հաճախ առաջ են բերում հասկանալիության խնդիրներ, և որոնցից խոսողները սովորաբար ձգտում են խուսափել՝ հաղորդակցման ընթացքում անհարմարությունները շրջանցելու մղումով: Այդպիսի հատկանիշներ են, օրինակ, հետնալեզվային հպականների դիմաց հպաշփականների, նույն կարգի հնչյունների դիմաց *յ*<sup>h</sup> կամ *յ* հնչյունների դրսևորումները, *ոյ* հարցահարաբերական դերանվան դիմաց *վոյ* ձևի, *էլ* շաղկապի դիմաց *լէ*-ի կիրառությունները և այլն:

Այսպիսով, խառը տիպի խոսվածքների ձևավորման պատճառ կարող են դառնալ արտալեզվական ու լեզվական զանազան գործոններ, ինչպիսիք են բարբառախոս հանրույթի ծագումնաբանական անհամասեռությունը, բարբառային տարբեր միավորների տարատեսակ խաչաձևումները, լեզվական հատկանիշների, տարբերակային ձևերի տարատեսակ փոխհարաբերություններն ու գոյատևման հանգամանքները, լեզվի զարգացման պայմաններն ու միտումները և այլն: Կոտայքի մարզի խառը տիպի խոսվածքների ձևավորման գործում անհրաժեշտ է ընդգծել արևելյան լեզվական միջավայրի էական դերը, որ հատկապես դրսևորվում է ներկայի և անցյալ անկատարի ձևավորման միօրինականացմամբ, տարբեր բարբառների էական մի շարք հատկանիշների աստիճանական դուրսմղմամբ:

Катвалян Виктор - Смешанные говоры в Котайкской области.-  
Различные экстралингвистические и лингвистические факторы могут приводить к образованию смешанных типов говоров. Роль восточноармянской языковой среды в формировании смешанных говоров Котайкского региона была существенной.

Katvalyan Viktor - Mixed speeches in Kotayk region. - Various extralinguistic and linguistic factors can lead to the formation of mixed types of speeches. The role of the Eastern Armenian linguistic environment in the formation of mixed speeches in the Kotayk region was significant.

ՂԱՐԱԲԱՂԻ (ԱՐՑԱԽԻ) ԲԱՐԲԱՌԻ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ  
ՀՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բարբառի բառակազմական հնաբանությունների բացահայտումը, բնականաբար, պահանջում է գրաբար-բարբառ համապատասխան իրողությունների գուգադրական քննություն: Նպատակահարմար չհամարելով անդրադառնալ գրաբար-բարբառ բոլոր գուգադիպումներին, որը կարող է ամբողջ մենագրության նյութ լինել, կնշենք, մեր կարծիքով, էական մի քանի գուգահեռներ.

ա) *նախդրավոր կազմություններ*

1. *Ջ նախդրով՝*

գրաբար՝ *զարդարել- բարբառ՝ զըրթարել*, *զարկանել-զարկել*, *զինքն-զինքը* (բարբառում կան տասնյակ բայական հարադրություններ՝ *զինքը պահել*, *զինքը կորցնել*, *զինքը հրվաքել*, *զինքը ուրսն պահել...*<sup>1</sup>), *զարթուն-զերթուն*, *զաթնուլ-զուրթնանսլ...*

2. *Ընդ նախդրով* բարբառային բառերում նկատելի են հետևյալ առանձնահատկությունները՝ *դ>տ*, *դ>թ* հնչյունափոխություն, *ընդ*-ով կազմության երկրորդ բաղադրիչի հնչյունափոխու-

---

<sup>1</sup> Այս շարքը և բացատրությունները տե՛ս **Ա.Սարգսյան, Ղարաբաղի բարբառի բառարան**, Ե., 2013 թ. (այսուհետև՝ ՂԲԲ):

Հետագա շարադրանքում *գրաբար*, *բարբառ* բառերը կհամառոտագրվեն՝ *գրբ.*, *բրբռ.*:

թյուն. գրբ. *ընդ իրեար*, բրբռ. տո՛րո՛ւր (գործածվում է կապակցության մեջ)՝ տո՛րո՛ւր կնլ «շարժվել», տո՛րո՛ւր տնլ «շարժել»:

Բրբռ. *թօրը, թօռնը* «ուր, որտեղ, դեպի ուր»: Հ. Աճառյանը ենթադրում է *ընդ+որ* ձևը<sup>2</sup>, Ալ. Մարգարյանը՝ *ընդ+ուր* կապակցությունը<sup>3</sup>:

Բրբռ. *ընդէտանս* «այսուհետև, հետո» թերևս գրաբարի *ընդ էտս-ն* է:

3. Ի նախդրով կազմություններում օրինաչափ է ի>ը հնչյունափոխությունը. կան գրաբարում վկայված, այնպես էլ բարբառակերտ բառեր:

Գրբ. *գլխիվայր* - բրբռ.՝ կըլխըվեր, գլխիվեր-կըլխըլեր, գլխիբաց-կըլխըպեց:

Գրբ. *մօտ ի մօտ* – բրբ. մըտըմօտ (ժամանակի իմաստով):

Գրբ. *պորտ ի վեր* - բրբ. պըրտիյեր «պորտը դեպի վեր»:

Բրբռ. *պըրտըտուս*-ի բառարանային բացատրությունն է

1. հակառակ կողմը շրջված: 2. դեմ, հակառակ: Կա և բայական ձևը. *պըրտըտուսիլ* «հակառակ կողմը շրջել (գուլպան, շորը, պարկը)»<sup>4</sup>:  
Հ. Աճառյանը համարում է *բուրդ ի դուրս*-ը «այն է շրջված ձևով»:

---

<sup>2</sup> Հ.Աճառյան, *Լիակատար քերականություն հայոց լեզվի*, V, էջ 107 (այսուհետև՝ ԼՔՀԼ):

<sup>3</sup> Ալ. Մարգարյան, *Ստուգաբանություններ*, Ե., 2015 թ., էջ 95:

<sup>4</sup> Ինչպես նկատելի է *պըրտըտուս* (պորտ ի դուրս կամ բուրդ ի դուրս) կապակցություններում թեկուզ ոչ հստակ առկայանում է *պորտ* «կողմ» իմաստը: Գրաբարի բառարանում՝ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» (ՆՀԲ), *պորտ*-ի հիմնական իմաստից գատ նշվում է նաև «լայնաբար և իբրև որովայն, փոր, լանջք» (ՆՀԲ, II, 660): Բառարանի *փոր* բառահոդվածում նշվում է նաև «կող, կողմ» իմաստը՝ բերելով Փավստոս Բուզանդից հետևյալ նախադասությունը. «Ե գայլ գերութիւնս կողմանց կողմանց, փոր փորի, գաշխարի աշխարի ածին ժողովեցին» (ՆՀԲ, II, 954):

Բարբառային հին գրավոր աղբյուրների չգոյությունը հնարավորություն չի տալիս պարզելու նախդրով կազմության անջատ գրության հարցը: Բարբառի նախդրավոր կազմությունները մեզ են հասել մի վիճակով, որ նախդրի գոյությունը երբեմն պարզվում է ստուգաբանորեն:

բ) **Կալ արմատով կազմություններ**

Հնդեվրոպական ծագումով այս արմատով գրաբարում կա *կալուլ* կամ *կալնուլ* բայը, որի հիմնական իմաստն է «բռնել»:

**Կալ** արմատով գրաբարում վկայված մի շարք բառեր կան և բարբառում.

գրբ. *խաչկալ* - բրբ. խաչկալ, մաճակալ-մաճկալ:

**Երախասկալ** բառը ՆՀԲ մեկնում է «ըմբռնելի բերանն սուսերի, ըմբռնեալ որոյ, կոթ, բռնաստեղ: (ՆՀԲ, I, 666): Բրբռ. *ըռխըկալի/ռըռըկալի* «ամանի՝ անոթի բերանը փակելու կափարիչ՝ խցան» (ՂԲԲ, 169): Բարբառում կա և *ըռխըկալի* «անոթի, ամանի բերանը կափարիչով, խցանով փակել»:

Բարբառային մի շարք բառեր գրաբարում վկայված չեն. *ընջուկալի* «ժանգոտվել», *թըրքակալ* «կամին լծած եզների թրիքը վերցնելու աման», *թըփըկալի* «թեփոտ դառնալ, թեփով կեղտոտվել», կեփկալ «թոկի այն ծայրը, որ անց է կացված գաբի միջոցով», *յըղըկալի* «ճարպակալել», *յըտնակալ* «վերջինը», *շըքըրկալի*, *պոնակալ/պինսկալ* «հավի բնի մեջ թողած մի հատիկ ձուն, որի վրա հավը նստում և ձու է ածում», *քէթկալ* «շորի կտոր, որով կանայք ծածկում են իրենց քիթն ու բերանը»:

**Կալ**-ը նաև գրաբարում *ունիմ* բայի անցյալ կատարյալի հիմքն է: Գրաբարում *կալ աչաց* դարձվածը նշանակում է «կուրանալ, չտեսնել»: «Եւ նոցա աչք կալեալ էին առ ի չճանաչելոյ զնա»

(Ղուկ., ԻԴ, 16): Բարբառում՝ *աշկերը կալվիլ* «կուրանալ» նաև՝ *աշկերը օնել* (անեծք է) (ՂԲԲ, 59):

զ) **Հար** արմատով կազմություններ

*Հար*-ը նույնպես հ.-ե. ծագում ունի: Ստուգաբանական բառարանները նշում են «խփում, զարկում» իմաստները: Այդ և, հատկապես, *հարկ* տարբերակով գրաբարում կազմված են բազմաթիվ բառեր:

ՆՀԲ *հարել* բառահոդվածում նշում է «իմա կամ ընթերցիր հարկանել»:

Բարբառում *հարել*-ը բազմիմաստ է. 1. հնձել, 2. խնոցին ետ ու առաջ շարժել, 3. գդալով խփելով միապաղաղ զանգված դարձնել, 4. եղջյուրներով խփել, 5. խփել, հարվածել, 6. շատ քսվելով սրորել, մաշկը քերել (ՂԲԲ, էջ 415):

*Հար*-ը նաև գոյական է. 1. խոտհունձ, հմմտ. հարեն *վախտը*, 2. խնոցի հարելը. «խնոցուն հարը ըտրա տանջից» (ՂԲԲ, 414):

*Հար*-ով կազմված մի շարք բառեր գրաբարում վկայված չեն. *պիցրհիւր* «բացված վիճակում գտնվող», *քամհար* «քամոտ տեղ», *ծիրքըհարել* «ձեռքով սրորել»: Գրաբարում վկայված չեն նաև հիվանդություն նշող *մարմնի մաս+հար* կազմությամբ հետևյալ բառերը *պիրինհարենք* «բերանի խոռոչի հիվանդություն», *փուրը-հարենք* «փորլուծություն»:

ՆՀԲ *հարել* բառով մեկ վկայություն ունի, այն էլ որպես հոմանիշ *հարկանել*-ի «Ոչ հարել ուսաք ի տեառնէ, այլ հարկանելեաց մատուցանել զճնօտս» (II, 60):

\*  
\* \* \*

Մի խոսքով՝ հիշյալ արմատներով կազմությունները բնորոշ են եղել և են հայերենին: Գրաբարյան գուգահեռի առկայությունը բնավ չի ենթադրում, որ բարբառային համապատասխանակը գրաբարի միջոցով է տարածվել. նման կարգի բառերը բարբառում գործածվել են նախագրային շրջանից, բարբառում ստեղծվել են նոր բառեր, որոնց համապատասխանակները գրաբարում չկան կամ վկայված չեն:

գ) *Հնաբանության այլ դրսևորումներ*

Դիտարկումները ցույց են տալիս, որ բարբառում մի քանի բառեր (արմատներ) գրաբարի համեմատությամբ դրսևորում են որոշակի իմաստային, բառակազմական առանձնահատկություններ, որ դարձյալ հիմք է տալիս դրանք հնաբանություն համարելուն:

*Թէր* բառը բարբառում ունի հետևյալ իմաստները 1. ծաղկի թերթ: 2. Կանաչեղենի կանաչ մասը՝ ցողունը: 3. Ընդհանրապես տերև: «Արաշտ ըրավ, ծրեղեն թերերը չուրըցրավ», նաև բայական հարադրության բաղադրիչ է *թէր տալ* «շերամորդին թթենու տերևներով կերակրել», *թէր քըցիլ* «թթենու հասուն տերևները իրարից հեռու շարել, որպեսզի շերամորդը սնվի» (ՂԲԲ, էջ 195):

Գրաբարում ծաղկի, բույսի մաս իմաստը արտահայտվում է *թերթ* բառով. հմմտ. «Որ ի ներքոյ թերթից տերևոյն» (ՆՀԲ, I, 807), «Մի թերթ խաւարտ» (ն.տ.): *Թերթ*-ը բնիկ հ.-ե. ծագում ունի \*pter-ից: Ուրեմն՝ բարբառային *թէր*-ը ավելի հարազատ է հ.-ե. նախաձևին: Այդ բառով բարբառում կան մի շարք կազմություններ՝ *յրտ-*



*վաթեք* «կանաչեղենի արմատից վերն գտնվող կոշտ տերևները», *պուխկաթեք* «բողկի տերևը», *տկաթեք* «ճակնդեղի տերևը»<sup>5</sup>:

*Արար* հիմքով գրաբարում կան բազմաթիվ բառեր: Գրբ. արարումն > բրբո. *ըրարմունք* «արարք, գործ, վարմունք»: Բարբառում կա և *ըրարի* «մեկի արած՝ ստեղծած»: «Ա մարթ, լօխ քու ըրարի ա» (ՂԲԲ, 177):

Գրբ. *այգ* «առավոտ» բառը բարբառում պահպանվել է *ինքնավրէղ* // *ինքնահօղ* «թաղման հաջորդ օրը ննջեցյալի գերեզմանին այցի գնալը», *ինքնարօտ* «վաղ առավոտյան անասուններին արոտավայր տանել-բերելը» բառերում (ՂԲԲ, 227). *էքուց*, *էքսվա*-ում նույնպես *այգ* բառն է:

**Ամփոփենք:** Մանրագնին քննության դեպքում հնարավոր է բացահայտել բառակազմական այլ հնաբանություններ:

Հայերենի բոլոր բարբառների կամ գոնե բարբառախմբերի բառակազմական հնաբանությունների բացահայտումը կարևոր ներդրում կլինի հայոց լեզվի պատմության, պատմական բարբառագիտության, հին հայերենի և բարբառների աղերսների լուսաբանման գործում:

---

<sup>5</sup> Գրաբարում *թեր*-ը ունի նաև «պակաս, քիչ» իմաստը: Նույնը նաև ՂԲԲ-ում. հմմտ. *թերխաշ*, *թընըխարավ* «թերախորով»: Այդ արմատն է թերևս *թըրըթեր* «մի կերպ ծայրը ծայրին հասցնելով»:

Hovhannisyán Lavrenti - Lexicological Archaisms in Artsakh (Karabagh) Dialect. - The old Armenian word constructions composed of prepositions q [z], ընդ [ənd], ի [i] are considered to be dialectal archaisms. There are some words that are not attested in classical Armenian. Sometimes the presence of prepositions is seen only through the etymology: for example, in classical Armenian ընդ ուր [ənd our] «towards where», in dialect թօռը / թօրը [t'ōřə / t'ōrə]:

Words with the roots կալ- [kal] «to hold, to catch», հար- [har] «to strike» exist also in dialect, even some dialectal words were not attested in classical Armenian, such as քերկալ [k'ēt'kal] «mask», քամհար [k'amhar] «windy place». The equivalent of classical Armenian թերթ [t'ert'] «leaf» in dialect is թէր [t'ēr]: this variant is older and comes from PIE \*pter-.

Оганесян Лаврентий - Словообразовательные архаизмы карабахского (арцахского) диалекта. – Слова с древнеармянскими предлогами q(з) ի (и) ընդ (ынд): В некоторых словах предлоги выявляются этимологически ընդ ուր (ынд ур) «куда» - թօռը «торны». Слова с древнеармянскими корнями կալ (кал) «взять», հար «ударить» существуют и в диалекте. Некоторые словообразования не засвидетельствованы в древнеармянском языке. Քերկալ (кеткал) «маска», քամհար (kamhar) «ветреное место». Др. арм. թերթ «лист дерева, часть растения» диал. թէր (t'er) из и.е. \*pter.

**ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ՆՈՒՑՆԱՆԻՇՆԵՐԻ ՁԵՌԱԳԻՐ ԲԱՌԱՐԱՆՆԵՐՈՒՄ**

Հ. Ամալյանի հավաստմամբ՝ միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձաններից «Հանդես բանաստեղծաց փաղանունաբար ստորոզիլ նորավարժիցն սակս» խորագրով ձեռագիր բառարանը (այսուհետև՝ ՁԲ) «... նորավարժների, երիտասարդ բանաստեղծների, հավանաբար և ճարտասանների, գեղարվեստական խոսքի կատարելագործման ու բառապաշարի հարստացմանը նպաստող... մի հետաքրքիր ուսումնական ձեռնարկ» է<sup>1</sup>, «հայ մատենագրության մեջ» «նոր տիպի» բառարան<sup>2</sup>: Գ. Գասպարյանի կարծիքով էլ այն «...հումանիշների հարուստ աղբյուր է ծառայել միջնադարի հայ դպրոցների ... համար»<sup>3</sup>: Ըստ հետազոտողների՝ այս ՁԲ-ի «...հնությունը... հասնում է XII դարը, բայց վերաբերում է ավելի վաղ շրջանի»<sup>4</sup>՝ հավանաբար նաև նկատի ունենալով IX-XI դդ. հիմնված ուսումնագիտական կենտրոնների գործունեությունը: Հետևաբար ենթադրելի է, որ XVIII դ. ավանդված՝ նույնանիշների ՁԲ-ները նույնպես կարող են վերաբերել «ավելի վաղ շրջանի», ա-

---

<sup>1</sup> **Հ. Ամալյան**, *Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները (V-XV դդ.)*, Ե., 1966, էջ 123:

<sup>2</sup> **Հ. Ամալյան**, նշվ. աշխ., էջ 132:

<sup>3</sup> **Գ. Գասպարյան**, *Հայ բառարանագրության պատմություն*, Ե., 1968, էջ 36:

<sup>4</sup> **Գ. Գասպարյան**, նշվ. աշխ., էջ 34: Ըստ Հ. Ամալյանի՝ այն հնագույն բառարաններից է՝ «... վկայվում է XII դարից: Բառարանի նախագաղափար օրինակը չի պահպանվել, գրության ստույգ ժամանակը, տեղը և հեղինակը անհայտ են» (տե՛ս **Հ. Ամալյան**, նշվ. աշխ., էջ 124): Նույնն է հաստատում նաև Հ. Անասյանը՝ «... ձեռագիր հնագույն օրինակները ԺԲ դարից են» (**Հ. Անասյան**, *Հայկական մատենագիտություն Ե-ԺԸ դդ.*, հ. Բ, Ե., 1976, էջ 1186):

սել է՝ մինչ բնագրային օրինակներով համալրված՝ գրաբարի բառարանները կազմելը և հրատարակելը<sup>5</sup> կամ, թերևս, դրանց գուգահեռ<sup>6</sup>:

ԶԲ-ի բառաշարքը քննելիս Հ. Ամալյանը նշում է՝ «...երբեմն հոմանիշությունը արտահայտվում է ոչ թե մի առանձին բառով (հոմանիշով), այլ ամբողջական բառակապակցության միջոցով, նկարագրական եղանակով...»՝ դա պայմանավորելով «բառարանի իսկական գործնական բնույթով»<sup>7</sup>: Արձանագրված երևույթը նկատելի է նաև XVIII դ. ավանդված ՁԲ-ների<sup>8</sup> նույնանիշային շարքերում (այսուհետև՝ ՆՇ), որոնցում որոշակիորեն առանձնացող բացատրական երանգով բառակապակցություններն ու արտահայտությունները<sup>9</sup>, հիմնականում դրվելով ՆՇ-ի վերջում, ասես եզրափակում և ամփոփում են դրանք, ինչպես ՄՄՁ 6762-ից քաղված հետևյալ շարքերում՝ *Ալեկոճել... խառվիլն ծովուն. նաւին ծածկիլ յալեաց. կուտակք ալեաց լինիլ և այլք այնպիսիք* (101ա), *Աղբատ... մերկ յամենէ կամ թափուր յամենէ* (101բ), *Առաւօտ... ի ծագիլ արե-*

---

<sup>5</sup> Նոր հայկազյան բառգրքում բառահողվածին երբեմն հավելվում է «... ի Հին բռ. ի կարգի փաղանուանց դին...» նշումը (տե՛ս, օրինակ, *Դալապր, Ձեռնածու, Մաւառնաձայն, Սօսին, Վառնիկ, Փեշառոր* բառահողվածները. համապատասխանաբար՝ *Նոր բառգիրք հայկազեան լեզուի* (այսուհետև՝ ՆՀԲ), հ. 1, Վենետիկ, 1836, էջ 591, հ. 2, 1837, էջք 152, 702, 769, 785, 939), որն էլ վկայում է՝ Մխիթարյան միաբանները ծանոթ են եղել ՁԲ-ներին:

<sup>6</sup> Թեև ՄՄՁ 3110-ում առկա բառարանի խորագրում նշվում է՝ «...Մատթեոսի վ. Բառգիրք հոմանիշ բառից», իսկ ՄՄՁ 873-ի և 775-ի խորագրերում՝ հիշատակվում՝ «...ի մխիթարեան Մատթեոսի գերերջանիկ վարդապետէ», սակայն ՄՄՁ 6762-ում և ՄՄՁ 566(1)-ում առկա առավել ծավալուն և ընդգրկուն բառարանների խորագրերում անուն չի հիշատակվում:

<sup>7</sup> Հ. Ամալյան, նշվ. աշխ., էջ 129 - 130:

<sup>8</sup> Այսուհետև ձեռագրահամարը և էջերը տրվում են շարադրանքում՝ փակագծերի մեջ: Պահպանված է ձեռագիր բառարանների ուղղագրությունը:

<sup>9</sup> «Հանդէս բանաստեղծաց»-ում առկա մի քանի արտահայտություն է ներկայացնում Հ. Ամալյանը՝ նշելով՝ «Նման նշումներ և բացատրություններ կան նաև մյուս բառախմբերում» (Հ. Ամալյան, նշվ. աշխ., էջ 129-130) :

ւոյն. ընդ լուսանալ առաւօտուն (102ա), Ծերունի .... լցեալ հասակաւ. մերձեցեալ ի գերեզմանն (111ա), Հարուստ...առատացեալ ընչիւք (117ա), Մայել... ձայն կատուոյ (117ա), Յամքիլ ....(երէ գրուսոյ կամ մասանց մարմնոյ դնի) կորուսանել գղալարութիւն (128ա), Քաղել...ժողովել ի շտեմարան կամ լնուլ ի հնձան և կամ ի գոգ իւր (129ա) և այլն: Երբեմն դրանք անմիջապէս հաջորդում են հենարանին կամ էլ պարզապէս առադրվում են, ինչպէս՝ Երկնչիլ. սոսկալ յայէ...խռովիլ երկիւղէն (106ա), Փարիլ. անկանիլ զպարանոցաւ (128բ), Բորբոքիլ...բոցոյն բարձրանալն. բոցոյն ծառանալն (104ա), Ծամել... մանրել ստամամբ. ճմլել լեզուաւ (111ա), Փափուկ... գգուանօք սնեալ կամ գրգեալ (128բ) և այլն:

Քննվող ՁԲ-ներում առկա բառակապակցություններն ու արտահայտությունները, ինչպէս պարզորոշ է դառնում ստորև, բառարանագիրները քաղել են հայ թարգմանական և ինքնուրույն մատենագրությունից. դրանք ՁԲ-ներ են ներառվել ամենայն հավանականությամբ նաև ուսուցողական նպատակով:

Նշվածը փաստարկելու համար բառակապակցություններն ու արտահայտությունները ստորև ներկայացվում են՝ ըստ ամենավաղ վկայության, հետևյալ դասակարգումներով՝ Աստվածաշնչում, միայն բնագրային օրինակներում, XVIII դ. և հետագայում հրատարակված տարբեր բառարաններում վկայվածներ<sup>10</sup>:

Աստվածաշնչում վկայված բառակապակցություններ և արտահայտություններ<sup>11</sup>:

---

<sup>10</sup> Հոդվածին ներկայացվող պահանջները պահպանելու համար առանձնացվել են մի քանի բառակապակցություն ու արտահայտություն:

<sup>11</sup> Ներկայացվող բառակապակցություններն ու արտահայտությունները քաղվել են գրաբար Աստվածաշնչի համաբարբառից. «Գրահավաք» կայքի որոնումների արդյունքներով ամենավաղ վկայություններն Աստվածաշնչից են: Սկզբում տրվում են Աստվածաշնչում վկայված, այնուհետև՝ հայ մատենագրության մեջ հան-

*Տաճար* հենաբառով<sup>12</sup> ՆՇ-ում (ՄՄՁ 6762, 126բ. 566(I), 273ա) առկա *սեղան աստուծոյ* բառակապակցությունը բազմիցս հիշատակվում է Ծննդոց գրքում՝ «Եւ շինեաց Նոյ սեղան Աստուծոյ» (Ծն. 8:20)<sup>13</sup>: Այն հանդիպում է նաև Հ. Օձնեցու մատենագրության մեջ («... և ի ցամաքել մեղացն ի մէնջ՝ լինիմք սեղան Աստուծոյ»)<sup>14</sup>:

*Տեսիլ երեսաց* բառակապակցությունը (*Տեսակ.* ՄՄՁ 6762, 127 ա. 566(I), 274ա) վկայվում է Աստվածաշնչում («եղև տեսիլ երեսաց նորա այլակերպ». Ղկ 9:29)<sup>15</sup>: Մ. Ջախջախյանը *Կերպարան* բառահոդվածում *տեսիլ երեսաց*-ը հիշատակում է որպէս «դէմք»<sup>16</sup>:

*Ստորև թվարկվողները քաղվել են ՆՀԲ-ից, որում նույնպէս առաջին վկայությունները Աստվածաշնչից են*<sup>17</sup>:

*Հուր անշէջ* (*Դժոխք.* ՄՄՁ 6762, 105բ. 566(I), 241բ) բառակապակցությունը հիշատակվում է *Անշէջ* և *Հուր* բառահոդվածներում (ՆՀԲ, հ. 1, էջք 214, 616).

---

դիպող կամ XVIII դ. և հետագայում հրատարակված բառարաններում առկա բառակապակցություններն ու արտահայտությունները:

<sup>12</sup> Ընդունված եզրերից կիրառվում է *հենաբառ*-ը (դրանով է սկսվում շարքը), որքանով գրչագրերում այն փոփոխվում է մի ՋԲ-ում առկա հենաբառը կարող է մեկ այլ գրչագրում հենաբառ չլինել: Շարադրանքում այն նշվում է նաև փակագծերի մեջ:

<sup>13</sup> *Համաբարբառ գրաբար Աստվածաշնչի*, Էջմիածին, 2012, էջ 1572-1573:

<sup>14</sup> *Յովհաննու Բմաստասիրի Աւձնեցոյ Մատենագրութիւնք*, Վենետիկ, 1833, էջ 136:

<sup>15</sup> *Համաբարբառ գրաբար Աստվածաշնչի*, էջ 1716: Նույնը և՛ «Եւ ի կալ նմա յաղօթս՝ եղև տեսիլ երեսաց նորա այլակերպ». տե՛ս *Ժամանակագրութիւն եկեղեցոյ Հայաստանեայց ըստ կարգաորութեան սրբոց թարգմանչաց եւ այլոց սրբոց հարց մերոց*, Վիեննա, 1839, էջ 289:

<sup>16</sup> **Մ. Ջախջախեան**, *Բարգիքի բարբառ հայ եւ իտալական* (այսուհետև՝ ՋԲ), Վենետիկ, 1837, էջ 777:

<sup>17</sup> Սույն հատվածում նաև տրվում են հայ մատենագրության մեջ հանդիպող կամ XVIII դ. և հետագայում հրատարակված բառարաններում առկա, նաև որպէս բացատրություն բերվող օրինակները:

առտնին արկանելի-ն (Զգեստք. ՄՄՁ 6762, 107ա. 566(I), 243բ) «Որ ինչ է ի տան .... տնական» նշանակությամբ վկայվում է *Առտը-նին* բառահոդվածում (ՆՀԲ, հ. 1, էջ 312),

որդիք *խառնակութեան* (Խաժամուժ. ՄՄՁ 6762, 110ա. 566(I), 248բ) բառակապակցությունն արձանագրվում է *Խառնակութիւն* բառահոդվածում (ՆՀԲ, հ. 1, էջ 926).

միայն ՄՄՁ 6762-ում (111ա)՝ *Խղճել* հենաբառով ՆՇ-ում են հանդիպում *ստգտանելն արտի* և *խայթելն խղճի մտաց* բառակապակցությունները. առաջինն առկա է աստվածաշնչյան «Եթէ ըստգտանիցեն զմեզ սիրտք մեր» և «Եթէ սիրտք մեր զմեզ ոչ ստգտանիցեն» նախադասություններում (ՆՀԲ, հ. 2, էջ 787): Երկրորդի համար համեմատելի է Հ. Վիլլոտի՝ լատիներեն տարբեր կազմությունների (*Confcientix ftumulus, Confcientix ftumulus urgeri, Morfusanimi, confcientix* և այլն) թարգմանություններում բազմիցս հիշատակվող և հետագայում գրաբարի տպագիր բառարաններում «խիղճ, խղճմտանք» նշանակությամբ առկա *խիղճ մտաց*-ը<sup>18</sup>:

*Գաւազան արմատոյ* բառակապակցությունը (Ոստ. ՄՄՁ 6762, 120ա. 566(I), 264ա) առկա է *Գաւազան* բառահոդվածում (ՆՀԲ, հ. 1, էջ 532)<sup>19</sup>:

*Բնագրային օրինակներում վկայված բառակապակցություններ և արտահայտություններ*<sup>20</sup>:

*Ընդ լուսանալ առաւօտուն* (*Առաւօտ. ՄՄՁ 6762, 102ա. 566(I), 236բ*) արտահայտությունը վկայում են Մ. Կաղանկատվացին

---

<sup>18</sup> J. Vilotte, *Dictionarium Novum Latino-Armenium*, Roma, 1714, pp. 160, 484, 620: Տե՛ս նաև ՆՀԲ, հ. 1, էջ 944-945: ՋԲ, էջ 674: Ռ. Ղազարեան, *Գրաբարի դարձուածաբանական բառարան*, Ե., 2012, էջ 147:

<sup>19</sup> Տե՛ս նաև *Համաբարբառ գրաբար Աստվածաշնչի*, էջ 466:

<sup>20</sup> Սկզբում տրվում են հայ մատենագրության մեջ հանդիպող բնագրային, այնուհետև բառարաններում առկա օրինակները:

«Պատմութիւն Ադուանից աշխարհի» երկում<sup>21</sup>, 1648 թ. մի հիշատակարան<sup>22</sup>, Ա. Դավրիժեցին «Գիրք պատմութեանց» երկում («Իսկ ընդ ընդ լուսանալ առաւօտուն շեշտակի ձիւնթաց արշամամբ եկին զինուորք...»)<sup>23</sup>, նաև ՆՀԲ-ն *Մահակոդմն* բառահոդվածում՝ «Ս. Եփրեմի մատենագրութիւնք»-ից քաղված բնագրային օրինակում (ՆՀԲ, հ. 2, էջ 196):

Նույն ՆՇ-ում առկա *ի ծագիլ արևոյն*-ը հանդիպում է Գ. Տաթևվացու «Գիրք քարոզութեան որ կոչի ձմեռան հատոր» երկում՝ «... ա՛յլ է օրինակն եւ այլ ճշմարտութիւն. որպէս ի ծագիլ արևոյն, ճրագի լոյսն նուազի եւ իսպիանի» նախադասության մեջ<sup>24</sup>: ՆՀԲ-ն *Ծագել* բառահոդվածում վկայում է *ի ծագել առաւօտուն* տարբերակը (ՆՀԲ, հ. 1, էջ 998):

*Գրոց աշակերտ (Բմաստուն*. ՄՄՁ 6762, 109ա. 566(I), 247ա) բառակապակցությունը հանդիպում է Պ. Հովնանյանցի աշխատասիրության մեջ («Աս ստուգութեանը վրայ հասարակ ու գրոց աշակերտ չըլլող մարդ մին ալ կրնայ վկայութիւն տալ...»)<sup>25</sup> և «Շտեմարան պիտանի գիտելեաց» երկում («... բայց ինքը գրոց աշակերտ չըլլալուն համար Քրիստիանոսը կանչեց՝ (որովհետև գիտուն մարդ էր ան)»...)<sup>26</sup>: Նույն ՆՇ-ից *հմուտ գրոց*-ը ՆՀԲ-ն վկայում է Հ. Ոսկեբերանի երկի թարգմանությունից (ՆՀԲ, հ. 2, էջ 104):

«Եթէ չար իցէ» նշումով *կորուստ կենաց*-ը (*Մահ*. ՄՄՁ 6762, 117ա. 566(I), 259բ) արձանագրում են Մի. Սեբաստացին («... ըն-

<sup>21</sup> <http://titus.uni-frankfurt.de/texte/etcs/arm/movskal/movsk.htm?movsk031.htm>.

<sup>22</sup> Տե՛ս *Հայագիտության հարցեր*, 1 (7), 2016, Ե., էջ 57:

<sup>23</sup> *Գիրք պատմութեանց Շարաղրեալ վարդապետին Առաքելոյ Դավրեժացոյ*, Ամսթէլօղամ, 1669, էջ 158:

<sup>24</sup> <http://www.digilib.am/book/1476/1779/14290/?lang=en>.

<sup>25</sup> *Հրահանգք աստեղագիտական ի վերայ գիսաւոր աստեղաց, Գրեաց Հ. Պողոս վարդապետ Յովնանեանց*, Վիեննա, 1841, էջ 119:

<sup>26</sup> *Շտեմարան պիտանի գիտելեաց*, հ. III, Ջմիւռնիա, 1841, էջ 73:



դէ՞ր եղև կորուստ կենաց ամենայն մարդկանց ....»<sup>27</sup>, Պ. Արագոնացու թարգմանիչը («Քանզի կորուստ ժամանակին է կորուստ կենաց»)՝<sup>28</sup>, Ս. Ավգերյանը («... ուր աչքին առջևն է կորուստ կենաց»)՝<sup>29</sup>, Ս. Թաղիադյանը («Մինչև ի կորուստ կենաց անգամ մտաբերել»)՝<sup>30</sup>:

*Յաղթանակ* հենարառով ՆՇ-ում (ՄՄՁ 6762, 118բ. 566(I), 261 ա-261բ) առկա *պսակ յաղթութեան* և *յաղթողական պարզ* բառակապակցություններից առաջինը գործածում է Ագաթանգեղոսը<sup>31</sup>, իսկ *յաղթողական պարզ*-ը հիշեցնում է Ստ. Մալխասյանցի արձանագրած *յաղթողական պսակ* տարբերակը<sup>32</sup>:

*Անուամբ միայն* (*Սոսկ*. ՄՄՁ 6762, 124բ. 566(I), 270ա) բառակապակցությունը գործածում է Գ. Ավետիքյանը («...և անուամբ միայն կրէ զկենդանութիւն մարմնոյ և ախորժանաց նորա»)՝<sup>33</sup>, Հ. Ավգերյանը երկլեզվյան բառարանում այդպես է բացատրում *Nominal*-ը<sup>34</sup>:

*Վախճան* հենարառով ՆՇ-ում (ՄՄՁ 6762, 125ա. 566(I), 271բ) «եթէ պիտոյ իցէ» նշումով առկա *վերջին վախճան* բառակապակցությունը գործածում են Հ. Պոնայի աշխատության թարգմանիչը

---

<sup>27</sup> *Մեկնութիւն սրբոյ Աւետարանի տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի որ ըստ Մատթէոսի, Արարեցեալ և շարադրեցեալ ի Միս. Սեբաստացոյ, Վենետիկ, 1737, էջ 712:*

<sup>28</sup> *Գիրք մոլութեանց Շարադրեալ ի Պետրոսէ արեղայէ Արագոնացոյ (Թարգմանեալ ի լատինականէն ի հայ բարբառ, ի գաւառն նախչուանու, 1339), Վենետիկ, 1773, էջ 225:*

<sup>29</sup> *Դեղ կենաց իբր հոգեւոր բժշկարան, յօրինեալ ի Հ. Մկրտիչ վարդապետէ Աւգերեան, Վենետիկ, 1842, էջ 327:*

<sup>30</sup> *Պատմութիւն պարսից, յորագրէ Մետրովպայ Թաղիադեանց, հ. Ա, Կալկաթա, 1846, էջ 243:*

<sup>31</sup> [concordance.am/category/գրաբար/ագաթանգեղոս](http://concordance.am/category/գրաբար/ագաթանգեղոս)

<sup>32</sup> **Ստ. Մալխասեանց**, *Հայերէն բացատրական բառարան*, հ. 3, Ե., 1944, էջ 384:

<sup>33</sup> *Մեկնութիւն չորեքսասան թղթոյ երանելոյն Պօղոսի առաքելոյ, աշխատասիրութեամբ Հ. Գարրիէլի Աւետիքեան Գոստանդնուպօլսեցոյ, հ. III, Վենետիկ, 1812, էջ 490:*

<sup>34</sup> *Բառարան անգղիարէն եւ հայերէն, աշխատ. ի Հ. Յ. վարդապետէ Աւգերեան, Վենետիկ, հ. Ա, 1821, էջ 581:*

(«Որպես հարկաւորէ գոլ նորին, նոյնպէս և գոլն վերջին վախճան»)՝<sup>35</sup> Մխ. Սերաստացին («... զի երանութիւն՝ որ է վերջին վախճան մեր՝ է կրկին ....»)՝<sup>36</sup> Մ. Ավգերյանը («Պատշաճ էր աստուծոյ հօր, վասն որոյ ամենայն, որ կարգեալ են ամենայն իբրև ի վերջին վախճան»)՝<sup>37</sup> Մ. Չամչյանցը («... և յարիլ ի ստեղծուածս՝ իբր յայն ինչ՝ որ իցէ վերջին վախճան», «... ո՛չ իբր ի վերջին վախճան, այլ իբր յայնպիսի բարի՝ որ ո՛չ կարգի առ աստուած իբր առ վերջին վախճան»)՝<sup>38</sup>:

Նույն ՆՇ-ից նույն նշումով *վախճանական պատճառ* բառակապակցությունը կիրառում է Մ. Ավգերյանը՝<sup>39</sup>: Մ. Ջախջախյանն այն արձանագրում է աստղանիշով, այսինքն՝ որպէս նոր բառ՝ նշելով իտալերէն *Cáu sa finale; fine* բառահոդվածում (ՋԲ, էջ 1292): *Կատարումն* բառահոդվածում բառակապակցությունը որպէս բացատրություն են օգտագործում ՆՀԲ-ն (հ. 1, էջ 1063) և Առձեռն բառարանը՝<sup>40</sup>:

*Բառակապակցություններ և արտահայտություններ՝ վկայված տարբեր բառարաններում. ա) XVIII դ. հրատարակված:*

*Շատախօս* հենարառով ՆՇ-ից *անդուռն բերան* (ՄՄՁ 6762, 119բ. 566(I), 263բ) բառակապակցությունն արձանագրում է Հ. Վիլ-

---

<sup>35</sup> *Ձեռքածութիւն յերկինս Յօրինեցեալ աշխատասիրութեամբ տեառն Յոհաննու Պօնաի*, Եւ թարգմանեցեալ ի հայկական բարբառ, ի Վարդանայ Յունանեան, Ամսդէլրօղամ, 1671, էջ 23:

<sup>36</sup> *Մեկնութիւն սրբոյ Աւետարանի տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի որ ըստ Մատթէոսի*, էջ 121:

<sup>37</sup> *Մեկնութիւն չորեքտասան թղթոյ երանելոյն Պօղոսի առաքելոյ*, հ. III, էջ 56:

<sup>38</sup> *Մեկնութիւն սաղմոսաց Յօրինեալ ի Հ. Միքայէլ վարդապետէ Չամչեանց*, հ. Գ., Վենետիկ, 1817, էջ 571:

<sup>39</sup> *Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց, որք կան ի հին Տօնացուցի Եկեղեցոյ Հայաստանեայց: Յօրինեալ վաւերական բանիւք ճարտարաց մերոց և այլոց ազգաց հանդերձ ծանօթութեամբք Բ. Հ. Մկրտիչ վարդապետէ Աւգերեան*, հ. Դ., Վենետիկ, 1813, էջ 203:

<sup>40</sup> *Առձեռն բառարան հայկազնեան լեզուի*, Վենետիկ, 1865, էջ 426:

լուրը՝ *Blatero* բառահողվածում նշելով *անդուռն բերան ունիլ* և *անդուռն բերան ունի* բացատրությունները<sup>41</sup>, այնուհետև՝ ՆՀԲ-ն՝ *Անդուռ* բառահողվածի վերջում՝ «\*Անդուռն բերան», յն. բարդեալ բառ. *ἀδυσροστομία*» նշումով (ՆՀԲ, հ. 1, էջ 135), Ալ. Խուդաբաշյանցը՝ *անդուռն բերան*-ը թարգմանելով "болтухъ, пустомѣля" (ԽԲՀՌ, հ. 1, էջ 60), Ա. Բագրատունին («Կուսան համեստ որպէս զօրինաւոր որք, և ոչ ամեննին ունել անդուռն բերան նման այլոց կանանց. – այս ինքն ոչ ունող անդուռն բերան») <sup>42</sup>, Եղ. Հյուրմուզյանը՝ *Անզուսպ* բառահողվածում<sup>43</sup>:

Հ. Վիլլոտն արձանագրում է նաև *ամանել յաման* արտահայտությունը (*Քաղէլ*. ՄՄՁ 6762, 129ա. 566(I), 277ա)՝ այդպէս թարգմանելով «Պահել: պարհել: համբարել: ի պահ ունիլ» նշանակությամբ *Reverso*-ն և *Servo*-ն<sup>44</sup>: ՆՀԲ-ն հիշատակում է «Յաման մի՛ ամանեացես» բնագրային օրինակը (ՆՀԲ, հ. 1, էջ 51):

*բ) XVIII դ. հետո հրատարակված:*

*Գալարումն աղեաց* (*Գութ*. ՄՄՁ 6762, 105ա. 566(I), 241ա) բառակապակցությունը ՆՀԲ-ն հիշատակում է *Գութ* բառահողվածում՝ վկայելով՝ «Օւլտօմօճ, օճՇտօն. Miseratio. մանաւանդ՝ Σπλαγγνα. Viscera. (որ են աղիք. իսկ ըստ հյ. որպէս թէ խութ կամ խթումն և գալարումն աղեաց)» (ՆՀԲ, հ. 1, էջ 578): Միննույն ժամանակ *Գալարեմ* բառահողվածում հիշատակվում են բնագրային օրինակներ Աստվածաշնչից («Գալարէին աղիք նորա») և Ե. Կողբացուց («Զաղիսն գալարեն....») (ՆՀԲ, ն.տ.):

---

<sup>41</sup> J. Villotte, *Dictionarium Novum Latino-Armenium*, p. 84:

<sup>42</sup> *Տարերք հայերէն քերականութեան դպրատանց տղոց համար, յօրինեց Հ. Արսէն Կոմիտաս Բագրատունի, Վենետիկ, 1848, էջ 264:*

<sup>43</sup> Եղ. Հիւրմիւզեան, *Բարզիք յաշխարհաբառէ ի գրարառ հանդերձ ոճովք եւ բացատրութեամբք նայնեաց*, Վենետիկ, 1869, էջ 25:

<sup>44</sup> Անդ, էջք 626, 656:

Ինչ վերաբերում է *կայուն ինչք* և *գնայուն ինչք* բառակապակցություններին (*Ինչք*. ՄՄՁ 6762, 109ա. 566(I), 247ա), ապա առաջինը որպես «նոր բառ» արձանագրում է Մ. Ջախջախյանը («\*Կայուն ինչք: կալուածք: տ. ագարէթ, միւլք. I beni immobili» (ՋԲ, էջ 746). այն հիշեցնում է արդի հայերենում կիրառվող «անշարժ գույք՝ ունեցվածք»-ը<sup>45</sup>: Երկրորդը վկայում է Մխ. Սեբաստացին՝ *Կայուն* բառահոդվածում նշելով՝ «Իսկ թէ զինչ իմանի՝ մինչ ասի կայուն և գնայուն ինչք: տե՛ս զԳնայունն», որն էլ բացատրում է՝ «... գնացական... և կամ անցաւոր, ուստի ստացուածքն, կամ ինչքն, որք ոչ մնան կայուն, այլ գան, և երթան. որպիսիք են դրամք, կամ վաճառք վաճառականաց, և այլք նմանք, ասին՝ գնայունք»<sup>46</sup>. սա էլ համեմատելի է Ստ. Մալխասյանցի իբրև իրավաբանական եզրույթ վկայած «Շարժական գոյք կամ ստացուածք»-ին (ՄՀԲԲ, հ. 3, էջ 506):

Այսպիսով՝ կարելի է հավաստել, որ բառարանագիրները, քաջածանոթ հայ ինքնուրույն և թարգմանական գրականությանը, վերոնշյալ բառակապակցությունները և արտահայտությունները ուսուցողական նպատակներով հավելել են «նոյնանշան» բառերին, մինչ բնագրային օրինակներով համալրված՝ գրաբարի բառարանները կազմելը և հրատարակելը կամ, թերևս, դրանց զուգահեռ:

Hovhannisyan Nazik - Word combinations and expressions in the manuscript dictionaries of synonyms.- Considering the synonymous rows of manuscript dictionaries of medieval Armenia, A. Amalian notes, that sometimes synonymosity is expressed in more than one word (synonym), with a whole phrase, in a descriptive way. According to researchers, "an-

---

<sup>45</sup> Է.Աղայան, *Արդի հայերենի բացատրական բառարան*, Ե., 1976, էջ 74:

<sup>46</sup> Տե՛ս Մխ. Սեբաստացի, *Բարձիրք հայկազեան լեզուի*, հ. 1, Վենետիկ, 1749, էջք 431, 188:

tiquity" of manuscript dictionaries of synonyms "quite reach the 12<sup>th</sup> century, but refer to an earlier period". Consequently, also the manuscript dictionaries of synonyms of the 18<sup>th</sup> century can be attributed to the "earlier period", namely before the publication of the dictionaries of the ancient Armenian language or possibly in parallel to it. The aforementioned phenomena are also observed in the synonymous rows of manuscript dictionaries synonyms of the 18<sup>th</sup> century, which clearly identify the word combinations and expressions taken from Armenian literature.

To support the argument, the word combinations and expressions are represented by the following classifications: word combinations and expressions recorded in the Bible, only in textual examples, in different dictionaries published in the 18<sup>th</sup> century and later.

Оганесян Назик - Словосочетания и описательные выражения в рукописных словарях синонимов.-Рассматривая синонимичные ряды рукописных словарей средневековой Армении, А. Амалян отмечает, что иногда синонимичность выражается не только одним словом (синонимом), а цельным словосочетанием, описательным способом. По мнению исследователей, "древность" рукописных словарей синонимов "доходит до XII в., но относится к более раннему периоду". Следовательно рукописные словари синонимов XVIII в. то же можно отнести "к более раннему периоду", а именно до издания словарей древнеармянского языка или, возможно, параллельно им. Вышеупомянутые явления наблюдаются так же в синонимичных рядах рукописных словарей синонимов XVIII в., в которых определенно выделяются словосочетания и описательные выражения, взятые, как выясняется, из армянской самостоятельной и переводной литературы.

Для аргументирования сказанного, словосочетания и описательные выражения представлены следующими классификациями: словосочетания и выражения, зафиксированные в Библии, только в текстуальных примерах, в разных словарях, изданных в XVIII в. и позже.

**ՁՈՒԼԵԼ/ԹՍՓԵԼ ԲԱՅԵՐԻ ԻՄԱՍՍԱՅԻՆ ԱՂԵՐՄՆԵՐԸ**

Հր. Աճառյանը **ձոյլ** (**ձոյղ**, **ձիւղ**) արմատի համար նշում է «թափած, ձուլած, միապաղաղ, ամուր, պինդ» իմաստները և համարում է բնիկ բառ՝ հ.-ե. \*ǵheu- («թափել, հեղուլ, ձուլել») նախաձևի -lo-ով աճած տարբերակից<sup>1</sup>:

Գ. Ջահուկյանը **ձոյլ** բառի համար նշում է «ձուլլ, միաձուլլ, ձուլվածք, զանգված» իմաստները, բերում է *ձուլիչ*, *ձուլածոյ*, *ոսկե-ձոյլ*, *միաձոյլ*, *բոլորածոյլ* բաղադրությունները: Նա նունպես այս բառի հ.-ե. նախաձևն է համարում \*ǵheu-lo- «լցնել, թափել» արմատը: Սյնուհետև նույն **ձոյլ** բառահոդվածում բերում է նաև հայերենի **ձեւ** բառը և համեմատում է հուն. χέω «լցնել, թափել» և հ. շվեդ. giuta «ձուլակաղապար» բառերի հետ<sup>2</sup>: Գ. Ջահուկյանը հղում է Հ. Հյուբշմանի «Հայերենի քերականություն» (Armenische grammatik) աշխատությանը, որում Հյուբշմանը **ձաւնեմ** բառին նվիրված բառահոդվածում բերում է նաև **ձոյլ** և **ձեւ** արմատները՝ նշելով, որ **ձոյլ**-ի ծագումը հ.-ե. \*ǵheu-ից առաջարկել է Ա.Մեյեն<sup>3</sup> (դրա մասին նշում է նաև Հր.Աճառյանը):

Նոր հայկազյան բառարանում **ձոյլ** (**ձոյղ**, **ձիւղ**) բացատրվում է «ձուլեալ, ձուլած, միապաղաղ և պինդ, հոծ, խիտ, ստուար,

---

<sup>1</sup> Հր. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, հ. 3, Ե., 1977, էջ 158 (այսուհետև՝ ՀԱԲ):

<sup>2</sup> Գ. Ջահուկյան, *Հայերեն ստուգաբանական բառարան*, Ե., 2010, էջ 476-477 (այսուհետև՝ ՇՄԲ):

<sup>3</sup> Հ. Հյուբշման, *Հայերենի քերականություն*, Ե., 2003, էջ 469:

հաստատուն, թափծու»<sup>4</sup>, իսկ **ձուլեմ** բայը՝ «Հալել զհրահալելիս, և հեղլով ի կաղապար՝ թանձրացուցանել ի ձև ինչ. կազմել ձոյլ ինչ. պնդացուցանել, մածուցանել, սառուցանել, միացուցանել, թափել», **ձուլադրոշմ**-ի իմաստների մեջ նշվում են «ձուլմամբ դրոշմեալ, ձուլածոյ, թափծու շինած», **ձուլիչ**-ը՝ «որ ձուլէ, թափող»<sup>5</sup>: Յ. Պոկորնու բառարանում \*ǵheu- արմատից հ.-ե. լեզուներում առկա են բառեր, որոնք, ըստ դրանց արտահայտած իմաստների, կարելի է բաժանել երկու խմբի. նշենք «լցնել, թափել» նշանակությամբ արմատները՝ հուն. γέω «լցնել, թափել», գոթ. giutan «լցնել, թափել, հեղել», հ.վ. գերմ. gioso «հոսող ջուր», անգլսաքս. gēotan «հոսել, լցվել, թափվել», հ.վ. գերմ. gussa «հեղեղ», լատ. fundō «լցնել, թափել», fū-tis «ջրաման», անգլսաքս. gyte «ձուլել, ձուլում», հոլ. goot «ջրհորդան» և այլն: Կան լեզուներ էլ, որոնցում հ.-ե. այս արմատից կազմվել են «զոհ, զոհաբերություն, քահանա» և համանման իմաստ արտահայտող արմատներ. օրինակ՝ հ.հնդկ. juhō ti juhutē «կրակի մեջ լցնել, զոհաբերել», ավ. zaotar, zaoθr «քահանա, զոհաբերություն կատարող քահանա», նոր պրսկ. «սուրբ ջուր», ավ. āzūtay- «յուղ, ճարպ», aoerā «զոհաբերություն»<sup>6</sup>:

Հայերենում **ձուլել** բայը գործածվում է «հալել մետաղները» նշանակությամբ, իսկ բառի ստուգաբանական «թափել, հեղուլ» նշանակությունները դուրս են եկել գործածությունից: Թե՛ գրաբարի, թե՛ աշխարհաբարյան բառարաններում **ձուլել**-ի համար նըշվում է «մետաղը հալել և լցնել կաղապարի մեջ» իմաստը<sup>7</sup>: Հայերե-

<sup>4</sup> Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Ե., 1981, հ.2, էջ 160 (այսուհետև՝ ՆՀԲ):

<sup>5</sup> ՆՀԲ, հ.2, էջ 161:

<sup>6</sup> J. Pokorny, *Indogermanisches etymologisches Wörterbuch*, Bern and München, 1959, I, p. 447-448.

<sup>7</sup> Տե՛ս Է. Աղայանի, Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի. Ս. Մալխասյանցի հայերենի բացատրական բառարանների համապատասխան բառահոդվածները:

նի **թափել** բայը համարվում է անաստույգ ծագման: Գ. Ջահուկյանը **թափ** արմատի համար բերում է «հատակ, տակ, խորք, պատյան, թափ, ուժ, պտույտ, թափում, փրկում, հափշտակում, կողոպուտ» իմաստները և այդ արմատով կազմված բաղադրությունների մեջ չի նշում **թափել** բայը<sup>8</sup>:

Հր. Աճառյանը այդ բայը հիշատակում է **թափ** բառահոդվածում՝ «հեղուլ, պարպել, լցնել», ինչպես նաև «ազատել, յափշտակել, կողոպտել» և այլ իմաստներով. **թափել** բայի համար բերում է հայ բարբառների «թափել, թափ տալ» իմաստները, միայն Տիգրիսի համար՝ «թափել, ձուլել»<sup>9</sup>. արմատական բառարանում չի նշում «ձուլել, կաղապարել»-ը, մինչդեռ գավառական բառարանում **թափել** բայի «թափել, հեղուլ»-ից հետո բերում է Ղարաբաղի և Պոլսի բարբառներում առկա «ձուլել» իմաստը<sup>10</sup>: Ա. Սարգսյանի բառարանում ևս **թափել** բայի իմաստների մեջ նշվում է «կաղապարով ձուլել», և բերվում են «...առաջ արկաթը հալալ ըն, թօփ թափալ» օրինակը<sup>11</sup>, նաև **թափծո, թափծու** բառերը՝ «թափած, ձուլած, ձուլածո» նշանակություններով<sup>12</sup>: Այլ բառարաններում ևս **թափել** բայի նշանակությունների մեջ կան «մետաղները ձուլել»<sup>13</sup>, «հեղուկ նիւթ կաղապարի մեջ ածել, ձուլել»<sup>14</sup> իմաստները: Այդպիսի իմաստներ են արձանագրված նաև հայերեն բացատրական, հոմանիշների, միջին հայերենի, արևմտահայերենի բառարաններում, բայց այստեղ հատկապես պետք է նշել ՆՀԲ-ում վկայված և վերը բերված **ձոյլ** բառի բա-

---

<sup>8</sup> ՀՄԲ, էջ 262:

<sup>9</sup> ՀՄԲ, հ. 2, էջ 164-166:

<sup>10</sup> **Հր.Աճառյան**, *Հայերեն գաւառական բառարան*, Թիֆլիս, 1913, էջ 353:

<sup>11</sup> **Ա.Սարգսյան**, *Ղարաբաղի բարբառի բառարան*, Ե., 2013, էջ 192:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 240:

<sup>13</sup> **Յ.Գալսյան**, *Բառարան գանձարան հայերեն լեզուի*, Գահիրե, 1938, էջ 146:

<sup>14</sup> **Մ.Մալխասեանց**, *Հայերեն բացատրական բառարան*, հ. 2, Ե., 2010, էջ 91:



ցատրոլոթյան մեջ նշված «թափծու», **ձուլեմ**՝ «թափել», **ձուլիչ**՝ «թափող» բառերը:

Վ. Բաքի՝ հնդեվրոպական լեզուների հոմանիշների բառարանում (9.63) թեմատիկ-իմաստային խումբն ընդգրկում է cast բառը, որն անգլերենում ունի և՛ «լցնել, թափել», և՛ «կաղապարել» նշանակությունները. այս խմբում բերվում են հուն. **χόανος** «հալելու աման», «հալոց, հալաման», «ձուլման կաղապար», **χωνεύω** «լցնել, թափել կաղապարի մեջ», «հալելով ձուլել», **τήκω**, դոր. **τάκω** «հալել, ձուլել», լատ. fundere «լցնել, թափել», նաև «լցնել, թափել, ձուլել մետաղ», իտալ. gettare «նետել, գցել», նաև «հալել մետաղ». համանման իմաստներ ունեն ռում. turna, ն.իռլ. teilgim, ֆր. fondre բառերը<sup>15</sup>: Ֆրանսերենի couler բայը նշանակում է «հոսել, բխել, ձուլել», couler au moule «լցնել կաղապարի մեջ», coulé «ձուլածո, թափծու, ձուլում», coulée «հոսք, ձուլում», acier coulé «ձուլած պողպատ»<sup>16</sup>:

Մլավոնական լեզուներում ևս «ձուլել» իմաստով բայը կապվում է «լցնել, թափել» բայերի հետ: Վ. Դալի բառարանում **лить** գլխաբառի տակ բերվում են «лить медь, чугун, плавить и отлить вещи; лить колокола, пушки, отливать из расплавленного металла» իմաստները<sup>17</sup>: Օ. Տրուբաչևի բառարանում \*liti նախաձևի տակ նշվում են հին սլավ. лити «лить, отливать», մակեդոն. лее« лить, отливать из металла», սերբախորվ. lümu «лить, отливать (из металла,

<sup>15</sup> C. D. Buck, *A Dictionary of Selected Synonyms in the Principal Indo-European Languages*, Chicago—London, 1949 (1965), p.608-609.

<sup>16</sup> К. А. Ганшина, *Французско-русский словарь*, М., 1962, с.194.

<sup>17</sup> В. Даль, *Толковый словарь живаговекикоруского языка*, СПб-М., 1881, т. 2, с.261-262.

воска)», հին ուս. лити, лию «лить, плавить металлы, воск, заливая их куда-л.»<sup>18</sup>:

Բերված ստուգաբանական նյութը հիմք է տալիս ենթադրելու, որ **թափել** բայի գործածությունը «ձուլել» իմաստով հաստուկ է հ.-ե. շատ լեզուների, և իմաստային այդ զարգացումը կարելի է համարել տիպաբանական ընդհանրություն հնդեվրոպական լեզուների համար: Հայերենում ևս **թափել** բայը «ձուլել» իմաստով բավական լայն գործածություն ունի<sup>19</sup>:

Հայերենի **ձօն(ձաւնեմ)** բառի ծագման մասին գոյություն ունեն տարբեր կարծիքներ: Հր. Աճառյանը հայերենի **ձօն(ձաւնեմ)** «պարզ, ընծայ, նուէր» (մանաւանդ աստուածներին ձօնուած նուէր) արմատը համարում է բնիկ հայ բառ և հանգեցնում է հ.-ե. \*ǵheu- արմատի \*ǵhu- ձևին, որը, ըստ նրա, \*ǵheu-ի ստորին ձայնդարձ է. \*ǵhu-ից «յառաջացել է հյ. \*ձու, որի վրայ աւելանալով **-աւն** մասնիկը՝ ...դարձել է \*ձուաւն և ու ձայնի անկումով՝ **ձաւն > ձօն**»<sup>20</sup>:

Գ. Ջահուկյանը **ձաւն (ձօն)** «ընծա, նվեր»՝ *ձաւնել, ձաւնաբան, դիւաձաւն* բաղադրություններով, ծագած է համարում է բնիկ հնդեվրոպական \*ǵha- «կանչել» արմատից և համեմատում է հ. հնդկ. havati «կանչում է», ավ. zavaiti «կանչում է, նգովում է», լիտվ. žaveti «կախարդել» ձևերի հետ, իսկ Հր. Աճառյանի՝ վերը բերած կարծիքը համարում է «...հնչյունապես պակաս հավանական»<sup>21</sup>:

<sup>18</sup> *Этимологический словарь славянских языков. Праславянский лексический фонд*, М., 1988, т.15, с.157.

<sup>19</sup> Պետք է նշել, որ Աստվածաշնչի տարբեր հրատարակություններում «Դատաւորներ» գրքի մեջ գործածվում են ն՝ *ձուլածոյ արձան*, ն՝ *թափծու կուռք* տարբերակները:

<sup>20</sup> ՀԱԲ, հ. 3, 1977, 161:

<sup>21</sup> ՀԱԲ, էջ 474:

3. Պոկորնու բառարանում \*ǵhau- նախաձևը ունի \*ǵhauǵ-, \*ǵhauǵo-s, \*ǵhǵ-to- տարբերակները. այդ բառահոդվածում, Ջահուկյանի նշած ձևերից բացի, բերվում են նաև հուն. **καυχάομαι** «պարծենալ», **καύγή** «պարծենկոտություն, ինքնագովություն», հին իռլ. guth «ձայն» (\*gutu-s)-ից, գալլ. gutuater «վանականների մի դասի անվանում», գերմ. \*guda- «աստված», սրանից հավանաբար նաև \*gotin(na) «աստվածուհի», հին իսլ. \*godI. «հեթանոսական քահանա»: Բառերի այս շարքում 3. Պոկորնին նշում է նաև հայ. jaunem **ձաւնեմ** և n-zovk<sup>c</sup> **ն-զով-ք** բառերը<sup>22</sup>: Հնդեվրոպական լեզուներում վկայված այս բառերը և նրանց իմաստները, կարծում ենք, անհավանական է աղերսակցել հայերենի **ձաւնեմ**-ի արտահայտած իմաստներին: Նաև հնչյունական առումով չի հիմնավորվում **ն**-ի առկայությունը:

Գ. Ջահուկյանը «Հայոց լեզվի պատմություն» աշխատության մեջ հ.-ե. \*ǵheu- արմատի իմաստների մեջ նշում է «...կրակի մեջ հալած յուղ լցնելը՝ աստվածներին կերակրելու համար»<sup>23</sup>: 3. Պոկորնու բառարանում \*ǵheu- արմատի՝ հնդեվրոպական մյուս լեզուներում, ինչպես նշել ենք վերը, կան «կրակի մեջ լցնել, զոհաբերել», «քահանա, զոհաբերություն կատարող քահանա», «սուրբ ջուր», «յուղ, ճարպ», «զոհաբերություն» նշանակությամբ բառեր: Բառարանում հ.-ե. լեզուներից բերվում է հուն. խոհ(**χοός**) «ձոնում կատարել հանգուցյալների հիշատակին», **χῶμα** «դամբանաթումբ» և այլն<sup>24</sup>:

<sup>22</sup> **J. Pokorny**, *Indogermanisches Etymologisches Wörterbuch*, Bern and München, 1959, p. 413-414 (այսուհետև՝ IEW).

<sup>23</sup> **Գ. Ջահուկյան**, *Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան*, Ե., 1987, էջ 84 (այսուհետև՝ ՀԼՊ):

<sup>24</sup> **J. Pokorny**, IEW, p. 447.

Նոր հայկազյան բառարանում **ձօնեմ** բառի համար բերվում են «մատուցանել, նուիրել, ընծայել, պատարագել», **ձօնիչ**-ի համար՝ «նուիրող, մատուցող, քուրմ, քահանա» իմաստները<sup>25</sup>:

Կարծում ենք, որ, **ձօնեմ** բառի իմաստները նկատի ունենալով, ավելի հավանական է կանխադրել հ.-ե. \*ǵheu- նախաձևը: Հ.-ե. eu-, əu- կապակցությունները հայերենում կարող են արտացոլվել նաև որպես **աւ**. նշենք Գ. Ջահուկյանի «Հայոց լեզվի պատմության» մեջ բերված \*aleu- «աղաւաղ» (էջ 111), \*arəu- «հարաւունք» (էջ 113), \*ǵnəu-d- «ծնաւտ» (էջ 125), \*ǵhleu- «ձաղ» ( էջ 127) և այլն. նման անցման օրինակներ կան նաև Գ. Ջահուկյանի «Հայ բարբառագիտության ներածություն» աշխատության մեջ. հ.-ե. \*geu- հայ. «կաւառ»<sup>26</sup>, հ.-ե. \*pleu- հայ. «լավ» (ն. տ.):

Ինչ վերաբերում է **ձաւն**-ի ն հնչյունին, կարելի է վկայել Հ. Ֆրիսկեի հունարենի ստուգաբանական բառարանի չեօ բառահոդվածում հունարենի և հնդկերենի մի զուգաբանություն, երբ նա համեմատում է հուն. **χρῆμα**-ն «զոհաբերության անոթ» և հնդկ. hómān «զոհ, զոհաբերություն» բառերը և կանխադրում է հ.-ե. \*ǵheu- նախաձևի \*ǵhéu-mn տարբերակը<sup>27</sup>: Կարծում ենք, որ հայերեն **ձաւն**-ի համար էլ կարելի է կանխադրել \*ǵhéu-mn կամ \*ǵhéu-n նախաձև, և այսպիսով թե՛ իմաստային, թե՛ հնչյունական առումներով կրացատրվի **ձաւն** արմատի կազմությունը:

---

<sup>25</sup> ՆՀԲ, հ.2, էջ 162:

<sup>26</sup> Գ. Ջահուկյան, *Հայ բարբառագիտության ներածություն*, Ե., 1972, էջ 286:

<sup>27</sup> Hjalmar Frisk, *Griechisches Etymologisches Wörterbuch*, Heidelberg, 1970, v. 22, p. 1090-1092.

Simonyan Nektar - Semantic Relations of Armenian Verbs *ձուլել/թափել*.  
- The article touches upon the etymological and lexical meanings of the verbs *ձուլել/թափել*, as well as it provides examples proving the semantic and functional similarities. The etymology of the root *ձուլ/ձու* is also specified, and it is proposed to refer to the same i.-e. preform as the root *ձուլել* (\*ǵheu-).

Симонян Нектар - Семантическая взаимосвязь армянских глаголов *ձուլել /թափել*. - В статье рассматриваются этимологические и лексические значения глаголов *ձուլել/թափել*, приводятся примеры, доказывающие семантические и функциональные сходства. Уточняется также этимология корня *ձուլ/ձու*, и предлагается возвести к той же и.-е. праформе, что и корень *ձուլել* (\*ǵheu-).

Վարդանյան Արտակ (Հայաստան,  
ԳԱԱ լեզվի ինստիտուտ)

## ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԳՈՂԹՆԻ ԽՈՍՎԱԾՔՆԵՐԻ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատմական Գողթն գավառի հյուսիսային մասն ընդգրկող Բիստ, Մեարպավան, Ողոհի (Ալահի), Ռամիս, Փառակա և Խուրստ գյուղերի խոսվածքները, որոնք իրենց հատկանիշներով առանձնանում են շրջակա բարբառներից և լեզվական բավական սերտ առնչություն են ներկայացնում, մինչև վերջին տարիները առանձին ուսումնասիրության չէին ենթարկվել: Մենք ուսումնասիրել ենք հիշյալ խոսվածքներից հինգի (Խուրստը ունեցել է սակավաթիվ բնակչություն, և 1920-ականներին մարած նրա խոսվածքի վերաբերյալ նյութեր չեն պահպանվել)<sup>1</sup> հնչյունական առանձնահատկությունները, որի արդյունքում պարզվել է, որ ըստ Գևորգ Ջահուկյանի մշակած բազմահատկանիշ վիճակագրական դասակարգման սկզբունքների աղյուսակի 50 հնչյունական հատկանիշների՝ հիշյալ խոսվածքները միմյանցից տարբերվում են նվազագույնը՝ 3 և առավելագույնը՝ 6,5 միավորով: Հատկանիշների նման մերձավորությունը վկայում է, որ հնչյունաբանության առումով Հյուսիսային Գողթնի հիշյալ խոսվածքները կարող են դիտվել որպես միևնույն բարբառի կամ միջբարբառի խոսվածքներ<sup>2</sup>:

Խոսվածքախմբի ինչպես հնչյունական, այնպես էլ ձևաբանական հատկանիշների ուսումնասիրման համար հիմք են ծառա-

<sup>1</sup>Հ. Աճառեան, *Քննություն Ազուլիսի բարբառի*, Ե., 1935, էջ 328:

<sup>2</sup>Ա. Վարդանյան, Հյուսիսային Գողթնի խոսվածքների հնչյունական առանձնահատկությունները.—«Հայոց լեզվի պատմական ուսումնասիրության արդի խնդիրներ» գիտաժողովի նյութեր, 2019, էջ 199-208:

յել Հայերենի բարբառագիտական ատլասի ծրագրով ՀՀ ԳԱԱ Ն. Ա-  
ճառյանի ավան լեզվի ինստիտուտում ժամանակին գրանցված  
Բիստ (1983թ. գրանցել է Անահիտ Մկրտումյանը, բարբառախոս՝  
Վաղինակ Հովակիմյան), Մեսրոպավան (1983թ. գրանցել է Ժաննա  
Միքայելյանը, բարբառախոսներ՝ Իսկուհի (ծնվ. 1921թ.) և Հակոբ  
(ծնվ. 1912թ.) Հակոբջանյաններ), Փառակա (1977թ. գրանցել է Ալ-  
բերտ Խաչատրյանը, բարբառախոսներ՝ Գուրգեն Հարությունյան  
(ծնվ.1909թ.), Սուրեն Ադամյան (ծնվ.1906թ.), Վարդուշ Գալոյան  
(ծնվ.1919թ.) գյուղերի խոսվածքների վերաբերյալ նյութերը: Ռամիս  
և Ողոհի գյուղերի խոսվածքները հիշյալ գյուղերի նախկին  
բնակիչներից գրանցել ենք 2018-2019թթ., բարբառախոսներ՝ Մա-  
րուսյա Կոսկանդեյան (ծնվ. 1932թ., Ռամիս), Բորիս Միքայելյան  
(ծնվ. 1943թ., Ռամիս), Ռուբեն Մարտիրոսյան (ծնվ. 1932թ., Ողոհի),  
Վոլոդյա Առաքելյան (1951թ., Ողոհի):

Հիշենք, որ Ագուլիսի բարբառին նվիրված իր նշանավոր  
բարբառագիտական աշխատանքում Մարգիս Մարգսյանցը թու-  
ցիկ անդրադարձով Ռամիսի խոսվածքը նույնպես համարել է Ա-  
գուլիսի բարբառ<sup>3</sup>: Հրայր Աճառյանը «Քննութիւն Ագուլիսի բար-  
բառի» աշխատանքում Փառակայի և Ռամիսի խոսվածքներն է  
բնութագրել որպես Ագուլիսի բարբառին մոտ, բայց նրանից տար-  
բերվող խոսվածքներ<sup>4</sup>, իսկ Ողոհի, Բիստ, Մեսրոպավան գյուղերի,  
ինչպես նաև փոքրաթիվ բնակչություն ունեցած և այդ ժամանակ  
արդեն իսպառ հայաթափված Խուրստ գյուղի խոսվածքները՝ հա-  
մարել Արցախի բարբառին մոտ խոսվածքներ: Մարի Զաքարյանը  
«Ագուլիսի բարբառը» աշխատանքում, կրկին հպանցիկ անդրա-  
դարձով, Փառակայի և Ռամիսի խոսվածքները համարում է Ագու-

---

<sup>3</sup>Ս. Մարգսեանց, *Ագուլեցոց բարբառը (գոկերի լեզուն)*, Ս., 1883, էջ 16:

<sup>4</sup>Հ. Աճառեան, նշվ. աշխ., էջ 327-329:

լիսի բարբառի խոսվածքներ, իսկ Ողոհիի, Բիստի և Մեսրոպավանի խոսվածքները՝ Արցախի բարբառին մոտ խոսվածքներ<sup>5</sup>:

Նպաստակ ունենալով ճշտելու Հյուսիսային Գողթնի հիշյալ հինգ գյուղերի խոսվածքների մերձավորությունը նաև ձևաբանական հատկանիշների առումով, կատարել ենք ոչ միայն խոսվածքների ձևաբանական հատկանիշների համեմատական քննություն, այլև կրկին կիրառել ենք Գևորգ Ջահուկյանի մշակած բազմահատկանիշ վիճակագրական դասակարգման սկզբունքը:

Նախ անդրադառնանք խոսվածքների որոշ ձևաբանական ընդհանրությունների և առանձնահատկությունների.

Բազմավանկ բառերի հոգնակին բոլոր խոսվածքներում հիմնականում կազմվում է **նէր** հոգնակերտ մասնիկով՝ **անխպո՛րներ**, կաքավ-կաքավներ, վօսկըռ-վօսկըռներ (Մսր.), տանակ-տանանս, մօծակ-մօծակներ, քըշիր-քըշիրներ (Ռամ.), ճնդաց-ճնդացներ(ր), իրիս-իրիսներ(ր), թիփըռ-թիփըռներ(ր) (Փառ.) և այլն: Բիստի խոսվածքում, սակայն, կիրառական է **նի** մասնիկը՝ խընձօր-խընձօրնի, տանակ՝ -տանակ՝ **նի**, մօծակ-մօծակնի, իսկ Ողոհիի խոսվածքում գուգահեռաբար գործածվում են **նի** և **նէր** մասնիկները՝ ձօկուն-ձօկուններ, աստըղ-աստըղներ, բայց՝ կէծակ-կէծակնի:

Չայնավորով վերջացող բառերի հոգնակին կազմվում է հիմնականում **ք** մասնիկով՝ խընամի-խընամիք, ըխս-ըխէք, կանթի-կանթիք (Բսս.), վօրթի-վօրթիք, ըրխս-ըրխէք (Մսր.), խօխս-խօխէք (Ողհ.) քէնի-քէնիք, ըխս-ըխսք, ճօրի-ճօրիք (Ռամ.), հնքոնի-հնքոնիք, գոլլբան-գոլլբանք, սըտանա-սըտանաք (Փառ.) և այլն: Մես-

---

<sup>5</sup>Մ. Զաքարյան, *Ազուլիսի բարբառը*, Ե., 2008, էջ 7:



րոպավանի խոսվածքում, սակայն, կիրառական է նաև **նէր** մասնիկը՝ կինի-**կինինէր**, մըտանի-**մըտանինէր**, փէսացու-**փէսացունէր**:

Միավանկ բառերի հոգնակին կազմվում է հիմնականում **էր** (**ար**) մասնիկով՝ **ճուր-ճուրէր||ճըրէր**, **տօն-տընէր**, **մէս-մըսէր** (Բստ.), **կնդ-կնդէր**, **հավ-հավէր**, **պէրց-պէրցէր** (Մար.), **ած-ածար**, **օռչ-առչար**, **կոնլ-կոնլնր** (Ռամ.), **ճուր-ճուրնր**, **ծառ-ծըռար**, **պօհ-պօհնր** (Փառ.) և այլն:

Հին հայերենի բաղաձայն +ն վերջավորությամբ միավանկ բառերի հոգնակին կազմվում է **էր** (**ար**) հոգնակերտով՝ **ն**-ի պահպանմամբ՝ կամնը-**կամնէր**, կօնը-**կըռնէր**, սօնը-**տըռնէր** (Բստ.), **պէռնը-պէռնէր**, կ'օնը-**կ'օռնէր**, թօնը-**թօռնէր** (Մար.), **ծիկուն-ծիկուննէր**, մօկուն-**մօկուննէր** (Ողհ.), **իզնը-իզննր**, **թօնը-թօռնար**, **օռթնը-օռթննր** (Ռամ.), **իզնը-իզնար**, **նօնը-նըռնար**, **նորթնը-նորթնար** (Փառ.) և այլն:

Հոլովման համակարգը հիմնականում դրսևորում է բավական սերտ ընդհանրություններ.

Ազգակցություն ցույց տվող բառերը հոլովվում են ներքին **օ** (**ու**) հոլովմամբ՝ **անէր-անօր**, **տէքըր-տէքօր**, **քիր-քըվօր** (Բստ.), **հանէր-հանօր**, **քուր-քըվօր** (Մար.), **տէքըր-տէքուր**, **անէր-անուր**, (Ռամ.), **նիսպնր-նիսպուր**, **անիր-անուր** (Փառ.) և այլն:

Հին հայերենի բաղաձայն + ն վերջնահանգով միավանկ բառերը հոլովվում են **ի** և **ան** հոլովիչներով, Ռամսիսի և Փառակայի խոսվածքներում, սակայն, առկա են միայն **ի** հոլովման օրինակներ՝ **պէռնը-պէռնի**, **նօնը-նըռնի**, **յէզնը-յէզան**, **տուռը-տըռան** (Բստ.), **ծօկըն-ծօկնի**, **կաթնը-կաթնի**, **կ'օնը-կ'օռան**, **տուռնը-տը-**

**նան** (Մսր.), **գօնը-գօնի**, **իզնը-իզնի**, **նօնը-նօնի** (Ռամ.), **կօթնը-կօթնի**, **կօնը-կօնի**, **մօկուն-մօկունի** (Փառ.) և այլն:

Բոլոր խոսվածքներում գոյականը հոգնակի թվում հոլովվում է **ի** հոլովմամբ՝ **պերաննի-պերանների**, **տաննկնի-տաննկների** (Բստ.), **պերցեր-պերցերի**, **կ'օղեր-կ'օղերի** (Մսր.), **ծուկուններ-ծուկունների**, **աստըղներ-աստըղների** (Ողհ.), **ուսկուռներ-ուսկուռներին**, **պօրցեր-պօրցերին** (Ռամ.), **կօվար-կօվերի**, **ճիրար-ճիրերի** (Փառ.) և այլն:

Բացառական հոլովը արտահայտվում է թե՛ **ից** վերջավորությամբ (ինչպես հարևան Ագուլիսի բարբառում), թե՛ **ան(ի)**, **էն** վերջավորությամբ (ինչպես հարևան Արցախ-Սյունիքի բարբառում). **պիրան-պիրանից**, **կիլ-կիլից**, **լուզու-լուզվից** (Բստ.), **աղվես-աղվեսան**, **կոնլ-կոնլան**, **ախպեր-ախպօրան||ախպուրը անի** (Մսր.), **բուն-բունից||բունեն**, **մաչ-մաչից||մաչեն**, **արեվ-արըվից||արըվեն** (Ողհ.) **պիրան-պիրանից**, **կոնլ-կոնլից**, **սար-սարից** (Ռամ.), **էշ-էշան||էշին անի**, **հօց-հիցան||հօցի(ն) անի**, **քինթ-քինթան||քինթին անի** (Փառ.) և այլն: Ինչպես նկատվեց, Ողոհիի խոսվածքում **ից** և **էն** վերջավորությունները գուգահեռ կիրառական են. փաստ, որը կրկին հաստատում է գյուղի խառը բնակչության մասին<sup>6</sup>:

Գործիական հոլովը հիմնականում արտահայտվում է **օլ** հոլովական վերջավորության **ավ** հնչյունական տարբերակով, միայն Փառակայի խոսվածքում առկա է **օլ** տարբերակը. **լուզու-լուզվավ**, **քար-քարավ**, **ծօլ-ծօլավ** (Բստ.), **մարթ-մարթավ**, **քուր-քրվօրավ**, **հաց-հացավ** (Մսր.), **աման-ամանավ**, **տուն-տընավ** (Ողհ.),

<sup>6</sup>Մ. Վարդանյան, նշվ. աշխ., էջ 203:

սովիլ-սովիլավ, լուրու-լուրվանվ, կօհնը-կօհնավ (Ռամ.), ամիս-ամ-  
սով, տարի-տարով, կօթնը-կօթնով||կաթնով (Փառ.) և այլն:

Ներգոյական հոլովը հիմնականում արտահայտվում է ում  
վերջավորությամբ կամ նրա ըմ հնչյունական տարբերակով՝ աշ-  
խարք-աշխարքքըմ, կէղ-կէղըմ, կրուճուճ-կրուճուճում (Բստ.), փօր-  
փօրըմ, կրուճուճ-կրուճուճըմ, տաշտ-տաշտըմ (Մսր.), յերգիր-յերգի-  
րըմ, յերգինք-յերգինքըմ(Ողհ.), պիրան-պիրանում, հուղ-հուղում,  
ուրուրուց-ուրուրուցում (Ռամ.), սօշտ-սօշտում, պիրան-պիրա-  
նում||պիրանըմ, աշխարք-աշխարքում||ըշխարքըմ (Փառ.) և այլն:

Անձնական դերանունների բացառական և գործիական հո-  
լովները կազմվում են տրականից՝ ինձանից, քեզանից, ուրէն նն-  
նից, մեզնավ, ծեզնավ, ուրանցսով (Բստ.), ինձանի, քեզանի, ուրան  
նից, մեզանսով, ծեզանսով, ուրանցսով (Մսր.), ինձանից, քիզանից,  
նրօնից, միզանսով, ծիզանսով, նրուցանսով (Ռամ.), ինձանից, քեզ-  
նանից, ուրէն նանից, մեզնավ, ծեզնավ, ուրանցսով (Փառ.):

Ցուցական դերանունները հիմնականում դրսևորվում են  
այս, այդ, այն դերանունների միջոցով, միայն Ռամիսի խոսված-  
քում Ագուլիսի բարբառի նման դրսևորվում են միաժամանակ նաև  
սա, դա, նա դերանունների միջոցով՝ էս, էտ, էն (Բստ., Մսր., Ողհ.),  
աս, ստ, ան (Փառ.), աս, ստ, ան||սօ, տօ, նօ (Ռամ.): Սեռական-  
տրական հոլովը արտահայտվում է հին հայերենի սորա, դորա,  
նորա տիպի հիմքով՝ ըստրան, ըտրան, ընդրան, ըստրանց,  
ըտրանց, ընդրանց (Բստ.), ուստուր, ուտուր, ունդուր, ուստուց, ու-  
տուց, ունդուց (Մսր.), սըրօ(ն), տըրօ(ն), նըրօ(ն), սըրունց, տըրունց,  
նըրունց (Ռամ.), ըստուն, ըտուն, ընդուն, ըստուց, ըտուց, ընդուց  
(Ողհ.), ուստուրա||ըստուրա, ունդուրա||ընդուրա, տուրա, ուս-

**տուցա||ըստուցա, ունդուցա||ընդուցա, տուցա** (Փառ.): Բացառական և գործիական հոլովները կազմվում են սեռականի հիմքից՝ **ըստրանից, ըտրանից, ընդրանից, ըստրանցից, ըտրանցավ** (Բստ.), **նուստնր անի, նուտնր անի, ննդնր անի, նուստնց անի, նուտնց անանվ** (Մսր.), **սըրո անի, տըրո անի, նըրո անի, սըրունց անի, տըրունց անավ** (Ռամ.), **ըստրանից, ըտրանից, ընդրանից, ըստրանցից, ըստրանցավ** (Ողհ.), **ուստուրանից|| ըստուրանից, ունդուրանից ||ընդուրանից, տուրանից, ուստուցանից|| ըստուցանից, ունդուցանսով||ընդուցանսով** (Փառ.):

Խոնարհման համակարգում նույնպես, որոշակի տարբերություններով հանդերձ, խոսվածքները հիմնականում դրսևորում են ընդհանուր հատկանիշներ:

Սահմանական եղանակի ներկա ժամանակը դրսևորվում է անկատար դերբայով (կազմվում է **ում** վերջավորությամբ կամ նրա **ըմ** հնչյունական տարբերակով) և օժանդակ բայի ներկայի ձևերով՝ **կիիրըմ ըմ (ըս, ա, ընք, ըք, ըն)** (Բստ., Մսր., Ողհ.), **կիիրում ըմ (ըս, ա, ըք, ըք, ըն)** (Ռամ.), **կիիրիմ իմ (իս, ան, իք, իք, ին)** (Փառ.):

Անցյալ անկատար ժամանակը արտահայտվում է անկատար կամ համակատար դերբայով, օժանդակ բայի ներկայի ձևերով և **լինել** բայի մաշված ձևերը հանդիսացող **էլ, նէլ** կամ **նանլ** մասնիկով՝ **խըսըմ (մընալիս) ըմ (ըս, -, ընք, ըք, ըն) էլ (Բստ.), խըսըմ (մընըմ) ըմ (ըս,ա, ընք, ըք, ըն) էլ (Մսր.), խըսէլիս (մընալիս) ըմ (ըս,ան, ըք, ըք, ըն) նէլ (Ռամ.), խըսըմ (մընալիս) ըմ (ըս, -, ըք, ըք, ըն) նանլ** (Փառ.):

Սահմանական եղանակի ապառնի ժամանակը դրսևորվում է ապառնի դերբայով և օժանդակ բայի խոնարհված ձևով՝ **օսոլու (մընալու) վըմ (վըս, վա, վընք, վըք, վըն)** (Բստ.), **օսոլ**

(մընալ) ըմ (ըս, վա, ընք, ըք, ըն), մընալ ում (ուս, վա, ունք, ուք, ան) (Մսր.), ուտիլ ում (իս, ա, իք, իք, ին), մընալ ում (ուս, ա, ուք, ուք, ուն) (Ռամ.), օտիլու վրմ (վրս, վա, վրք, վրք, վրն), մընալու ում (ուս, վա, վրք, վրք, վրն) (Փառ.):

Սահմանական եղանակի անցյալ կատարյալը կազմվում է պարզ և (կամ) բաղադրյալ ձևով՝ խըմամ (մընահամ, հասամ, մըռահամ) (-ար, -ավ, -անք, -աք, -ան) (Բստ., Մսր.), խըմալ ըմ (ըս, ա, ըք, ըք, ըն), մընահամ, հասամ, մըռահամ (աս, ավ, աք, աք, ան) (Ռամ.), խըմալ (մընահալ, հասալ, մըռահալ) ըմ (ըս, ա, ըք, ըք, ըն) || խըմամ (մընահամ, հասամ, մըռահամ) (աս, ավ, աք, աք, ան) (Փառ.): Ի դեպ, Փառակայի խոսվածքում նկատվող պարզ և բաղադրյալ ժամանակաձևերի այս գուգահեռ կիրառությունը նկատել է Գայանե Գևորգյանը<sup>7</sup>: Սարգիս Սարգսյանը պարզ ձևերը դիտել է որպես բաղադրյալ ձևերից լ ձայնորդի անկմամբ առաջացած ամփոփ ձևեր՝ թակալ ըմ > թակամ, թակալ ըս > թակաս, թակալ ըք > թակաք և այլն<sup>8</sup>:

Վաղակատար ժամանակը դրսևորվում է հարակատար դերբայով և օժանդակ բայի խոնարհված ձևով, անցյալ վաղակատարը՝ նաս էլ, նէլ կամ նանլ մասնիկով՝ կիբանծ ըմ (ըս, ա, ընք, ըք, ըն), կիբանծ ըմ (ըս, -, ընք, ըք, ըն) էլ (Բստ.), կիբանծ ըմ (ըս, ն, ընք, ըք, ըն), կիբանծ ըմ (ըս, ն, ընք, ըք, ըն) էր (Մսր.), կիբոծ ում (ուս, ա, ըք, ըք, ըն), կիբոծ ում (ուս, ա, ըք, ըք, ըն) նէլ (Ռամ.), կիբանծ ըմ (ըս, ա, ըք, ըք, ըն), կիբանծ ըմ (ըս, -, ըք, ըք, ըն) նանլ (Փառ.):

<sup>7</sup>Գ. Գևորգյան, Քերականական համանիշության դրսևորումները հայերենի բարբառների բայի անցյալ ժամանակաձևերում.—«Ջահուկյանական ընթերցումներ» հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումներ, Ե., 2013, էջ 166:

<sup>8</sup>Ս. Սարգսեանց, նշվ. աշխ., էջ 116:

Ըղծական եղանակի անցյալ ապառնին արտահայտվում է հին հայերենի անցյալ անկատարի տիպի բայաձևերով և էլ, նէլ կամ ննլ մասնիկով՝ կիրիմ էլ, կիրիս էլ, կիրեր, կիրինք էլ, կիրիք էլ, կիրին էլ, մընամ էլ, մընաս էլ, մընար, մընանք էլ, մընաք էլ, մընան էլ (Բստ., Մսր.), կիրիմ նէլ, կիրիս նէլ, կիրեր նէլ, կիրինք նէլ, կիրիք նէլ, կիրին նէլ, մընօմ նէլ, մընօս նէլ, մընօր ննլ, մընօնք նէլ, մընօք նէլ, մընօն նէլ (Ռամ.), կիրիմ ննլ, կիրիս ննլ, կիրեր ննլ, կիրինք ննլ, կիրիք ննլ, կիրին ննլ, մընօմ ննլ, մընօս ննլ, մընօր ննլ, մընօնք ննլ, մընօք ննլ, մընօն ննլ (Ռամ.):

Պայմանական եղանակը Ռամիսի և Փառակայի խոսվածքներում արտահայտվում է դերբայով և օժանդակ բայի ժամանակային ձևերով, իսկ Բիստի, Մեսրոպավանի և Ողոհիի խոսվածքներում՝ ըղծական եղանակի բայաձևերով և կը եղանակիչով՝ կիրիլ իմ (իս, ա, իք, իք, ին), մընօլ ում (ուս, ա, ուք, ուք, ուն) (Ռամ.), կիրիլ իմ (իս, ա, իք, իք, ին), մընօլ ըմ (ըս, ա, ըք, ըք, ըն) (Փառ.), կիկիրիմ (-իս, -ի, -ինք, -իք, -ին), կըմընամ (աս, -ա, -անք, -աք, -ան) (Բստ., Մսր., Ողհ.): Անցյալ ժամանակը՝ ասիլ իմ (իս, ա, իք, իք, ին) նէլ (Ռամ.), ասիլ ըմ (ըս, -, ըք, ըք, ըն) ննլ (Փառ.), կասիմ էլ, կասիս էլ, կասեր, կասինք էլ, կասիք էլ, կասին էր (Բստ., Մսր. Ողհ.):

Հարկադրական եղանակը արտահայտվում է պիտի եղանակիչի կամ նրա հնչյունական տարբերակի և խոնարհվող բայի ըղծական եղանակի ժամանակաձևերի համադրությամբ՝ պլտի (պլտկ ա) կիրիմ (-իս, -ի, -ինք, -իք, -ին) (Բստ., Մսր., Փառ., Ողհ.), մլտիլնկիրիմ (-իս, -ի, -իք, -իք, -ին) (Ռամ.): Անցյալ ժամանակը՝ պլտի (պլտկ ա) կիրիմ (-իս, -, ինք, -իք, -ին) էր (էլ)

(Բստ., Մսր., Ողհ.), **մետիլանկիրիմ** (-իս, -ի, -իք, -իք, -ին) նէլ (Ռամ.), **պէտի** (**պէտկ ա**) կիրիլ իմ (**իս, -, իք, իք, ին**) ննլ (Փառ.):

Որոշակի տարբերություններով հանդերձ՝ խոսվածքները ընդհանուր հատկանիշներ են դրսևորում նաև ժխտական խոնարհման դեպքում: Օրինակ, սահմանական եղանակի ներկա ժամանակի ժխտական խոնարհումը (անկատար դերբայով և օժանդակ բայի ժխտական ձևերով)՝ **սէրըմ** (**սիրըմ**) **չիմ** (**չիս, չի, չի(ն)ք, չիք, չին**) (Բստ., Մսր., Ողհ., Փառ.), **սէրում չիմ**(**չիս, չի, չիք, չիք, չին**) (Ռամ.), բոլոր խոսվածքներում կազմվում է գրեթե միանման, իսկ հարկադրական եղանակի ժխտական խոնարհման դեպքում չմասնիկը գործածվում է ինչպես անկախ, այնպես էլ բայաձևերին զուգակցված՝ **պէտի կիրիմ** (-իս, -ի, -ինք, -իք, -ին) **վէչ** (**էլ**) (Բստ., Ողհ.), **պէտկ ա կիրիլ չիմ** (-չիս, -չինք, -չիք, -չին) (**էր**) (Մսր.), **մետիլան չըկիրիմ** (-իս, -ի, -իք, -իք, -ին) (**նէլ**) (Ռամ.), **պէտիկիրի(լ) չիմ** (**չիս, չի, չիք, չիք, չին**) **ննլ** (Փառ.):

Ինչպես նշվեց, Գողթնի հյուսիսային գյուղերի խոսվածքների հանդեպ կիրառել ենք նաև Գևորգ Ջահուկյանի մշակած բազմահատկանիշ վիճակագրական դասակարգման սկզբունքը: Աղյուսակի առաջին 50 կետերի՝ հնչյունական հատկանիշների արդյունքներով հիշյալ խոսվածքները միմյանցից տարբերվում են նվազագույնը՝ 3 և առավելագույնը՝ 6,5 միավորով<sup>9</sup>:

Խոսվածքները միմյանց նկատմամբ առավել նվազ տարբերություններ են դրսևորում Գևորգ Ջահուկյանի մշակած բազմահատկանիշ վիճակագրական դասակարգման աղյուսակի երկրորդ 50 կետերի՝ ձևաբանական հատկանիշների համեմատության արդ-

<sup>9</sup>Ա. Վարդանյան, նշվ. աշխ., էջ 208:

յունքում՝ տարբերվելով նվազագույնը՝ 1 և առավելագույնը՝ 4,5 միավորով:

Հատկանիշների նման ցածրտարբերությունների մակարդակը (ընդհանրացված՝ ընդամենը 5,5-9,5 միավոր) վկայում է, որ Հյուսիսային Գողթնի հինգ խոսվածքները կարող են դիտվել որպես միևնույն բարբառի կամ միջբարբառի խոսվածքներ, որը համապատասխանում է Գ. Ջահուկյանի սահմանած 0,5-22 միավորի տարբերություններով միջակայքին)<sup>10</sup>:

Փաստորեն, և՛ հնչյունաբանության, և՛ ձևաբանության առումով դրսևորած նման մերձավորության արդյունքում այս խոսվածքախումբը կարող ենք անվանել Հյուսիսային Գողթնի միջբարբառ:

Vardanyan Artak – The Morphological Features of Subdialects of North Goghtn.– A study of the phonetic characteristics of unexplored subdialects of the northern villages of Bist, Mesropavan, Voghohi, Ramis, Parakaof the Goghtn province of Vaspurakan ashkharof historical Armenia indicates that, from the point of view of morphology, these five subdialects have quite close linguistic relations.

Using also the multi-attribute statistical principle of classification of Armenian dialects developed by Gevorg Jahukyan, it turns out that 50 morphological signs of the above - mentioned subdialects differ from each other by at least 1 and at most 4.5 units. Consequently, according to morphological features, the five subdialects of Northern Goghtn can be considered as subdialects of the same dialect or inter-dialect.

---

<sup>10</sup>Գ. Ջահուկյան, *Հայ բարբառագիտության ներածություն*, Ե., 1972, էջ 127:



Варданян Артак – Морфологические особенности говоров Северного Гохтна.–Изучение морфологических признаков неисследованных говоров северных сел Бист, Месропаван, Вохохи, Рамис, Парака провинции Гохтн ашхара Васпуракан исторической Армении свидетельствует, что с точки зрения морфологии эти пять говоров представляют собой довольно близкие языковые отношения.

Используя также разработанный Геворгом Джаукяном много-признаковый статистический принцип классификации армянских диалектов, выясняется, что 50 морфологических признаков упомянутых говоров отличаются друг от друга по меньшей мере 1-ой и самое большее на 4,5 единицы. Следовательно, по морфологическим признакам пять говоров Северного Гохтна можно рассматривать как говоры того же диалекта или междиалекта.

**Քումունց Միեր** (Հայաստան, Սյունիքի  
հայազիտական հետազոտությունների կենտրոն)

**ՀՆԴԵՎՐՈՂԱԿԱՆ ՇԵՐՏԻ ԲԱՌԵՐԸ ՍՅՈՒՆԻՔ-ԱՐՑԱԽ  
ԲԱՐԲԱՌԱՍՅԻՆ ԲԱՌԱՂԱՇԱՐՈՒՄ  
(«Ուտելիք, ըմպելիք, կերակրի պատրաստում և ամանեղեն»  
բառիմաստային խումբ)**

Սյունիք-Արցախ բարբառային տարածքի բառապաշարի հիմնական շերտը կազմում են նախահայերենից ավանդված բառերը, որոնք, ինչպես նկատել են, «ուշագրավ են ծագումնաբանական, բառիմաստային, իմաստափոխության և բառակազմության տեսանկյունից»<sup>1</sup>:

Հնդեվրոպական շերտի բառերը ընդգրկվում են բառիմաստային բոլոր խմբերում: Բարբառային բառապաշարի բառային զուգաբանությունների համաժամանակյա և տարաժամանակյա քննությունը թույլ է տալիս փաստելու, որ Սյունիք-Արցախ բառապաշարի հիմնաշերտը տարածաշրջանում գոյություն ունի հայերենի ձևավորման շրջանից և լավագույնս լուսաբանում է բնիկ տարածքի հնագույն կենցաղը:

Ազգային կենցաղի անբաժան մասն են կազմում «ուտելիք, ըմպելիք, կերակրի պատրաստում և ամանեղեն» բառիմաստային խմբի բառերը: Կ.Դ. Բաքի՝ այս խմբում նշած 94 միավորից բարբառախմբին հայտնի է 35-ը<sup>2</sup>: Եթե նշվածին ավելացնենք Գ. Ջահուկյանի՝ հայերենի համար կազմած և բարբառախմբում առկա 11

---

<sup>1</sup> **Լ. Հովհաննիսյան**, *Ղարաբաղի բարբառի բառապաշարի հնագույն շերտերը*, Լրաբեր հասարակական գիտությունների, N 1, 2000, էջ 156:

<sup>2</sup> **C. Buck**, *A Dictionary of selected synonyms in the principal Indo-European languages*, Chicago & London, 1988, p. 326.

միավորը՝ բոյժ, հում, աղանձ, տիկ, բուլ, խստոր, բողկ, կորիզ, շիւ, մոշ, դայլ<sup>3</sup>, ապա թեմատիկ խմբում կունենանք հնդեվրոպական ծագմամբ 46 արմատներ: Մակայն բառապաշարի իմաստային այս խումբը այսքանով չի սահմանափակվում. բառիմաստային խումբը բավականին հարստացել է հնդեվրոպական այլ հիմքերով կազմված անվանումներով ու բաղադրություններով, որոնցից քննվում են ստորև:

**Թրթևուտ:** Խմորեղենի (գաթայի) տեսակ է, որ տարածված է եղել Սյունիքում և Արցախում: Անվան տարբերակներն են՝ **թրթեւուտ, թիրթերուկ, թրթերմուկ, թերթերուտ, թերթերուկ, թըռթևուտ, թըրթելուկ**, որ այլ բարբառներում չեն հանդիպում<sup>4</sup>: Հիմնականում թխել են բովի վրա և աչքալուսանքի գնալիս տարել ծննդկանին<sup>5</sup>: Հ. Աճառյանը **թրթերուկ, թերթերուտ** բառի վկայությունը բերում է Երեմիա վարդապետի «Բառգիրք հայոց»-ից և նշում, որ **թերթ** բառը «խմորեղենի բարակ թերթ» իմաստով անցել է նաև թյուրքերենին՝ **tert**<sup>6</sup>:

Կարծում ենք՝ **թրթևուտ** բառի կազմում ընդգրկված է **թեր** արմատի կրկնավոր ձևը՝ **թեր-թեր** և **-ուտ**, որոշ տարբերակներում -

---

<sup>3</sup> **Գ. Ջահուկյան**, *Հայոց լեզվի պատմություն*, Նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987, էջ 210-211:

<sup>4</sup> Լավաշը թոնրում կամ բովի (սաջի) վրա թխելուց հետո (ասում են, որ **թրթևուտ** թխվել է նաև ժանգյալով հաց թխելուց հետո) մնացած խմորից փոքրիկ գնդեր են պատրաստել 4-6 հատ, դրանք բացել բարակ ու նուրբ շերտով: Իրար վրա դնելով՝ արանքները լցրել են խորիզ՝ պատրաստված ծեծած պոպոկով (ճղուպեր) կամ պնդուկով (տրկօղին)՝ համեմված այլորով ու յուղով կամ ձեթով, շաքարավազով կամ քաղցուով (դոշաբ՝ խաղողի կամ թթի): Գորիսի որոշ գյուղերում խորիզը պատրաստել են աղացած պոպոկով, մանրացրած սոխով ու համեմել կարմիր բիբարով: Հիմա այս ուտեստը դուրս է մնացել կենցաղից: Բայց ոմանք հիշում են, որ, օրինակ, Կոռնիձորում այն համարվում էր շատ հարգի խմորեղեն:

<sup>5</sup> Սասցոյ՝ Նորա Սրապյան, Կոռնիձոր-Գորիս, 72 տարեկան:

<sup>6</sup> **Հ. Աճառյան**, *Հայերեն արմատական բառարան*, հատ. II, Ե., 1926, էջ 176 (այսուհետև՝ ՀԱԲ):

**ուկ** ածանցը՝ «թերթերից կազմված, թերթավոր, թերթերի կազմությամբ՝ շերտավոր»: Ի դեպ, վերոնշյալ յոթ տարբերակները տարածաշրջանում տեղորոշված չեն: Փոխազդեցական հնչյունափոխության ետընթաց տարնմանմամբ առաջին է-ն դարձել է ը՝ **թըր-թեր**: Պատճառաբանելի են նաև մյուս բոլոր տարբերակներում առկա հնչյունական փոփոխությունները:

Սյունիք-Արցախ բարբառային տարածքում հին հայերենի **թեր[թ]** բառի դիմաց պահպանվել է բնիկ հնդեվրոպական **\*pter-**, **\*pet-** «տապալել, թռչել, ընկնել» արմատը <sup>7</sup> (առանց **թ** հավելումի)՝ **թեր** «1. թերթ, 2. տերև, 3. ցողունի կեղև, 4. որևէ իրի բարակ թերթը»: **\*Pt-(e)i-** արմատի «թռչել» իմաստը հստակ չէ<sup>8</sup> և տարբեր զարգացումներ է ունեցել հնդեվրոպական լեզուներում: Հ. Աճառյանը **թեր||թիռ** արմատները նույնական է համարում: Նշում է, որ **թեր** արմատը «թռչելու գաղափարի հետ անձուկ կերպով կապուած է. իմաստի ընդարձակմամբ կամ փոխաբերութեամբ այնուհետև բառը ստացաւ «տերև, կողք, կողմ, թերի»<sup>9</sup> նշանակությունները»: Փոխաբերության միջոցով հ.-է. **\*pet-** արմատի իմաստային զարգացումների մասին փաստեր են արձանագրվում նաև հունարենում, հին հնդկերենում և լատիներենում<sup>10</sup>: Փաստորեն՝ այս արմատը իմաստի ընդլայնման շնորհիվ շատ նորանոր հասկացություններ է առաջ բերել հայերենում՝ **թիթեռ, թիթեղ, թերթ, թերի, թեր**<sup>11</sup>, **թիռ**>

<sup>7</sup> Ըստ Գ. Ջահուկյանի՝ այս արմատից է նաև **թեր** «կողմ» համանունը (այս մասին տե՛ս՝ Գ. Ջահուկյան, *Հայերեն ստուգաբանական բառարան*, Ե., 2010, էջ 264):

<sup>8</sup> **M. Vaan**, *Etymological dictionary of Latin and the other Italic languages*, vol. 7, Leiden-Boston, 2008, p. 464.

<sup>9</sup> ՀԱԲ, II, էջ 185:

<sup>10</sup> **U.L. Gómez.**, *La petición verbal en latín. Estudio léxico, semántico y pragmático*, Madrid, 2009, p. 9-10, 115.

<sup>11</sup> «Կողմ» իմաստով **թեր** բառը իմաստային և հնչյունական նմանություն ունի արաբ. **taraf**/طرف/ «կողմ» բառի հետ, որ անցել է նաև թյուրք. **taraf**: Այն գործածա-

**թռչել, թրթռել[ա], թերթել**, որ արձանագրվում են գրաբար տեքստերում<sup>12</sup>:

Գրական ձևերին զուգահեռ Սյունիք-Արցախ բարբառային տարածքում, փաստորեն, **թեր** արմատով այլ հասկացություններ և կազմություններ են պահպանվել, որոնք առանձին հայտնի չեն եղել գրաբարին<sup>13</sup>: Դրանցից հատկանշական է թերևս **թեր` «տերև, շերտ, թերթ»** բազմիմաստ բառը, որ մատենագրական աղբյուրներում չի հանդիպում:

Փորձենք քննել հնդեվրոպական **\*pet-** արմատի զարգացումները Սյունիք-Արցախ բարբառային տարածքում:

**Թեր>թերի** «կիսատ» իմաստով է գործածվում **թերաստ, թերաստել, թըրըթեր** «ծայրը ծայրին հասած, հազիվհազ», **թերը թերին հըսցընել, թերխաշ, թերհավատ, թերհաս** և այլն: Սրանց հիմնական մասը ծանոթ է նաև հայերենի մյուս տարբերակներին:

**Թեր` «տերև` սխտորի, սոխի, ճակնդեղի և այլն, շերտ, թերթ` ծաղկի, կաղամբի, խմորի, թղթի»** հասկացությունից են այլ կազմություններ` **թեր տալ** «շերամի որդին, անասուններին տերներով կերակրել», **թեր քըցե/ի/լ** «1. նոր տերև ծլել, 2. թթենու հասուն տերևները իրարից հեռու շարել, որպեսզի շերամորդը սնվի»<sup>14</sup>, **պը/ե/իսկաթեր, տըկաթեր** և այլն: Կասկած չկա, որ բարբառախմբի և հին հայերենի **թըրթընջուկ** բուսանվան հիմքում նույնպես **թեր** արմատն է: **Թեր** բառը հանդիպում է նաև այլն բարբառներում նշված որոշ իմաստներով. հմմտ.՝ Ախց., Սեբ. Հնշ. և այլն: Կարծում ենք՝

---

կան է նաև Սյունիք-Արցախ բարբառախմբում՝ նշված իմաստով. «էս թարմիսին չիրելվաս»:

<sup>12</sup> Կարծում ենք՝ այս շարքում պետք է դնել նաև **թերթեվունք**, Վն. **թերթերունք**, որ Հ. Աճառյանը նշում է **Արտեւան** բառահոդվածի ներքո (ՀԱԲ, I, էջ 343):

<sup>13</sup> Հմմտ. **Վարդիթեր** անձնանունը, որ Հ. Աճառյանը հանդիպում է 1595թ. մի ձեռագրում (Հ. Աճառյան, *Հայոց անձնանունների բառարան*, հատ. 5, Ե., 1962, էջ 112):

<sup>14</sup> **Ա. Սարգսյան**, *Ղարաբաղի բարբառի բառարան*, Ե., 2013, էջ 195:

այս բառի փոխաբերությունից է միայն Սյունիք-Արցախում հանդիպող **թերթ** «կենդանու կախ ընկած լեզու՝ շան, գայլի և այլն, որ առավելապես օգտագործվում է անարգական երանգով. «հինչ էս թերթըս տոնս քիցսի», այստեղից՝ **թերթել** «լիզել»: Դժվարանում ենք որոշել, թե **թըրթամնել** «հոգնել, հոգնածությունից լեզուն կախ գցել» բառը նո՞ւյնպես **թեր** > **թերթ** բառի փոխաբերումից է ձևավորվել, թե՞ **թառամնել** բառի տարբերակն է: Հակված ենք վերջինին, որ պիտի ձևավորված լինի **թըրթօշնիլ** բառի համարանությամբ, հմմտ.՝ **թըրթըշնիլ/թըռըշնիլ**:

Այսպիսով՝ հնագույն հայերենի **թեր** արմատը պահպանվել է հայերենի բարբառների մի մասում, և նրանով է կազմված **թըրթելուտ||թըրթելուկ** բառը, որ նշանակում է «թերթավոր կամ շերտավոր (խմորեղեն)»:

**Թըրթելուտ** բառի քննությունից մի կարևոր հետևություն նույնպես. պարզ է դառնում, որ այդ հրաշալի ուտեստը Սյունիք-Արցախ տարածաշրջանի կենցաղում եղել դեռևս Ք.ա. III-II հազարամյակներում՝ հացի արարմանը զուգահեռ, որ վկայվում է նյութական ժառանգությամբ:

**Ածիկ**: Հայերենի բացատրական բառարաններում հիմնականում նշվում է «1. հացաբույսերի ծլեցրած, չորացրած, մեծ-մեծ աղացած հատիկներ, որոնք օգտագործվում են գարեջրի՝ սպիրտի արտադրության մեջ, կասկ, մաստ, 2. ծլած ցորենը սանդի մեջ ծեծելով և մզված հեղուկը կրակով եփելով ու գոլորշիացնելով պատրաստվող կերակուր, խյուս, 3. թրջված և ծլած ցորենից պատրաստված»<sup>15</sup> իմաստներով: Սյունիք-Արցախում մենիմաստ բառ է՝ «թրջված և ծլած ցորենը սանդի մեջ ծեծելով ու մզված հեղուկը ալյուրի հետ եփելով ու գոլորշիացնելով՝ պատրաստած

---

<sup>15</sup> Այս մասին տե՛ս՝ *Մամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան*, հատ. 1, Ե., 1969, էջ 20:

թանձր կերակրատեսակ», և գործածվում է **ածեգ** || **ածիգ** || **ածիկ** տարբերակներով<sup>16</sup>: Նրանով առանձնապես այլ կազմություններ չկան՝ **ածեգ տրեռնալ** «1. կաշեյ, 2. մածուցիկ դառնալ, 3. փոխ. համատեյ»: Լեզվաբանական աշխատանքներում հանդիպում են **ածիկ** բառի **ծիլ** արմատից ծագած լինելու տեսակետներ՝ **ած=ծիլ**<sup>17</sup>: Ստուգաբանական այլ տեղեկություններ հայտնի չեն, Լ. Հովհաննիսյանը նշում է բարբառային գործածությամբ բառերի շարքում<sup>18</sup>:

Չնայած իմաստային նմանություն կա **ած-իկ** և **ծիլ** արմատների միջև, այնուամենայնիվ, կարծում ենք, որ այն **\*ad-** արմատի մի տարբերակն է հայերենում՝ **\*dh >\*g<sup>h</sup> (Δ>δ)**, որից ունենք (**h<ɣ**)**աճ-ար** (**\*ad-io-**), այլև դրափոխված՝ **ձա(ւ)-ար**<sup>19</sup>: Թե՛ հնչյունական, թե՛ իմաստային առումով զուգահեռներ կան հմմտ.՝ գոթ. **atisk** (**\*ades-ko-**) «ցանքս, հատիկի ցանքս», հայ. **ածիկ** և **հատիկ** և այլն, որ բոլորը ծագում են **h.-ե. \*ad-es-** կամ **\*ad-os-**<sup>20</sup> «հացահատիկ» արմատից:

**Փիթի**: Կովկասյան ժողովուրդների կենցաղում տարածված ճաշատեսակ է՝ ոչխարի մանրացրած ճարպոտ մսով կամ դմակով, սիսեռով և համեմունքներով կավե կճուճներում եփած: Այն ընդունված է հատկապես Սյունիք-Արցախում: Բաղադրամասի որոշ փոփոխություններով փիթի պատրաստվում է նաև իրանական

<sup>16</sup> Հայերենի բարբառներում տարածված բառ է (Գամիրքում նաև՝ **եծիկ**, այս մասին տե՛ս՝ Հայ ազգագրություն և բանահյուսություն, հատ. I, Ե., 1970, էջ 89):

<sup>17</sup> **Հ. Աճառեան**, *Հայերէն գաւառական բառարան*, Թիֆլիս, 1913, էջ 56 (այսուհետև՝ ՉԳԲ), **Հ.Մեսրոպյան**, *Կրօնականեղեցական բառասպաշարը հայերենի բարբառներում*, Ե., 2016, էջ 186:

<sup>18</sup> **Լ. Հովհաննիսյան**, *Գրաբարի բառասպաշարի իմաստային խմբերի քննություն*, մաս II, Ե., 2012, էջ 16:

<sup>19</sup> Այս մասին տե՛ս՝ **Մ. Քումունց**, *Չաւար/հաճար բառերի հնդեվրոպական աղերսները՝ ըստ բարբառային տվյալների*, Գիտական տեղեկագիր (Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան), N 2, Ե., 2019, էջ 114-122:

<sup>20</sup> **J. Pokorny**, *Indogermanisches etymologisches Wörterbuch*, band II, Bern, 1959 p. 770.

Ատրպատականում ապրող ժողովուրդների կենցաղում<sup>21</sup>: Բառի ծագմանը վերաբերող աշխատանք չի հանդիպում: Արմատը խորթ է թյուրքերենին և, կարծում ենք, առնչություն չունի թյուրք. բրբ. **piti-piti** «ստեպ-ստեպ, կարճ քայլերով, արագ -արագ» միայն կրկնավոր գործածվող ձևի հետ<sup>22</sup>: Ատրպատականի թյուրքերենում **pit** արմատով բառ կա՝ «լուսամուտի, պատուհանի շրջանակ»<sup>23</sup>, որի ծագումը անհայտ է: Իմաստային և հնչյունական աղերսները թույլ են նաև քրդ. **pêt** «կրակ, բոց, տապ, այրվող ածուխ»<sup>24</sup> (հմմտ.՝ Սյունիք-Արցախում նույնիմաստ՝ **պէծ** || **պրէծ**), պրսկ. **pit** /ت/ /#/ «թիթեղյա աման» բառերի և նման այլ կազմությունների հետ, որ ավելորդ են համեմատելու համար: Վերջադիր **ի**-ի առկայությունը տպավորություն է ստեղծում, որ այն քարթվելական լեզուներից անցած մի բառ կարող է լինել: Սակայն մեզ հանդիպած համանուն արմատները նույնպես լիարժեք չեն **փիթի** բառի ծագումը քարթվելականին վերագրելու հարցում, հմմտ.՝ **pirtʷ** «թոք», **petʷ** «կորեկ» և այլն<sup>25</sup>:

Հավանական է, որ **փիթի** բառը Սյունիք-Արցախ բարբառախմբում հին հայերենից անցած **բրդել** բայից է, որ բարբառախմբում բազմաթիվ կազմություններ է առաջ բերել, այդ թվում ուտեստի ընդհանուր և մասնավոր անուններ՝ **փրթթուշ** || **փիրթուշ** || **փրթուշ** || **փիթուշ** || **փութուշ**, **մրծնրփրթթուշ** || **մաճնափրթթուշ** և այլն: Ը հնչյունը բարբառախմբի մի շարք բառերում ձայնեղների շնչեղացման հետևանքով նախորդող դիրքում դուրս է ընկնում, ինչպես և՝ **արջառ** > **աչառ**, **բորբ** > **պեփ**, **երբ** > **հեփ** և այլն: Ընդ

<sup>21</sup> Ադրբեջաներեն բառարաններում նշվում է piti ուտեստ՝ որպես յուրաքանչյուր անձի համար պատրաստվող ճաշ (*Azərbaycan dilinin izahlı lügəti*, Baqi, 2006, s. 607.)

<sup>22</sup> *Derleme sözlüğü*, Türkiye'de halk ağzından, IX, 2 baskı, Ankara, 1993, s. 3464.

<sup>23</sup> *Azərbaycan dialektoloji lügəti*, cild 1, cild 2, Ankara, 2003, s. 456.

<sup>24</sup> *Քրդերեն-հայերեն, հայերեն-քրդերեն գործնական բառարան*, Ե., 2016, էջ 327:

<sup>25</sup> **Г. Климов**, *Этимологический словарь картвельских языков*, Москва, 1964, с. 188, 189.



որում, այս կանոնից դուրս **բ**-ի սղման այլ դեպքեր նույնպես կան՝ **դուրս>տոուս** և այլն: Փիրթի բառի վերջադիր **ի**-ն բարբառախմբի գործուն ածանցներից է, որ բազմաթիվ կազմություններ է առաջ բերել տարբեր նշանակություններով: Սյունիք-Արցախի բարբառախմբում - **ի** ածանցով բազմաթիվ գոյականներ և ածականներ են կազմվում՝ **հօռթ||հօրթ** «1. որովայն, 2. առվի բերան, 3. փոս, ջրափոս» > **հօ[ր]-թ/ի** «մանկական խաղ, որի ժամանակ փոսի մեջ ընկույզներ են նետում ու ջուխտ ու կենտ անում», այլն՝ **կըրթի, թօք/ի, պել/ի, քիշեր/ի, ճըկըռօկ/ի ըզըփփայ/ի** (հարսանիքի ժամանակ հարսի տանը հյուրերին տրվող ուտեստ), **կըրկէն/ի**<sup>26</sup>՝ մատնանշելով մի բանի՝ ինչից պատրաստված, ինչի նախատեսված լինելը, ինչին պատկանելը և այլն:

Հետագայում, հատկապես թյուրքական քոչվոր ցեղերի՝ Կովկասում հայտնվելուց հետո, ուտեստը ընդգրկվել է այլ ժողովուրդների կենցաղ՝ մասնավորապես թյուրքական ցեղերի՝ տարածաշրջանում տարածման միջոցով:

Կարծում ենք՝ բարբառախմբում նախահայերենից ավանդված արմատներով են կազմված նաև **շըփօթ** (Սյունիք-Արցախում պատրաստվում է դոշաբով և այլուրով), **կըրկէնի, կաթնավ, հելաթ, թուռնաճամշ, պոուտ, մըսըրթթօ** և այլն: Անհայտ է մնում **կօնչուլ || կունչուլ** (հացով, ձվով, յուղով և սոխով եփած կերակուր), **քիշի** բառերի ծագումը:

<sup>26</sup> Հ. Աճառյանը նշում է կրակ բառից առաջացած լինելը՝ **կրակէնի > կըրկէնի**: Չենք կարող ասել, թե այստեղ -ի-ն -ենի ածանցի հետ է եկել, թե՛ առանձին (ՀԳԲ, էջ 623):

Kumunts Mher - Indo european words in dialectical vocabulary of Syunik-Artsakh - The words with the Indo European origin are the base in almost all lexical groups of Syunik-Artsakh dialectical vocabulary. In a lexical group of “food, beverage, cooking and dishes” there are 46 roots of Indo European origin. This lexical group has become rich with other compounds, such as “**tyrtevut**” (**թըրթեվուտ**), which consists of the double type of the root “**ter**” (**թէր**) and suffix “**-ut**” (**-ուտ**). The base of the word “**atsik**” (**ածիկ**) is the Indo European root \***ad-**. The origin of the word “**piti**” (**փիթի**) is the verb “**brdel** (push) (**բրդել**)” with the change of **b** > **p** (**բ** > **փ**) and **d** > **t** (**դ** > **թ**), with the drop of the sound “**r**” (**ր**) and with the suffix **-i** (**-ի**).

Кумунц Мгер - Слова индоевропейского слоя в лексике диалекта Сюник-Арцах - Слова индоевропейского происхождения составляют основу почти всех смысловых групп лексики диалекта Сюник-Арцах. В смысловой группе «**пища (ուտելիք), питье (ըմպելիք), приготовление пищи и посуда (կերակրի պատրաստում և ամանեղեն)**» есть 46 корней индоевропейского происхождения. Смысловая группа в последствии обогатилась другими составами, такими как **тыртэвут (թըրթեվուտ)**, который состоит из составной формы корня **тэр (թէր)** и суффикса **-ут (-ուտ)**. В основе слова **ацик (ածիկ)**– индоевропейский корень \***ad-**. Слово **пити (փիթի)** происходит из корня **брдел (բրդել)** с изменениями **б (բ) > п (փ)** и **д (դ) > т (թ)**, утратой звука **р (ր)** и суффиксом **-и (-ի)**.

ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆԻ ԽՕՍՔԻ ՄԱՍԵՐՈՒ  
ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԵՐՈՒ ՔՆՆՈՒԹԻՒՆ  
(ԱՆՈՐՈՇ ԱԾԱԿԱՆ ԹԷ՞ ԱՆՈՐՈՇ ԴԵՐԱՆՈՒՆ)

Գրական արեւմտահայերէնի յետայտընեանական շրջանի քերականական կարգերու (ձեւաբանական, շարահիւսական) համեմատական, յատկապէս 1950-1960թթ.-էն ետք ինկած ժամանակահատուածի Սփիւռքի քերականութեան դասագիրքերու ուսումնասիրութիւնը, դուրս մնացած է արեւելահայերէնի եւ արեւմտահայերէնի մերձեցման եւ քերականագիտական հիմնահարցերով զբաղող լեզուաբան-բանասէր հետազօտողներու տեսադաշտէն: Ան կարելոր կը համարենք այն առումով, որ ոչ միայն Սփիւռքի բազմաթիւ քերականութեան դասագիրքերէն կը բացակայի այս կամ այն քերականական հարցի շուրջ հեղինակներու միասնական մեկնաբանութիւն, այլ նաեւ՝ ումանց մօտ կը նկատենք տարբեր մեկնաբանութիւններ, հիմնաւորուած կամ ո՛չ:

Մենք բազմիցս մեր աշխատութիւններուն մէջ<sup>1</sup> անդրադարձած ենք Սփիւռքի արեւմտահայերէնի քերականութեան դասագիրքերու մէջ տեղ գտած հիմնախնդիրներուն, ուր նշած ենք, որ դասաւանդող քերականութեան դասագիրքերը ունին բովանդակային տարբերութիւններ, անոնք բնականաբար, կը վերաբերին ոչ միայն

---

<sup>1</sup> Տե՛ս Ա. Տիշենկճեան (Ֆչնկջեան) *Արեւմտահայերէնի քերականութեան պատմութիւն (Յետայտընեանական շրջան)*, Ե., 2018: [http://www.language.sci.am/sites/default/files/ani\\_fish.pdf](http://www.language.sci.am/sites/default/files/ani_fish.pdf)- Ածական եւ դերանուն խօսքի մասերու համեմատական քննութիւն, (ըստ Ջարեհ Մելքոնեանի եւ Մկրտիչ Մկրտիչեանի դասագիրքերու):

դասագիրքերու կառուցուածքին, լեզուական երեւոյթները ներկայացնելու իրենց եղանակին եւ եզրաբանութեան, այլ նաեւ՝ ուղղագրական, ձեւաբանական ու շարահիւսական այլազանութեան: Եւ առանց այդ հիմնախնդիրներու անդրադառնալու, ուսումնասիրելու եւ եզրայանգում տալու հնարաւոր չէ ունենալ արեւմտահայերէնի մէկ եւ ամբողջական քերականագիտական տեսութիւն:

Արդ, մեր յօդուածը, որու խորագիրն է **«Անորոշ ածական թէ՛ անորոշ դերանուն»**, լուսարձակի տակ կ'առնէ սփիւռքահայ մտաւորականներու՝ Զարեհ Մելքոնեանի<sup>2</sup>, Սկրտիչ Սկրտիչեանի<sup>3</sup>, Կարօ Առաքելեանի<sup>4</sup> եւ Յակոբ Չոլաքեանի<sup>5</sup> կողմէ Սփիւռքի մէջ պատրաստուած եւ դասաւանդուած դպրոցական դասագիրքերու Անորոշ ածականի եւ անորոշ դերանունի առնչուող հեղինակներու մեկնաբանութիւնները: Հեղինակներու դասակարգումը կ'առնչուի պատմականօրէն անոնց ապրած եւ ստեղծագործած ժամանակահատուածին: Մեր որոշ դիտարկումներուն եւ մանաւանդ, եզրայանգումներուն մէջ հաշուի առած ենք նշուած հեղինակներէն մէկ մասի՝ մայր Հայաստանի մէջ կրթութիւն ստանալու հանգամանքը:

### ԱՆՈՐՈՇ ԱԾԱԿԱՆ ԹԷ՞ ԱՆՈՐՈՇ ԴԵՐԱՆՈՒՆ

Հիմք ընդունելով հայր Արսէն Այտընեանի «Քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի»<sup>6</sup> գիրքի Յօդուած Գ. «Գո-

---

<sup>2</sup> **Զարեհ Մելքոնեան**, *Գործնական քերականութիւն արդի հայերէն լեզուի*, Գ. տպագրութիւն, Պէրոպօ, 1973:

<sup>3</sup> **Սկրտիչ Սկրտիչեան**, *Քերականութեան դասեր*, Բ. գիրք, (Նախակրթարանի Ե.-Ձ. կարգերուն համար), Հալէպ, 1962:

<sup>4</sup> **Կարօ Առաքելեան**, *Արդի հայերէնի քերականութիւն*, Բ. գիրք, Պէրոպօ, 1998: **Կարօ Առաքելեան**, *Դիւրին հայերէն*, Բ. գիրք, Պէրոպօ, 1998:

<sup>5</sup> **Յակոբ Չոլաքեան**, *Անդաստան*, Գ., *Հայերէնի եւ հայ գրականութեան համադրեալ ձեռնակ*, Հալէպ, 2010:

<sup>6</sup> **Հայր Վ. Արսէն Այտընեան**, *Քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի*, Բ. տպագրութիւն, Վիեննա, 1883:

յական եւ ածական» բաժինը, ուր Այտընեան կը բացատրէ ածական անուան ինչ ըլլալը, կը խօսի ածականի (խօսքը որակական ածականի մասին է՝ Ա.Ֆ.) աստիճաններու մասին եւ միաժամանակ, բաժինի մէջ, բառերու երեք խումբ կը նշէ՝ **յատուկ անուանք, թուական անուանք եւ մասնական անուանք:**

Մեր թեմայի հետ առնչուողը՝ **Մասնական կամ միջակ անուանք** բաժինն է, ուր հեղինակը առաւել կը պարզաբանէ, թէ «Մասնական անուններէն՝ կայ որ ածական են, կայ որ գոյական. կամ միեւնոյն բառը երբեմն գոյական է եւ երբեմն ածական»<sup>7</sup>: Այտընեան կը թուէ բառեր, որոնցմէ շատերը ունին ե՛ւ գոյականական, ե՛ւ ածականական կիրարկութիւն, առանց նշելու անոնց դերանուն խօսքի մաս ըլլալու հանգամանքը: Ուստի, ուսումնասիրելով զանոնք, մենք կը նկատենք, որ Այտընեանի այս մասը համահունչ է Արդի Արեւմտահայերէնի քերականութեան<sup>8</sup> դերանուն խօսքի մասին մէջ առանձնացուած՝ փոխադարձ, ցուցական, հարցական, յարաբերական, անորոշ, որոշեալ, ժխտական դերանուններու մէկ մասին<sup>9</sup>: Այտընեան կու տայ անոնց կիրառական առանձնայատկութիւններ-

<sup>7</sup> **Հայր Վ. Արսէն Այտընեան**, նշվ. աշխ., էջ 26:

<sup>8</sup> Խօսքը հեղինակներ **Վ.Առաքելեանի** (*Արդի հայերէնի քերականութիւն*, Գ. գիրք; *Դիրին հայերէն*, թիւ 3, Բ. հրատ.) եւ **Յ. Չոլաքեանի** (*Անդաստան, Բ., Հայերէնի եւ հայ գրականութեան համադրեալ ձեռնակ*, *Անդաստան, Գ., Հայերէնի եւ հայ գրականութեան համադրեալ ձեռնակ*) դասագիրքերու մէջ տեղ գտած մեկնաբանութիւններու մասին է:

<sup>9</sup> Փոխադարձ (**իրար, մէկգմէկ**), ցուցական (**նոյն, միեւնոյն**), հարցական (**ո՞վ որո՞ւ**), յարաբերական (**ո՞րը, որո՞նք, որո՞ւն, որոնցմո՞վ**), Անորոշ (**քանի, քանի մը, մէկ քանի**), որոշեալ (**իւրաքանչիւր, ամէն մէկ, իւրաքանչիւր ոք**), ժխտական (**ոչ ոք, ոչինչ**), դերանունները: Տե՛ս **Վ. Առաքելեան**, *Արդի հայերէնի քերականութիւն*, Գ. գիրք, նշվ. աշխ., էջ 58, 61, 69, 71, 81, 84, 91; **Լոյնի**, *Դիրին հայերէն*, թիւ 3, Բ. հրատ., նշվ. աշխ., էջ 14, 15, 18, 21, 26, 31, 34: **Յ. Չոլաքեան**, *Անդաստան, Բ.*, նշվ. աշխ., էջ 124; **Յ. Չոլաքեան**, *Անդաստան, Գ.*, նշվ. աշխ., էջ 73, 85, 83, 84, 112, 113:

րը, գոյականական եւ ածականական կիրարկութիւնները, հոլովումը<sup>10</sup>:

Մեր հետազոտման ընթացքին նոյնանման մեկնաբանութիւններ չենք նկատած, 1950-1960-ական թթ., Ջ. Մելքոնեանի, Մ. Մկրրտիչեանի դասագիրքերուն մէջ: Հեղինակներու՝ ածականներ եւ դերանուններ հատուածներուն մէջ որոշակի տարբերութիւններ առկայ են՝ տեսակի, թիւի եւ անոնց շարահիւսական կառուցուածքի վերաբերեալ. միաժամանակ առանձնակի նշած ենք, թէ որո՛նք են անորոշ ածականներն ու անորոշ դերանունները՝ հեղինակներու համաձայն<sup>11</sup>: Տե՛ս աղիւսակը (1):

---

<sup>10</sup> **Հայր Վ. Արսէն Այտընեան**, նշվ. աշխ., էջ 27-28-29:

<sup>11</sup> Տե՛ս, [http://www.language.sci.am/sites/default/files/ani\\_fish.pdf](http://www.language.sci.am/sites/default/files/ani_fish.pdf)- *Ածական եւ դերանուն խօսքի մասերու համեմատական քննութիւն*, (ըստ Ջ. Մելքոնեանի եւ Մ. Մկրտիչեանի դասագիրքերու), էջ 3-4:

<i><b>Չարեհ Մեղրոնեան</b></i>		<i><b>Մկրտիչ Մկրտիչեան</b></i>	
<i><b>Անորոշ ածական</b></i>	<i><b>Անորոշ դերանուն</b></i>	<i><b>Անորոշ ածական</b></i>	<i><b>Անորոշ դերանուն</b></i>
Միւս, ամբողջ, բոլոր, նոյն, խրաքանչիւր, որքան, ամէն, մը (մըն), միեւնոյն, ո՛ր, որեւէէ, ինչ, այսպիսի, այդպիսի, ինչպիսի, քանի ուրիշ, տարբեր, քանի մը, մէկ քանի, ոչ մէկ, շատ մը, այսինչ, այնինչ, այդինչ, ասանկ, ատանկ, ո՛րչափ, այսչափ, այնչափ, այսքան, որպիսի, եւ այլն:	Ո՛րոնք, որո՛նք որ, ո՛վ, ո՛վ որ, մէկը, ամէն ոք, ինչ ո՛ր, որը որ, ամէն ինչ, քիչ մը, մաս մը, ոմանք, «մարդ»,	Այլ, ամբողջ, ամէն, այսինչ, այնինչ, այսչափ, այնքան, բոլոր, բազմաթիւ, խրաքանչիւր, կարգ մը, մէկ քանի, միեւնոյն, նոյն, շատ մը, ո՛չ մէկ, ո՛ր, որեւէ, ուրիշ, որոշ, քանի՞ քիչ մը եւ այլն:	Ամբողջ, ամէնը, ամէնքը, ամէն ինչ, ամէն ոք, այսինչը, այսչափը, այդչափը, այսքանը, այդքանը, բան մը, բոլորը, ինչքանը, ինչ բան, ի՞նչ, խրաքանչիւրը, խրաքանչիւր ոք, մարդ, մարդ մը, մէկը, մեկալը, մէկ մասը, մաս մը, ո՛չ ոք, ո՛րը, ո՛ր մէկը, ո՛րքանը, ուրիշը, ուրիշ մը, ո՛վ, ով որ, քանին, քիչը:

Ուսումնասիրելով աղիւսակներու մէջ տեղ գտած անորոշ ա-  
ծական եւ անորոշ դերանուն անուններով նշուած բառերը, կը որ  
անորոշ ածականներու խումբին մաս կազմած են այնպիսի բառեր,

որոնք մատնացոյց կ'ընեն չափ ու քանակ, ձեռ. աւելին, այդ բառերու մեծ մասը Արդի արեւմտահայերէնի քերականութեան այսօրուան (1980-էն ետք) դասագիրքերուն մէջ (Կ. Առաքելեան եւ Յ. Չոլաքեան՝ Ա.Ֆ.) համակարգուած ու նշուած են իբրեւ **անորոշ, որոշեալ, ժխտական, ցուցական, հարցական, յարաբերական** դերանուններ՝ համապատասխան հոլովներով եւ բացատրութիւններով: Թէեւ այնտեղ կան համընդհանուր եզրեր, սակայն պակաս չեն ձեւաբանական այն տարբերութիւնները, որոնք կ'առնչուին անորոշ ածականին եւ անորոշ դերանունին: Ուստի այստեղ հարց կը ծագի, թէ ինչպէս պէտք էր հիմնաւորել այս փոփոխութիւնը:

Պէտք է խոստովանիլ, որ Այտնեանէն ետք լոյս տեսած եւ յատկապէս Սփիւռքի արեւմտահայերէնի քերականութեան դասագիրքերու մեծ մասի մօտ<sup>12</sup> մենք հանդիպած ենք անորոշ ածական եւ անորոշ դերանուն եզրոյթին, կամ ըստ Լեւոն Շանթի «Իրողութեան ածականներու երրորդ խումբ» արտայայտութեան, որոնք «բոլոր ցուցական դերանուններն են» իրենց ենթաբաժանումներով հաւաքական, անջատող, յարաբերական եւ անորոշ<sup>13</sup>:

1960-ական թթ. Հայաստանէն Սփիւռք կ'առաքուի Սփիւռքահայութեան հետ մշակութային կապի կոմիտէի յանձնարարութեամբ եւ հայրենի լեզուաբան-բանասէրներու կողմէ պատրաստուած «Հայերէն լեզուի դասագիրք»ը<sup>14</sup>: Այս դասագիրքի առաջին հրատարակութիւնը 1966թ., իսկ երկրորդը՝ 1968թ.: Դասագիրքերը

---

<sup>12</sup> Տե՛ս Ա., **Տիշենկճեան (Ֆշկջեան)**, նշվ. աշխ., էջ 3-9:

<sup>13</sup> Հաւաքական (բոլոր, ամէն), անջատող (քանի, քանի մը, մէկ քանի, քանի-քանի, ամէն մէկ, ոչ մէկ, միւս մէկալ, իւրաքանչիւր), յարաբերական (ինչ եւ որ) եւ անորոշ (այսինչ, այնինչ, ինչինչ, ինչոր, որեւէ): Տե՛ս **Շանթ Լեւոն**, *Քերականութիւն արեւմտեան հայերէնի*, չորրորդ պրակ, Պէրոյթ, 1950, էջ 20-21:

<sup>14</sup> **Ս. Աբրահամեան, Բ. Վերդեան, Վ. Քոսեան**, *Հայերէն լեզուի դասագիրք*, Ե., 1966: **Համահեղինակներ**, *Հայերէն լեզուի դասագիրք*, երկրորդ հրատ., Ե., 1968:



առաքուած էին Սփիւռքի դպրոցներուն, սակայն ոչ բոլոր դպրոցները կիրառած են այդ դասագիրքով ուսուցումը:

«Հայերէն լեզուի դասագիրք»-ի մէջ Ածականի տեսակներ կը նշուէին միայն որակականն ու յարաբերականը<sup>15</sup>: Հետաքրքիր էր Դերանուն խօսքի մասի բնութագրումը, տեսակներու համակարգումը: Անոնց համաձայն դերանուններու տեսակներն են՝ անձնական, ցուցական, փոխադարձ, հարցական-յարաբերական, որոշեալ, անորոշ: Եւ որովհետեւ մեր յօդուածը անմիջապէս կ'առնչուի Անորոշ դերանունին, ուստի մեր ուշադրութիւնը գրաւեց «Անորոշ կամ մասնական դերանուն» արտայայտութեան, «որովհետեւ առարկայի կամ յատկանիշի մասնական իմաստ կ'արտայայտէ անորոշ կերպով»<sup>16</sup>: Անորոշ դերանուն կը համարուէր մէկը, ուրիշ(ը), այսինչ(ը), այնինչ(ը), ոմն, ոմանք, քանի մը (մէկ քանի), որեւէ, որեւիցէ, միւս, մէկ քանին, մի ոմն: Դասագիրքին մէջ նախորդ հեղինակներու կողմէ անորոշ ածական եւ անորոշ դերանուն համարուած բառերէն՝ ամէնքը, ամէն(ը), բոլոր(ը), իւրաքանչիւր(ը), ամէն մէկ(ը), իւրաքանչիւր ոք, ամէն ոք, ամէն ինչ(ը), ամբողջ(ը), հեղինակները կ'անուանէին «Որոշեալ կամ հանրական» դերանուններ, որովհետեւ «ասոնք իմաստով հակադիր են անորոշ կամ մասնական դերանուններուն»: «...որոշեալ կամ հանրական դերանունները կը ցուցնեն առարկաներու ամբողջութիւնը, բոլոր առարկաները. անոնք ունին հանրական իմաստ եւ այդչափով միայն որոշեալ են»<sup>17</sup>: Որոշեալ կամ հանրական դերանուններէն կ'առանձնացնեն **ոչ ոք, ոչինչ, ոչ մէկը** դերանունները, **«որոնք ամէն ոք, ամէն ինչ, ամէն մէկը** դերանուններուն ժխտականներն են» կը գրեն

---

<sup>15</sup> Տե՛ս, Ս. Աբրահամեան, Բ. Վերդեան, Վ. Քոսեան նշվ. աշխ., էջ 99, 100, 101:

<sup>16</sup> Տե՛ս նոյն տեղը, էջ 129:

<sup>17</sup> Տե՛ս նոյն տեղը, էջ 131-132:

հեղինակները եւ կու տան համապատասխան օրինակներ<sup>18</sup>: Իրողութիւն, որ մենք չենք նկատեր նախորդներու մօտ (տե՛ս աղիւսակ 1): Այլ խօսքով, վերոնշեալ հեղինակներու անորոշ ածականներն ու անորոշ դերանունները ամբողջական չեն յիշուած անորոշ, որոշեալ-ժխտական դերանուններու ցուցակին մէջ: Ուստի պարտաւորուեցանք ուսումնասիրել այս դասագիրքի Դերանուններու բաժինը ամբողջութեամբ եւ հասանք հետեւեալ եզրակացութեան, որ այդ դերանուն կամ ածական համարուած բառերը համակարգուած են ստորեւ ներկայացուած դերանուններու բաժինին մէջ (տե՛ս աղիւսակ 2):

---

<sup>18</sup> Նոյն տեղը, էջ 132-133:

ցուցական <sup>19</sup>	հարցական- յարաբերակա ն <sup>20</sup> դերանուններ՝	անորոշ	որոշեալ- ժխտական
այս, այդ, այն սա, ատ, ան, սա, դա, նա, ասի, ասիկա, ատի, ատիկա, անի, անիկա, այսպիսի, այդպիսի, այնպիսի, այսքան, այնքան, այդքան, այստեղ, այդտեղ, այնտեղ, այսպէս, այդպէս, այնպէս, նոյնպէս, հոս, հոդ, հոն, սոյն, դոյն (սակաւ գործածա- կան), նոյն եւ այլն	ո՞ր-որ ո՞վ-ով ո՞ր-ուր, ի՞նչ-ինչ. ո՞րչափ- որչափ ի՞նչքան- ինչքան, քանի՞-քանի ինչպիսի՞- ինչպիսի, ի՞նչպէս- ինչպէս	մէկը, ուրիշ(ը), այսինչ(ը), այնինչ(ը), ոմն, ոմանք, քանի մը (մէկ քանի), որեւէ, որեւիցէ, միւս, մէկ քանին, մի ոմն	<b>որոշեալ-</b> Ամէնքը, ամէն(ը), ամէն ոք, ամէն ինչ(ը), ամէն մէկ(ը), բոլոր(ը), իւրաքանչիւր( ը), իւրաքանչիւր ոք, ամբողջ(ը). <b>ժխտական-</b> ոչ ոք, ոչինչ, ոչ մէկը

Թէև այս դասագիրքին մէջ կայ որոշակի յստակեցում, համա-  
կարգում, բայց եւ այնպէս գիրքը լայն տարածուն չունեցաւ բոլոր  
կրթարաններէն ներս: Սակաւաթիւ դպրոցներ որոշ ժամանակա-  
շրջան մը օգտագործեցին այդ գիրքերը եւ յետոյ մէկ կողմ դրին»<sup>21</sup>:

<sup>19</sup> Տե՛ս նոյն տեղը, էջ 124:

<sup>20</sup> Նոյն դերանունները կը գործածուին բարդ նախադասութեան մէջ, կը դրուին իրենցմէ առաջ գործածուած անուան, դերանուան փոխարէն եւ այդպէսով յաջորդ նախադասութիւնը կը կապեն, կը յարաբերեն նախորդին հետ: Տե՛ս նոյն տեղը, էջ 127-128:

<sup>21</sup> <http://archive.aztagdaily.com/archives/30284>:

Պատճառը մեկ միասնական կրթական դեկավար մարմին չունենալն էր:

1970-1980-ական թթ. անկլինադարձային կարելի է համարել այն պատճառով, որ այդ թուականներուն Հայաստանէն վերադարձան խումբ մը երիտասարդ-երիտասարդուհիներ, որոնք յաջողած էին իրենց ուսումնառութիւնը շարունակել Հայրենիքի համալսարաններէն ներս: Անոնց մէջ շատ չէին բանասիրական համալսարանէն շրջանաւարտները: Բայց եւ այնպէս անոնք իրենց ականդր ունեցան համայնքներէն ներս, նախ դասաւանդելով, ապա՝ արդի արեւմտահայերէնի քերականութիւն անուան տակ կրթական հաստատութիւններու ուսուցիչներուն ներկայացնել նոր տարագրով, նոր ըմբռնումով իրենց մեկնաբանութիւններն ու իրարմէ անկախ ձեռնամուխ եղան Արդի Արեւմտահայերէնի քերականութեան դասագիրքերու պատրաստութեան: «Բանասէրները շարունակեցին դասաւանդել այն, ինչ որ սորված էին մայր հայրենիքի մէջ՝ հաւատալով, որ քերականութեան մէջ միօրինակ եզրերու օգտագործումը, քերականական գիտելիքներու միատեսակ դասաւանդութիւնը կը նպաստեն լեզուի ուսուցման եւ ընդհանրացման»<sup>22</sup>: Քիրքճեանի հաւաստմամբ բանասէրները «նպատակ կը հետապնդէին՝ որդեգրել արեւելահայերէնի համակարգը եւ անով դասաւանդել արեւմտահայերէնը, սակայն՝ առանց խաթարելու կամ աղճատելու վերջինս»<sup>23</sup>: Եւ ինչո՞ւ այս ամէնը: Որովհետեւ արեւելահայերէնը անցած է զարգացման երկար ուղի մը եւ ունի կանոնարկուած քերականութիւն», կը գրէ Յովիկ Պերթիզլեան<sup>24</sup>:

---

<sup>22</sup> <http://archive.aztagdaily.com/archives/30284>:

<sup>23</sup> Նոյն տեղը:

<sup>24</sup> <http://archive.aztagdaily.com/archives/30284>:

Ղեռ ութսունական թուականներուն այս հարցին անդրադարձած էր Յ. Քիրքճեան «Հայրենիք» օրաթերթի համարներէն մէկուն մէջ: Քիրքճեան արեւմտահայերէնի եւ արեւելահայերէնի քերականութեան համեմատութեամբ կ'ընդգծէր արեւելահայ լեզուաբանութեան վերջին եօթանասուն տարիներու նուաճումները «Աճառեաններով ու Արեղեաններով սկսող, ու Ջահուկեաններու եւ այլ փայլուն անուններու յանգող...»<sup>25</sup>: Յօդուածագիրը հաւատացած էր, որ այդ պիտի նպաստէր «Հայ լեզուի միացեալ քերականութեան մը ստեղծումին միշտ յարգելով արեւմտահայերէնի ձեւա-բանութենէն ու շարահիւսութենէն բխող բոլոր մասնայատկութիւնները»<sup>26</sup>:

Եւ այսպէս Քիրքճեանի եւ Պէրթիզեանի խօսքերուն ապացոյցը մենք կը գտնենք Կ.Առաքելեանի եւ Յ. Չոլաքեանի կողմէ պատրաստուած Արդի արեւմտահայերէնի դպրոցական դասագիրքերու մէջ, որոնք անմիջական կ'առնչուին մեր յօդուածի թեմային:

Կ.Առաքելեանի եւ Յ. Չոլաքեանի<sup>27</sup> համաձայն «Ածական անուն կամ ածական կը կոչուին առարկայի (գոյականի) յատկանիշը (յատկութիւնը) կամ վերաբերութիւնը ցոյց տուող բառերը»<sup>28</sup>: Հեղի-

---

<sup>25</sup> «Հայրենիք» օրաթերթ, 82-րդ տարի, թիւ 20448, 6 Նոյեմբեր 1980, Պոսթըն, էջ 1:

<sup>26</sup> Քիրքճեան կը նշէ, որ «շատ հետաքրքրական հանգիտութիւններ՝ նմանութիւններ կան Աճառեանէն Աղայեան, Ղարիբեան (յետիստունական Ղարիբեանի մասին խօսելով...), Գ. Մեւակ անցնող հոսանքին, ու միւս կողմէ արեւմտահայերէնի անդրանիկ քերականութեան՝ Այտընեանի կոթողին միջեւ: Ան արեւմտահայերէնի համակարգային քերականութիւն մը ձեւաւորելու մասին խօսելով, կ'առաջարկէր. «...եթէ պիտի ձեւաւորուի ան օր մը, պարտի առաջին հերթին յայնօրէն նկատի ունենալ արեւելահայերէնի լեզուաբանութեան հարուստ տուեալները. աւելին՝ ան պարտի առաւելագոյն չափով հետեւիլ անոր»: Տե՛ս «Հայրենիք» օրաթերթ, էջ 1:

<sup>27</sup> Չոլաքեան դպրոցական դասագիրքին մէջ ածական կը կոչէ գոյականին յատկանիշ ցոյց տուող բառերը: Տե՛ս **Յ. Չոլաքեան, Անդաստան, Բ.**, էջ 132:

<sup>28</sup> Տե՛ս **Կ.Առաքելեան**, նշվ. աշխ., էջ 32: **Կ. Առաքելեան, Աղանի Տըստըզճեան, Դիւրին հայերէն**, թիւ 2, Բ. հրատ. Պէրոյօ, 2008, էջ 22: **Յ. Չոլաքեան, Արեւմտահայերէնի քերականութիւն (կանոնակարգ եւ խնդիրներ)**, Ա. Գիրք, Ե., 2017, էջ 158:

նակները, ի տարբերությւնն նախորդ քերականներուն, ածական խօսքի մասի երկու տեսակ կը նշեն՝ **Որակական եւ Յարաբերական**: Վերոնշեալ հեղինակները չեն օգտագործեր ցուցական, ստացական, թուական եւ անորոշ ածականներ եզրոյթները: Անոնց դասագիրքերուն մէջ վերակոչուածներէն Թուականը արդէն կը նշուի իբրեւ Լեզուի տասը խօսքի մասերէն մէկը, իսկ ստացական, ցուցական եւ անորոշ ածականները կը տեսնենք դասուած՝ իբրեւ տեսակ դերանուն խօսքի մասի:

Հեղինակներ՝ Առաքելեան եւ Չոլաքեան համակարծիք են, որ ժխտական դերանուններուն հետ ստորոգիչը կը գործածուի հաստատական ձեւով:

**Եզրակացութիւն.** Անհրաժեշտ պահանջ է, այսօր, իմանալ այս բոլորի մասին եւ ըստ այնմ համատեղել, կանոնակարգել եւ գիտական հարթակի վրայ ներկայացնել արեւմտահայերէնի քերականագիտական առանձնայատկութիւնները՝ շեշտը դնելով առաւելապէս անոր շարահիւսական կառուցուածքի եւ արեւմտահայերէնի լեզուի մշակոյթի զարգացման հիմունքներուն վրայ, քանի որ հրապարակէն կը բացակային նոյնանման ձեռնարկներ, որոնց նպատակը պէտք է ըլլայ լեզուի առաջընթացը եւ ոչ թէ յետընթացը: Նաեւ պահանջ ու հրամայական է այսօր ունենալ Արեւմտահայերէնի այնպիսի լիարժէք լիակատար քերականութիւն, որ ընդունելի եւ հասկնալի ըլլայ Սփիւռքի անխտիր բոլոր ուսումնական հաստատութիւններուն, քանի որ արեւմտահայերէնը կիրառուող, գործածական եւ զարգացող լեզու է այլեւս:

Fishenkjian(Fchenkjyan) Ani- The parts of speech- the western armenian grammatical orders examination (indefinite adjective or indefinite pronoun).- The article discusses the different grammatical manifestations of authors related to indefinite adjectives and indefinite pronouns in school textbooks prepared by Diaspora Armenian intellectuals Zareh Melkonian, Mgrtich Mgrtichian, Caro Arakelaian and Hagop Cholakian.

Фишенкджян Ани- Изучение западно-армянских грамматических категорий частей речи (неопределенное прилагательное или неопределенное местоимение?).-В статье “ Неопределенное прилагательное или неопределенное местоимение”рассматриваются различные грамматические проявления неопределенных прилагательных и неопределенных местоимений, отмеченные авторами Заре Мелконян, Мкртыч Мкртчян, Каро Аракелян и Акоб Чолакян в своих учебных пособиях, публикуемых в армянской диаспоре и предназначенных для разных возрастных групп.

## ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Գրիգորյան Սուսաննա (Հայաստան,  
ԳԱԱ լեզվի ինստիտուտ)

### ՀԱԿԱՆԻՇ ԲԱՌԵՐԻ ՈՃԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒ «ԳԻՐՔ ՔԱՐՈԶՈՒԹԵԱՆ «ԱՄԱՌԱՆ ՀԱՏՈՐ»»-ՈՒՄ

Գրիգոր Տաթևացու «Գիրք քարոզութեան «Ձմեռան հատոր»»-ում ընդգրկված քարոզները ներառում էին Ծննդյան տոներից մինչև Հոգեգալուստ ընկած ժամանակաշրջանը, իսկ «Գիրք քարոզութեան «Ամառան հատոր»»-ը ներառում է այսպես ասած ամառային ժամանակաշրջանի տաղավար տոների և հարակից նյութերի քարոզների նյութը:

Ըստ էության, հականիշ բառերի քննարկման առումով «Ամառան հատոր»-ն իբրև նախորդ հատորի շարունակություն, թվում է, թե առանձնապես տարբերություն չպետք է ներկայացնեք, սակայն այս հատորում զետեղված է Տաթևացու **«Նորին Գրիգորի Ներբողեան ողբերգաբար սգեալ ի թաղումն տիեզերալոյս վարդապետին իւրոյ Յօհաննու Որոտնեցոյ»** փոքրիկ երկը, որը, ի թիվս ոճական հնարքների բազմազանության, հականիշների բացառիկ գործածությամբ է աչքի ընկնում:

Սա Հովհան Որոտնեցու մահվան կապակցությամբ գրված ներբողյան է, որը, չնայած փոքր ծավալին, բարձր է գնահատել Մանուկ Աբեղյանն իբրև գրական երկ. «Հովհաննես Որոտնեցու թաղման ժամանակ ասած նրա ներբողյանն իսկապես հարուստ է ճարտասանական ձևերով- հարցում, բացազանչություն, կրկնություն



նման կազմությամբ խոսքերի և այլն. կան նաև պատկերավոր և առատաբան արտահայտություններ՝ առանց ճոռոմության, տրտմագին զգացմունքով և անկեղծ սիրով լի մի գեղեցիկ ներբողյան, Սուրբ Գրքից առած նմանություններով մի երախատագիտական գովեստ արժանավոր գործչի»<sup>1</sup>:

Եվ իսկապես, Ներբողյանի գեղարվեստական արժանիքներից են հայագետի կողմից նշված ոճական հնարքների բազմահմուտ կիրառությունը, ինչպես նաև անսպասելի պատկերավոր համեմատությունները, տասնյակից անցնող հեղինակային նորակազմությունները, օքսիմորոնները (նրբաբանությունները), ալիտերացիան (նմանաձայնություն, երբ բաղաձայնների կուտակմամբ ներքին ռիթմ է ստեղծվում. ի մասնավորի՝ ներբողյանում նկատելի է գ, ս, ժ, շ, դ, խ, ծ հնչյուններով բաղաձայնությ), ներքին հանգավորում ստեղծող կրկնությունները (**որ** շաղկապով, **ո՛վ** ձայնարկությունով, **սա**, **սովա**, **զիա՞րդ** դերանուններով), մակդիրների, հոմանիշների և հականիշների հեղինակային կիրառությունները, որոնք ներբողյանի լեզուն դարձրել են հարուստ, ճոխ և ինքնատիպ: Վերջինիս նպաստել է նաև հռետորական խոսքին հատուկ ոճական հնարքների հմուտ գործածությունը:

Հականիշների առատությունը Ներբողյանում պայմանավորված է այն հանգամանքով, որ Տաթևացին Ներբողյանը շարադրել է **հակադրություններ կառուցելու ճանապարհով** (սպասելիանսպասելին, լինել-չլինելը, փնտրել-չգտնելը, արժանիքները-դրանց հանկարծահաս չգոյությունը և այլն): Զուգահեռները աստվածաշնչյան կերպարների, ապա և նշանավոր հայրերի հետ նախապատրաստում են կորստյան ցավի ընդգծումը. **փառագարդեալ**

---

<sup>1</sup> Մ. Աբեղյան, *Երկեր*, հ. Դ, Ե., 1970, էջ 416-417:

և գեղեցիկ ինչպես Ադամը. **եղբայրադավ**, ինչպես Աբելը. **ուղղադավան**, ինչպես Մելքիսեդեկ քահանան. **հավատով ընտրյալ**, ինչպես Աբրահամը. **տարամերժեալ հայրենիքից**, ինչպես Հովսեփը. **օրէնսուսոյց**, ինչպես Մովսեսը, **առաջնորդ**, ինչպես Հեսուն և այլն, սակայն, որոնց հաջորդում է այս ամենի կրողի բացակայության ցավի ընդգծումը. «Եւ զի՞ է ինձ առեալ յերգ **մասնաւորակի** զնա, որ **բոլորովին** էր մարգարեաբուղիս հոգի...., որ ոչ **չար** հատոյց չարի, այլ **բարի** փոխանակ չարի...: Սովաւ **ընտրութիւն բարեաց** և **մերժումն չարեաց**....»:²:

Ներբողյանը, ինչպես նշեցինք, հարուստ է նրբաբանություններով (օքսիմորոն), որ երկու հականիշ բառերի անսպասելի, սակայն հմուտ գործածությամբ նոր իմաստ ստանալու ոճական հնարք է. խորագետ պարզամտութեամբ, բարձր խոնարհութեամբ, մեծ սպասատրութեամբ, օրհնութիւն անիծողաց, սէր ատելեաց, խռովելոց խաղաղութիւն, բարբարոսաց մարտիրոսութիւն, պատկառումն յանդգնելոց, ժրութիւն ծուլից:

Նույնքան հմուտ է օգտագործել Տաթևացիին նաև հակադրությունները.

**օդապարիկն թռչուն՝ գերամբարձ արծուին ձերացեալ և յերկիր անկեալ.**

**առիւծն արիական ի փաղանգէ աղուեսուց խաղալի և կոխան գտեալ.**

**զակն աղբեր կենեղուտ ջրոյն ցամաքեալ.**

**զգունագեղ ականատր ակն արտագունեալ.**

**ոսկին սոփերային անպիտացեալ.**

**մաքրափայլ արծաթ ժանկիւ տգեղեալ.**

---

<sup>2</sup> **Գրիգոր Տաթևացի**, *Գիրք Քարոզութեան, Ամառան հատոր*, Կ.Պոլիս, 1941, էջ 712-713:

**զծառն բարձրաբերձ բիրեղէն ոստովք և թավախիտ  
քաղցրորակ պտղովք յարմտոց տապալեալ.  
մարգարիտն անգին բեկմամբ անարգեալ:**

Ներբողյանի գեղարվեստական արժեքը մեծապես շահում է այն բանից, որ օգտագործված հականիշների զգալի մասը ոչ թե համագործածական, այլ հեղինակային են, երբ երևույթները բնորոշվում են ոչ թե սպասելի հասկանիշներով, այլ՝ նոր եզրերով կամ նոր նրբիմաստով: Սա ուշադրության արժանի է ոչ միայն Ներբողյանն իբրև գեղարվեստական գործ գնահատելու համար, այլև գրաբարյան լեզվամտածողության առումով:

Տաթևացին հին հայերենի ոճական հնարքներին հրաշալի տիրապետող հեղինակներից է: Իբրև օրինակ բերենք Ներբողյանից մի հատված, որտեղ **ո՛վ** ձայնարկության և **ան**- ժխտական նախածանցով բառերի կրկնությամբ ներքին ռիթմ է ստեղծվում, որը դառնում է նաև **հակադրության ընդգծման միջոց**, և մյուս կողմից՝ հականիշների ինքնատիպ գործածությունը նույն հատվածում նոր նրբիմաստով է ներկայացնում բերվող բառակապակցությունները. «Ո՛վ անկշռելի տարակուսիս: Ո՛վ անլոյժ երկանցս: Ո՛վ ծանրագոյն տրսմութեանս: Ո՛վ աղէխարշ գորովոյս: Ո՛վ պակուցանօղ տագնապիս: Ո՛վ զարհուրելի երկիւղիս: Ո՛վ անդառնալի վճռիս: Ո՛վ անգիւտ կորստեանս: Ո՛վ անխաղաղ ալեացս: Ո՛վ անհանգիստ խռովութեանցս: Ո՛վ անբերելի սգոյս: Ո՛վ անդադար լալեացս: Ո՛վ անվճար ողբոյս: Ո՛վ անեզր աղաղակիս: Ո՛վ անճաճանչ խաւարիս: **Ո՛վ անառաւօտ գիշերոյս:** Ո՛վ անել բանտիս»<sup>3</sup>:

«Գիրք քարոզութեան «Ամառան հատոր»-ում նույնպես, ինչպէս և էր «Զմեռան հատոր»-ում, հականիշությունը շատ հաճախ կառուցվում է «այլ», «իսկ» շաղկապներով, «ոչ», «ան» ժխտա-

<sup>3</sup> Նույնը:

կան դերանուններով, երբեմն նաև հակադրությունն առավելագույն շեշտող «**հակառակ**», «**ընդդեմ**» բառերով: Բնորոշ օրինակ է աղոթքի մասին քարոզը, որ հեղինակը կառուցել է հականիշների մի քանի աստիճանի հակադրումով, այսինքն՝ կա բառերի (պտղաւետ-անպտուղ), ապա՝ բառակապակցությունների (պտղաւետ աղօթք-անպտուղ աղօթք), և ապա՝ նախադասությունների հակադրում, որի արդյունքում քարոզն ավելի պատկերավոր է դարձել. «Ձի **այլ** է պտղաւետ աղօթելն և **այլ** է անպտուղն... »<sup>4</sup>. «Ձի յորժամ գմիտս և զխորհուրդս և զզգայարանս ի միասին ժողովեմք և զոր ասեմք լեզուաւ, **մտօք** զայն **խորհիմք**, այս է **պտղաւետ աղօթքն** և ընդունելի աստծոյ: **Իսկ** յորժամ լեզուաւ աղօթեմք և **մտօք ոչ խորհիմք**, այս է **անպտուղ աղօթքն** և այս ոչ չար է և ոչ բարի: Իսկ յորժամ լեզուաւ աղօթեմք և մտօք չարն խորհիմք..., այս ամեննիմք չար է և յանցանք մահու չափ, զի լեզուն և միտքն **հակառակ** են միմեանց»<sup>5</sup>:

Կամ ներկայացնելով ժամանակի **սովորույթները**՝ Տաթևացին նկարագրում է հարսնախոսությունն ու հարսանիքը՝ հականիշներով ընդգծելով սահմանված բարոյական նորմերը կամ էլ այլաբանական իմաստ ձեռք բերած արարողակարգերը, ընդ որում շարադրանքից պարզվում է դրա և՛ աշխարհական, և՛ հոգևոր բընույթ կրելը: Հարսնախոսության և հարսանիքի պարտադիր պայման է եղել ըստ հեղինակի՝ պսակի մատանին, ինչպես նաև ամուսնացողների համաձայնությունը, փեսավերների [փեսայի կողմի բարեկամներ] և հարսնածուների [հարսի կողմի բարեկամներ] ներկայությունը. «...մատանին ոչ է պարտ որ լինի **արձակ** կամ **նեղ**...»<sup>6</sup>:

---

<sup>4</sup> Նույնը, էջ 34:

<sup>5</sup> Նույնը, էջ 341:

<sup>6</sup> Նույնը, էջ 200:

«Եւ նախ սկիզբն պսակին նշանն է, որ կատարի յերկուց, այսինքն՝ **ի հաւանական խօսիցս** և ի նշան է մատանւոյն և յայլոցն: Զի թէ երկու կամքն ոչ հաւասարին և ոչ հաւանին, անհաստատ է պսակն, որպէս **բռնութեամբ և ակամայն**: Եւ **հաւանումն կամացն** երևի ի տեսանելն աջօք, և ի խօսիլն լեզուաւ»<sup>7</sup>:

«Եւ յայն հետէ [այսինքն վաղնջական ժամանակներից] սկսան մարդիկ նախ խօսիլ գհաւանական խօսս **միջնորդի** և **անընդմիջաբար** և ապա դնել նշան հարսին և փեսային միջնորդութեամբ քահանայից և արանց և կանանց որպէս և ասացաւ»<sup>8</sup>:

«Իսկ յորժամ արտաքս ելանեն յեկեղեցւոյն, հարսն լինի **ի ձախ կողմն** փեսային և յորժամ նստին ի բարձր տեղւոցն գոր կոչեն թախտ կամ հաճլէք, փոխէ և **յաջ կողմն** նստուցանէ գհարսն»<sup>9</sup>:

Հականիշների հաջորդ խումբը ի մի ենք բերել հեղինակի **բարոյախրատական** վերլուծություններից. «...զի ոչ ունին զկապ և զերկիւղ ծառայական, այլ **գորդիական սեր**» (188)\*, «...զերկրաւոր և զշնչաւոր **իմաստութիւն** փոխեաց **յերկնաւոր և ի հոգւոր իմաստութիւն**» (188), «...հաւատք մեր առ Քրիստոս ոչ է պարտ որ լինի **աւելի** կամ **պակաս**, այս [ինքն] **դնել** [ներկայացնել] **գոր ոչ ունի** կամ **ուրանալ գոր ունի**» (200), «Երրորդ, ընդդէմ **ճշմարտութեան** հակառակի [սուտն], որպէս ասեն, թէ՝ **ստոյն** շահն այն է, որ, որ ըզորդին այլ չհավատան» (222), «Հոգին սուրբ փախչի ի **սուտ խօսից**, այլն սպասաւոր հրեշտակն մեր, զի **ճշմարտութեան մերձ են** և օգնական և ի ստութենէն **ի բաց հեռանան**» (222), « Թէ որ ունիցի **բարի խօս** և բարի գրոյց, հազար բարութիւն ելանէ ի նմա-

<sup>7</sup> Նույնը, էջ 199:

<sup>8</sup> Նույնը, էջ 199:

<sup>9</sup> Նույնը, էջ 202:

\* Այսուհետև մեծաքանակ լինելու պատճառով էջերը կնշվեն շարադրանքում:

նէ... թէ **չար խօսք** ելանեն՝ ստույթինք, հայհոյութիւնք, բարկութիւնք, բամբասանք և այլն, նման են սերմնակաթին...» (222-223), «...յատկութիւն է, որ նախանձն ի համանմանն լինի և **ի մերձաւորն** և ոչ յօտարն և ի **հեռաւորն**» (247), «...մի՛ ասեր **մի անգամ** ողորմեցայ, բաական է **այլ հանապազ** արա» (368), «...**չար** նախանձ է, զբարի մարդոյն տեսանեն՝ յաչաղեն և ցաւին, թէ՛ վասն է՞ր ունի զայն բարին, զայն փառսն, զայն ապրանսն և զայլն...: Իսկ **բարի** նախանձ է, որ մարդ զբարի գործն տեսանէ և ցանկայ նմանիլ» (247):

Խոսելով խոնարհության մասին և այն համարելով մարդկային մեծագույն արժանիք՝ հականիշների հմուտ կիրառությամբ հեղինակն ավելի ու ավելի է ընդգծում սրա մարդկային բարձրագույն արժեք լինելը. «Տե՛ս և զծառս, որ ոստ որ զպտուղն ունի, ցած է և **խոնարհ**, որ և դատարկ է՝ ցոփ և **անխոնարհ**: .... Տե՛ս և վարդենին,, որ զանուշահոտ ծաղիկն ունի, փոքր է և **մերձ ի յերկիր**, և որ դաժան է և ունայն՝ **երկայնաձիգ**, որպէս բարտին» (246):

Իսկ Տիրամոր հղիության հատվածում հակադրությունը դառնում է այն միջոցը, որով ներկայացվում է երկրային մեծագույն հրաշքը. «Զայն, որ երկինք և երկին **ոչ կարեն տանիլ, խոնարհութեամբ ընդունի** ինքեան» (246):

Հայտնի է նաև Տաթևացու հանրագիտակ հեղինակ լինելու հանգամանքը. նրա հարցադրումները վերաբերում են ամենաբազմազան ոլորտների: Բազմազան են նաև հականիշ բառերի իմաստային դաշտերը: Վերը բերված օրինակները բարոյախրատական, ազգագրական, հոգևոր ոլորտներից էին: Բերենք մեկ օրինակ կենցաղից. «Այլ չորեք կուսի քարն վեց երես ունի և յոյժ հաստատի, զի մին երեսն է **ի վեր** կայս և մինն **ի վայր** կոյս, երրորդն՝ **յարևելից**

կոյս, չորրորդն՝ **յարևմտից**. հինգն ի **հիւսիսոյ** կողմն և վեցն ի **հարաւոյ**» (387):

Թեւավոր խոսքի արժէք ունեն հետևյալ օրինակները. «Կամ **նմանովն զմանն** շինեմք, կամ **աննմանովն՝ զաննմանն**» (366), «Գիտելի է, որ կամի պահել զողջախոհութիւն...պարտի ունիլ զերեք իրս: Առաջին է, **ո՛չ շրջիլ տանէ ի տուն, այլ նստիլ ի տան իւրում**» (417):

Grigoryan Susanna - The use of stylistic antonyms of the “Summer tome” of the “Preaches book” Grigor Tatevatsi.- At the end of the “Summer tome” of the he “Preaches book” by Grigor Tatevatsi, is posted Panegyric of Grigor Tatevatsi dedicated to his teacher Johann Vorotnetsi. In this small work, which is a variety of stylistic instruments, in this case the use of antonyms is more thorough.

The use of antonomes is very often accompanied by unions "but", "or", etc.

Григорян Сусанна- Стилистические употребления антонимов в "Летнем томе" "Книги проповедей" Григора Татеваци. В конце "Летнего тома" "Книги проповедей" Григора Татеваци размещен Панегирик Григора Татеваци посвященный своему учителю Иогану Воротнеци. Это маленький труд, который отмечается разнообразием стилистических средств, в том числе умелым употреблением антонимов.

Употребление антонимов очень часто сопровождается союзами "но", "а", "или же" и т. д.

Գրիգորյան Սուսաննա, Պարոնյան Նաիրա

(Հայաստան, ԵՊՀ)

[susannagrigoryan@ysu.am](mailto:susannagrigoryan@ysu.am), [nairaparonyan@ysu.am](mailto:nairaparonyan@ysu.am)

## ՆՈՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՍԲՐԵ ՎԵՐԾԱՆՈՂԻ ՃԱՌԵՐՈՒՄ

Մամբրե Վերծանողը հինգերորդ դարի երկրորդ կեսի (430 – 500թթ.) մեկնիչ, թարգմանիչ և ճառախոս է: Ըստ պատմագրական աղբյուրների՝ նա Մովսես Խորենացու կրտսեր եղբայրն է: Նրա կենսագրական տվյալները սակավ են: Հայտնի է, որ բարձրագույն կրթությունն ստացել է Ալեքսանդրիայում: Եղել է նաև Բյուզանդիայում: Մամբրե Վերծանողին մատենագիրներն անվանել են «մեծ փիլիսոփա»: «Նրա մատենագրութիւնը պատկանում է հայ վաղ միջնադարեան մշակոյթի մեջ նշանակալից դեր կատարած յունաբան դպրոցի առաջին փուլին (450-ականից 480-ական թթ. )<sup>1</sup>: Մամբրե Վերծանողը գրել է իմաստասիրական, քերականական երկեր, ճառեր: Ցավոք, մեզ չի հասել նրա «Մեկնութիւն քերականի» երկը: Մամբրե Վերծանողի անվամբ մեզ է հասել մեկ իմաստասիրական երկ «Հարցմունք Մամբրեի, որ գիտակ էր արտաքին փիլիսոփայութեան եւ պատասխանիք Դաւթի եռամեծի եւ Անյաղթ փիլիսոփայի» խորագրով, ինչպես նաև հինգ ճառեր. «Ի ծնունդն Փրկչին ասացեալ եւ ի Ծնունդ նորին ութ աւուրն, այդ է՝ Մկրտութիւն», «Ճառ ի յարութիւն Ղազարու», «Վասն յարութեան Ղազարու յաւուր շաբաթի», «Նորին ի մեծի գալստեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի յԵրուսաղէմ», «Նորին յաղագս եկաւորութեան Փրկչին յԵրուսաղէմ»: Ահա թե ինչպես են բնութագրում նրա ճառերի լեզուն

---

<sup>1</sup> Մատենագիրք Հայոց, Ե. դար, Ա. հատոր, Անթիլիաս, 2003, էջ 1093:



ՆՀԲ-ի հեղինակները.« Երանելոյն Մամբրէի Վերծանողի մեծիմաստ վարդապետի՝ կրտսեր եղբօր Խորենացոյ, գեղեցիկ ճառ «Ի յարութիւն Ղազարու»՝ որպէս մեկնութիւն աւետարանին Յովհաննոս՝ ընտիր հայկաբանութեամբ և ճարտար յօրինուածով: Կան և երկու ճառք նորա « Ի գալուստ Տեառն յԵրուսաղէմ յաւուր արմաւենեաց»՝ թեպէտ և առաւել բառազարդ, բայց նուազ վսեմութեամբ. թո՛ղ զայլափոխեալ օրինակս ի տօնական մատեանս՝ ըստ հաճոյս հաւաքողաց ի զանազանից»<sup>2</sup>:

Սույն հոդվածում մենք անդրադարձել ենք Մամբրե Վերծանողի ճառերում առկա նորակազմություններին: Առանձնացրել ենք երեք տասնյակից ավելի նոր բառեր՝ ի համեմատություն «Նոր հայկազեան», Առձեռն, Ռ. Ղազարյանի «Գրաբարի բառարանի», Ռ. Ղազարյանի, Հ. Ավետիսյանի «Նորայայտ բառեր գրաբարում», Լ. Հովհաննիսյանի «Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր» բառարաններին<sup>3</sup>:

Մամբրե Վերծանողը, օգտագործելով գրաբարի բառակազմական միջոցները, ստեղծել է նոր բառեր ու արտահայտություններ: Հետևապես նրա ճառերը արժեքավոր են ոչ միայն դավանաբանական, այլև բանասիրական տեսանկյունից: Մամբրե Վերծանողի ճառերից քաղված նորակազմ բառերը բաժանել ենք երկու խմբի՝ վերոնշյալ բառարաններում չվկայված և դրանցում վկայված բառեր, որոնց համար առաջին աղբյուր են եղել Մամբրե Վերծանողի

---

<sup>2</sup> Գ. Աւետիսեան, Խ. Միրմէլեան, Մ. Աւգերեան, *Նոր բառգիրք հայկազեան լեզուի*, հ. 1, 1836, էջ 14 :

<sup>3</sup> Գ.Աւետիսեան, Խ. Միրմէլեան, Մ. Աւգերեան, *Նոր բառգիրք հայկազեան լեզուի*, հհ. 1-2, 1836-1837(այսուհետև՝ ՆՀԲ), Մ. Աւգերեան,Գր. Ճէլալեան, *Առձեռն բառարան հայկազեան լեզուի*, Վենետիկ, 1865 (այսուհետև՝ ԱԲ), Ռ. Ղազարեան, *Գրաբարի բառարան*, Անթիլիաս, 2004 (այսուհետև՝ ԳԲ), Ռ.Ղազարեան, Հ. Աւետիսեան, *Նորայայտ բառեր գրաբարում*, Ե., 2007(այսուհետև՝ ՆԲԳ), Լ. Հովհաննիսյան, *Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր*, Ե., 2010 (այսուհետև՝ ՉԲ):

ճառերը: Ներկայացնենք նորաստեղծ բառերից մի քանիսը բնագրային օրինակներով:

**Անպատկառաբան**, ած. «խիստ համարձակաբան, ճշտախոս». Նորուն աղագու *անպատկառաբանն* Եսայի ասէ. « Ահաւասիկ անուն Տեառն եկաւոր է յամեցեալ ամաւք զկնի բագում ժամանակաց, եւ յետ սակաւուց ի վերայ բերէ. հոգի նորա, որպէս ջուր *ծորալիք* պարանոցաթաղ»(1134): Սույն նախադասության մեջ կա նաև *ծորալիք* (=անընդհատ ծորացող) նորակազմ ածականը:

**Առաջագուշակ**, ած. «նախագուշակ». Ես *ձայն բարբառոյ յանապատի* ասելով ձայն հնչողական գնախահրաւեր *զյառաջագուշակ* զիր կոչումն ասէ եւ անապատ զանյայտ եւ զանսկզբնաւորեալ քարոզութիւն առաքելոցն ասէր եւ եւս անապատ, քանզի ի քաղաքս եւ ի դրունս թագաւորաց *մարգարէաբանեցին* սուրբ հարքն (1131): Այս նախադասության մեջ ունենք նաև *մարգարէաբանել* (=մարգարեի նման խոսել) նորակազմ բայը:

**Բանիբան**, գոյ., ած., «ճարտասան». Զբոլոր արն յայտնէ. զի ար Տեառն որով իաւար կռապաշտութեան լուծանի, որ նովաւ գնան, արն լոյս ասի ըստ Եբրայեցի *բանիբանիցն*. եւ լոյս, Քրիստոս, որ լուսաւորէ (1110):

**Կարապետագոչումն**, գոյ., «առաջնորդի բարձր ձայնը». Եւ քանզի յայսնութեան խորհուրդս, որ առնէ ի մկրտութենէ սկիզբն, մկրտի Յովհաննէս ոչ ըստ *կարապետագոչմանն*, թէ ուղիղ զձեզ *արարչեղէն* ճանապարհին կազմեցէք հետեւելոցն ի ձեր մարմնի եւ յոգւոջն ի մաքուր վարս(1132): Այս նախադասության մեջ ունենք նաև *արարչեղէն* (= արարչական) ածականը, որը, ըստ ՆՀԲ-ի, Մամբրեի գրչին է պատկանում, այսինքն՝ դարձյալ նրա ստեղծած բառն է:

**Ոտնալուայութիւն**, գ., «ոտքերը լվանալու արարողությունը». Աստ Յովհաննէս պատկառէր զարարչական զագաթամբն ածել ջուր,

անդ Պետրոս սուկացեալ գտերունեան ձեռացն սպասաւորել *ոտնալուայութիւն* (1132):

**Վայրագապէս**, մ., « վայրագորեն, կատաղի կերպով». Իսկ մեծն Յովհաննս յամայացելում վայրի ի Սաղիմա եւ Յորդանանու եգերս *վայրագապէս* բացալթեայ գնայր *քաջաձայնաբար* հնչելով. «Զապաշխարեցէք, հասեալ է արքայութիւն երկնից ապաշխարել ի գոջումն յանցաւորութեանց մկրտելոցն յինքնէ, ասէ, եւ արքայութիւն՝ զՅիսուսի Աստուածութիւն...»: Այստեղ ունենք նաև *քաջաձայնաբար* (= բարձրաձայն) նորակազմութիւնը (1131):

**Օղաղօղակ**, ած., «օդում լողացող, թաքնվող». Երկրորդ՝ արարածոց Յիսուսի անդրանիկն յերկրէ թոշուն ծառայապէս սպասաւորեաց Երբեակ՝ վասն զի երկնային եւ արագաշարժ Սրբոյ Հոգւոյ արբանէկեր *օղաղօղակ* բնութիւն արագագոյն քան զամենայն կենդանիս հաստատ նայէ զծառայութիւն ըստ Յովանու ձայնին՝ Տեսանէի զՀոգին Սուրբ իջեալ աղանակերպ յերկնուստ եւ վերայ աստուածային իջեալ եւ հանգուցեալ զխոյն, վասն զի նիւթեղէն բնութեանն համագոյակից վկայաբանեն (1133) :

Բառարաններում չվկայված նորակազմ բառերի մեջ գերակշռում են ածականները (թվով 16)՝ *աղբիւրախաղացք* (1135), *անպատկառաբան* (1134), *առաջագուշակ* (1131), *բանիբան* (1110), *խտրելի* (1122), *ծորալիր* (1134), *համաբերկրական* (1136), *նշոյլափայլ* (1130), *պարանոցալիր* (1134), *քաջունակ* (1105), *օղաղօղակ* (1133) և այլն: Գոյականները շատ քիչ են զիջում ածականներին (թվով 11 գոյական)՝ *բացածաւայումն* (1134), *կարապետագոչումն* (1132), *մարմնացելումն* (1131), *մերունակերպառնութիւն* (1121), *նախագուշակումն* (1127), *ոտնալուայութիւն* (1132), *պարակարգութիւն* (1126) և այլն: Ունենք վեց բայ՝ *անսկզբնաւորեալ* (1131), *առաջաճառել* (1127), *եռանդնանալ* (1134), *մարգարէաբանել* (1131), *վերահեղուլ* (1134), *վերատանել* (1123), չորս մակբայ՝ *անյայնցա-*

պէս (1133), *համափառարար* (1136), *վայրագապէս* (1131), *քաջա-  
ձայնարար* (1130), մեկ դերանուն՝ *երկաքանչիւրեանք* (1122):

Առաջին խմբի նորակազմ բառերում գերակշռում են ածան-  
ցավորները (18 բառ)՝ *անյայնցապէս* (1133), *անսկզբնաւորեալ*  
(1131), *էրուսացի* (1124), *համաբերկրական* (1136), *պարակարգու-  
թիւն* (1126), *վայրագապէս* (1131) և այլն: Բարդածանցավոր բառե-  
րը երկրորդ տեղում են (15 բառ)՝ *անպատկառարան* (1134), *առա-  
ջագուշակ* (1131), *առաջաձանել* (1127), *մերունակերպառնութիւն*  
(1121), *ոտնալուայութիւն* (1132), *քաջաձայնարար* (1130) և այլն:  
Բարդ բառերը չորսն են՝ *աղբիւրախաղաց* (1135), *բանհիբան* (1110),  
*ծորալիք* (1134), նշոյլափայլ (1131):

Ի տարբերություն առաջին խմբի (37 բառ)՝ երկրորդ խումբը  
ներառում է ութսունութ բառ. սրանց մեջ գերակշռում են ածական-  
ները (37 բառ)՝ *անփառունակ* (1121), *արարչաղիք* (1121), *արարչե-  
ղէն* (1121), *աւրիհնաւորական* (1121), *բարեսաղարթ* (1129), *գերեզմա-  
նասէր* (1101), *երկնաբեր* (1121), *երկնագոչ* (1120), *ինքնածագ* (1110),  
*մահազգեաց* (1228), *նորահրաշ* (1106), *ութաշտիճանեայ* (1121),  
*պարածածուկ* (1129), *վարջամակեայ* (1128) և այլն: Գոյականները  
թվով քսաներեքն են՝ հիմնականում *-ութիւն* ածանցով բաղա-  
դրված՝ *անգուգակցութիւն* (1124), *աստուածակերպութիւն* (1124),  
*աստուածակերտութիւն* (1122), *արարչակերտագործութիւն* (1128),  
*բարեվայելչութիւն* (1123), *դատարկարան* (1128), *դիմառութիւն*  
(1096), *երկրայանք* (1096), *ընդդիմամարտիկ* (1106), *կիսաբանու-  
թիւն* (1102), *նախագուշակութիւն* (1120), *պատուիրանապահութիւն*  
(1112), *տարրաւորութիւն* (1121) և այլն: Ի տարբերութիւն նորա-  
ստեղծ բառերի՝ այստեղ ունենք տասնվեց բայ՝ *ազարականալ*  
(1098), *անկարողանալ* (1124), *արտասուաթորել* (1128), *բարեգոր-  
ծականել* (1128), *դիտաւորել* (1123), *ծաղկաւետանալ* (1129), *նա-  
խագործել* (1127), *փառագարդել* (1128), և տասներկու մակբայ՝ *ա-*

*բարչաբար* (1122), *արտասուս առ արտասուս* (1101), *բարերանապէս* (1120), *համապատուաբար* (1128), *հարազատաբար* (1122), *պատմագրապէս* (1123), *վերաձայնաբար* (1124) և այլն : Այս խմբի բառերի մեջ գերակշռում են բարդաձանցավորները (34 բառ)՝ *աստուածակերտութիւն* (1122), *արարչակերտագործութիւն* (1128), *բարեկամապէս* (1128), *կտաւապատութիւն* (1119), *մերունակերպախառնութիւն* (1121), *չարահոտութիւն* (1104), *քաջաձայնապէս* (1129) և այլն: Բարդ բառերը բառարաններում չվկայված բառերից ավելի մեծ թիվ են կազմում (29 բառ)՝ *բարեսաղարթ* (1129), *գերեզմանասէր* (1101), *երկձայն* (1098), *երկնաբեր* (1121), *երկրագործ* (111), *ինքնաձագ* (1110), *խորամուխ* (1102), *ծանրալուծ* (1115) և այլն: Նախորդ խմբի համեմատ անանցավոր բառերը զիջում են բարդություններին (25 բառ)՝ *աւրինաւորական* (1121), *եղբայրապէս* (1122), *համապատուապէս* (1122), *ծաղկաւէտութիւն* (1129), *պարածածուկ* (1129), *տարրաւորութիւն* (1121) և այլն:

Սույն հոդվածում նորակազմ բառերի բառակազմական վերլուծությունը հանգամանալից չենք կատարել՝ աշխատանքը չձանրաբեռնելու և առանձին բառաքննական նյութ պատրաստելու ներկայացնելու նպատակով:

Susanna Grigoryan, Naira Paronyan - Neologisms in Mambre Vertsanogh's (Mambre Interpreter's).- Allocutions. Mambre Vertsanogh (Mambre Interpreter) carried out a wide literary activity. He composed tirades and theological works. Mambre Vertsanogh's tirades are of special interest from the linguistic point of view. These works are unique in their theological and artistic merits. The given article is devoted to the study of more than 30 words which are not present in the voluminous dictionaries of Old Armenian. The author used the whole vocabulary of our language masterly, as well as he made use of Armenian word-formation regularities, creating new words and word-combinations, in this way, enriching not only the language of his creations, but also the vocabulary of our literary language. There are few prefixo-suffixal neologisms which are in general euphonious and are formed according to the rules and regulations of Armenian word-formation.

Сусанна Григорян, Наира Паронян - Неологизмы в тирадах Мамбрэ Верцаног (Мамбрэ Интерпретатор).- Мамбрэ Верцаног развивал широкую литературную деятельность. Он сочинял тирады, богословские труды. Тирады М. Верцаног представляют особый интерес в языковом значении. Эти произведения отличаются своими теологическими, художественными достоинствами. Представляемая статья посвящена изучению более 30 слов, которые не имеются в больших толковых словарях древнеармянского языка. Автор мастерски использовал весь богатый лексический состав нашего языка, а также, по мере необходимости, словообразовательные возможности армянского языка, создавая новые слова, обогащая самым язык собственных произведений и состав литературного языка. Очень немногочисленны прификсально-суффиксальные неологизмы, которые в основном, благозвучны и образованы соответственно законам и закономерностям словообразовательной традиции армянского языка.

**Թոխմախյան Ռոբերտ, Տիոյան Սուսաննա**  
(Հայաստան, ԳԱԱ լեզվի ինստիտուտ)

**ՀԱՅԵՐԵՆԻ ՉԱՅՆԱՎՈՐԱՀԱՆԳ ԲԱՌԵՐԻ ՁԵՎԱՅԻՆ  
ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Ժամանակակից հայերենի ձևաբանական հարցերի քննությանն անդրադառնալիս ուսումնասիրության նպատակով պայմանավորված՝ հաճախ քերականական կարգերը նորովի ներկայացնելու անհրաժեշտություն է ծագում. այսպես, լեզվի ձևայնացված նկարագրության ընթացքում, երբ, օրինակ, լեզվից լեզու թարգմանությունն պետք է կատարել, նույն ձևույթի մի քանի իմաստային դրսևորումները կամ իմաստային հստակ ձևակերպումների բացակայությունը բարդությունների առջև է կանգնեցնում:

Սույն հոդվածում փորձ է արվում ներկայացնելու բառերի ձևաիմաստային որոշակի մի խմբի՝ ձայնավորահանգ բառերի ձևվային դասակարգումը, ընդ որում դասակարգվում են ա, ո/օ, ե/է, ի, ու, ը ձայնավորներով ավարտվող բառերը: Թեև հայերենի ձայնավորական այս շարքը ներկայացվում է ըստ տարահզորության հընչույթային հատկանիշի, սակայն հոդվածում ձայնավորահանգ բառերը դիտարկվում են ըստ գործառական – հաճախականական հատկանիշի: Այսպես, բառավերջյան *n/o* հնչույթը կարող է հանդես գալ որպես բառի վերջնահանգ հնչույթ՝ բառի արմատի կազմում, մեկ այլ դեպքում՝ որպես հոլովակազմիչ ձևույթ, երրորդ դեպքում՝ որպես ածանց և այլն: Ուստի նպատակից ելնելով՝ անհրաժեշտություն է առաջանում տարանջատելու դրա ինչպես նշված, այնպես էլ մյուս գործառույթները:

ժամանակակից գրական հայերենում նույն հնչույթը հանդես է գալիս գործուն և քարացած հոլովաձևերում, ընդ որում՝ բառագործածության ընթացքում դրանք հավասարապես կարող են հանդիպել (արևելահայերենում՝ պայմանականորեն քարացած, արևմտահայերենում՝ գործուն<sup>1</sup>)՝ տարբեր ձևաբանական գործառույթներով: Ներկայացնենք վերոնշյալ ձայնավոր հնչույթներով վերջացող բառերի ձևաբանական գործառույթները՝ ըստ նվազող հաճախականության. սկսենք ո/օ հնչույթից, որը կարող է հանդես գալ՝

1. որպես գոյականի սեռականի հոլովակազմիչ ձևույթ՝ *Մշո, Կարնո, Պոլսո, Մասնո, Կիլիկիո, Սիրիո* և այլն, ընդ որում՝ առաջին չորս օրինակներում հոլովակազմիչը միանում է հնչյունափոխ հիմքին, վերջին երկուսում առկա է  $a \rightarrow o$  հերթագայությունը: Մշո բառաձևը արևելահայերենի ազգային կորպուսում հանդիպել է 830 համատեքստում, գերազանցապես Մշո դաշտ(եր), Մշո Ս. Առաքելոց եկեղեցու փորագրագարդ դուռ, Մշո սուլթան Ս. Կարապետ, Մշո երգեր կապակցություններում՝ N+N կադապարով, Պոլսոն՝ 628 համատեքստում՝ գերազանցապես Պոլսո պատրիարք, Պոլսո հայոց պատրիարք բառակապակցություններում, նույն՝ N+N կադապարով, Կիլիկիոյի դեպքում ունենք 556 համատեքստ, հիմնականում Կիլիկիո կաթողիկոսություն, Կիլիկիո աթոռ կառույցներում՝ N+N կադապարով, Կարնոյի պարագայում պատկերը տարաբնույթ է. այն հանդիպել է 314 համատեքստում, Կարնո դաշտ, Կարնո բարբառ, Կարնո պարիսպներ, Կարնո վիլայեթ, Կարնո նահանգ և բազմաթիվ այլ կապակցություններում, սակայն

---

<sup>1</sup> Արևմտահայերենի քերականության դասագրքերի որոշ հեղինակներ, օրինակ, Մ Մկրտիչյանը, գոյականների հոլովումների մեջ դիտարկում է ոչ հոլովումը որպես առանձին հոլովաձև. տե՛ս **Ա. Ֆիշենկճեան, Արևմտահայերենի քերականութեան պատմություն (յետայտնեական շրջան)**, Ե., Ասողիկ, 2018, էջ 37-38:



կաղապարը նույնն է՝ N+N, Սասնոն գերազանցապես կերտում է Սասնո աշխարհ, Սասնո լեռներ, Սասնո սարեր կառույցները՝ N+N կաղապարով և Սիրիո բառը հանդիպել է միայն 1 կառույցում՝ Վ. Փաթազյանի՝ Իմ Օթելլոն գրքում. Այդ ժամանակներում քրիստոնեությունը տարածված էր **Սիրիո** ասիերից մինչև Սուդանի սահմանները՝ Նեղոսի վերին ակունքներում, և վերջնականապես հաստատված՝ Հաբեշտանում, ուր պետական կրոն էր: Ինչպես տեսնում ենք, այս կետում ևս բառակազմական նույն՝ N+N կաղապարն է գործում:

2. ածականակերտ ածանցի դերով՝ *մավրն ասուլիս, պատվո տախտակ, պատվո պահակ, սզո սրահ, սիրո երազ, սիրո հասակ, սիրո տանջանք* և այլն, որտեղ այն կարող է դիտարկվել նաև որպես հոլովակազմիչ ձևույթ: Այս ձևերը չափազանց արգասավոր են արդի հայերենում. հայերենի ազգային կորպուսում միայն **սիրո** բառաձևով 12961 համատեքստ կա (տե՛ս [eanc.net](http://eanc.net) կայք էջը): Գործում է Ngen + N կաղապարը:

3. խոսքիմասային փոխանցիչի դերով՝ հարակատար դերբայից անցում զոյականի կամ ածականի՝ կախածո, դրածո, գտածո, ձուլածո, ծեփածո, հանածո, հավաքածո, չափածո, պահածո, և այլն՝ հետևյալ բառակազմական ուղիով կամ տակտերով. կախել → կախած → կախածո (N, A), դնել → դրած → դրածո (N), ձուլել → ձուլած → ձուլածո (N, A), հավաքել → հավաքած → հավաքածո (N), հանել → հանած → հանածո (N, A), պահել → պահած → պահածո (N) և այլն, որպես գործողության արդյունք,

4. հատուկ անունների՝ հայերենին հատուկ կրճատ ձևերում՝ Ավո (Մոնթե Մելքոնյան), Արտո (Չաքմաքչյան), Աոնո (Բաբաջանյան), Կարո (Հավաբյան), Մարո, Մարգո, Մաթո, Սիրուշո, Արամո,

Սարո, Վանո (Սիրադեղյան), Համո (Սահյան), Հայրո, Դրո (Կանա-  
յան) և այլն<sup>2</sup>,

5. գրաբարից արևմտահայերենին անցած ոչ վերջնաերկհնչյունով  
բառերում՝ երեկոյ, դշխոյ, յետոյ, և վերջին՝ 6-րդ խումբը, հայերե-  
նում առկա օտարամուտ բառերի մի սովոր քանակ՝ *n*-յով վերջա-  
ցող, ամենատարբեր բառիմաստային խմբերից՝ աղաջիո, սոլո, սոլ-  
ֆեջիո, սոպրանո, կակաո, մանգո, սամբո, տրիկո, սաբո, նետտո,  
բրուտտո, լոգո, Կոնգո, Տիտո, ֆոտո և այլն, որոնցում *n* վերջնա-  
հնչույթը արմատի բաղադրիչ է:

Ի տարբերություն արևելահայերենի, ինչպես վերը նշեցինք,  
արևմտահայերենում *n* –ն դիտարկվում է հոլովման համակարգում  
հոլովիչների կազմում՝ *np*<sup>3</sup>, որպես սեռական հոլովի գործուն տե-  
սակ՝ «8 դեկտեմբերին Պոլսոյ հայ համայնքը ընտրեց իր պա-  
տուիրակները, որոնք 11 դեկտեմբերին պիտի ընտրեն Պոլսոյ հա-  
յոց 85-րդ պատրիարքը» (Ազդակ, դեկտեմբեր, 10, 2019):

Ի ձայնավորով վերջացող բառերի պարագայում ունենք  
գործառույթների հետևյալ տարբերակումները.

1. իբրև արմատի բաղադրիչ՝

ա) հասարակ գոյական անուններում՝ արփի, ազի, այգի, բարդի, ե-  
կեղեցի, թխկի, սոսի, նոճի, գիհի, կղզի, մոզի, որդի, ոզի, ուղի, գո-  
տի, ասորի, եզդի, դպտի, մաքի, լեղի, լոբի, գարի, օղի, գինի, տարի  
և այլն,

---

<sup>2</sup> Նման ձևերի, որպես փաղաքշական, մտերմիկ, փոքրացուցիչ կիրառությունը  
տարածված է հայկական ժողովրդական բանահյուսության մեջ՝ Համբո, Գալո,  
Մստո, Ճստո, Չալո, գող Փիտ և այլն, ինչպես նաև ժողովրդախոսակցականում  
քուրո, ապերո:

<sup>3</sup> Տե՛ս **Ա. Տիշենկճեան**, նշվ. աշխ., էջ 36-39:

բ) հատուկ անձնանուններում և ազգանուններում՝ Աղասի, Արաքսի, Արփի, Արգիշտի, Նաիրի, Սոսի, Մոսի, Սահակաշվիլի, Ջուրաբիշվիլի և այլն,

գ) աշխարհագրական հատուկ անուններում՝ Անի, Արածանի, Արայի, Գառնի, Գյումրի, Լոռի, Մարտունի, Մեղրի, Վեդի, Շուշի, Սոչի, Սուխումի: Նշված գոյականներից մի քանիսը՝ տարի, Աղասի, Գառնի, Գյումրի, Լոռի, Մարտունի, Վեդի, սեռականում բազմաձևությամբ կարող են հանդես գալ՝ տարի – տարու –տարվա, Աղասի –Աղասիի – Աղասու, Գառնի-Գառնիի- Գառնու, Գյումրի-Գյումրիի- Գյումրու- Գյումրվա, Լոռի- Լոռիի- Լոռու- Լոռվա, Մարտունի - Մարտունիի- Մարտունու, Մեղրի- Մեղրիի- Մեղրու, Վեդի-Վեդիի-Վեդու, սակայն լեզվական կանոնը կամ միտումը հակված է ընդհանրական ի հոլովմանը: Առանձին մեկնաբանման կարիք ունի եկեղեցի գոյականը, որը ենթարկվելով *nz* հոլովմանը, հանդես է գալիս նաև *-luz* հոլովմամբ<sup>4</sup>. այդ ձևով արևելահայերենի ազգային կորպուսում կա 257 համատեքստ, հիմնականում՝ մեջ, համար, մոտ, կից կապերի հետ (Այս առթիվ կիրակի, 8 հունիսին, տեղվույս Ս. Ստեփանոս **Եկեղեցվո** մեջ պիտի կատարվի մասնավոր հոգեհանգիստ Երևան, 1947.05.16 #41, Ընդհակառակը, պետությունն է վերածվում եկեղեցվո, բարձրանում է **Եկեղեցվո** աստիճանին և դառնում է եկեղեցի համայն աշխարհում: Ֆեոդոր Դոստոևսկի Կարամազով եղբայրները, 1983, 12 տարի է արդեն, հիմնելով «Շուշի» պարախումբը՝ Նյու Յորքի Սուրբ Վարդան **Եկեղեցվո** կից, հովանավորությամբ Խաժակ Արք. Պարսամյանի ու Նավասարդ Եպո. Կճոյանի՝ հայ սիրողական պարուհիներից բաղկացած

---

<sup>4</sup> Տե՛ս **Զ. Աճառյան**, *Հայերեն արմատական բառարան*, Ե., 1926, հ. 2, էջ 12:

այս հայապահպանության «ամրոցը» մի շարք համերգներ է կազմակերպել ավելի քան 1600 հանդիսատեսի առաջ... Ազգ, 2005. 07. 13):

ի տեղի + սեռ.+կապ+ գոյ./ N gen + N

2. որպես գոյականի ընդհանրական **ի** հոլովման հոլովակազմիչ՝ աթոռի, բաժակի, ծառի, հացի, պատի, սեղանի, քաղաքի, նկարի, շենքի և այլն՝ հատկացուցիչ – հատկացյալ հարաբերությամբ՝ աթոռի ոտքը, բաժակի ջուրը, ծառի ճյուղը և այլն՝ Ngen + N կաղապարով,

3. իբրև ածականակերտ ածանց՝ աղի (կերակուր), թթի (օղի), ծիրանի (գույն) և այլն (A + N կաղապարով): Բերենք մի քանի օրինակ նշված իմաստներով. **Աղի** արցունքով կողբամ մեղքերս (Ս. Կապուտիկյան), Դենս ծովն է շառաչում տարերքներով կատաղի, Եվ փշրվում են կրծքիս ալիքները ձեր **աղի** (Հ. Մահյան), .... մի կերպ ընդունում են մատուցած **աղի** սնունդը, վախից ծպտուն չհանելով, դեռ գոհունակություն հայտնելով (Ազգ, 2004, 11, 25):

**Թթի** բառաձևով Ազգային կորպուսում կա 298 համատեքստ, հիմնականում՝ թթի օղի, թթի արաղ, թթի դոշաբ, թթի հյութ, թթի ծառ կապակցություններում: Դու ի՞նչ է, առավոտ կանուխ գլո՞ւխդ ես քաշել **թթի** օղին... Ի՞նչ էք բերաններդ բաց արել կանգնել,-գոռում է թզուկը, ու նրա գորշ դեմքը փոխվում է **ծիրանի** գույնի: Երկներ երկին, երկներ երկիր, երկներ և. ծովն **ծիրանի**, երկն ի ծովուն ուներ... Լոռվա լեռների հետևում մայր մտնող արեգակն ամպերը ներկել էր վառ **ծիրանի** գույնով և շառափը նետել շրջակա բլուրների, հնձված արտերի և գյուղական տափակ տանիքների վրա (Ն. Զարյան, Հացավան):

**Ա** ձայնավորի պարագայում առկա են երկու այսպիսի բառախմբեր.

1. իբրև սեռական հոլովի ցուցիչ՝ Վանա, Մասնա (ծոեր), Սևանա, Սիփանա, Գեղամա, Մարութա,

2. որպես արմատի բաղադրիչ՝

ա) հասարակ գոյականներում՝ աբբա, արքա, բագա, գաթա, ընծա, թամադա, թավա, շղթա, կթղա, կուլա, լավա, լումա, պախրա, սոդա, վկա, ճամփա, փեսա, տղա, քուլա, քուրա և այլն,

բ) հատուկ գոյական անուններում՝ Աննա, Մարգարիտա, Մարիա, Մարթա, Մարինա, Նաիրա, Սեդա, Թամարա,

գ) տեղանունների հատուկ անուններում՝ Ադանա, Ախթալա, Ախտա, Ջուդա, Տուշպա, Մարադա:

Ե ձայնավորով առանձնացրել ենք հետևյալ խմբերը.

1. որպես արմատի բաղադրիչ՝ ա) հասարակ գոյականներում՝ ալոնե, ափսե, աշտե, բագե, բյուջե, երե, մարգարե, հասցե, ոստրե, րոպե, շիմպանզե, սյուժե, հյուլե, (ի) բնե, (ի) ծնե, (ի) սրտե, տրե, քվե և այլն, բ) հատուկ գոյական անուններում՝ Արամե, Եղիշե, Մոնթե, Նարե, Նարինե, Նունե, Կարինե, Հերմինե, Մարինե, Շահանե, Մաթե, Վահե, Շահե և այլն, գ) աշխարհագրական հատուկ անուններում՝ Շաքե, Կահիրե, Նինվե, Մարմարե:

2. իբրև ածականակերտ ածանց՝

ա) դրվելով բառի ուղիղ ձևերին՝ անագե, բրոնզե, գրանիտե, ձյունե, թաղիքե, կապարե, կավե, քարե, խեժե, շալե,

բ) ավելանալով բառի հնչյունափոխ հիմքերին՝ թավշե, թղթե, չթե, հրե, սառցե,

գ) ի → ե հերթագայությամբ, մորթե և դ) կաշվե՝ վ ածանցի հավելմամբ՝ ըստ Հ. Աճառյանի<sup>5</sup>, և ըստ էդ. Ադայանի՝ կաշին ունի շու և շվի սեռականի ձևերը<sup>6</sup>:

---

<sup>5</sup> Տե՛ս Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, հ. 2, էջ 518:

Ու ձայնավորով հետևյալ երեք խմբերն են առանձնացվում.

1. որպես արմատի բաղադրիչ՝

ա) հասարակ գոյականներում՝ ալելու, առու, արու, գնչու, կկու, լու, բու, ձու, թթու, կատու, մեղու, լոբսու, չու, ուրու, չոբսու և այլն, որոնցից մի մասը՝ ալելու, արու, գնչու, լոբսու, չու, ուրու, չոբսու սեռականում ստանում է *h* հոլովիչը՝ ալելուի, արուի, գնչուի և այլն, իսկ մյուս մասի սեռականը հետևյալ պատկերն ունի՝ առու + ի = առուի- առվի, կկու + ի = կկուի - կկվի, ձու + ի = ձուի - ձվի և այլն,

բ) աշխարհագրական հատուկ անուններում՝ Ջանգու, Ուրարտու, Մակու և այլն, որտեղ առաջինը՝ Ջանգուն սեռականում դառնում է Ջանգուի→Ջանգվի, իսկ հաջորդ երկուսը՝ Ուրարտու →Ուրարտուի, Մակու→Մակուի:

2. իբրև սեռական հոլովի հոլովակազմիչ՝ այգու, բարդու, գինու, որդու, մարդու, մահու, մորթու, ձիու, քամու և այլն<sup>7</sup>,

Ը ձայնավորի պարագայում ունենք երկու խումբ միայն.

1. բաղաձայնով վերջացող բոլոր բառերի որոշյալ առումը ձևավորող *g* հոդ՝ Արամը, Արսենը, Արմանը, Գեղամը, Գուրգենը, Ռուգանը, Մարանը, Սաթենիկը, հացը, ջուրը և այլն,

2. որպես արմատի բաղադրիչ՝ ամենը, ինը, իսկը, ընդամենը, դառը, խառը, սառը, ինքը և այլն:

Ինչպես տեսնում ենք, ձայնավորահանգ բառերը նման վեց խումբ են ձևավորում՝ նվազող հաճախականությամբ (խոսքը ենթախմբերի քանակի մասին է): Ինչ նպատակ է հետապնդում այսպիսի ուսումնասիրությունը.

---

<sup>6</sup> Տե՛ս, **Էդ. Աղայան**, *Արդի հայերենի բացատրական բառարան*, Ե., 1976, հ. 1, էջ 690:

<sup>7</sup> *h* վերջնահանգով հատուկ անունների մասին տե՛ս էջ 179-ում:

1. ձայնավորահանգ բառերի ձևական խմբավորումը կարող է նրպաստել լեզուների տիպաբանական դասակարգմանն ուղղված աշխատանքներին, մասնավորապես կցական լեզուների առանձնահատկությունները բացահայտելիս,
2. նպաստում է նաև լեզուների ձևային նկարագրմանը՝ մեքենական թարգմանության լեզվական խնդիրները կարգավորելիս, երբ լեզվից լեզու թարգմանության պարագայում պարտադիր պայման է բառային միավորների ձևաիմաստային միարժեք համապատասխանությունը և
3. լեզվավիճակագրական հաշվարկներ կատարելիս:

Tokhmakhyan Robert, Tioyan Susanna -The formal description of Armenian vowel words.- The article attempts to introduce the semantic groups of vowel words. It can contribute to typological and applied research.

Тохмахян Роберт, Тиоян Сусанна - Формальное описание слов, оканчивающихся на гласные звуки в армянском языке.- В статье предпринята попытка представить формально-семантические группы слов при наличии гласных звуков в конечном слоге. Подобное исследование может способствовать при типологических и прикладных исследованиях разного плана.

## Տեր Մերկերյան Ռոբեր

(Ֆրանսիա, Էքս-Մարսել համալսարան)

### ԲԱՌԱՅԻՆ ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԴԵԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ: ԲԱՑ ԵՎ ՓԱԿ ԼԵԶՈՒՆԵՐ

Ինչպես միշտ լեզուն որպես կենդանի երևույթ շարունակ զարգացման մեջ է: Լեզվի զարգացման անմիջական, ամենաշոշափելի համակարգը բառապաշարի համալրումն է նորաբանություններով: Բառապաշարը արտալեզվական գործոնների ազդեցությանը ենթարկվող և արագ փոփոխվող համակարգերից է: Հասարակական կյանքում երևան եկող բոլոր նոր երևույթները, նորահայտ գաղափարները այս կամ այն ձևով արտահայտվում են լեզվի բառապաշարի մեջ՝ լինի դա փոխառության, պատճենման կամ լեզվի ներքին միջոցներով նորաստեղծ բառով: Բոլոր դեպքերում, որն էլ լինի փոխառման ձևը, սկզբունքորեն, նորաբանությունը արտահայտում է լեզվի մեջ դեռևս չարտահայտված նոր գաղափար, միտք կամ առարկա:

Բաց լեզուներ ենք անվանում այն լեզուները, որոնք բավական արագ և դյուրությամբ որդեգրում են ուրիշ լեզուներում երևան եկող նոր գաղափարներն ու առարկաներն արտահայտող բառային միավորները: Այդ գործընթացի իրականացման պատճառը ընդունող լեզուն կրողների հասարակական, տնտեսական, մշակութային հարաբերությունների շարունակական կանոնավոր կապերն են նոր գաղափարներ «արտադրող» հասարակությունների հետ: Այսօր աշխարհում հաղորդակցությունը միջազգային է ու հաճախ անմիջական համացանցի, հեռուստատեսության ու ռադիոյի միջոցով, և սա նպաստում է միջազգային նորաստեղծ գաղափարների ու մտքերի արագ շրջանառությանը բոլոր երկրներում: Մեծ մա-



սամբ նոր գաղափարները երևան են գալիս անգլիախոս, ռուսախոս կամ ֆրանսախոս հասարակություններում: Պարզ է, որ լեզուն ինքը չի փոխառում, այլ այդ լեզուն գործածող հասարակությունը, որը նոր գաղափարներն արտահայտելու պահանջն է զգում: Այսպես, օտար լեզուներում նորաստեղծ առարկան կամ գաղափարն արտահայտող բառը անմիջապես փոխառվում կամ պատճենվում է բաց լեզուներում: Նրանք հեշտությամբ որդեգրում են օտար լեզվում հայտնվող նոր գաղափարը, հատկապես երբ բաց լեզուն գործածող հասարակությունը նոր գաղափարներն արտահայտելու կարիքն է զգում:

Փակ ենք անվանում այն լեզուները, որոնք հակված չեն այլ լեզուներում արտահայտվող նորաստեղծ գաղափարներն ու մըտքերը փոխառել, քանի որ տվյալ լեզուն կրող հասարակությունը այդ նոր գաղափարները արտահայտելու անմիջական կարիքը չի զգում: Փակ լեզուները սկզբունքորեն դեմ են փոխառություններ որդեգրելուն, յուրացնելուն: Երևան եկած նոր գաղափարը արտահայտելու անհրաժեշտության դեպքում փակ լեզուն դիմում է ուղղակի ներքին միջոցներին՝ հաճախ ընդլայնելով արդեն գոյություն ունեցող բառի իմաստային արժեքը:

Արևելահայերենը բաց լեզու է: Այլ լեզուներում երևան եկող նորաստեղծ գաղափարներն ու մտքերը շատ արագ հայտնվում են արևելահայ տարբերակն օգտագործողների բառապաշարի մեջ: Արևելահայ հասարակությունը, մասնավորապես լրագրողները, մտավորականները, գիտահետազոտական ասպարեզում աշխատող մարդիկ սերտ, կանոնավոր շփման մեջ են նոր գաղափարներ կամ առարկաներ ստեղծող հասարակությունների հետ հատկապես համացանցի ու հեռուստատեսության միջոցով: Նրանք ոչ միայն ծանոթ են նրանց լեզուներին, այլև այդ լեզուները կրող հասարակությունների նիստուկացին: Այդ անմիջական կապի շնորհիվ

հայ հասարակության մեջ կարիք է զգացվում օգտագործել օտար հասարակությունների մեջ երևան եկող նոր երևույթներն ու իրականությունները: Անցումը օտար լեզվից հայերենին այնքան արագ է կատարվում, որ փոխառման առաջին փուլը պարզապես օտար բառը եղածին պես վերցնելն ու հայոց լեզվի ուղղագրությանն ու արտասանությանը հարմարեցնելն է: Փոխառված բառը կարող է որդեգրվել հայերենի բառապաշարի մեջ այնպես, ինչպես արտասանվում է օտար լեզվում, լինի դա անգլերենը, ռուսերենը կամ ֆրանսերենը:

Երկրորդ փուլում օտար փոխառնված բառը կարող է պատճենվել, իսկ երրորդ փուլում փոխարինվել ներքին՝ հայերենին հատուկ բառային միավորով: Օրինակ՝ *լոու քոստ, քրաուտ ֆանտինգ, փոդ-քաստ, բեստ սելլեր, սուրվենցիոն, դրոն, սթարթ-ափ, սելֆի* բառերը<sup>1</sup> պատկանում են առաջին փուլին, դեռևս պատճենման կամ զուտ հայկական բառային միավորումներով առայժմ չեն փոխարինվել:

Երկրորդ փուլում փոխառված բառային միավորը պատճենվում է կամ ուղղակի ներքին միջոցներով հայերենին հարագատ նորակերտ բառ է ստեղծվում: Օրինակ՝ *էկոսիստեմ- էկոհամակարգ, օնլայն- առցանց*:

Նոր մտքերն արտահայտելու գործընթացի մեջ օտար փոխառված բառին զուգահեռ գրավոր խոսքում հաճախ օգտագործվում է հայերենին համարժեք բառը. ստացվում են զուգահեռ անվանումներ. *ռեանիմացիա-վերակենդանացում, կոնցեպտ- հասկա-*

---

<sup>1</sup> Հոդվածի մեջ բերված բոլոր օրինակները քաղված են առցանց էլեկտրոնային լրատվամիջոցներից 2019-2020 թթ. ընթացքում: Արևելահայերեն կայքեր՝ Ազգ. 1in.am, hetq.am, 168.am, news.am, armenpress.am և Հ1 կայան: Արևմտահայերեն կայքեր՝ Զարթօնք, Ազդակ, Հայ կեանք, asparez.com, Ազատ օր:

*ցություն, օդելի -մրգօղի, մարկետ- պարենային խանութ, փողոցի ակցիա -գործողություն, բրոքեր- միջնորդ, մաստեր կլաս- վարպետաց դաս, էկոլոգիա- բնապահպանություն, մարկետինգ- շուկայավարություն, հոթ-լայն- թեժ գիծ:* Պետք է հուսալ, որ նշված օրինակներում ժամանակի ընթացքում հայկական տարբերակը վերջնականապես կփոխարինի փոխառությանը:

Նշենք, որ փոխառված բառային միավորների մեջ կան հայերենին անհարազատ հնչյունախմբեր, որոնք համահունչ չեն հայերենի հնչյունական օրինաչափություններին: Այդպիսիք են հատկապես *-ինգ* վերջավորությունով փոխառությունները, ինչպես՝ *մարկետինգ, քրաուտֆանտինգ, ստրիմինգ, մոնիտորինգ, թրեյնինգ, քայթսերֆինգ, բրիֆինգ* և այլն:

Սկզբունքորեն դեմ չենք լեզվում հայտնվող նորաստեղծ մտքեր արտահայտող փոխառություններին: Դրանք հարստացնում են լեզուն ժամանակի համահունչ պահանջներին մեծաթիվ նորաստեղծ գաղափարներով ու առարկաներով: Լեզուն արտահայտում է հասարակությանը անհրաժեշտ նորագույն մտքեր. դա կենդանի լեզվի համակերպումն է հասարակության պահանջներին: Արևելահայերենը հյուրընկալ լեզու է, և ինչ-որ չափով, նոր որդեգրված բառերի միջոցով Հայաստանի ժամանակակից պատմությունն է պատմվում:

Բաց լեզուները գործոն, ակտիվ լեզուներ են, որոնք արտացոլում են աշխարհի տարբեր հասարակություններում ծագող, երևան եկող նոր իրականությունները: Առանց այդ նոր գաղափարները արտահայտելու հնարավորության լեզուն կարող է աղքատանալ, մեկուսացում ապրել ու դառնալ փակ լեզու: Պարզապես, օտարամոլության դեմ պայքարելու համար անհրաժեշտ է, որ օտար փոխառությունները համեմատաբար արագ պատճենվեն կամ ներքին միջոցներով նոր բառային միավորներ ստեղծվեն: Այդ անցումը ա-

րևելահայերենում կատարվում է բավական դանդաղ և հաճախ օտար փոխառությունը վերջնականապես արմատավորվում է որպես գործոն բառապաշար: Դա է պատճառը, որ հաճախ արևմտահայերենի ջատագովները քննադատում են արևելահայերենը ակտիվ բառապաշարի մեջ կիրարկվող բազմաթիվ օտար փոխառությունների համար: Դա միշտ եղել է և այսօր մնում է արևմտահայերենը սատարողների մշտական քննադատության առարկան: Այսուհանդերձ, պետք է նշել, որ հատկապես լրագրողական, հրապարակախոսական գրավոր լեզվում, հանրային ընթերցման ենթակա մամուլում, հանդիպում ենք այնպիսի բառերի ու արտահայտությունների, որոնք ինքնին նոր գաղափարներ չեն արտահայտում: Այդ բառերն օգտագործելով՝ լրագրող հեղինակի նպատակն է իր խոսքին հատուկ անձնական երանգ տալ, ինքնատիպ իմաստային գունավորում տալ նախադասությանը: Դրանք օտար լեզվից վերցված անհատ հեղինակային գաղափարներ արտահայտող բառեր կամ դարձվածքներ են, որոնք պարզ, շարքային ընթերցողին կարող են հաճախ անհասկանալի լինել: Օրինակներ. «Կառավարությունը նոր մարտավարության համար ընտրել է *թրեյնինգներ* (անգլերեն՝ *training*, այսինքն՝ «վարժեցում, պատրաստություն, ուսուցում, մարզում») անել բոլոր նրանց, ովքեր չեն կարողանում հավուր պատշաճի հանդես գալ լրագրողների առաջ: *Տրեյնինգներ* անցկացնելու պարտավորությունը դրված է հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն ՊՌԱԿ-ի վրա»: «... այդ երգիչը կրում է ծաղկավոր *պրինտով* (անգլերեն՝ *print*, «դրոշմել, տպել»), այս դեպքում՝ «ծաղկավոր դրոշմերով») վերնաշապիկ և կանաչ երանգի կիսաշրջազգեստ»: «...քաղաքը հեղեղվեց *ֆանտաստիկ սաունդով* .....բրիտանական հայտնի jamiroquai խմբի համերգը Կ. Դեմիրճյան մարզահամերգային համալիրում 2019 թ. հոկտեմբերի 6-ին հեղեղվեց *acid սաունդով*, հնչեղությունը, լույսը,

բիթերը և զիլ էներգիան» (հեղինակն օգտագործում է *սաունդ*, բիթ (անգլերեն՝ *sound, beat*) բառերը, այսինքն՝ *հնչյուն, ռիթմ*, շատերին անհասկանալի, որպեսզի ժամանակակից երաժշտության երանգ բնութագրի իր նկարագրությանը): «Մա Փուրֆինի և Փաշինյանի երկրորդ թեթ ա թեթ հանդիպումն է» (Ֆրանսերեն չիմացող ընթերցողը չի հասկանա՝ «թեթ ա թեթ» արտահայտությունը պարզպես նշանակում է «առանձին, առանց ուրիշի ներկայության» (ֆրանսերեն՝ *tête à tête*, բառացի՝ «զուլի գլխի»), այսինքն՝ «առանձին»): «Համալսարան գնացող աղջիկների համար կազմել ենք մի քանի լուկ (անգլերեն՝ *look*, այսինքն՝ «արտաքին տեսք, արտահայտություն»), որոնք կօքնեն ձեզ այդ հարցում»:

Քաղաքական տեսաբանը անցյալում տեղի ունեցած քաղաքական իրադարձությունը բնորոշելու համար օգտագործում է *դեժավյու* բառը (ֆրանսերեն՝ *déjà vu*, այսինքն՝ «արդեն տեղի ունեցած, կատարված»), որը կարող է անհասկանալի լինել ֆրանսերեն չիմացող ընթերցողին: «Նոր քաղաքական իրադրությունը Վարչապետին դնում է *ֆորսաժորային* (ֆրանսերեն՝ *force majeure*, այսինքն՝ «անկանխատեսելի իրադրության, ստիպողական») վիճակում»:

«Էներգետիկ *կոլապս* Երևանում (անգլերեն՝ *collaps*՝ «փլուզում, անկում»): «Այո, ես *տոլերանտ* եմ (ֆրանսերեն՝ *tolérant*՝ «հանդուրժող») մինչև այն պահը, երբ չեն ներխուժում իմ անձնական տարածքը»: «Կարող են տուժել նաև դատաիրավական բարեփոխումները, քանի որ նրանց ընդունումը և *իմպլեմենտացիան* (ֆրանսերեն՝ *implémentation installation*, այսինքն՝ «իրագործումը, ի կատար ածելը») մեծապես կախված է հենց արևմուտքի աջակցությունից»:

Քաղաքագետ վերլուծաբան Էդվարդ Անտինյանը համացանցի իր հոդվածում գրում է. «Արցախը Հայաստան է և վերջ» դիրքորոշումը *դեստրուկտիվ* է (ֆրանսերեն՝ *destructif*, այսինքն՝ «կործանարար,

կորստաբեր»), որովհետև մենք տեսել ենք այդ *դերտորուկտիվիզմը* կար Ադրբեջանի կողմից):

«Հայ ձեռնարկատերը Տաշքենդում ուներ *բուտիկներ*ի ցանց» (ֆրանսերեն՝ *boutique*, այսինքն՝ «խանութ, առևտրի տարածք») :

«Ֆրանսահայ ձեռնարկատերը *փրե ա փորթե* (ֆրանսերեն՝ *prêt-à-porter*, այսինքն՝ «պատրաստի հագուստ») ասպարեզում ցուցաբերած հաջողությունների համար պարգևատրվել է»: «Այդ իրադարձությունը կարևոր է վրացական *քեյսը* (անգլերեն՝ *case*՝ «պարագան, դեպքը, օրինակը») հասկանալու համար»: «Հյուսիս-հարավ ճանապարհի կառուցման 1-ին և 2-րդ *տրանշերը* (ֆրանսերեն՝ *tranche*, այսինքն՝ «հատված, մաս, բաժին») շարունակվում են»:

Հ1 հեռուստատեսության կայանում՝ մարզական լուրերի ժամանակ էկրանին, մեծ տառերով գրված է «Միացիր *չեչենջին*» (անգլերեն կամ ֆրանսերեն՝ *challenge*, այսինքն՝ «մարտահրավեր»): «Van music awards մրցանակաբաշխությունը, որն ընթանում է 11 անվանակարգում մրցանակների արժանացան հայկական տարբեր *բենդեր* (անգլերեն՝ *band*՝ «նվագախումբ»): Թերթը մեծատառերով վերնագրում է. «Ստամբուլյան կոնվենցիան չի հակասում սահմանադրությամբ նախատեսված ընտանիքի կամ սեռերի *կոնցեպտին* (ֆրանսերեն՝ *concept*, այսինքն՝ «հասկացություն, գաղափար, պատկերացում»):

Վերհիշյալ օրինակներում հեղինակներն օգտագործում են օտար բառեր, որոնք փոխառություններ չեն կարող համարվել. դրանք ունեն իրենց ճշգրիտ համարժեքը հայոց լեզվում: Դրանք օտար բառերի հեղինակային, լրագրողական անհատական ընտրություններ են իրենց նախադասությանը մասնագիտական երանգ, ինքնօրինակ բնույթ տալու համար այն հույսով, որ ընթերցողը կհասկանա նախադասության ընդհանուր իմաստը: Դրանք

բոլորի բառերը չեն. դրանք չի հասկանա շարքային ընթերցողը: Տվյալ դեպքում սկզբունքորեն այդ օտար բառերը օգտագործելու անհրաժեշտությունը չկա: Տրված բոլոր օրինակներում օտար բառերը կարելի փոխարինել հայերենի համարժեքներով: Փոխառվող բառը արդարացվում է, երբ այն լեզվի մեջ ներմուծում է նոր գաղափար կամ նոր առարկա, որի համարժեքը դեռևս չկա հայերենում: Հիշենք, որ հաճախ նախադասության մեջ մեկ անհասկանալի բառը կարող է այդ ամբողջ նախադասության իմաստը դարձնել անհասկանալի:

Արևմտահայերենը կարելի է դասել փակ լեզուների թվում: Հայտնի լեզվի այս տարբերակը հակված չէ փոխառել տարբեր հասարակություններում երևան եկող նորաստեղծ նոր գաղափարներ ու առարկաներ: Արևմտահայերեն արտահայտվող հասարակությունը յուրահատուկ, եզակի համակարգ է, նման չէ դասական սովորական հասարակություններին: Արևմտահայերենը կիրառող հասարակությունը ցրված է տասնյակ տարբեր երկրներում, որտեղ ամենուր կազմում է փոքրամասնություն: Արևմտահայ հասարակությունը չունի պետականություն, պետական կառավարման համակարգ, հայերեն գործող պետական վարչական, գիտահետազոտական ինստիտուտներ, Ակադեմիա, երաժշտանոց: Նման համակարգերի բացակայությունը այդ ասպարեզներում մասնագիտական նորաստեղծ բառային միավորների կարիքը զգացնել չի տալիս: Նեղ մասնագիտական՝ բժշկական, մաթեմատիկական, իրավաբանական, գիտահետազոտական, պետական, վարչական և այլ ասպարեզներում գործող, աշխատող սփյուռքահայ մասնագետը օգտագործում է բնականաբար իր ապրած երկրի լեզուն՝ իսպաներենը, անգլերենը, ֆրանսերենը, հունարենը և այլն: Այդ բնագավառներում հայերենը չի գործում, հետևաբար հայերեն եզրեր օգ-

տագործելու կարիք չի կարող ունենալ, քանի որ նա աշխատում է իր ապրած երկրի լեզվական միջավայրում:

Այսուհանդերձ, անհրաժեշտության դեպքում արևմտահայերենը նոր երևույթը, հատկապես առօրյա ոչ մասնագիտական նոր գաղափար արտահայտող երևույթն արտահայտելու համար մեծ մասամբ դիմում է պատճենմանը: Օրինակ՝ *Ֆեյսբուք* պատճենված է *դիմագիրք* (երբեմն՝ *դիմատետր*), *պրոդիսեր*՝ *արտադրող*, *մեդիա*՝ *լրասփիւռ*, *լոուքուստ թոնչքներ*՝ *էժանագին թոնչքներ*, *քրաուտֆանտինգ*՝ *դրամահաւաք*, *կորոնավիրուս*՝ *պսակաձեւ ժահրախտ*, *ֆեյթայմ*՝ *դիմաժամանակ*, *հոլոգրամ*՝ *լիսպատկեր*: Այսուհանդերձ, նշենք, որ արևմտահայ էլեկտրոնային մամուլում երբեմն հանդիպում ենք փոխառությունների: Օրինակ՝ «*Տլեշմոբի* տեսքով հնչած են ...» (Զարթօնք), «*Օնլայն* կը ծախեն իրենց ապրանքները ...» (Նոր Կեանք), «Փոխվարչապետ Տ. Աւինեան *Ֆեյսբուքի* էջին վրայ հրատարակած է ...» (Զարթօնք), «*Սփօրի* մասնագետ Գրիգորեանը...» (Զարթօնք), «Հայաստանի ֆուբպոլի *ֆեդերասիոնի* գործադիր մարմինը...» (Ազգակ), «...սոցցանցեր, *թոնիթր* ամլացուցած են լուսաբանող լրատուամիջոցները» (Նոր Կեանք): Նշեք, որ արևմտահայերենում փոխառված բառը տպագրվում է շեղագիր տառերով, որն ընթերցողին հիշեցնում է եզրի փոխառված լինելը: Չնայած վերջին տասնամյակների ընթացքում հայերենի երկու տարբերակներով խոսող արևմտահայ և արևելահայ հասարակությունների լեզվական շփումների սերտացմանը՝ երևան եկող նոր գաղափարներն ու մտքերը մեծ մասամբ դեռևս շարունակում են արտահայտվել տարբեր ուղիներով: Երկու տարբերակներն օգտագործող հասարակությունները գործում են իրարից անջատ, անկախ, տարբեր լեզվական միջավայրերում: Նրանց միջև չկա համաձայնեցում, հարաբերակցություն: Սփյուռքում գործող մամուլի բնագավառում աշխատող լրագրողները, լրատվամիջոցների խմբ-



բազրությունները, մեծ մասամբ, ըստ լեզվի ներքին օրենքների անմիջապես պատճենում են նոր գաղափար արտահայտող բառը առանց այն փոխառնելու: Իսկ արևելահայերենը այս պարագայում նախ փոխառում է օտար բառը, որից հետո կամ այն պահպանվում է կամ որոշ ժամանակ անց փոխարինվում է ներքին միջոցներով ստեղծված նոր բառային միավորով: Երբեմն էլ նորաստեղծ բառը կարող է փոխանցվել մի տարբերակից մյուսը:

Լեզվում բառային նորաբանությունների որդեգրման գործընթացը բարդ, հաճախ անկառավարելի երևույթ է: Առաջին փուլում այն չի վերահսկվում պետական լեզվական մարմնի կամ կազմակերպության կողմից, որովհետև օտար լեզվից եկող նոր գաղափար-բառը առաջին փուլում նախ առաջարկվում կամ օգտագործվում է անհատ լրագրողների, մամուլի բնագավառի աշխատողների, խմբագրությունների ազատ նախաձեռնությամբ: Նորաբանությունների որդեգրման գործընթացի մեջ անհրաժեշտ է նկատի ունենալ կենդանի լեզվի և այն կիրառող հասարակության կապը: Լեզուն որպես մայրենի լեզու օգտագործող լայն հասարակությունն է բնականորեն որոշում այս կամ այն նորաբանության կիրառության ընդունումը կամ դուրս մղումը լեզվի գործոն բառապաշարից: Ինչպես գրում է Ռ. Իշխանյանը, «որովհետև լեզուն նաև սովորույթ է», և ընդունված սովորույթի կիրարկությունը չի հրահանգվում, լուծումը տրվում է ժամանակի ընթացքում: Երբ հասարակությունը մասսայաբար բանավոր կամ գրավոր խոսքում օգտագործում է մի փոխառյալ բառ, ապա այն հայերեն համարժեքով փոխարինելը, չնայած Լեզվի կոմիտեի հորդորանքներին, դառնում է չափազանց դժվար: Օրինակ՝ ամենուր, նույնիսկ հեռավոր գյուղերի կրպակների ցուցատախտակների վրա կարդում ենք «Մարկետ» կամ «Մուլեր մարկետ» անվանումները, որոնց համարժեքները վաղուց գոյություն ունեն հայերնում: Անհրաժեշտ է հուսալ, որ հասարակական

կյանքում շարունակաբար երևան եկող նորաստեղծ գաղափարները այսուհետև գտնեն ընդհանուր լուծումներ հայոց լեզվի երկու տարբերակների գրավոր և բանավոր խոսքում: Լեզվի շարունակական զարգացման գործընթացը նորաբանությունների բնագավառում ենթարկվում է միջավայրի թելադրած բնական կանոններին ու պատմության ընթացքի ուղերժին ինքնուրույն լեզուն կրող հասարակության ընտրությամբ: Ի վերջո, քանի որ լեզվի զարգացումը պայմանավորված է այն կիրառող հասարակությունից, ապա ըստ լեզվի ներքին օրենքների, նորաբանությունների որդեգրման վերջին խոսքը պատկանում է նրա լեզվակիրներին:

Der Merguerian Robert - The processing of the adoption of loan words is a complex and often ungovernable phenomenon. The new concepts appearing in the society are expressed in the vocabulary (lexicon) either by loan words, or loan translations or by new created words. We distinguish open and closed languages. Open languages easily and quite rapidly adopt new concepts or objects appearing in foreign languages. Eastern Armenian is an open language. Closed languages are not inclined to loan foreign new concepts because the society using those languages don't have the immediate need to express them. Western Armenian belongs to the closed language group. The loan word is justified when it introduces a new concept not yet existing in the language. In the processing of the adoption of loan words the link between the society using the language and the language itself is essential. Finally the society using the language as mother tongue decides whether the new loan word is accepted in the vocabulary or it's rejected (non adopted) from its use.

Дер Мергерян Робер – Процесс принятия заимствованных слов сложный и часто не управляемое явление. Новые понятия, которые появляются в обществе выражаются в словарном составе или заимствованным словом, калькой или же новосозданным словом. В отрасли принятия заимствованных слов мы отличаем открытые и закрытые языки. Открытые языки легко и быстро заимствуются неологией, которые появляются в иностранных языках. Восточный армянский язык открытый язык. Закрытые языки не имеют тенденцию заимствовать новые иностранные понятия, потому что общество, которое употребляет этот язык не нуждается в употреблении этих новых понятий. Западный армянский язык принадлежит к группе закрытых языков. Заимствованное слово оправдывается, когда оно вводит понятие, которое не существует в словаре языка. В процессе принятия заимствованных слов, связь между обществом употребляющего язык и его языком существенная. В конечном счёте общество, употребляющее родной язык решает принятие заимствованного слова в своем словарном составе или же отвергает его.

«ՄԻՐՏ» ԲԱՌԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ  
ԴԱՐՉՎԱԾՍԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԱՅԻՆ ՀԻՄՔՈՒՄ

Հազարամյակներ շարունակ սիրտը համարվել է ոչ միայն մարդու մարմնի կենսագործունեությունն ապահովող սովորական մի օրգան. մարդկանց պատկերացումներով սիրտը կանխորոշել է մարդու բոլոր մտքերն ու մղումները, ամփոփել մարդկային զգացմունքները, օգնել տարբերելու չարն ու բարին. համարվել է, որ այստեղ է գտնվում հոգին: Եվ ինչպես մարդկային կյանքում առկա ցանկացած իրողություն, այս պատկերացումներն ու մոտեցումները ևս իրենց արտացոլումն են գտել լեզվում: Այդ մասին են վկայում *սիրտ* բառի բազմաթիվ իմաստները. «1.Արյան շրջանառության կենտրոնական գործարանը մարդու և կենդանիների մարմնում: 2. Այդ գործարանի տեղը մարդու կրծքավանդակում: 3.Այդ գործարանը որպես մարդկային զգացումների՝ ապրումների և խորհրդանիշ: 4.Այդ գործարանը որպես սիրո խորհրդանիշ: 5.Այդ գործարանը որպես բարության՝ խղճի՝ հոգատարության խորհրդանիշ: ... 7.Այդ գործարանը որպես մտածելու՝ զգալու կենտրոնի խորհրդանիշ: ...9.*փխբ*. Որևէ բանի հիմնական՝ գլխավոր մասը, կենտրոն: 10. Որևէ բանի համար կարևորագույն նշանակություն ունեցող տեղը՝ հաստատությունը, հատվածը ևն, որևէ բանի էությունը կազմող տեղը, բնագավառը: ...15.*փխբ*. Քաջություն, խիզախություն, անվեհերություն: ...»<sup>1</sup>:

<sup>1</sup> Էդ.Աղայան, *Արդի հայերենի բացատրական բառարան*, Ե., 1976, 1615 էջ:

Տարբեր մշակույթներում սիրտը խորհրդանշել է «կենտրոնական» իմաստությունը, զգացմունքների իմաստությունը՝ որպես գլխի բանական իմաստության հակակշիռ, սակայն սիրտը համարվել է նաև սիրո և ողորմության, գգթության ու ըմբռնողության անիմանալի ու խորհրդավոր մի տեղ: Թե՛ կրոնական ընկալումների, թե՛ գիտական ուսումնասիրությունների համաձայն՝ սիրտը ոչ միայն մարդու զգացմունքների, այլև հոգևոր ճանաչողության օրգանն է. ահա թե ինչո՞ւ է 20-րդ դարի ֆրանսիացի մեծ հումանիստ Ա. դը սենտ Էքզյուպերին ասում. «Էականը անտեսանելի է աչքերի համար, և միայն սիրտն է սրատես», ճիշտ այնպես, ինչպես Մուրբ Գրքում: Ըստ Աստվածաշնչի՝ սիրտը մարդու ներքին էությունն է, քանզի մարդը նայում է դեմքին, իսկ Աստված՝ սրտին: Նրա խորը հոգևոր իմաստն արտահայտված է հետևյալ հատվածում. «Տերը Սամուելին ասաց. «Մի՛ նայիր նրա տեսքին ու բարձր հասակին, քանզի ես մերժեցի նրան, որովհետև Տերը մարդու պես չի նայում, մարդը տեսնում է աչքին երևացողը, իսկ տերը սրտին է նայում» (Ս. Թգ. 16.7):

*Միրտ* հասկացությունն Աստվածաշնչում գործածվում է որպես փոխաբերություն կամ գեղարվեստական համեմատություն՝ նշելու համար մարդու հոգևոր-հասարակական էության կենսական կենտրոնը: Հենց այսպես է մեկնվում *սիրտ* բառն աստվածաշնչյան գործածությունների գերակշիռ մեծամասնության դեպքում, և շատ հազվադեպ է այն գործածվում սոմատիկ իմաստով՝ որպես մարմնի մաս: Միրտը համարվում էր հասկացողության, սիրո, հավատարմության, ուրախության և տխրության աղբյուր: Այսպես, Հին Կտակարանի հետևյալ հատվածներում *սիրտ* բառը գործածված է որպես «զգացմունքների՝ ապրումների» խորհրդանշական

<sup>2</sup> *Աստվածաշունչ*, Նոր Արարատ, ՀԱԸ, 2018, 1211 էջ:

վայր. «Եվ Տերը զղջաց, որ մարդ է ստեղծել երկրի վրա, և իր սրտի մեջ տրտմեց (Ծնն. 6.6), կամ՝ կենդանի էություն, որը կարող է ուրախանալ ու տրտմել. «Ուրախ սիրտը զվարթացնում է դեմքը, բայց սրտի վշտից հոգին կոտրվում է» (Առ. 15.13): Մինչդեռ այլ հաստատվածներում սիրտ բառը գործածվում է որպես մարդու մտավոր կարողություն կամ այդ կարողության աղբյուր՝ «Ես քեզ տալիս եմ իմաստություն և հանճարեղ սիրտ, այնպես որ քեզնից առաջ քեզ նմանը չի եղել և քեզնից հետո էլ քեզ նմանը չի լինելու» (Գ. Թգ. 3.12): Ինչպես նաև՝ «Ամբողջ երկիրը փափագում էր տեսնել Սողոմոնի երեսը, որ լսի նրա այն իմաստությունը, որ Աստված տվել էր նրա սրտին» (Ա. Թգ. 10.24): Խորհրդանշական նույն իմաստով է բառը գործածված նաև «Ողջամիտ սիրտը գիտություն է որոնում, իսկ անմիտների բերանը հիմարությամբ է սնվում» (Առ. 15.14) հաստատվածում: Նոր Կտակարանի հետևյալ հաստատվածում էլ սիրտը դիտարկված է որպես հավատքի և հետևաբար՝ նաև քրիստոնեական սիրո՝ որպես այդ հավատքի «կենտրոն, վայր». «... որպեսզի Քրիստոսը ձեր սրտերում հավատի միջոցով բնակվի, և դուք սիրո մեջ արմատացած և հաստատված լինեք...» (Եփ. 3.17): Բայց սիրտը նախևառաջ կյանքի՝ ապրելու խորհրդանիշ է, և Սողոմոնի հետևյալ առակում այն կիրառված է «հոգի» իմաստով. «Ամենից ավելի քո սիրտը պահիր զգուշությամբ, որովհետև նրանից է կյանքի աղբյուրը» (Առ. 4. 23): Եթե մարդը իր հոգին՝ սիրտը, հավատքով և մարդու նկատմամբ սիրով լցնի, այն կդառնա կյանքի աղբյուր:

Սիրտ բառն իր իմաստային ու խորհրդանշային բազմազանությունամբ ծնունդ է տվել հայոց լեզվի բազմաթիվ դարձվածքների, որոնք, բնութագրելով մարդու էությունը՝ հուզական աշխարհը, միտքն ու բանականությունը, կամքն ու խառնվածքը, ներկայացնում են ժողովրդի մտածողության պատկերային խճանկարը, փոխանցում են իրենց մեջ ամփոփված ժողովրդական հուզարտա-

հայտչական գունապնակը և երևույթների նկատմամբ հայ ժողովրդի վերաբերմունքը:

Դիտարկենք *սիրտ* բառի՝ հայերենում դրսևորված պատկերացումների այն փունջը, որ հիմք է դարձել դարձվածքների համար:

1. Այսպես, հայերենի դարձվածքներում սիրտը կիրառվում է որպես կյանքի խորհրդանիշ՝ ***սիրտը բարբախել, սիրտը դադարել բարբախելուց, սիրտը անցնել, սիրտը մարել, սիրտը թայրտալ*** ևն, որոնց մեջ *սրտի բարբախյունը* արյան շրջանառությունը, այն է՝ մարդու կենսական գործունեությունն ապահովող գործողությունն է, *սիրտը անցնելը, մարելը՝ թուլանալը՝* դրա խաթարումը:

2. Որպես մարդու զգայական աշխարհի խորհրդանիշ՝ *սիրտ* բառը հայերենի դարձվածքներում կարող է նշանակել թե՛ ընդհանրապես զգացմունքի, ապրումի, հույզի, թե՛ առանձին այս կամ այն զգացմունքի ձևավորման, արտահայտման աղբյուր, երբեմն էլ նույն դարձվածային միավորներում /Դմ/ բազմիմաստությամբ կարող է արտահայտել տարբեր զգացումներ: Հմմտ.՝ ***սիրտ ունենալ*** «3. *հուզականություն՝ արտահայտչականություն ունենալ*», ***սիրտը քանդել*** «*հուզել, բուռն ապրումներ պատճառել*», ***բարակ սիրտ ունենալ*** «*շատ զգայուն լինել, շուտ հուզվել*», ***սիրտը անապաստ դարձնել*** «*զգացմունքները մեռցնել, սիրտը լցնել/լցվել* «*տոգորել, համակել*», ***սիրտը թունդ առնել/ելնել*** «*հանկարծակի մի բանից հուզվել, տրոփալ*», ***սիրտը լեցուն*** «1. *հոգով հարուստ, 2. (հնց.) սիրտը լիքը՝ ծանր ապրումներով համակված*» Դմ-ներում սիրտը ապրումների, զգացմունքների խորհրդանիշ է ընդհանրապես, մինչդեռ ***սիրտը թրթռալ*** նշանակում է՝ «1. *Քնքուշ սեր ապրել: 2. Ներսում նուրբ կամ բուռն զգացում/ներ/ ապրել: 3. Անհանգստություն ապրել: 4. Վախենալ*», այսինքն՝ «սիրտն» այստեղ, ինչպես տեսնում ենք, տարբեր զգացումներ, ապրումներ կարող է խորհրդանշել:

3. Ուրախություն են նշանակում *սիրտ* բաղադրիչն ունեցող հետևյալ Դմ-ները՝ *սիրտը բացվել* «ուրախանալ, զվարթանալ», *սիրտը խաղ/ս էլնել/լինել* «1. սիրտը ճխալ, ուրախությունից հուզվել», *սիրտը ծփալ* «հրճվել», *սիրտը մի մատ եղյուղ կապել* «շատ ուրախանալ», *սիրտը ճխալ* «ցնծալ, ուրախանալ», *սիրտը փորում պար գալ* «խիստ ուրախանալ», *սիրտը լիանալ* «ուրախանալ, հրճվել», *սիրտը պարտեզ բացվել* «շատ ուրախանալ, հրճվել, սիրտը բացվել (թշնամուն հասած վնասից)», *սիրտը օխտը գագ բաց անել* (բրբ.) «չափազանց ուրախանալ, ցնծալ», *սիրտը արև չանել/ չցաթել* «չուրախանալ, ուրախություն չտեսնել» են: Ուրախության իմաստը բերված օրինակներում ձևավորված է պատկերային-փոխաբերական տարբեր հիմքերով. սրտի՝ որպես զգայական աշխարհի աղբյուրի խորհրդանշային իմաստը գուգորդվել է խորհրդանշային-փոխաբերական այլ պատկերների հետ՝ *ծփալու, պարտեզ բացվելու, այսինքն՝ ծաղկելու, խաղալու, արև ծագելու, պար գալու, յուղ կապելու* են, որոնք նույնպես հայ ժողովրդի պատկերացումներում ուրախության առկայության և արտահայտության նշաններ են:

4. Հոգեկան խռովքի, գայրուլթի իմաստ ունեն «սիրտ» բաղադրիչը պարունակող՝ *սիրտը շուռ գալ* «գայրանալ, ինքն իրենից դուրս գալ, հուզվել», *սիրտը պայթել/պատռվել* «սաստիկ գայրանալ, խիստ հուզվել», *սիրտը բերանը գալ* «2. այլևս իրեն զսպել չկարողանալ, ինքնազսպումը կորցնել» և այլ դարձվածքները, որոնք ձևավորվել են սրտի հետ կապված ֆիզիկական զգացողությունների պատկերային հիմքի վրա՝ *շուռ գալու, պայթելու, պատռվելու, բերանը գալու* են, որպիսիք, մարդը զգում է համապատասխան հոգեկան ապրումների առկայության ժամանակ:

5. Անհանգստություն կամ հանգստություն են արտահայտում, օրինակ, *սիրտը գարկել* «հուզվել, անհանգստանալ», *սիրտը բերանը քնկնել* (խսկց.) «հուզվել անհանգստանալ», *սիրտը բլթբլթալ*



«խիստ անհանգստանալ», **սիրտը թեթևանալ** «հանգստանալ, վրշտերից ազատվել», **սիրտը գնալ/ուզալ** «անհանգստանալ, անհանգրստություն ապրել», **սիրտը հովանալ** «իրեն հանգիստ զգալ, հանգստանալ, փափագին հասնել», **սիրտը թխվել** (բրբ.) «անհանգստանալ, տխրել», դարձվածքները. դրանք իրենց հիմնական՝ հանգրստության կամ անհանգստության իմաստից բացի, ունեն նաև լրացուցիչ իմաստային երանգներ, որոնք մի կողմից՝ բացահայտում են դարձվածային իմաստի ձևավորման իրադրային հիմքը, մյուս կողմից՝ հուշում կիրառության իմաստային-ոճական ոլորտը՝ «վշտերից ազատվելով՝ հանգիստ գտնելու», «անհանգստությունից տրխրելու», փափագին հասնելով՝ հանգստանալու», «հուզվել-անհանգրստանալու»:

6. Սիրտը նաև մարդու վշտի, ցավի ու դրանից տանջվելու կենտրոնի խորհրդանիշն է, որը դրսևորվել է հայերենի այնպիսի Դմ-ներում, ինչպիսիք են՝ **սիրտը մաշել** «ինքն իրեն տանջել, տառապել», **սիրտը դաղել** «խիստ ցավեցնել, վշտացնել», **սիրտը լայ** «ներքնապես սաստիկ վշտանալ», **սիրտը կոտրել** «վշտացնել, ցավ պատճառել», **սիրտը կտրտվել** «խորապես վշտանալ», **սրտից արյուն գալ/ գնալ/կաթել** «սիրտը կսկծալ, խորապես վշտացած լինել», **սիրտը կրակ դառնալ** «վշտանալ, մորմոքվել, տանջվել», **սիրտը սևանալ/սև հագնել** «տխրել, վշտանալ», **սիրտը փշուր-փշուր լինել** «խիստ վշտանալ, շատ ցավել», **սրտի տախտակը դաղել** «սիրտը շատ ցավել», **սրտին դանակ տաս՝ արյուն չի կաթի** «խիստ վշտոտ, տխուր լինել», **սիրտը ատամների տակ սեղմել** «հոգեկան ցավը մեծ ճիգով զսպել»: Ինչպես դժվար չէ նկատել, դարձվածային իմաստների հիմքում ընկած պատկերներն, իհարկե, ձևավորվել են սրտի՝ վերը նշված խորհրդանշային արժեքի հիման վրա, սակայն պարզ է, որ այդ պատկերների ձևավորման գործընթացում որոշակի դեր ունեն նաև Դմ-ի մյուս բաղադրիչները, քանի որ փոխաբերական ի-

մաստը միասնական պատկերի հիման վրա է ձևավորվել: Այսպես, վիշտ և ցավ են արտահայտում *սիրտը մաշելու, կոտրելու, դաղելու, այրելու, փշուր-փշուր անելու* պատկերները, որոնց հիմքում ընկած է ֆիզիկական ցավի համապատասխան պատկերը, *սիրտը սևանալու* դեպքում՝ արտաքին տեսքի փոփոխությունը: Միրտը արյուն պարունակող, մղող օրգան է, և այդ գործընթացի խաթարումը՝ *արտից արյուն կաթելը* կամ նրա *արյունագրկված լինելը*, նույնպես անասելի ցավի ու վշտի պատկեր են ստեղծում:

7. Միրտը նաև սիրո, սիրահարության խորհրդանիշ է, և որպես այդ զգացմունքի առաջացման աղբյուր ու կենտրոն՝ « սիրոյ տեղի, դիրք, օթարան...»<sup>3</sup>, փոխաբերական-պատկերային հիմք է դարձել իդիոմատիկ շատ միավորների դարձվածային իմաստի ձևավորման համար՝ *սիրտը կպչել մեկին* «հավանել, սիրահարվել մեկին», *սիրտը տաքանալ մեկի վրա* «սիրել մեկին», *սիրտը ճղբալ* «առաջին հայացքից սեր ու գորով զգալ դեպի մեկը», *սիրտը սառչել* «սերը նվազել, անտարբեր դառնալ», *սիրտը գերել/սիրտը գրավել* «սիրահարեցնել մեկին», *սիրտը հանձնել* «սիրել, սիրահարվել», *սիրտը սեր ընկնել* «սիրահարվել», *սիրտը կրակ ընկնել* «սիրահարվել», *սիրտը մեկի առաջ դնել* «սերն արտահայտել», *սիրտը մեկի համար դողալ* «մտերմիկ զգացում՝ սեր ապրել» ևն: Ինչպես խորհրդանիշների համակարգում սիրո զանազան ապրումները հնուց ի վեր ներկայացվում են սրտի տարբեր պատկերներով՝ նետահարված, արյան կաթիլներով, կրակի մեջ, ճեղքված, ափի մեջ ևն, դարձվածքներում նույնպես այդ ապրումները վառ պատկերային հիմք ունեն՝ *սիրտը մեկի առաջ դնելու, սառչելու, տաքանալու, կրակի մեջ լինելու, հանձնելու՝ նվիրաբերելու* ևն:

---

<sup>3</sup> Հայր Գաբրիել Աւետիքեան, Հայր Խաչատուր Միրովեան, Հայր Մկրտիչ Աւգերեան, *Նոր բառգիրք հայկազեան լեզուի*, Վենետիկ, 1837:

8. Սիրտը նաև գրությունն ու խղճի կենտրոնն է. այդ պատկերացման հիման վրա են առաջացել, օրինակ, *սիրտ ունենալ* «խիղճ՝ գուր ռունենալ, գրառատ լինել», *սիրտը շարժվել* «գուր՝ խիղճ առաջ գալ», *սիրտը քար* «անգուր, անխիղճ», *սրտի ձայն* «ներքին ձայն՝ խիղճ» են:

9. Սիրտը դարձվածքներում նաև խմացության օրգան է, ինչպես, օրինակ, *սիրտը գուշակել*, *սիրտը վկայել*, *սիրտը իմանալ*, *սիրտը ասել*, *սիրտը տուն տալ*, *սիրտը թելադրել*, որտեղ սիրտը մի կողմից՝ մարդուն ոչ հասու գիտելիքի շտեմարան կամ աղբյուր է, մյուս կողմից՝ այդ գիտելիքը ձեռք բերելու, կանխագալու միջոց: *Սիրտը կրակ ընկնել* «մտատանջվել, մտատանջության մեջ ընկնել», *սիրտը ցավել* «մեկի՝ մի բանի համար ցավ, մտատանջություն ունենալ, մտահոգված լինել», *սրտի ականջին խոսել* «ուշքն ու միտքը գրավել», *մի սրտի գալ* «մտքով անցնել, մտածել», *սիրտը դուզ (խսկց.)* «պարզամիտ, ուղղամիտ», *սիրտը բաց անել/բացել* «զաղտնիքները՝ մտատանջությունները՝ վշտերը մեկի մոտ բացել՝ պատմել», *սիրտը օձ կծել (խսկց.)* «չար մտքեր հղանալ»<sup>4</sup> Դմ-ում նույնպես *սիրտ* բառը գործածված է որպես մտքերի, ինչպես նաև՝ մրտատանջությունների, մտահոգությունների, այսինքն՝ միաժամանակ մտքերի և հույզերի աղբյուր կամ օրգան, քանի որ մտատանջվելու, մտահոգվելու մեջ նշմարվում են և՛ միտքը, և՛ զգացմունքը. դրանք մտածականի և զգայականի միահյուսում են: Անշուշտ, պատմականորեն առաջնային է զգացմունքը, իսկ միտքը ձևավորվում է զգայության հիման վրա, և այս տեսանկյունից սիրտը, որը, փաստորեն, մարդու զգայական աշխարհի խորհրդանիշն է համարվում, դառնում է նաև իմացության, մտածողության, բանակա-

---

<sup>4</sup> Տեքստը չձանրաբեռնելու համար բերվում են Դմ-ների՝ միայն տվյալ դիտարկմանը համապատասխանող իմաստը կամ իմաստները:

նության օրգանի խորհրդանիշ՝ **սրտով անց կենալ** «մտքով անցնել», **սրտից հանել** «մոռանալ, մոռացության մատնել» են<sup>5</sup>:

10.Շատ Դմ-ներում սրտի ներքին կամ արտաքին հատկանիշով բնութագրվում է մարդու բարոյական կերպարը մարդ-մարդ փոխհարաբերության տեսանկյունից՝ կարծես ամբողջական, ընդհանրական գնահատական տալով մարդու էությանը, տեսակին, ինչպես, օրինակ, **հարուստ սիրտ** «ազնիվ զգացումներով լեցուն», **մեծ սիրտ** «1.վեհանձն, 2.քաջասիրտ, 3.մեծ բարեմասնություններով օժտված, 4.արժանապատվության զգացում ունեցող, 5. համբերատար», **խաս սիրտ** (խսկց.) «բարի, ազնիվ, վեհանձն», **պաղ սիրտ** «սառը, անսիրտ, դաժան», **ոսկի սիրտ** «բարի, բարյացակամ, հոգատար հոգու տեր», **մաքուր սիրտ** «աննենգ, ազնիվ, անապական հոգի ունեցող», **սիրտը կարծր** «դաժան, անկարեկից», սիրտը լայն «հյուրասեր, մարդամոտ», **սիրտը դուզ** (խսկց.) «պարզամիտ, ուղղամիտ» են: Միրտ բառի և նրա հատկանիշը ցույց տվող բառի համադրության փոխաբերական ընդհանրացումները հետաքրքրական գուգորդումներ են ստեղծել դարձվածային իմաստի ձևավորման գործընթացում: Այսպես՝ **պաղ սիրտը** անկենդան, մեռած սիրտն է, ուստի եթե մեկը դաժան ու **անհոգի** է իր նմանի նկատմամբ, այդպիսի մարդը քրիստոնեական ընկալմամբ **մեռած** է: Հետաքրքրական է **մեծ սիրտ** դարձվածքի իմաստային բազմերանգությունը. այդ դարձվածքի իմաստների մեջ ընդգրկված են մարդու բարոյական ամենաբարձր արժանիքները՝ վեհանձնությունը, ազ-

---

<sup>5</sup> Դարձվածքների իմաստների բացատրությունները բերված են ըստ **Ա. Սուքիասյանի** և **Ս. Գալստյանի** «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարանի», **Պ. Բեդիրյանի** «Հայերենի դարձվածքների ընդհանրական բացատրական բառարանի», **Էդ. Աղայանի** «Արդի հայերենի բացատրական բառարանի» և ՀՀԳԱ լեզվի ինստիտուտի «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի», սակայն նպատակահարմար չի նկատվել յուրաքանչյուր դեպքում նշելու աղբյուրը, մանավանդ որ դրանք հիմնականում համընկնում են:

նըվությունը, քաջությունը, արժանապատվությունը, համբերատարությունը և ընդհանրապես մարդկային *ազնվագույն* բարեմասնությունները՝ բարությունը, հոգատարությունը, ներողամտությունը, առատաձեռնությունը են: Այս հատկանիշներից յուրաքանչյուրն իր կյանքում լիարժեքորեն ու անկեղծորեն դրսևորող մարդու մասին կարելի է ասել, որ նա մեծ սիրտ ունի: Եվ իսկապես, սիրտը, որը մարդու զգայական և իմացական ներաշխարհի՝ *հոգու* մարմնավորում-խորհրդանիշն է, պետք է որ իր բնական չափից մեծ լինի, եթե աղբյուրն ու կրողն է աստվածատուր և աստվածահաճո այն բարեմասնությունների, որոնք կերտում են Աստծո նմանողությամբ արարված՝ մարդասեր մարդու կերպարը:

Այսպիսով՝ *սիրտը* իր՝ «պատուականագոյն մասն յընդերս կենդանոյ՝ իբրեւ սկիզբն կենդանութեան և զգայական բաղձանաց, ուստի և լայնաբար՝ յօժարութիւն, ոգի, կամք, միտք, խորհուրդ և այլն»<sup>6</sup> իմաստներով մարդկային էության՝ նրա հոգու խորհրդանիշ է դարձել և անգամ այն իմաստներով, որոնք փոխաբերական չեն, այլ ուղիղ իմաստներ են, պարզապես խորհրդանիշի արժեք են ձեռք բերել,- *սիրտ* հասկացությունն ուղղակիորեն անմիջական պատկերային հիմք է դարձել դարձվածային իմաստի ձևավորման համար: Իր խորհրդանշային արժեքով հաճախ կարծես փոխարինելով փոխաբերացման գործընթացին՝ *սիրտ* հասկացությունը ծառայել է որպես դարձվածացման պատրաստի այլաբանական հիմք:

---

<sup>6</sup> Հայր Գաբրիել Աւետիքեան, Հայր Խաչատուր Միրումէլեան, Հայր Մկրտիչ Աւգերեան, *Նոր բարգիւրք հայկազեան լեզուի*, Վենետիկ, 1837:

Ter-Grigoryan Lilit - The reflection of the semantic meaning and symbolism of the word “heart” in the figurative basis of phraseological units of the Armenian language. - For millennia heart was the embodiment of “central” wisdom, the wisdom of feelings, the center of love, dignity, kindness, compassion, brevity, etc. This multifaceted diversity of the symbolism of the word “heart” is reflected in the meaning of phraseological units. This diversity became an immediate basis for phraseological form, in a way skipping or simplifying the phase of metaphorical rethinking.

Тер-Григорян Лилит - Отражение семантических значений и символики слова «сердце» в образной основе фразеологических единиц армянского языка.- В течении тысячелетий сердце было олицетворением «центральной» мудрости, мудрости чувства, центром любви, чести, доброты, милосердия, храбрости и т.д. Это многогранное разнообразие символики слова «сердце» отразилось в значении фразеологических единиц и в процессе фразеологизации стало непосредственной основой для фразеологического образа, как бы пропуская или упрощая фазу метафорического переосмысления.

<b>Առաջաբան</b> .....	5
<b>Հովհաննիսյան Լավրենտի</b> - Հայերենի իրանական փոխառությունների քննությունը	
Գ. Ջահուկյանի աշխատություններում.....	17
<b>Սարգսյան Արտեմ</b> - Հայ բարբառների դասակարգման Գ. Ջահուկյանի բազմահատկանիշ մեթոդը: Գ. Ջահուկյանը վիճակագրական լեզվաշխարհագրության հիմնադիր.....	26
<b>Սարգսյան Մերի</b> - Հոմանիշ տերմինները Գ. Ջահուկյանի ընդհանուր լեզվաբանական աշխատություններում.....	32
<b>Ամիրխանյան Անժելա</b> - <i>Աղջան-սալաթ</i> զուգորդումները և իմաստային դրսևորումները հայերենում.....	41
<b>Գալստյան Աշոտ</b> – Հուշագրական բնագրի լեզվամտածական դրսևորումները.....	53
<b>Ջաքարյան Հովհաննես</b> – «Ցատկել, ցայտել, ժայթքել» իմաստներով հայերեն մի քանի բառերի ստուգաբանություն.....	65
<b>Խաչատրյան Հասմիկ</b> – Բառիմաստային յուրօրինակ զարգացումները Համշենի բարբառում .....	77
<b>Կատվայան Վիկտոր</b> - Խառը տիպի խոսվածքները Կոտայքի մարզում.....	88
<b>Հովհաննիսյան Լավրենտի</b> - Ղարաբաղի (Արցախի) բարբառի բառակազմական հնաբանությունները.....	100
<b>Հովհաննիսյան Նազիկ</b> - Բառակապակցություններ և արտահայտություններ նույնանիշների	

---

\* Խմբագրական խորհուրդը պատասխանատու չէ հոդվածներում և հա-  
ղորդումներում առկա ոճական և իմաստային վիճելի ձևակերպումների  
համար:

ձեռագիր բառարաններում.....	107
<b>Միմոնյան Նեկտար – Չուլել / Թափել</b> բայերի իմաստային աղերսները.....	118
<b>Վարդանյան Արտակ</b> - Հյուսիսային Գողթնի խոսվածքների ձևաբանական առանձնահատկությունները.....	126
<b>Քումունց Մհեր</b> - Հնդեվրոպական շերտի բառերը Սյունիք -Արցախ բարբառային բառապաշարում.....	138
<b>Ֆիշենկճեան Անի</b> - Արեւմտահայերէնի խօսքի մասերու քերականական կարգերու քննութիւն (անորոշ ածական թէ՛ անորոշ դերանուն).....	147

#### ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

<b>Գրիգորյան Սուսաննա</b> - Հականիշ բառերի ոճական կիրառությունները Գրիգոր Տաթևացու «Գիրք քարոզութեան «Ամառան հատոր»»-ում.....	160
<b>Գրիգորյան Սուսաննա, Պարոնյան Նաիրա</b> - Նորակազ- մությունները Մամբրե Վերծանողի ճառերում.....	168
<b>Թոխմախյան Ռոբերտ, Տիոյան Սուսաննա</b> - Հայերենի ձայնավորահանգ բառերի ձևային նկարագրություն.....	175
<b>Տեր Մերկերյան Ռոբեր</b> - Բառային նորաբանությունների որդեգրման գործընթացը: Բաց և փակ լեզուներ.....	184
<b>Տեր-Գրիգորյան Լիլիթ</b> - «Միրտ» բառի իմաստային դրսևորումները դարձվածային միավորների պատկերային հիմքում.....	196



**ՋԱՀՈՒԿՅԱՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ**

Ակադեմիկոս Գևորգ Ջահուկյանի ծննդյան 100-ամյակին  
նվիրված հայերենագիտական միջազգային առցանց  
գիտաժողովի նյութեր

**JAHUKYAN READINGS**

Proceedings of International Online Symposium on Armenian  
Linguistics  
Dedicated to 100 Anniversary of Academician Gevorg Jahukyan

**ДЖАУКЯНОВСКИЕ ЧТЕНИЯ**

Материалы международного онлайн симпозиума по  
армянскому языкознанию,  
посвященного 100 –летию академика Геворга Джаукяна

Հրատ. պատվեր № 1061

Ստորագրված է տպագրության՝ 10.12. 2020թ.:

Չափսը՝ 60x84<sup>1/16</sup> տպագրական մամուլ:

Տպաքանակը՝ **200 օրինակ**:

Գինը՝ պայմանագրային:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան,  
Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24: